Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1649

# ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

# ՄԱՏԹԷՈՍԻ

22.
Ա-76

Կ. Պոլիս
1877

128

2010

11347

22.1
Ա-76

# ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ

# ՄԱՏԹԷՈՍԻ

## ԳՐԱԲԱՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

ՅՈՒՆԱՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Հրամանաւ ժողովոյ պաշտօնէից հասարակաց Ներսէսեան

Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ-СОРА им. А. Мясникяна
5181
38
2001

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1877

# ԱՒԵՏԱՐԱՆ
# ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ
2 Դաւթի որդւոյ Աբրահամու։ Աբրահամ ծը-
նաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅակոբ. Յա-
3 կոբ ծնաւ զՅուդա և զեղբարս նորա. Յու-
դա ծնաւ զՓարէս և զԶարա ՚ի Թամարայ.
Փարէս ծնաւ զԵզրոմ. Եզրոմ ծնաւ զԱ-
4 րամ. Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ
ծնաւ զՆաասոն. Նաասոն ծնաւ զՍաղմոն.
5 Սաղմոն ծնաւ զԲոոս ՚ի Հռաքաբայ. Բոոս
ծնաւ զՈվբէթ ՚ի Հռութայ. Ովբէթ ծնաւ
6 զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ. Դա-
ւիթ արքայ ծնաւ զՍողոմոն ՚ի կնոջէն Ու-
7 րիայ. Սողոմոն ծնաւ զՌոբովամ. Ռոբովամ
8 ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ *զԱսափ. Ասափ
ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅով-

*Յոյնն՝ զԱսա. Ասա



# ԱՒԵՏԱՐԱՆ
# ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա

1 Քրիստոսի ազգաբանութիւնը Աբրահամէն մինչև Յովսէփ։ 18 Կոյս Մարիամ որ Յովսէփին նշանուած էր, Սուրբ Հոգիէն կը յղանայ։ 19 Հրեշտակը Յովսէփին սխալ կարծիքը կ'ուղղէ, և կը մեկնէ Քրիստոսի անունները։

1 Գիրք [ա] ծննդեան Յիսուսի Քրիստոսի [բ] Դա-
ւիթի որդւոյն՝ [գ] Աբրահամի որդւոյն։
2 [դ] Աբրահամ ծնաւ Իսահակը. [ե] Իսահակ ծը-
նաւ Յակոբը. [զ] Յակոբ ծնաւ Յուդան ու անոր
3 եղբայրները. [է] Յուդա ծնաւ Փարէսը ու Զա-
րան Թամարէն. [ը] Փարէս ծնաւ Եսրոնը. Ես-
4 րոն ծնաւ Արամը. Արամ ծնաւ Ամինադաբը.
Ամինադաբ ծնաւ Նաասոնը. Նաասոն ծնաւ
5 Սաղմոնը. Սաղմոն ծնաւ Բոոսը Ռախաբէն.
Բոոս ծնաւ Ովբէդը Հռութէն. Ովբէդ ծնաւ
Յեսսէն. [թ] Յեսսէ ծնաւ Դաւիթ թագաւորը.
6 [ժ] Դաւիթ թագաւորը ծնաւ Սողոմոնը Ուրիայի
7 կնիկէն. [ի] Սողոմոն ծնաւ Ռոբովամը. Ռոբո-
8 վամ ծնաւ Աբիան. Աբիա ծնաւ Ասան. Ասա
ծնաւ Յովսափատը. Յովսափատ ծնաւ Յով-

ա Ղուկ. գ. 23։
բ Սաղ. ճլբ. 11։ Եսա. ժա. 1։ Երեմ. իգ. 5։ Գղ. իբ. 42։ Յովհ. է. 42։ Գործ. բ. 30։ ժգ. 23։ Հռոմ. ա. 3։
գ Ծն. ժբ. 3։ իբ. 18։ Գաղ. գ. 16։
դ Ծն. իա. 2, 3։
ե Ծն. իե. 26։
զ Ծն. իթ. 35։
է Ծն. լը. 27։
ը Հռութ. դ. 18, ևն։ ա Մն. բ. 5, 9, ևն։
թ ա Թագ. ժզ. 1։ ժէ. 12։
ժ բ Թագ. ժբ. 24։
ի ա Մն. գ. 10, ևն։

9 րամ. Յովրամ ծնաւ զՈզիա. Ոզիա ծնաւ զՅո-
վաթամ. Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծը-
10 նաւ զԵզեկիա. Եզեկիա ծնաւ զՄանասէ.
Մանասէ ծնաւ զԱմոն. Ամոն ծնաւ զՅով-
11 սիա. Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբարս
12 նորա առ գերութեամբն Բաբելացւոց: Յետ
գերութեանն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա
զՍաղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ.
13 Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ
14 զԵղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովր. Ազովր
ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին. Աքին
15 ծնաւ զԵղիուդ. Եղիուդ ծնաւ զԵղիազար.
Եղիազար ծնաւ զՄատթան. Մատթան ծը-
16 նաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զՅովսէփ զայ-
րըն Մարեմայ՝ * որում խօսեցեալ զՄարիամ
կոյս". յորմէ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ
17 Քրիստոս: Արդ ամենայն ազգք յԱբրահամէ
մինչև 'ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և
'ի Դաւթէ մինչև 'ի գերութիւնն Բաբելա-
ցւոց՝ ազգք չորեքտասանք. և 'ի գերութե-
նէն Բաբելացւոց մինչև 'ի Քրիստոս՝ ազգք
չորեքտասանք:
18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այս-
պէս. խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսե-
փու, մինչչև եկեալ առ միմեանս՝ գտաւ
19 յղացեալ 'ի Հոգւոյն Սրբոյ: Եւ Յովսէփ այր
նորա, քանզի արդար էր, և ոչ կամէր առա-
կել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա:
20 Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա
հրեշտակ Տեառն 'ի տեսլեան երեւեցաւ նմա

---

*Ի Յունին չէ:



9 րամը. Յովրամ ծնաւ Ոզիան. Ոզիա ծնաւ Յո-
վաթամը. Յովաթամ ծնաւ Աքազը. Աքազ
10 ծնաւ Եզեկիան. [ւ]Եզեկիա ծնաւ Մանասէն.
Մանասէ ծնաւ Ամոնը. Ամոն ծնաւ Յովսիան.
11 [փ]Յովսիա ծնաւ Յեքոնիան ու անոր եղբայրները
12 [ծ]Բաբելոնեան գերութեանը ատենները. Բա-
բելոնի գերութեան երթալնէն ետև [ձ]Յեքոնիա
ծնաւ Սաղաթիէլը. Սաղաթիէլ ծնաւ [ն]Զօ-
13 րաբաբէլը. Զօրաբաբէլ ծնաւ Աբիուդը. Ա-
բիուդ ծնաւ Եղիակիմը. Եղիակիմ ծնաւ Ա-
14 զովրը. Ազովր ծնաւ Սադովկը. Սադովկ ծնաւ
15 Աքինը. Աքին ծնաւ Եղիուդը. Եղիուդ ծը-
նաւ Եղիազարը. Եղիազար ծնաւ Մատթա-
16 նը. Մատթան ծնաւ Յակոբը. Յակոբ ծնաւ
զՅովսէփ՝ զայրն Մարիամայ, որմէ ծնաւ Յի-
17 սուս, որ կ՚ըսուի Քրիստոս: Արդ բոլոր
ազգերը Աբրահամէն մինչև Դաւիթ տասնու-
չորս ազգ, և Դաւիթէն մինչև Բաբելոնեան
գերութիւնը տասնուչորս ազգ, ու Բաբե-
լոնեան գերութենէն մինչև Քրիստոս տասն-
ուչորս ազգ:
18 Եւ [յ]Յիսուսի Քրիստոսի ծնունդը աս կեր-
պով էր. անոր մայրը Մարիամ Յովսեփին
նշանուած, դեռ իրարու քով չեկած՝ [շ]Սուրբ
19 Հոգիէն յղացած գտնուեցաւ: Եւ Յովսէփ
անոր էրիկը արդար *մարդ* ըլլալով՝ ու չուզե-
լով որ զանիկա [ո]խայտառակ ընէ, մտածեց
20 որ ծածկաբար արձակէ զանիկա: Եւ քանի
որ անիկա աս *բաներ* կը մտածէր, ահա Տէրոջը

ւ Դ Թագ. ի. 21: ա Մն. գ. 13:
փ Տես ա Մն. գ. 15. 16:
ծ Դ Թագ. իդ. 14. 15. 16: իե. 11: բ Մն. լզ. 10, 20: Երեմ. իէ. 20: լթ. 9: ծբ. 11. 15. 28. 29. 30: Դան. ա. 2:
ձ ա Մն. գ. 17. 19:
ն Եզր. գ. 2: ե. 2: Նեեմ. ժբ. 1: Անգ. ա. 1:
յ Ղուկ. ա. 27:
շ Ղուկ. ա. 35:
ո բ Օր. իդ. 1:

և ասէ, Յովսէփ որդի Դաւթի, մի երկնչիր
առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, քանզի
որ ՚ի նմայն ծնեալ է՝ ՚ի Հոգւոյն Սրբոյ է։
21 Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յի-
սուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ՚ի
22 մեղաց իւրեանց։ Այլ այս ամենայն եղև, զի
լցցի որ ասացաւն ՚ի Տեառնէ ՚ի ձեռն *Ե-
23 սայեայ մարգարէի." Ահա կոյս յղասցի և ծըն-
ցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Էմմա-
նուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած։
24 Եւ զարթուցեալ Յովսէփ ՚ի քնոյ անտի, ա-
րար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեա-
25 ռըն, և առ յինքն զկինն իւր։ Եւ ոչ գիտէր
զնա մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ,
և կոչեաց զանուն նորա Յիսուս։

## Գլ. Բ

1 Եւ ՚ի ծնանելն Յիսուսի ՚ի Բեթղեհէմ Հրէաս-
տանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք
2 յարևելից եկին յԵրուսաղէմ, և ասեն, Ո՞ւր
է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստ-
ղըն նորա յարևելս, և եկաք երկրպագա-

* Յոյնն՝ մարգարէին.



հրեշտակը երազի մէջ երևցաւ անոր ու ըսաւ,
Յովսէփ՝ Դաւիթի որդին, մի վախնար քեզի
առնել քու Մարիամ կնիկդ, [ճ]ինչու որ անոր
21 ներսի դին ծնածը Սուրբ Հոգիէն է։ Եւ [մ]որ-
դի մը պիտի ծնանի, ու անոր անունը *Յի-
սուս դնես, [ն]քանզի անիկա իր ժողովուրդը
22 իրենց մեղքերէն պիտի փրկէ։ Եւ աս ամէնը
եղաւ որ կատարուի Տէրոջմէն ըսուածը մար-
23 գարէին ձեռքովը, որ կ՚ըսէ, [շ]Ահա կոյսը պի-
տի յղանայ ու որդի պիտի ծնանի, և անոր
անունը Էմմանուէլ պիտի կոչեն, որ կը թարգ-
24 մանուի Աստուած մեզի հետ։ Եւ Յովսէփ
քունէն արթննալով՝ ինչպէս որ Տէրոջը հը-
րեշտակը իրեն հրամայեց, այնպէս ըրաւ ու իր
25 կնիկը քովն առաւ. Եւ չէր գիտեր զանիկա՝
մինչև իր [ո]անդրանիկ որդին ծնաւ, ու անոր
անունը Յիսուս դրաւ։

## Գլ. Բ

1 Արևելքէն մոգերը Քրիստոսի կ՚երթան աստղի մը առաջնորդութեամբը. 11 և երկրպագութիւն կ՚ընեն անոր, ու իրենց ընծաները կը մատուցանեն։ 14 Յովսէփ առնելով Յիսուսը ու անոր մայրը՝ Եգիպտոս կը փախչի։ 16 Հերովդէս մանր տղաքը սպաննել կու տայ. 20 անոր մահը։ 23 Յիսուս Եգիպտոսէն կը տարուի Գալիլեայի Նազարեթ քաղաքը։

1 Ու [ա]երբոր Յիսուս ծնաւ Հրէաստանի Բեթ-
ղեհեմին մէջ Հերովդէս թագաւորին օրերը,
ահա [բ]արևելքէն մոգեր եկան Երուսաղէմ,
2 Ու ըսին, [գ]Ո՞ւր տեղ է ան՝ որ Հրեաներուն
թագաւոր ծնաւ. ինչու որ մենք արևելքի

ճ Ղուկ. ա. 35։
մ Ղուկ. ա. 31։
յ Թ՝ Փրկիչ։
ն Գործ. դ. 12։ ե. 31։ ժգ. 23, 38։
շ Ես. է. 14։
ո Ել. ժգ. 2։ Ղուկ. բ. 7, 21։
ա Ղուկ. բ. 4, 6, 7։
բ Ծն. ժ. 30։ իե. 6։ գ Թագ. դ. 30։
գ Ղուկ. բ. 11։

3 նել նմա։ Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝
խռովեցաւ, եւ ամենայն Երուսաղէմ ընդ նմա։
4 Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս եւ
զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ՚ի նոցանէ՝
5 թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն
ցնա, ՚ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս
6 գրեալ է ՚ի ձեռն մարգարէին. Եւ դու,
Բեթղեհէմ՝ երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես
յիշխանս Յուդայ. ՚ի քէն ելցէ ինձ իշխան,
7 որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ։ Յայն-
ժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ըս-
տուգեաց ՚ի նոցանէ զժամանակ աստեղն ե-
8 րեւելոյ. Եւ արձակեալ զնոսա ՚ի Բեթղեհէմ՝
ասէ, Գնացէք, ստուգեցէք վասն մանկանն,
եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ,
9 զի եւ ես եկեալ երկիրպագից նմա։ Եւ նոքա
իբրեւ լուան ՚ի թագաւորէն՝ գնացին. եւ ա-
հա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնոր-
դեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ՚ի վերայ՝
10 ուր էր մանուկն։ Իբրեւ տեսին զաստղն,
11 խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։ Եւ իբրեւ
մտին ՚ի տունն՝ տեսին զմանուկն հանդերձ
Մարեմաւ մարբն իւրով, եւ անկեալ երկիր-
պագանէին նմա. եւ բացեալ զգանձս իւ-
րեանց, մատուցին նմա պատարագս՝ ոսկի եւ
12 կնդրուկ եւ զմուռս։ Եւ հրաման առեալ ՚ի
տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս,
ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւ-



մէջ [դ]անոր աստղը տեսանք, ու եկանք անոր
3 երկրպագութիւն ընելու։ Ու երբոր Հերովդէս
թագաւորը լսեց՝ խռովեցաւ, եւ բոլոր
4 Երուսաղէմ իրեն հետ. Եւ ժողվելով բոլոր
[ե]քահանայապետները ու ժողովուրդին [զ]դպ-
իրները՝ [է]հարցուց անոնց թէ Քրիստոս ո՞ւր
5 պիտի ծնանի։ Անոնք ալ իրեն ըսին, Հրէաս-
տանի Բեթլեհեմին մէջ. ինչու որ աստանկ գը-
6 րուած է մարգարէին ձեռքովը. [ը]Եւ դուն,
Բեթլեհէմ՝ Յուդայի երկիրը, Յուդայի իշ-
խաններուն մէջ բնաւ պզտիկ մը չես. ինչու
որ քեզմէ իշխան մը պիտի ելլէ, [թ]որ իմ Իս-
7 րայէլ ժողովուրդս պիտի հովուէ։ Անատե-
նը Հերովդէս ծածկաբար մոգերը կանչեց,
ու ստուգեց անոնցմէ աստղին երեւցած ատե-
8 նը. Եւ զանոնք Բեթլեհէմ խրկելով՝ ըսաւ,
Գացէք աղէկ իմացէք այն մանուկին վրայով,
ու երբոր գտնէք՝ ինծի իմացուցէք, որ ես
9 ալ գամ՝ անոր երկրպագութիւն ընեմ։ Ու
երբոր անոնք թագաւորէն ‥ բանը լսեցին՝
գացին. եւ ահա այն աստղը որ արեւելքի մէջ
տեսեր էին՝ անոնց առջեւէն գնաց, մինչեւ որ
եկաւ կեցաւ մանուկին եղած տեղին վրայ։
10 Երբոր տեսան աստղը, շատ մեծ ուրախու-
11 թիւնով ուրախացան։ Եւ տունը մտնելով՝
տեսան մանուկը իր մօրը Մարիամին հետ, ու
ինկան երկրպագութիւն ըրին անոր, եւ իրենց
գանձերը բանալով [ժ]ընծաներ տուին անոր,
12 ոսկի ու կնդրուկ եւ զմուռս։ Ու հրաման
առնելով [ի]երազի մէջ՝ որ նորէն Հերովդէսին
չդառնան, ուրիշ ճամբով գացին իրենց երկիրը։

դ Թու. իդ. 17։ Եսա. կ. 3։
ե բ Մն. Լզ. 14։
զ բ Մն. Լդ. 13։
է Մաղ. բ. 7։
ը Միք. ե. 2։ Յովհ. է. 42։
թ Յայտ. բ. 27։
ժ Սաղ. հբ. 10։ Եսա. կ. 6։
ի Գւ. ա. 20։

13 րեանց: Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա
հրեշտակ Տեառն երեւէր 'ի տեսլեան Յովսե_
փու և ասէր, Արի՛ առ զմանուկդ և զմայր
իւր, և փախիր յԵգիպտոս, և անդ լինիջիր
ցորժամ ասացից քեզ. քանզի 'ի խնդիր *է
14 Հերովդէս կորուսանել զմանուկդ: Եւ նա յա_
րուցեալ առ զմանուկն և զմայր իւր գիշերի,
և գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչեւ ցվախ_
15 ճան Հերովդի. Զի լցցի ասացեալն 'ի Տեառ_
նէ 'ի ձեռն մարգարէին որ ասէ, Յեգիպտո_
16 սէ կոչեցից զորդի իմ: Յայնժամ իբրեւ ետես
Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի,
բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զա_
մենայն մանկունսն որ էին 'ի Բեթղեհէմ և
յամենայն սահմանս նորա՝ յերկեմենից և 'ի
խոնարհ, ըստ ժամանակին զոր ստուգեաց 'ի
17 մոգուցն: Յայնժամ կատարեցաւ ասացեալն
18 'ի ձեռն Երեմիայ մարգարէի որ ասէ, Ձայն
գուժեաց 'ի Հռամայ, ողբումն և լալումն և
աշխարումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր,
19 և ոչ կամէր մխիթարել՝ զի ոչ էին: Եւ 'ի
վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ Տեառն
'ի տեսլեան երեւէր Յովսեփայ յԵգիպտոս,
20 Եւ ասէր, Արի՛ առ զմանուկդ և զմայր իւր,
և գնա յերկիրն Իսրայէլի. զի մեռան որ խնդ_
21 րէին զանձն մանկանդ: Եւ նա յարուցեալ՝ առ
զմանուկն և զմայր նորա, և եկն յերկիրն Իս_
22 րայէլի: Եւ իբրեւ լուաւ եթէ Արքեղայոս
թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերով_
դի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր. և
հրաման առեալ 'ի տեսլեան, գնաց 'ի կող_

*Յոյն՝ լինելոց է



13 Ու երբոր անոնք գացին անկէ, ահա Տէրոջը
հրեշտակը երազի մէջ երեւցաւ Յովսեփին՝ ու
ըսաւ, Ելի՛ր առ մանուկը ու անոր մայրը,
ու Եգիպտոս փախիր, և հոն կեցիր մինչև որ
ես քեզի ըսեմ, քանզի Հերովդէս պիտի փըն_
14 տռէ աս մանուկը կորսնցընելու համար: Ան
ալ ելաւ, մանուկը ու անոր մայրը գիշերով
առաւ և գնաց Եգիպտոս, ու մինչև Հերովդէ_
15 սին մահը հոն էր. Որ կատարուի Տէրոջմէն
ըսուածը մարգարէին ձեռքովը, որ կ'ըսէ, †Ե_
գիպտոսէն կանչեցի իմ որդիս:
16 Անատենը երբոր տեսաւ Հերովդէս թէ *խա_
բուեցաւ մոգերէն, սաստիկ սրդողեցաւ, ու
ղրկեց ջարդեց Բեթլեհէմի և անոր ամէն
սահմաններուն մէջ գտնուած բոլոր տղաքը՝
երկու տարուընէն վար, ան ժամանակին հա_
17 մեմատ որ մոգերէն ստուգեց: Անատենը կա_
տարուեցաւ Երեմիա մարգարէին ձեռքով
18 ըսուածը, որ կ'ըսէ, ‡Ռամայի մէջ ձայն մը
լսուեցաւ՝ ողբ, լաց ու մեծ կոծ. Ռաքէլ
կու լար իր տղոց համար, ու չէր ուզեր մխի_
թարուիլ, ինչու որ չկային:
19 Ու երբոր Հերովդէս մեռաւ, ահա Տէրոջը
հրեշտակը Եգիպտոս երազի մէջ Յովսեփին
20 երեւցաւ, Ու ըսաւ, Ելի՛ր առ մանուկը ու
անոր մայրը, և գնա Իսրայէլի երկիրը, քանզի
մեռան անոնք որ մանուկին կեանքը կը փըն_
21 տռէին: Ան ալ ելաւ՝ մանուկը ու անոր մայրը
22 առաւ և եկաւ Իսրայէլի երկիրը: Իսկ երբոր
լսեց թէ Արքեղայոս թագաւորեց Հրէաստանի
վրայ իր հօրը Հերովդէսին տեղը, վախցաւ
հոն երթալու. ու երազի մէջ պատգամ առնե_

† Ովս. ժա. 1: * Յուն. Ծաղրեցաւ ‡ Երեմ. լա. 15:

23 մանս Գալիլեացւոց: Եւ եկեալ բնակեցաւ
'ի քաղաքին, որ կոչէր Նազարէթ. զի լցցի
բանն մարգարէից թէ Նազովրեցի կոչեսցի:

## ԳԼ. Գ

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ
2 քարոզել յանապատին Հրէաստանի, Եւ ասել,
Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն
3 երկնից: Զի սա է վասն որոյ ասացաւ 'ի ձեռն
Եսայեայ մարգարէի, որ ասէ, Ձայն բար-
բառոյ յանապատի, պատրաստ արարէք զճա-
նապարհ Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս
4 նորա: Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ
'ի ստեւոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ
մէջ իւր. և կերակուր նորա էր մարախ և
5 մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ նա ա-
մենայն Երուսաղէմացիք և ամենայն Հրէաս-
6 տան և ամենայն կողմն Յորդանանու, Եւ մը-
կրտէին 'ի նմանէ 'ի Յորդանան, և խոստո-
7 վան լինէին զմեղս իւրեանց: Եւ տեսեալ ըզ-
բազումս 'ի սադուկեցւոյն և 'ի փարիսեցւոց



23 լով՝ [ծ]Գալիլեայի կողմերը գնաց. Եւ եկաւ
[կ]Նազարէթ ըսուած քաղաքը բնակեցաւ, որ
մարգարէներուն խօսքը կատարուի՝ թէ Նա-
զովրեցի պիտի կոչուի:

## ԳԼ. Գ

1 Յովհաննէսին քարոզութիւնը, պաշտօնը, վարքը և մկրտութիւնը: 7 Յովհաննէս կը յանդիմանէ փարիսեցիները, 13 և կը մկրտէ զՔրիստոս Յորդանանու մէջ:

1 Ան օրերը [ա]Յովհաննէս մկրտիչը եկաւ, [բ]ու
Հրէաստանի անապատին մէջ կը քարոզէր,
2 Ու կ'ըսէր, Ապաշխարեցէք, ինչու որ [գ]երկնից
3 թագաւորութիւնը մօտեցած է: Վասն զի ա-
սիկա ան է՝ որուն համար Եսայի մարգարէին
ձեռքով ըսուեցաւ, որ կ'ըսէ, [դ]Անապատի
մէջ կանչողին ձայնը, [ե]Տէրոջը ճամբան պատ-
4 րաստեցէք, անոր շաւիղները շիտկեցէք: Եւ
աս [զ]Յովհաննէսը իր հանդերձը [է]ուղտի մազէ՝
ու իր մէջքը կաշիէ գօտի ունէր. և իր կերա-
5 կուրը [ը]մարախ ու [թ]վայրենի մեղր էր: [ժ]Ան-
տենը Երուսաղէմ և բոլոր Հրէաստան ու
Յորդանանու բոլոր կողմերը իրեն կ'ելլէին,
6 Եւ կը մկրտուէին իրմէն Յորդանանու մէջ, ու
7 [ի]իրենց մեղքերը կը խոստովանէին: Ու երբոր
տեսաւ փարիսեցիներէն ու սադուկեցիներէն

| | | |
|---|---|---|
| ծ Գլ. գ. 13: Ղուկ. բ. 39: | բ Յես. ժգ. 10: | Զաք. ժգ. 4: |
| կ Յովհ. ա. 45: | գ Դան. բ. 44: Գլ. գ. 17: ժ. 7: | ը Ղև. ժա. 22: |
| — | դ Ես. խ. 3: Մար. ա. 3: Ղուկ. գ. 4: Յովհ. ա. 23: | թ Ա Թագ. ժզ. 25, 26: |
| ա Մար. ա. 4, 15: Ղուկ. գ. 2, 3: Յովհ. ա. 28: | ե Ղուկ. ա. 76: | ժ Մար. ա. 5: Ղուկ. գ. 7: Գոր. ժթ. 4: |
| | զ Մար. ա. 6: | ի Գոր. ժթ. 18: |
| | է Դ Թագ. ա. 8: | |

եկեալ 'ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա,
Ծնունդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչիլ 'ի
8 բարկութենէն որ գալոց է։ Արարէք այսու-
հետեւ պտուղ արժանի ապաշխարութեան։
9 Եւ մի համարիցիք ասել յանձինս թէ ունիմք
մեք հայր զԱբրահամ. ասեմ ձեզ. զի կարող
է Աստուած 'ի քարանցս յայսցանէ յարուցա-
10 նել որդիս Աբրահամու։ Զի աւասիկ տապար
առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ
ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և 'ի հուր
11 արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխա-
րութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն
է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ
զկօշիկս նորա. Նա մկրտեսցէ զձեզ 'ի Հոգին
12 Սուրբ և 'ի հուր. Որոյ հեծանոցն 'ի ձեռին
իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ
զցորեանն 'ի շտեմարանս իւր, և զյարդն այ-
13 րեսցէ անշէջ հրով։ Յայնժամ գայ Յիսուս 'ի
Գալիլեէ 'ի Յորդանան առ Յովհաննէս մկըր-
14 տել 'ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա
և ասէ, Ինձ պիտոյ է 'ի քէն մկրտել, և դու
15 առ ի՞ս գաս։ Պատասխանի ետ Յիսուս և ա-
սէ ցնա, Թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայել
է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. և ա-



չառերը իր մկրտութեանը եկած, ըսաւ անոնց,
[ւ]Իժերու ծնունդներ, ո՞վ իմացուց ձեզի [խ]գա-
8 լու բարկութենէն փախչիլ։ Ուրեմն ապաշխա-
9 րութեան արժանաւոր պտուղ բերէք։ Եւ մի
խորհիք դուք ձեր ներսիդին ըսել, թէ [ծ]Մենք
մեր հայր՝ Աբրահամը ունինք. քանզի կ'ըսեմ
ձեզի որ Աստուած կարող է աս քարերէս
10 Աբրահամին որդիներ հանել։ Ալ հիմա կացինը
ծառերուն արմատին քովը կը դրուի. ուստի
[կ]ամէն ծառ որ բարի պտուղ չբերեր, կը կը-
11 տրուի ու կրակը կը ձգուի։ [հ]Ես ձեզ ջրով կը
մկրտեմ ապաշխարութեան համար, բայց իմ
ետեւէս եկողը ինծմէ զօրաւոր է, ու ես անոր
կօշիկները կրելու արժանի չեմ. [ձ]Անիկա ձեզ
պիտի մկրտէ Հոգւով Սրբով ու կրակով.
12 [ղ]Որուն հեծանոցը իր ձեռքն է, և իր կալը
պիտի մաքրէ ու իր ցորենը համբարը պիտի
ժողվէ, և [ճ]յարդը չմարելու կրակով պիտի
այրէ։
13 [մ]Անատենը Յիսուս [յ]Գալիլեայէն Յորդանան
14 եկաւ Յովհաննէսին, որ անկէ մկրտուի։ Եւ
Յովհաննէս կ'արգիլէր անիկա ու կ'ըսէր, Ին-
ծի պէտք է որ քեզմէ մկրտուիմ, ու դուն
15 ինծի՞ կու գաս։ Յիսուս պատասխան տուաւ
ու ըսաւ անոր, Թող տուր հիմա, ինչու որ
այսպէս կը վայելէ մեզի որ բոլոր արդարու-
թիւնը կատարենք. Ետքը թող տուաւ անոր։

ւ Գլ. ժբ. 34։ իգ. 33։ Ղուկ. գ. 7, 8, 9։
խ Հռովմ. ե. 9։ ա Թես. ա. 10։
ծ Յովհ. ը. 33, 39։ Գործ. ժգ. 26։ Հռովմ. դ. 1, 11, 16։
կ Գլ. է. 19։ Ղուկ. ժգ. 7, 9։ Յովհ. ժե. 6։
հ Մար. ա. 8։ Ղուկ. գ. 16։ Յովհ. ա. 15, 26, 33։ Գործ. ա. 5։ ժա. 16։ ժթ. 4։
ձ Ես. դ. 4։ խդ. 3։ Մաղ. գ. 2։ Գոր. բ. 3, 4։ ա Կոր. ժբ. 13։
ղ Տես Մաղ. դ. 3։
ճ Մաղ. դ. 1։ Գլ. ժգ. 30։
մ Մար. ա. 9։ Ղուկ. գ. 21։
յ Գլ. բ. 22։

16 պա թոյլ ետ նմա ։ Եւ իբրեւ մկրտեցաւ Յի-
սուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. եւ ահա
բացան նմա երկինք, եւ ետես զՀոգին Աս-
տուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, եւ գայր
17 'ի վերայ նորա ։ Եւ ահա ձայն յերկնից որ ա-
սէր, Դա է որդի իմ սիրելի՝ ընդ որ հա-
ճեցայ ։

## ԳԼ. Դ

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի Հո-
2 գւոյն՝ փորձել 'ի Սատանայէ ։ Եւ պահեալ
զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա
3 քաղցեաւ ։ Եւ մատուցեալ փորձիչն ասէ ցնա,
Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա զի քարինքս
4 այսոքիկ հաց լինիցին ։ Նա պատասխանի ետ
եւ ասէ, Գրեալ է թէ Ոչ հացիւ միայն կեցցէ
մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բե-
5 րանոյ Աստուծոյ ։ Յայնժամ առեալ ածէ զնա
Սատանայ 'ի քաղաքն սուրբ, եւ կացուցանէ
6 զնա 'ի վերայ աշտարակի տաճարին, Եւ ասէ
ցնա, Եթէ որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ



16 [ն]Ու երբոր Յիսուս մկրտուեցաւ՝ շուտ մը ջու-
րէն դուրս ելաւ, և ահա երկինքը անոր բա-
ցուեցաւ, ու տեսաւ [ձ]Աստուծոյ Հոգին որ
աղաւնիի պէս կ'իջնէր, ու կու գար իր վրայ ։
17 [ո]Եւ ահա երկինքէն ձայն մը եկաւ որ կ'ըսէր,
[չ]Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն հաւներ
եմ ։

## ԳԼ. Դ

1 Քրիստոս ծոմ կը պահէ ու կը փորձուի ։ 11 Հրեշտակները անոր սպասաւորութիւն կ'ընեն ։ 13 Քրիստոս Կափառնայումի մէջ կը բնակի. 17 կը սկսի քարոզել. 18 կը կանչէ Պետրոսը ու Անդրէասը, 21 Յակոբոսը և Յովհաննէսը, 23 ու կը բժշկէ բոլոր հիւանդները ։

1 Անատենը [ա]Յիսուս անապատը տարուեցաւ
2 Սուրբ [բ]Հոգիէն՝ որ Սատանայէն փորձուի. Եւ
քառասուն ցորեկ ու քառասուն գիշեր ծոմ
պահելէն ետքը անօթեցաւ ։
3 Եւ փորձողը անոր մօտենալով՝ ըսաւ, Թէ
որ դուն Աստուծոյ Որդին ես, ըսէ որ աս
4 քարերը հաց ըլլան ։ Անիկա պատասխան տը-
ւաւ ու ըսաւ, Գրուած է թէ [գ]Ոչ միայն հա-
ցով կ'ապրի մարդ, հապա ան ամէն խօսքով՝
որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ ։
5 Անատենը Սատանան առաւ տարաւ զա-
նիկա [դ]սուրբ քաղաքը, և կայնեցուց զանի-
6 կա տաճարին աշտարակին վրայ, Ու ըսաւ
անոր, Թէ որ դուն Աստուծոյ որդին ես, քեզ

ն Մար. ա. 10 ։
ձ Ես. ժա. 2 ։ խբ. 1 ։ Ղուկ. գ. 22 ։ Յովհ. ա. 32, 33 ։
ո Յովհ. ժբ. 28 ։
չ Սաղ. բ. 7 ։ Ես. խբ. 1 ։ Գղ. ժբ. 18 ։ ժէ. 5 ։ Մար. ա. 11 ։ Ղուկ. թ. 35 ։ Եփես. ա. 6 ։ Կող. ա. 13 ։ բ Պետ. ա. 17 ։

—

ա Մար. ա. 12 ։ Ղուկ. դ. 1 ։
բ Տես գ Թագ. ժը. 12 ։ Եզեկ. գ. 14 ։ ը. 3. ժա. 1, 24 ։ խ. 2 ։ խգ. 5 ։ Գոր. ը. 39 ։
գ բ Օր. ը. 3 ։
դ Նեեմ. ժա. 1, 18 ։ Ես. խը. 2 ։ ծբ. 1 ։ Գղ. իէ. 53 ։ Յայտ. ժա. 2 ։

աստի 'ի վայր • զի գրեալ է թէ Հրեշտակաց
իւրոց պատուիրեալ է վասն քո, և 'ի վերայ
ձեռաց բարձցեն զքեզ, զի մի երբէք հարցես
7 զքարի զոտն քո ։ Ասէ ցնա *դարձեալ Յի֊
սուս," Գրեալ է թէ Ոչ փորձեսցես զՏէր
8 Աստուած քո ։ Դարձեալ առնու ածէ զնա
Սատանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցու֊
ցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշ֊
9 խարհի և զփառս նոցա, Եւ ասէ ցնա, Զայս
ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիրպագա֊
10 նիցես ինձ ։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Երթ
յետս իմ, Սատանայ, զի գրեալ է, Տեառն
Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն
11 պաշտեսցես ։ Ապա եթող զնա Սատանայ, և
ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա ։
12 Եւ իբրեւ լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս
13 մատնեցաւ, մեկնեցաւ գնաց 'ի Գալիլեա • Եւ
թողեալ զՆազարէթ՝ եկն բնակեցաւ 'ի Կա֊
փառնայում 'ի ծովեզերին, 'ի սահմանս
14 Զաբուղոնի և Նեփթաղիմայ • Զի լցցի բանն որ
15 ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէի, Երկիր
Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմայ, ճանա֊
պարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա
16 հեթանոսաց • Ժողովուրդ որ նստէր 'ի խաւարի՝
ետես լոյս մեծ, և որոց նստէին յաշխարհին
և 'ի ստուերս մահու՝ լոյս ծագեաց նոցա ։
17 Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս և ա֊

* Յոյնն՝ Յիսուս, Դարձեալ



տուէ՛ վար ձգէ, ինչու որ գրուած է թէ [ե]Իր
հրեշտակներուն պիտի ապսպրէ քեզի համար,
ու ձեռքերնուն վրայ պիտի վերցնեն քեզ,
7 որ չըլլայ թէ ոտքդ քարի զարնես ։ Յիսուս
ըսաւ անոր, Դարձեալ գրուած է թէ [զ]Քու
Տէր Աստուածդ չփորձես ։
8 Սատանան նորէն առաւ հանեց զանիկա
խիստ բարձր լեռան մը վրայ, և ցուցուց ա֊
նոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները
9 ու անոնց փառքը • Ու ըսաւ անոր, Ասոնք
ամէնը քեզի կու տամ, թէ որ իյնաս՝ ինծի
10 երկրպագութիւն ընես ։ Անտենը Յիսուս ը֊
սաւ անոր, [Ետիս] գնա, Սատանայ, ինչու
որ գրուած է թէ [է]Քու Տէր Աստուծոյդ եր֊
կըրպագութիւն ընես, ու միայն զանիկա պաշ֊
11 տես ։ Անտենը Սատանան զանիկա թողուց •
և ահա [ը]Հրեշտակներ եկան ու անոր սպա֊
սաւորութիւն կ՚ընէին ։
12 Եւ [թ]Երբոր լսեց Յիսուս թէ Յովհաննէս
13 մատնուեցաւ, ելաւ գնաց Գալիլեա • Ու ձը֊
գելով Նազարէթը՝ եկաւ բնակեցաւ Կափառ֊
նայում ծովեզերեայ քաղաքը՝ Զաբուղոնի ու
14 Նեփթաղիմի սահմաններուն մէջ • Որ կա֊
տարուի Եսայի մարգարէին ձեռքով ըսուած
15 խօսքը, [ժ]Զաբուղոնի երկիրը ու Նեփթաղիմի
երկիրը, ծովու ճամբով Յորդանանու անդին
16 կողմը, հեթանոսաց Գալիլեան • [ի]Խաւարի
մէջ նստող ժողովուրդը մեծ լոյս տեսաւ, և
լոյս ծագեցաւ անոնց՝ որ մահուան երկրին
17 ու շուքին մէջ կը նստէին ։ [լ]Անկէ ետև Յի֊

ե Սաղ. ղա. 11, 12 ։
զ Բ Օր. զ. 16 ։
է Բ Օր. զ. 13 ։ Ժ. 20 ։ Յես. իդ. 14 ։ Ա Թագ. է. 3 ։
ը Եբր. ա. 14 ։
թ Մար. ա. 14 ։ Ղուկ. գ. 20 ։ դ. 14, 31 ։ Յովհ. դ. 43 ։
ժ Ես. թ. 1, 2 ։
ի Ես. խբ. 7 ։ Ղուկ. բ. 32 ։
լ Մար. ա. 14, 15 ։

սել, Ապաշխարեցէք զի մերձեալ է արքա-
18 յութիւն երկնից։ Մինչդեռ զնայր Յիսուս
ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, ետես երկուս
եղբարս, զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, և զԱն-
դրէաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան 'ի ծով,
19 քանզի ձկնորսք էին։ Եւ ասէ ցնոսա, Եկայք
զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդ-
20 կան։ Եւ նոցա թողեալ վաղվաղակի *զգոր-
21 ծիսն՝ գնացին զհետ նորա։ Եւ մատուցեալ
անտի յառաջ՝ ետես այլ երկուս եղբարս,
զՅակոբոս Զեբեդեայ և զՅովհաննէս զեղբայր
նորա 'ի նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարբն
իւրեանց, մինչ կազմէին զուռկանս իւրեանց,
22 և կոչեաց զնոսա։ Նոցա թողեալ վաղվաղակի
զնաւն և զհայրն իւրեանց, գնացին զհետ նո-
23 րա։ Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն
Գալիլեացւոց. ուսուցանէր 'ի ժողովուրդս
նոցա և քարոզէր զաւետարանն արքայու-
թեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս
24 և զամենայն ախտս 'ի ժողովրդեանն։ Եւ ել
լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց,
և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ
նեղեալ էին 'ի պէսպէս ցաւս և 'ի տանջանս,
և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս,
25 և բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա
ժողովուրդք բազումք 'ի Գալիլեէ և 'ի Դե-

* Յոյնն՝ զուռկանսն



սուս սկսաւ քարոզել ու ըսել, [ի]Ապաշխարե-
ցէք, ինչու որ երկնից թագաւորութիւնը մօտ
է։
18 [ծ]Երբոր Յիսուս Գալիլեացւոց ծովուն քո-
վերը կը պտըտէր, տեսաւ երկու եղբայրներ՝
[կ]Պետրոս կոչուած Սիմոնը և անոր եղբայրը
Անդրէասը՝ որ ծովը ուռկան կը ձգէին, ինչու
19 որ ձկնորս էին. Եւ ըսաւ անոնց, Իմ ետևէս
20 եկէք, ու [հ]ձեզ մարդոց որսորդ ընեմ։ [ձ]Անոնք
ալ շուտ մը ուռկանները թողուցին ու անոր ե-
21 տևէն գացին։ [ղ]Եւ անկէ յառաջ երթալով՝ տե-
սաւ ուրիշ երկու եղբայրներ՝ Զեբեդեան Յակո-
բոսը ու անոր եղբայրը Յովհաննէսը նաւին մէջ
իրենց հօրը Զեբեդէոսին հետ, երբ իրենց
ուռկանները կը կարկըտէին. ու կանչեց զա-
22 նոնք. Անոնք ալ շուտ մը նաւը ու հայրեր-
նին թողուցին ու անոր ետևէն գացին։
23 Եւ Յիսուս բոլոր Գալիլեան պտըտելով,
[ճ]կը սորվեցընէր անոնց ժողովարաններուն մէջ,
և [մ]արքայութեան աւետարանը կը քարոզէր,
ու [յ]ժողովուրդին մէջի ամէն կերպ հիւանդու-
թիւնները ու ամէն կերպ ցաւերը կը բժըշ-
24 կէր։ Եւ անոր համբաւը բոլոր Սուրիա տա-
րածուեցաւ, և բերին անոր՝ բոլոր հիւանդ-
ները որ կերպ կերպ ցաւերով ու տանջանք-
ներով կը նեղուէին, և դիւահարները ու լուս-
նոտները և անդամալոյծները. ու բժշկեց զա-
25 նոնք։ Եւ [ն]շատ ժողովուրդներ անոր ետևէն
կ'երթային՝ Գալիլեայէն ու Դեկապոլիսէն և

ի Գլ. գ. 2: ժ. 7:
ծ Մար. ա. 16, 17, 18: Ղուկ. ե. 2:
կ Յովհ. ա. 42:
հ Ղուկ. ե. 10, 11:
ձ Մար. ժ. 28: Ղուկ. ժը. 28:
ղ Մար. ա. 19: Ղուկ. ե. 10:
ճ Գլ. թ. 35: Մար. ա. 21, 39: Ղուկ. դ. 15, 45:
մ Գլ. իդ. 14: Մար. ա. 14:
յ Մար. ա. 34:
ն Մար. գ. 7:

կապօլեայ և յԵրուսաղէմէ և ՚ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու*, և բժշկեաց զնոսա"։

## ԳԼ. Ե

1 Եւ տեսեալ զժողովուրդսն ել ՚ի լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշա-
2 կերտք նորա. Եւ բացեալ զբերան իւր ուսու-
3 ցանէր զնոսա և ասէր, Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։
4 Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։
5 Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զեր-
6 կիր։ Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն
7 արդարութեան, զի նոքա յագեսցին։ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։
8 Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի
9 նոքա զԱստուած տեսցեն։ Երանի խաղաղա- րարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։
10 Երանի որ հալածեալ իցեն վասն արդարու- թեան, զի նոցա է արքայութիւն երկնից։

---

* Ի Յոյնն չէ



Երուսաղէմէն ու Հրէաստանէն և Յորդանանու անդիի կողմէն։

## ԳԼ. Ե

1 Քրիստոս կը սկսի իր քարոզութիւնը լեռանը վրայ, 3 և կ'իմացընէ թէ որոնք են երանելիները. 13 իր աշակերտները կ'անուանէ երկրի աղ, 14 աշխարհի լոյս, լեռան վրայ կեցած քաղաք. 17 կը յայտնէ թէ ինքը եկաւ օրէնքը կատարելու. 21 կը բացատրէ թէ ինչ է սպանութիւն ընելը, 27 շնութիւն ընելը, 33 երդում ընելը. 38 կը յորդորէ չարին հակառակ չըկենալ, 44 մինչև անգամ թշնամիները սիրել, 48 և կատարեալ ըլլալու ջանք ընել։

1 Եւ տեսնելով ժողովուրդները՝ [ա]լեռը ելաւ.
ու երբոր նստաւ հոն՝ իր աշակերտները քովը
2 գացին. Եւ իր բերանը բանալով կը սորվեցնէր
անոնց ու կ'ըսէր,
3 [բ]Երանի հոգւով աղքատներուն, ինչու որ
4 երկնից թագաւորութիւնը անոնցն է։ [գ]Երանի
սգաւորներուն, ինչու որ անոնք պիտի մխի-
5 թարուին։ [դ]Երանի հեզերուն, ինչու որ [ե]ա-
6 նոնք պիտի ժառանգեն երկիրը։ Երանի ա-
նոնց՝ որ անօթի ու ծարաւ են արդարութեան,
7 ինչու որ [զ]անոնք պիտի կշտանան։ [է]Երանի
ողորմածներուն, ինչու որ անոնք ողորմու-
8 թիւն պիտի գտնեն։ [ը]Երանի անոնց՝ որ սրտով
մաքուր են, ինչու որ [թ]անոնք պիտի տեսնեն
9 զԱստուած։ Երանի խաղաղութիւն ընողնե-
րուն, ինչու որ անոնք Աստուծոյ որդիներ
10 պիտի կոչուին։ [ժ]Երանի անոնց՝ որ հալա-

ա Մար. գ. 13, 20։
բ Ղուկ. զ. 20։ Տես Սաղ. ծա. 17։ Առակ. ժզ. 19։ իթ. 23։ Եսա. ծէ. 15։ կզ. 2։
գ Եսա. կա. 2, 3։ Ղուկ. զ. 21։ Յովհ. ժզ. 20։ բ Կոր. ա. 7։ Յայտ. իա. 4։
դ Սաղ. լէ. 11։
ե Տես Հռոմ. դ. 13։
զ Եսա. ծե. 1։ կե. 13։
է Սաղ. խա. 1։ Գլ. զ. 14։ Մար. ժա. 25։ բ Տիմ. ա. 16։ Եբր. զ. 10։ Յակ. բ. 13։
ը Սաղ. ժե. 2։ իգ. 4։ Եբր. ժբ. 14։
թ ա Կոր. ժգ. 12։ ա Յովհ. գ. 2, 3։
ժ բ Կոր. դ. 17։ բ Տիմ. բ. 12։ ա Պետ. գ. 14։

11 Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և
հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար
12 զձէնջ սուտ վասն իմ. Ցնծացէք և ուրախ լե-
րուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.
զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յա-
13 ռաջ քան զձեզ էին։ Դուք էք աղ երկրի.
ապա թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի. ոչ իմիք
ազդիցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ
14 արտաքս և կոխան լինել ’ի մարդկանէ։ Դուք
էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել՝
15 որ ’ի վերայ լերին կայցէ։ Եւ ոչ լուցանեն
ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ ’ի վերայ
աշտանակի, և լոյս տայ ամենեցուն որ ’ի
16 տանն իցեն։ Այնպէս լուսաւորեսցէ լոյս
ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն
զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն
զՀայր ձեր որ յերկինս է։

17 Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս
կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։
18 Ամէն ասեմ ձեզ, Մինչև անցցեն երկինք և
երկիր, յովտ մի՝ *որ նշանախեց մի է՝ ոչ
անցցէ յօրինացն և ’ի մարգարէից" մինչև
19 ամենայն եղիցի, Որ ոք լուծցէ մի ինչ ’ի
պատուիրանացս յայսցանէ ’ի փոքունց, և

---

* Յոյնն՝ կամ նշանախեց մի՝ ոչ անցցէ յօրինացն՝



ծուած են արդարութեան համար, ինչու որ
11 երկնից թագաւորութիւնը անոնցն է։ [ի]Երա-
նի է ձեզի՝ երբոր կը նախատեն ձեզ ու կը
հալածեն, և սուտ տեղը ամէն կերպ [լ]գէշ
12 խօսքեր կը խօսին վրանիդ ինծի համար. [խ]Ցըն-
ծացէք և ուրախ եղէք, ինչու որ ձեր վարձ-
քը շատ է երկինքը. քանզի աս [ծ]կերպով հա-
լածեցին ձեզմէ առաջ եղած մարգարէները։
13 Դուք էք երկրի աղը. [կ]հապա թէ որ աղը
իր համը կորսընցընէ, ինքը ինչո՞վ պիտի ա-
ղուի. անկէ ետև բանի մը չգար, միայն թէ
դուրս ձգուելու և մարդոց ոտքին տակը կո-
14 խուելու։ [հ]Դուք էք աշխարհի լոյսը. քա-
ղաք մը՝ որ լեռան վրայ կեցած է, չկրնար
15 պահուիլ։ Ու [ձ]ճրագը չեն վառեր և դներ
գրուանի տակ՝ հապա աշտանակի վրայ, և
լոյս կու տայ բոլոր տանը մէջ եղողներուն։
16 Անանկ թող լուսաւորէ ձեր լոյսը մարդոց
առջին, [ղ]որ տեսնեն ձեր բարի գործքերը,
ու [ճ]փառաւորեն ձեր Հայրը որ երկինքն է։
17 [մ]Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մար-
գարէները աւրելու. չեկայ աւրելու, հապա
18 կատարելու։ Քանզի ճշմարտապէս կ’ըսեմ
ձեզի, [յ]Մինչև որ երկինք ու երկիր անցնին,
օրէնքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի
19 չանցնի, մինչև որ բոլորն ալ կատարուի։ [ն]Ուս-
տի ով որ աս ամենափոքր պատուիրանքնե-
րուն մէկը աւրէ, ու մարդոց անանկ սոր-

ի Ղուկ. զ. 22։
լ ա Պետ. դ. 14։
խ Ղուկ. զ. 23։ Գործ. է. 41։ Հռոմ. ե. 3։ Յակ. ա. 2։ ա Պետ. դ. 13։
ծ Նեեմ. թ. 26։ բ Մն. լզ. 16։ Գւ. իգ. 34, 37։ Գործ. է. 52։ ա Թես. բ. 15։
կ Մար. թ. 49։ Ղուկ. ժդ. 34, 35։
հ Առակ. դ. 18։ Փիլ. բ. 15։
ձ Մար. դ. 21։ Ղուկ. ը. 16։ ժա. 33։
ղ ա Պետ. բ. 12։
ճ Յովհ. ժե. 8։ ա Կոր. ժդ. 25։
մ Հռոմ. գ. 31։ ժ. 4։ Գաղ. գ. 24։
յ Ղուկ. ժզ. 17։
ն Յակ. բ. 10։

ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի
յարքայութեան երկնից . իսկ որ արասցէ և
ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան
20 երկնից ։ Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առա֊
ւելուցու արդարութիւն ձեր աւելի քան
զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յար֊
21 քայութիւն երկնից ։ Լուարուք զի ասացաւ
առաջնոցն թէ Մի սպանաներ . զի որ սպա֊
22 նանիցէ՝ պարտական լիցի դատաստանի ։ Այլ
ես ասեմ ձեզ, Եթէ ամենայն որ բարկանայ
եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր
լիցի դատաստանի . և որ ասիցէ ցեղբայր
իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի . և որ
ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լի֊
23 ցի 'ի գեհեն հրոյն ։ Եթէ մատուցանիցես
զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ, և անդ֊
յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ
24 զքէն, թող զպատարագն քո առաջի սեղա֊
նոյն, երթ՝ նախ հաշտեաց ընդ եղբօր քում,
և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո ։
25 Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղվաղոյն,
մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի .
գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և
դատաւորն դահճի, և արկանիցիս 'ի բանտ ։
26 Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցես անտի մինչև
27 հատուցանիցես զյետին նաքարակիտն ։ Լուա֊

ԳԼՈՒԽ Ե 13

վճռէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի
երկնից թագաւորութեանը մէջ . բայց ով որ
ընէ և սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի
20 երկնից թագաւորութեանը մէջ ։ Քանզի կ'ը֊
սեմ ձեզի, թէ որ ձեր արդարութիւնը դը֊
պիրներուն ու փարիսեցիներուն արդարութենէն
աւելի չըլլայ, բնաւ պիտի չմտնէք երկնից
թագաւորութիւնը ։
21 Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն,
«Սպանութիւն մի ըներ . և ով որ սպանութիւն
ընէ, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ ։
22 Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ով որ իր եղբօրը պա֊
րապ տեղը սրդողի, դատաստանի պարտա֊
ւոր պիտի ըլլայ . և ով որ իր եղբօրը Ցիմար
ըսէ, ատեանի պարտաւոր պիտի ըլլայ . և
ով որ իր եղբօրը Անմիտ ըսէ, գեհենի կրակին
23 պարտաւոր պիտի ըլլայ ։ Ուրեմն՝ թէ որ
քու ընծադ սեղանին վրայ բերես, ու հոն
միտքդ գայ թէ քու եղբայրդ քեզի դէմ
24 բան մը ունի, հոն ձգէ քու ընծադ սեղա֊
նին առջևը, և գնա՛ առաջ եղբօրդ հետ հաշ֊
տուէ, ու ետքը եկուր որ քու ընծադ մա֊
25 տուցանես ։ Քու ոսոխիդ հետ շուտով միա֊
բանէ՝ քանի որ անոր հետ ճամբուն մէջն ես .
չըլլայ որ քու ոսոխդ քեզ դատաւորին մատ֊
նէ, և դատաւորը դահիճին, և բանտը ձը֊
26 գուիս ։ Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, պիտի չել֊
լես անկէ՝ մինչև որ վերջի նաքարակիտը չը֊
վճարես ։
27 Լսեր էք որ ըսուեցաւ*, «Շնութիւն մի

ւ Հռովմ. թ. 31 : ժ. 3 :
ո Եւ. ի. 13 : բ Օր. ե. 17 :
ն ա Յովհ. գ. 15 :

պ Գղ. ը. 4 : իգ. 19 :
չ Գղ. ժը. 19 : ա Տիմ. բ. 8 : ա Պետ. գ. 7 :
ռ Առակ. իե. 8 :

Ղուկ. ժբ. 58. 59 :
* Ոմանք կ'աւելցընեն առաջիններուն
ս Եւ. ի. 14 : բ Օր. ե. 18 :

28 ռուք զի ասացաւ, Մի շնար. Բայց ես ասեմ
ձեզ թէ Ամենայն որ հայի 'ի կին մարդ առ
'ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա
29 'ի սրտի իւրում։ Եթէ ակն քո աջ գայթակ-
ղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա 'ի
քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց
կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո անկա-
30 նիցի 'ի գեհեն։ Եւ եթէ աջ ձեռն քո գայ-
թակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա
'ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց
քոց կորիցէ, և մի ամենայն մարմինդ քո
31 արկանիցի 'ի գեհեն։ Ասացաւ եթէ
Որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակ-
32 ման. Բայց ես ասեմ ձեզ եթէ Ամենայն որ ար-
ձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝
նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝
33 շնայ։ Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջ-
նոցն, Մի երդնուցուս սուտ, բայց հատուս-
34 ցես Տեառն զերդմունս քո։ Այլ ես ասեմ
ձեզ, Ամենևին մի երդնուլ, մի յերկինս՝ զի
35 աթոռ է Աստուծոյ։ Եւ մի յերկիր՝ զի պա-
տուանդան է ոտից նորա, և մի յԵրուսաղէմ՝
36 զի քաղաք է մեծի արքայի. Եւ մի 'ի գլուխ
քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպի-



28 ընէր։ Բայց ես ձեզի կ'ըսեմ, Ղ Ով որ կնիկ
մարդու կը նայի անոր ցանկանալու համար,
ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր
29 հետ։ ψ Արդ թէ որ քու աջ աչքդ քեզ կը
գայթակղեցընէ, ℞ հանէ զանիկա ու քեզմէ
ձգէ. ինչու որ աղէկ է քեզի որ անդամնե-
րուդ մէկը կորսուի, ու քու բոլոր մարմինդ
30 դժոխքը չձգուի։ Եւ թէ որ աջ ձեռքդ քեզ
կը գայթակղեցընէ, կտրէ զանիկա ու քեզ-
մէ ձգէ. ինչու որ աղէկ է քեզի որ անդամ-
ներուդ մէկը կորսուի, ու քու բոլոր մարմի-
31 նդ դժոխքը չձգուի։ Իսկ՝ ըսուեցաւ թէ
ɔ Ով որ իր կնիկը կ'արձակէ, թող անոր ար-
32 ձակման թուղթ տայ. Բայց ես ձեզի կ'ըսեմ
թէ – Ով որ իր կնիկը կ'արձակէ առանց պոռ-
նկութեան պատճառի, ինքը պատճառ կ'ըլ-
լայ անոր շնութիւն ընելուն, և ով որ ան
արձակուածը առնէ՝ շնութիւն կը գործէ։
33 Դարձեալ լսեր էք որ ‡ ըսուեցաւ առաջին-
ներուն, + Սուտ երդում մի ըներ, հապա ∘ ը-
34 րած երդումներդ վճարէ Տէրոջը։ Բայց ես
ձեզի կ'ըսեմ, ф Ամենեւին երդում մի ընէք, ոչ
35 երկնից վրայ՝ որ ш Աստուծոյ աթոռն է, Եւ ոչ
երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուան-
դանն է, ոչ ալ Երուսաղէմի վրայ՝ որ ⱶ մեծ
36 Թագաւորին քաղաքն է. Եւ ոչ քու գլխուդ
վրայ երդում ընես, ինչու որ չես կրնար մէկ

Ղ Յոբ. լա. 1: Առակ. զ. 25: Տես Ծն. լդ. 2: բ Թագ. ժա. 2:
ψ Գլ. ժը. 8, 9: Մար. թ. 46:
℞ Տես գլ. ժթ. 12: Հռովմ. ը. 13: ա Կոր. թ. 27: Կող. գ. 5:
ɔ բ Օր. իդ. 1: Երեմ. գ. 1: Տես գլ. ժթ. 3: Մար. ժ. 2, եւ:
– Գլ. ժթ. 9: Ղուկ. ժզ. 18: Հռովմ. է. 3: ա Կոր. է. 10, 11:
‡ Գլ. իգ. 16:
+ Ել. ի. 7: Ղև. ժթ. 12: Թու. լ. 2: բ Օր. ե. 11:
∘ բ Օր. իգ. 23:
ф Գլ. իգ. 16, 18, 22: Յակ. ե. 12:
ш Ես. կզ. 1:
ⱶ Սաղ. խը. 2: ձէ. 3:

37 տակ առնել կամ թուխ ։ Այլ եղիցի ձեր բան՝
այոն այո, և ոչն ոչ. զի աւելին քան զայն
38 'ի չարէն է ։ Լուարուք զի ասացաւ, Ական ընդ-
39 ական և ատամն ընդ ատաման ։ Այլ ես ա-
սեմ ձեզ, Մի կալ հակառակ չարին. այլ եթէ
ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո
40 նմա և զմիւսն ։ Եւ որ կամիցի ոք դատել և
առնուլ զշապիկս քո, թող 'ի նմա և զբաճկոն
41 քո ։ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն
42 մի, երթ ընդ նմա և երկուս ։ Որում խնդրէ
'ի քէն՝ տուր. և որ կամի փոխ առնուլ 'ի
43 քէն՝ մի դարձուցաներ զերեսս ։ Լուարուք
ապաքէն զի ասացաւ, Սիրեսցես զընկեր քո,
44 և ատեսցես զթշնամին քո ։ Այլ ես ասեմ
ձեզ, Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք
զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձե-
րոց, և աղօթս արարէք 'ի վերայ այնոցիկ՝
45 որ լլկեն զձեզ և հալածեն. Զի եղիջիք որ-
դիք Հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգա-
կըն իւր ծագէ 'ի վերայ չարաց և բարեաց,
և ածէ անձրև 'ի վերայ արդարոց և մե-
46 ղաւորաց ։ Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սի-
րեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ո՞չ ապաքէն

ԳԼՈՒԽ Ե 15

37 մազ մը ճերմըկցընել կամ սեւցընել ։ [ն]Հապա
ձեր խօսքը ըլլայ այո՛՝ այո, և ոչը՝ ոչ. ու
ասկէ աւելին չարէն յառաջ կու գայ ։
38 Լսեր էք որ ըսուեցաւ, [տ]Աչքի տեղ աչք,
39 ու ակռայի տեղ ակռայ ։ Բայց ես ձեզի կ'ը-
սեմ, [ե]Չարին հակառակ մի կենաք, [զ]հապա
թէ որ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ՝
40 դարձուր անոր միւսն ալ ։ Եւ մէկը որ կ'ուզէ
քեզի հետ դատ վարել ու քու շապիկդ առ-
41 նել, թող տուր անոր քու վերարկուդ ալ ։ Եւ
[է]ով որ քեզ պահակ բռնէ ու մղոն մը ճամբայ
42 քշէ, դնա անոր հետ երկուք ։ Քեզմէ ու-
զողին տուր, ու [ը]երես մի դարձըներ անկէ՝
որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել ։
43 Լսեր էք որ ըսուեցաւ, [թ]Քու ընկերդ սի-
44 րես ու [ժ]թշնամիդ ատես ։ Բայց ես ձեզի կ'ը-
սեմ, [ի]Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք
ձեզ անիծողները, բարի ըրէք անոնց որ ձեզ
կ'ատեն, և [լ]աղօթք ըրէք անոնց համար՝ որ
45 ձեզ կը չարչըրկեն ու կը հալածեն. Որ ձեր
երկնաւոր Հօրը որդիքը ըլլաք. ինչու որ [խ]իր
արեւը կը ծագեցընէ թէ չարերուն և թէ բա-
րիներուն վրայ, և անձրև կը խրկէ թէ ար-
դարներուն և թէ մեղաւորներուն վրայ ։
46 [ծ]Վասն զի թէ որ դուք ձեզ սիրողները սիրէք,
ի՞նչ վարձք կ'ունենաք. չէ՞ որ մաքսաւոր-

ն Կող. գ. 6 ։ Յակ. ե. 12 ։
տ Ել. իա. 24 ։ Ղե. իդ. 20 ։ բ Օր. ժթ. 21 ։
ե Առակ. ի. 22 ։ իդ. 29 ։ Ղուկ. զ. 29 ։ Հռոմ. ժբ. 17, 19 ։ ա Կոր. զ. 7 ։ ա Թես. ե. 15 ։ ա Պետ. գ. 9 ։
զ Ես. ծ. 6 ։ Ողբ. գ. 30 ։
է Գղ. իէ. 32 ։ Մար. ժե. 21 ։
ը բ Օր. ժե. 8, 10 ։ Ղուկ. զ. 30, 35 ։
թ Ղե. ժթ. 18 ։
ժ բ Օր. իգ. 6 ։ Սաղ. խա. 10 ։
ի Ղուկ. զ. 27, 35 ։ Հռոմ. ժբ. 14, 20 ։
լ Ղուկ. իգ. 34 ։ Գործ. է. 59 ։ ա Կոր. դ. 12, 13 ։ ա Պետ. բ. 23 ։ գ. 9 ։
խ Յոբ. իե. 3 ։
ծ Ղուկ. զ. 32 ։

47 և մաքսաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ տայ-
ցէք միայն ողջոյն *բարեկամաց ձերոց՝ զի՞նչ
աւելի առնէք. ո՞չ ապաքէն մաքսաւորք †և
48 մեղաւորք՚՚ զնոյն գործեն։ Արդ եղերուք
դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր եր-
կնաւոր կատարեալ է։

## ԳԼ. Զ

1 Զգոյշ լերուք ողորմութեան ձերում մի առ-
նել առաջի մարդկան, որպէս թէ 'ի ցոյց
ինչ նոցա. գուցէ և վարձս ոչ ընդունիցիք
2 'ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է։ Այլ յորժամ
առնիցես ողորմութիւն, մի հարկաներ փող
առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն 'ի ժո-
ղովուրդս և 'ի հրապարակս՝ որպէս զի փառա-
ւորեսցին 'ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ, այն
3 իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ ողորմու-
թիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ
4 գործէ աջ քո. Որպէս զի եղիցի ողորմութիւն
քո 'ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ 'ի
5 ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ Եւ
յորժամ յաղօթս կայցես, մի լինիցիս որպէս
կեղծաւորքն. զի սիրեն 'ի ժողովուրդս և
յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս
զի երեւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ,

*Յոյնն՝ եղբարց
† Ի Յունին չէ։



47 ներն ալ նոյնը կ'ընեն։ Եւ թէ որ միայն ձեր եղ-
// բայրներուն բարև տաք, ի՞նչ աւելի կ'ընէք
ուրիշներէն. չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ը-
48 նեն։ [ւ]Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ [ֆ]ինչ-
պէս որ ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է։

## ԳԼ. Զ

1 Քրիստոս կը շարունակէ իր քարոզութիւնը լեռան վրայ, ու կը խօսի ողորմութեան, 5 աղօթք ընելու, 14 մեր եղբարցը յանցանքը ներելու, 16 ծոմ պահելու, 19 մեր գանձը ուր պահելու, 24 Աստուծոյ և մամոնայի ծառայութիւն ընելու վրայով. 25 կը յորդորէ որ աշխարհային բաներու համար հոգ չընենք, 33 հապա Աստուծոյ թագաւորութիւնը խնդրենք։

1 Զգոյշ եղէք որ ձեր [ա]ողորմութիւնը մարդոց
առջևը չընէք՝ անոնց երևնալու համար, եթէ
ոչ վարձք չէք առներ ձեր Հօրմէն որ երկինքն
2 է։ Ուստի [բ]երբոր ողորմութիւն կ'ընես, առ-
ջևդ փող մի հնչեցըներ, ինչպէս որ կեղծա-
ւորները ժողովարաններուն ու փողոցներուն
մէջ կ'ընեն, որ մարդոցմէ փառաւորուին.
ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, անոնք իրենց վարձքը
3 առած կ'ըլլան։ Իսկ դուն երբոր ողորմութիւն
կ'ընես, ձախ ձեռքդ թող չգիտնայ աջ ձեռ-
4 քիդ ինչ գործելը. Որ քու ողորմութիւնդ
գաղտուկ ըլլայ, և քու Հայրդ որ գաղտուկը
կը տեսնէ, [գ]քեզի յայտնապէս հատուցում
պիտի ընէ։

5 Ու երբոր աղօթք կ'ընես, կեղծաւորնե-
րուն նման չըլլաս, որ կը սիրեն ժողովարան-
ներուն մէջ ու հրապարակներուն անկիւնները
կայնելով աղօթք ընել, որ մարդոց երևնան.

ւ Ծն. ԺԷ. 1։ Ղև. ԺԱ. 44։ ԺԹ. 2։ Ղուկ. Զ. 36։ Կող. Ա. 28։ Դ. 12։ Յակ. Ա. 4։ Ա Պետ. Ա. 15, 16։
ֆ Եփես. Ե. 1։
—
ա Բ Օր. ԻԴ. 13։ Սաղ. ՃԺԲ. 9։ Դան. Դ. 27։ Բ Կոր. Թ. 9, 10։
բ Հռովմ. ԺԲ. 8։
գ Ղուկ. ԺԴ. 14։

6 այն իսկ են վարձք նոցա ։ Այլ դու յորժամ
կայցես յաղօթս, մուտ ՚ի սենեակ քո, և
փակեա զդուրս քո, և կաց յաղօթս առ Հայր
քո ՚ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ ՚ի
7 ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս ։ Եւ
յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօս լինիք
իբրեւ զհեթանոսսն. զի համարին եթէ ՚ի
8 բազում խօսից իւրեանց լսելի լինիցին ։ Արդ
մի նմանիցէք նոցա. զի գիտէ Հայրն ձեր
զինչ պիտոյ է ձեզ, մինչչեւ ձեր խնդրեալ
9 ինչ իցէ ՚ի նմանէ ։ Եւ արդ այսպէս կացէք
դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ
10 եղիցի անուն քո ։ Եկեսցէ արքայութիւն քո,
եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի ։
11 Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր ։
12 Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք
13 թողումք մերոց պարտապանաց ։ Եւ մի տա-
նիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ
՚ի չարէ. զի քո է արքայութիւն և զօրու-
14 թիւն և փառք յաւիտեանս ։ Ամէն ։ Զի եթէ
թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թող-
15 ցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր ։ Ապա թէ
ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա,
և ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր ։





ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, անոնք իրենց վարձքը
6 առած կ՚ըլլան ։ Իսկ դուն երբոր աղօթք կ՚ը-
նես, [դ]մտիր քու ներքին սենեակդ ու դուռդ
գոցէ, և աղօթք ըրէ քու Հօրդ որ գաղտուկ
տեղ կը գտնուի. և քու Հայրդ որ գաղտուկը
կը տեսնէ, քեզի յայտնապէս հատուցում պի-
7 տի ընէ ։ Ու երբոր աղօթք կ՚ընէք, [ե]հեթա-
նոսներուն պէս շատախօս մի ըլլաք, [զ]վասն
զի կը կարծեն թէ իրենց շատ խօսելուն հա-
8 մար պիտի լսուին ։ Ուրեմն անոնց չնմանիք,
ինչու որ ձեր Հայրը ձեզի պէտք եղածը գի-
9 տէ՝ դեռ դուք իրմէ չխնդրած ։ Ուստի ա-
սանկ աղօթք ըրէք դուք.
[է]Ով Հայր մեր՝ որ երկինքն ես, քու անու-
10 նդ սուրբ ըլլայ. Քու թագաւորութիւնդ
գայ. [ը]քու կամքդ ըլլայ՝ [թ]ինչպէս որ երկին-
11 քը՝ անանկ ալ երկրիս վրայ. [ժ]Մեր ամէն
12 աւուր հացը այսօր մեզի տուր. Եւ [ի]մեզի
ներէ մեր պարտքերը՝ ինչպէս որ մենք ալ
13 կը ներենք մեր պարտականներուն. Ու [լ]մեզ
փորձութեան մի տանիր, հապա [խ]չարէն մեզ
ազատէ. [ծ]ինչու որ քուկդ է թագաւորութիւնը
և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս ։ Ամէն ։
14 [կ]Վասն զի թէ որ դուք ներէք մարդոց իրենց
յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձե-
15 զի կը ներէ. Հապա [հ]թէ որ դուք չներէք
մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ
ձեզի չներեր ձեր յանցանքները ։

դ դ Թագ. դ. 33 ։
ե Ժող. ե. 2 ։
զ գ Թագ. ժը. 26, 29 ։
է Ղուկ. ժա. 2 ։
ը Գլ. իզ. 39, 42 ։ Գոր. իա. 14 ։
թ Սաղ. ճգ. 20, 21 ։
ժ Տես Յոբ. իգ. 12 ։ Առակ. լ. 8 ։
ի Գլ. ժը. 21 ։
լ Գլ. իզ. 41 ։ Ղուկ. իբ. 40, 46 ։ ա Կոր. ժ. 13 ։ բ Պետ. բ. 9 ։ Յայտ. գ. 10 ։
խ Յովհ. ժէ. 15 ։
ծ ա Մն. իթ. 11 ։
կ Մար. ժա. 25, 26 ։ Եփես. դ. 32 ։ Կող. գ. 13 ։
հ Գլ. ժը. 35 ։ Յակ. բ. 13 ։

5181 38
ՀՍԽՀ-СОРА

16 Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իբրեւ զկեղ-
ծաւորսն տրտմեալք. որ ապականեն զերեսս
իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան
թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են
17 վարձք նոցա։ Այլ դու յորժամ պահիցես,
18 օծ զգլուխ քո եւ լուա զերեսս քո, Զի մի ե-
րեւեսցիս մարդկան իբրեւ զպահող. այլ Հօ-
րն քում ՝ի ծածուկ. եւ Հայրն քո որ տեսա-
նէ ՝ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։
19 Մի գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց եւ
ուտիճ ապականեն, եւ ուր գողք ական հա-
20 տանեն եւ գողանան։ Այլ գանձեցէք ձեզ
գանձս յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ա-
պականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ
21 գողանան։ Զի ուր գանձք ձեր են, անդ եւ
սիրտք ձեր եղիցին։
22 Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո ա-
ռատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի։
23 Ապա եթէ ակն քո չար է, ամենայն մարմի-
նդ խաւարին եղիցի. իսկ արդ եթէ լոյսդ
որ ՝ի քեզ է՝ խաւար է, խաւարն ո՞րչափ
24 եւս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել.
կամ զմին ատիցէ եւ զմիւսն սիրիցէ. կամ ըզ-
մին մեծարիցէ եւ զմիւսն արհամարհիցէ. ոչ



16 Ու ձերբոր ծոմ կը պահէք, կեղծաւորնե-
րուն պէս տրտումերես մի ըլլաք. քանզի
իրենց երեսները կ'աւրեն որ մարդոց երեւնան
թէ ծոմ կը պահեն. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
17 անոնք իրենց վարձքը առած կ'ըլլան։ Բայց
դուն երբոր ծոմ կը պահես, ղգլուխդ օծէ
18 ու երեսդ լուա, Որ մարդոց ծոմ պահողի
պէս չերեւնաս, հապա քու Հօրդ՝ որ գաղ-
տուկ տեղ կը գտնուի. եւ քու Հայրդ որ գաղ-
տուկը կը տեսնէ, *քեզի հատուցում պիտի
ընէ։
19 ճԵրկրի վրայ ձեզի գանձեր մի դիզէք, ուր
որ ցեցը ու ժանկը կ'ապականեն, եւ ուր գո-
20 ղերը պատ կը ծակեն ու կը գողնան. մՀապա
ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր որ ոչ
ցեցը եւ ոչ ժանկը կ'ապականէ, ու ոչ գողե-
21 րը պատ կը ծակեն եւ կը գողնան։ Քանզի ձեր
գանձը ուր որ է, սրտերնիդ ալ հոն պիտի
22 ըլլայ։ յՄարմինին ճրագը աչքն է. հապա
թէ որ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ
23 լուսաւոր կ'ըլլայ. Բայց թէ որ քու աչքդ
վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ու-
րեմն թէ որ քու մէջդ եղած լոյսը խաւար է,
24 այն խաւարը ո՜րչափ է։ նՄարդ մը չկրնար
երկու տէրոջ ծառայութիւն ընել. ինչու որ
կամ մէկը պիտի ատէ եւ միւսը սիրէ, կամ
†մէկուն պիտի յարի՝՝ եւ միւսը պիտի արհա-
մարհէ. շչէք կրնար ծառայել Աստուծոյ ու

ձ Եսա. ծը. 5։
ղ Հռութ. գ. 3։ Դան. ժ. 3։
* Ոմանք՝ քեզի յայտնապէս
ճ Ղուկ. ժբ. 33։ Ա Տիմ. զ. 17։ Եբր. ժգ. 5։ Յակ. ե. 1, 2։
մ Գր. ժթ. 21։ Ղուկ. ժբ. 33, 34։ ժը. 22։ Ա Տիմ. զ. 19։ Ա Պետ. ա. 4։
յ Ղուկ. ժա. 34, 36։
ն Ղուկ. ժզ. 13։
† Կամ մէկը պիտի մեծարէ
շ Գաղ. ա. 10։ Ա Տիմ. զ. 17։ Յակ. դ. 4։ Ա Յովհ. բ. 15։

կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի ։
25 վասն այդորիկ ասեմ ձեզ , Մի հոգայք վասն
ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպի֊
ցէք ․ և մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զի՞նչ
ագանիցիք ․ ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան
26 զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ ։ Հա֊
յեցարուք ՚ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն
և ոչ հնձեն և ոչ ժողովեն ՚ի շտեմարանս ,
և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա ․ ո՞չ
27 ապաքէն դուք առաւել էք քան զնոսա ։ Իսկ
ո՞վ ՚ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ
28 կարիցէ ՚ի հասակ իւր կանգուն մի ։ Եւ վա֊
սըն հանդերձի զի՞ հոգայք ․ հայեցարուք ՚ի
շուշանն վայրենի՝ ո՛րպէս աճէ ․ ոչ ջանայ և
29 ոչ նիւթէ ։ Ասեմ ձեզ՝ զի ոչ Սողոմոն յամե֊
նայն ՚ի փառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի
30 ՚ի նոցանէ ․ Իսկ եթէ զխոտն ՚ի վայրի , որ
այսօր է և վաղիւն ՚ի հնոց արկանի , Ա֊
ստուած այնպէս զգեցուցանէ ․ ո՛րչափ եւս ա֊
31 ռաւել զձեզ , թերահաւատք ։ Մի այսուհե֊
տեւ հոգայցէք և ասիցէք , Զի՞նչ կերիցուք
կամ զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեցցուք ․
32 Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն ․ քան֊
զի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է
33 ձեզ այդ ամենայն ։ Խնդրեցէք նախ զարքա֊
յութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նո֊
34 րա , և այդ ամենայն յաւելցի ձեզ ։ Մի այ֊
սուհետեւ հոգայցէք վասն վաղուին , զի վա֊



25 մամոնային ։ Ուստի կ'ըսեմ ձեզի , "Հոգ մի ը֊
նէք ձեր կեանքին համար՝ թէ ինչ պիտի
ուտէք , կամ ինչ պիտի խմէք ․ ոչ ալ ձեր
մարմիններուն համար՝ թէ ինչ պիտի հագ֊
նիք ․ չէ՞ որ կեանքը կերակուրէն աւելի է ,
26 ու մարմինը՝ հագուստէն ։ "Նայեցէք երկնից
թռչուններուն , որ ոչ կը սերմանեն և ոչ կը
հնձեն և ոչ ամբարի մէջ կը ժողվեն , ու ձեր
երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք ․ չէ՞ որ
27 դուք անոնցմէ աւելի լաւ էք ։ Հիմա ձեզմէ
ո՞վ կրնայ իր հոգ ընելովը իր հասակին վրայ
28 կանգուն մը աւելցընել ։ Ու հագուստի հա֊
մար ինչո՞ւ հոգ կ'ընէք ․ նայեցէք դաշտի շու֊
շաններուն՝ ինչպէս կ'աճին , ոչ կ'աշխատին և
29 ոչ կը մանեն ․ Բայց ձեզի կ'ըսեմ որ Սողոմոն
ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ
30 մէկուն պէս չհագուեցաւ ։ Ուստի թէ որ դաշ֊
տի խոտը որ այսօր կայ և վաղը փուռը կը
ձգուի՝ Աստուած անանկ կը հագուեցընէ ,
հապա ո՞րչափ աւելի ձեզ , թերահաւատներ ։
31 Ուրեմն հոգ մի ընէք՝ ըսելով , Ի՞նչ պիտի
ուտենք , կամ ի՞նչ պիտի խմենք , կամ ի՞նչ
32 պիտի հագնինք ․ (ինչու որ ատ բոլոր բանե֊
րը հեթանոսները կը խնդրեն ․ ) վասն զի ձեր
երկնաւոր Հայրը գիտէ թէ ատ բոլոր բանե֊
33 րը ձեզի պէտք են ։ Բայց "առաջ խնդրե֊
ցէք Աստուծոյ թագաւորութիւնը և անոր
արդարութիւնը , ու ատ բոլոր բաներն ալ
34 ձեզի պիտի տրուի ։ Ուստի վաղուան համար
հոգ մի ընէք , ինչու որ վաղուան օրը իրեն

ո Սաղ․ ծե․ 22 ։ Ղուկ․ ժբ․ 22 , 23 ։ Փիլ․ դ․ 6 ։ ա Պետ․ ե․ 7 ։
ւ Յոբ․ լը․ 41 ։ Սաղ․ ճխէ․ 9 ։ Ղուկ․ ժբ․ 24 , եւ ։
պ Տես գ Թագ․ գ․ 13 ։ Սաղ․ լէ․ 25 ։ Մար․ ժ․ 30 ։ Ղուկ․ ժբ․ 31 ։ ա Տիմ․ դ․ 8 ։

զիւն վասն իւր հոգասցի · շատ է աւուրն
չար իւր ։

## ԳԼ · Է

1 Մի դատէք՝ զի մի դատիցիք · (2) Զի ո-
րով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք ·
3 և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ ։ Զի՞
տեսանես զշիւղ յական եղբօր քո, և 'ի քում
4 ական զգերանդ ոչ տեսանես ։ կամ զիա՞րդ
ասես ցեղբայր քո, թող հանից զշիւղդ յա-
կանէ քումմէ · և ահաւադիկ 'ի քում ական
5 գերան կայ ։ կեղծաւոր, հան նախ զգերա-
նդ յականէ քումմէ, և ապա հայեսցես հա-
6 նել զշիւղն յականէ եղբօր քո ։ Մի տայք ըզ-
սրբութիւն շանց · և մի արկանէք զմարգա-
րիտս ձեր առաջի խոզաց, զի մի առ ոտն
կոխեսցեն զնոսա, և դարձեալ երդիծուցա-
7 նիցեն զձեզ ։ խնդրեցէք և տացի ձեզ, հայ-
ցեցէք և գտջիք, բախեցէք և բացցի ձեզ ։
8 Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայ-



համար հոգ պիտի ընէ · հերիք է օրուան իր
նեղութիւնը ։

## ԳԼ · Է

1 Քրիստոս իր քարոզութիւնը վերջացընելով՝ կը յանդիմանէ անխոհեմաբար դատողութիւն ընելը · 6 կ'արգիլէ սուրբ բաները շուներուն տալը · 7 կը յորդորէ աղօթք ընել · 13 նեղ դուռէն ներս մտնել · 15 սուտ մարգարէներէն զգոյշ կենալ · 21 իր խօսքը միայն լսողներ չըլլալ՝ հապա կատարողներ · 24 նմանելով անանկ մարդու մը որ իր տունը վէմի վրայ կը շինէ · 26 և ո՛չ թէ աւազի վրայ ։

1 Մի դատէք՝ որ չդատուիք ։ (2) Քանզի ինչ
դատաստանով որ դատէք, անով պիտի դա-
տուիք · և [բ] ինչ չափով որ չափէք, անով պիտի
3 չափուի ձեզի ։ [գ] Եւ ինչո՞ւ քու եղբօրդ աչքին
մէջի շիւղը կը տեսնես, ու քու աչքիդ մէջի
4 գերանին չես նայիր ։ Կամ ի՞նչպէս կրնաս
ըսել քու եղբօրդ, թող տուր աչքէդ շիւղը
հանեմ · և ահա քու աչքիդ մէջը գերան կայ ։
5 Կեղծաւոր, առաջ քու աչքէդ գերանը հա-
նէ, ու ետքը աղէկ պիտի տեսնես եղբօրդ
աչքէն շիւղը հանելու ։
6 [դ] Սուրբ բանը շուներուն մի տաք, և ձեր
մարգարիտները խոզերուն առջևը մի ձգէք,
որ ոտքերնուն տակը չկոխկռտեն զանոնք, ու
դառնան ձեզ պատառեն ։
7 [ե] Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի · փնտռե-
ցէք՝ և պիտի գտնէք · դուռը զարկէք՝ և պի-
8 տի բացուի ձեզի · Վասն զի ամէն ով որ կը

ա Ղուկ · Զ · 37 ։ Հռոմ · Բ · 1 ։ ԺԴ · 3 · 4 · 10 · 13 ։ Ա Կոր · Դ · 3 · 5 ։ Յակ · Դ · 11 · 12 ։
բ Մար · Դ · 24 ։ Ղուկ · Զ · 38 ։
գ Ղուկ · Զ · 41 · 42 ։
դ Առակ · Թ · 7 · 8 ։ ԻԳ · 9 ։ Գոր · ԺԳ · 45 · 46 ։
ե Գլ · ԻԱ · 22 ։ Մար · ԺԱ · 24 ։ Ղուկ · ԺԱ · 9 · 10 ։ ԺԸ · 1 ։ Յովհ · ԺԴ · 13 ։ ԺԵ · 7 ։ ԺԶ · 23 · 24 ։ Յակ · Ա · 5 · 6 ։ Ա Յովհ · Գ · 22 ։ Ե · 14 · 15 ։
զ Առակ · Ը · 17 ։ Երեմ · ԻԹ · 12 · 13 ։

9 ցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։ Ո՞ ի֊
ցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր
10 հաց, միթէ քա՞ր տայցէ նմա։ Եւ կամ խըն֊
11 դրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա։ Արդ՝
եթէ դուք որ չարդ էք՝ գիտէք պարգևս
բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս ա֊
ռաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բա֊
12 րիս այնոցիկ որ խնդրեն զնա։ Զամենայն որ
միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մար֊
դիկ, այնպէս և դուք արարէք նոցա, զի
13 այն իսկ են օրէնքն և մարգարէք։ Մտէք
ընդ նեղ դուռն, քանզի ընդարձակ է դուռ֊
նըն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի
կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ
14 նա։ Քանզի անձուկ է դուռնն և նեղ ճա֊
նապարհն որ տանի ՚ի կեանս, և սակաւք են
15 որ գտանեն զնա։ Զգոյշ լերուք ՚ի սուտ
մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք
ոչխարաց, և ՚ի ներքոյ են գայլք յափշտա֊
16 կողք։ Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. մի֊
թէ քաղիցե՞ն ՚ի փշոց խաղող՝ կամ ՚ի տա֊
17 տասկէ թուզ։ Այսպէս ամենայն ծառ բա֊
րի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պը֊
18 տուղ չար առնէ։ Ոչ կարէ ծառ բարի՝ պը֊



խնդրէ՝ կ՚առնէ, և ով որ կը փնտռէ՝ կը գտնէ,
և ով որ դուռը կը զարնէ՝ պիտի բացուի անոր։
9 [է]Ձեզմէ ո՞ր մարդը կայ՝ որմէն իր որդին հաց
10 որ ուզէ, միթէ քա՞ր պիտի տայ անոր. Եւ
կամ թէ որ ձուկ ուզէ, միթէ օ՞ձ պիտի տայ
11 անոր։ Ուստի եթէ դուք [ը]որ չար էք՝ ձեր
զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք,
ո՞րչափ աւելի ձեր Հայրը որ երկինքն է՝ բարի
բաներ պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն։
12 Ուստի [թ]ամէն ինչ որ կ՚ուզէք որ մարդիկ
ձեզի ընեն, դուք ալ անոնց անանկ ըրէք,
քանզի [ժ]աս է օրէնքը ու մարգարէները։
13 [ի]Նեղ դռնէն ներս մտէք, ինչու որ լայն է
ան դուռը ու ընդարձակ ան ճամբան, որ դէպ
՚ի կորուստ կը տանի. և շատուոր են անոնք
14 որ անկէ կը մտնեն։ Ինչու որ նեղ է ան դուռը
ու նեղուածք է ան ճամբան, որ դէպ ՚ի կեանք
կը տանի. և քիչուոր են անոնք որ զանիկա կը
գտնեն։
15 [լ]Զգոյշ կեցէք սուտ մարգարէներէն՝ [խ]որոնք
ձեզի կու գան ոչխարի հանդերձներով, բայց
16 ներսէն [ծ]յափշտակող գայլեր են։ [կ]Իրենց պը֊
տուղէն պիտի ճանչնաք զանոնք. [հ]միթէ փու֊
շերէն խաղող կը քաղե՞ն, կամ տատասկէն՝
17 թուզ. Ասանկ ալ [ձ]ամէն բարի ծառ բարի պը֊
տուղ կու տայ, և չար ծառ չար պտուղ կու
18 տայ։ Բարի ծառը չկրնար չար պտուղ տալ,

է Ղուկ. ժա. 11, 12, 13։
ը Ծն. զ. 5։ ը. 21։
թ Ղուկ. զ. 31։
ժ Ղև. ժթ. 18։ Գղ. իբ. 40։ Հռովմ. ժգ. 8, 9, 10։ Գաղ. ե. 14։ ա Տիմ. ա. 5։
ի Ղուկ. ժգ. 24։
լ բ Օր. ժգ. 3։ Երեմ. իգ. 16։ Գղ. իդ. 4, 5, 11, 24։ Մար. ժգ. 22։ Հռովմ. ժզ. 17, 18։ Եփես. ե. 6։ Կող. բ. 8։ բ Պետ. բ. 1, 2, 3։ ա Յովհ. դ. 1։
խ Միք. գ. 5։ բ Տիմ. գ. 5։
ծ Գործ. ի. 29, 30։
կ Հմր. 20։ Գղ. ժբ. 33։
հ Ղուկ. զ. 43, 44։
ձ Երեմ. ժա. 19։ Գղ. ժբ. 33։

տուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բա-
19 րի առնել։ Ամենայն ծառ որ ոչ առնէ պը-
տուղ բարի, հատանի և 'ի հուր արկանի։
20 Ապա 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։
21 Ոչ ամենայն որ ասէ ցիս, Տէր, Տէր, մտցէ
յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս
22 Հօր իմոյ որ յերկինսն է։ Բազումք ասիցեն
ցիս յաւուրն յայնմիկ, Տէր, Տէր, ո՞չ յանուն
քո մարգարէացաք, և յանուն քո դևս հա-
նաք, և յանուն քո զօրութիւնս բազումս ա-
23 րարաք։ Եւ յայնժամ ասացից ցնոսա եթէ
Ոչ երբէք գիտէի զձեզ. 'ի բաց կացէք յի-
նէն *ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնու-
24 թիւն։ Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ
և առնէ զնոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝
25 որ շինեաց զտուն իւր 'ի վերայ վիմի. Իջին
անձրևք և խաղացին գետք, շնչեցին հողմք
և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ,
26 քանզի 'ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ
ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և ոչ
առնէ զնոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ
27 շինեաց զտուն իւր 'ի վերայ աւազոյ։ Իջին
անձրևք, յարեան գետք, շնչեցին հողմք,
հարին զտունն, և անկաւ. և էր կործանու-
28 մն նորա մեծ յոյժ։ Եւ եղև իբրև կատա-
րեաց Յիսուս †զամենայն զբանս զայսոսիկ,

---

*Ի Յունին չէ։
†Ի Յունին չէ,



19 ոչ ալ չար ծառը բարի պտուղ տալ։ [ղ]Ամէն
ծառ որ բարի պտուղ չտար՝ կը կտրուի ու
20 կրակը կը ձգուի։ Ուրեմն իրենց պտուղէն
պիտի ճանչնաք զանոնք։
21 Ոչ թէ ամէն մէկը որ ինծի [ճ]Տէր, Տէր,
կ'ըսէ՝ պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը,
հապա անիկա որ իմ երկնաւոր Հօրս կամքը
22 կը կատարէ։ Շատերը ան օրը ինծի պիտի ը-
սեն, Տէր, Տէր, [մ]չէ՞ որ քու անունովդ մար-
գարէութիւն ըրինք, և քու անունովդ դևեր
հանեցինք, ու քու անունովդ շատ հրաշքներ
23 ըրինք։ Եւ [յ]անատենը անոնց յայտնապէս պի-
տի ըսեմ թէ Ես բնաւ ձեզ չէի ճանչնար.
[ն]մէկդի գացէք քովէս դուք որ անօրէնու-
թիւն կը գործէիք։
24 Արդ [շ]ով որ աս իմ խօսքերս կը լսէ ու կը
կատարէ անոնք, զանիկա պիտի նմանցընեմ
խելացի մարդու մը՝ որ իր տունը վէմի վրայ
25 շինեց. Եւ անձրև իջաւ ու գետերը վազե-
ցին ու հովերը փչեցին, և զարկին ան տանը,
ու չփլաւ, ինչու որ վէմի վրայ հաստատուած
26 էր։ Եւ ով որ աս իմ խօսքերս կը լսէ ու չը-
կատարեր անոնք, կը նմանի անխելք մար-
դու մը՝ որ իր տունը աւազի վրայ շինեց.
27 Եւ անձրև իջաւ ու գետերը վազեցին ու հո-
վերը փչեցին, և զարկին ան տանը, ու փլաւ,
և մեծ էր անոր կործանումը։
28 Ու երբոր Յիսուս լմնցուց աս խօսքերը,
[ո]ժողովուրդները կը զարմանային անոր վար-

ղ Մտ. գ. 10: Ղուկ. գ. 9: Յովհ. ժե. 2, 6:
ճ Ովս. ը. 2: Մտ. իե. 11, 12: Ղուկ. զ. 46: ժգ. 25: Գոր. ժթ. 13: Հռոմ. բ. 13: Յակ. ա. 22:
մ Թու. իդ. 4: Յովհ. ժա. 51: ա Կոր. ժգ. 2:
յ Մտ. իե. 12: Ղուկ. ժգ. 25, 27: բ Տիմ. բ. 19:
ն Սաղ. ե. 5: զ. 8: Մտ. իե. 41:
շ Ղուկ. զ. 47, [illegible]:
ո Մտ. ժգ. 54: Մար. ա. 22: զ. 2: Ղուկ. դ. 32:

զարմանային ժողովուրդքն ընդ վարդապե-
29 տութիւն նորա։ Զի իբրեւ իշխանութեամբ
ուսուցանէր՝ եւ ոչ որպէս դպիրքն։

## ԳԼ. Ը

1 ԱՅԼ իբրեւ էջ ՚ի լեռնէ անտի, գնացին զկնի
2 նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մա-
տուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա եւ
ասէր, Տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սըր-
3 բել։ Ձգեաց զձեռն իւր եւ հասոյց ՚ի նա Յի-
սուս եւ ասէ, կամիմ՝ սրբեաց, եւ վաղվաղա-
4 կի սրբեցաւ ՚ի նմանէ բորոտութիւնն։ Եւ
ասէ ցնա Յիսուս, Զգոյշ լեր՝ մի ումեք ա-
սիցես, այլ երթ, ցոյց զանձն քո քահանային,
եւ մատո զպատարագն, զոր հրամայեաց Մով-
5 սէս ՚ի վկայութիւն նոցա։ Եւ մտեալ ՚ի Կա-
փառնայում, մատեաւ առ նա հարիւրապետ
6 մի, աղաչէր զնա, Եւ ասէր, Տէր, մանուկ
իմ անկեալ կայ ՚ի տան անդամալոյծ՝ չարա-
7 չար տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս, Ես եկից
8 եւ բժշկեցից զնա։ Պատասխանի ետ հարիւ-
րապետն եւ ասէ, Տէր, չեմ բաւական եթէ
ընդ յարկաւ իմով մտցես. այլ սոսկ բանիւ



29 դապետութեանը վրայ. [ւ]Ինչու որ իշխանու-
թիւն ունեցողի մը պէս կը սորվեցնէր անոնց՝
ու չէ թէ դպիրներուն պէս։

## ԳԼ. Ը

1 Քրիստոս կը մաքրէ բորոտը, 5 կը բժշկէ հարիւրապետին ծառան. 14 Պետրոսին զոքանչը 16 և ուրիշ շատ հիւանդներ. 18 կը ցուցնէ թէ ինչ կերպով իր ետեւէն երթալ պէտք է. 23 ծովուն ալեկոծութիւնը կը հանդարտեցնէ. 28 երկու դիւահարներէ դեւերը կը հանէ, 31 և զանոնք կը թողու որ երթան խոզերուն մէջ մտնեն։

1 ՈՒ երբոր ան լեռնէն վար իջաւ, շատ ժո-
2 ղովուրդներ գացին անոր ետեւէն։ [ա]Եւ ահա
բորոտ մը եկաւ, երկրպագութիւն կ՚ընէր
անոր ու կ՚ըսէր, Տէր, թէ որ ուզես՝ կրնաս
3 զիս մաքրել։ Եւ Յիսուս իր ձեռքը երկըն-
ցընելով դպաւ անոր ու ըսաւ, Կ՚ուզեմ՝ մաք-
րուէ. և շուտ մը անոր բորոտութիւնը մաք-
4 րուեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, [բ]Զգուշ
կեցիր՝ մէկու մը չըսես, հապա գնա՝ քեզ
քահանային ցուցուր, և [գ]Մովսէսին պատուի-
րած ընծան տուր՝ անոնց վկայութիւն ըլլա-
լու համար։
5 [դ]Ու *երբոր Կափառնայում մտաւ՝ հարիւ-
6 րապետ մը եկաւ քովը, կ՚աղաչէր անոր, Ու
կ՚ըսէր, Տէր, իմ ծառաս տունը անդամա-
7 լոյծ պառկած չարաչար կը տանջուի։ Եւ Յի-
սուս ըսաւ անոր, Ես կու գամ ու զանիկա
8 կը բժշկեմ։ Եւ հարիւրապետը պատասխան
տալով՝ ըսաւ, Տէր, [ե]ես արժանի չեմ որ դուն
իմ յարկիս տակը մտնես. [զ]միայն թէ խօսքով

ւ Յովհ. է. 46։
—
ա Մար. ա. 40, եւ։ Ղուկ. ե. 12, եւ։
բ Գլ. Թ. 30։ Մար. Է. 43։
գ Ղև. ժդ. 3, 4, 10։ Ղուկ. ե. 14։
դ Ղուկ. է. 1, եւ։ * Որոնք երբոր Յիսուս
ե Ղուկ. ժէ. 19, 21։
զ Սաղ. ճէ. 20։

9 և բժշկեսցի մանուկն իմ։ Քանզի և ես այր
մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ
զինուորս, ասեմ սմա, Երթ, և երթայ. և
այլում թէ Եկ, և գայ. և ծառայի իմում թէ
10 Արա զայս, և առնէ։ Իբրեւ լուաւ Յիսուս՝
զարմացաւ, և ասէ ցայնոսիկ որ զհետն եր-
թային, Ամէն ասեմ ձեզ, և ոչ յԻսրայէլի
11 այսպիսի հաւատս գտի երբէք։ Բայց ասեմ
ձեզ զի բազումք յարեւելից և յարեւմտից ե-
կեսցեն և բազմեսցին ընդ Աբրահամու և
ընդ Սահակայ և ընդ Յակոբու յարքայու-
12 թեան երկնից. Եւ որդիքն արքայութեան
ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղիցի
13 լալ և կրճել ատամանց։ Եւ ասէ Յիսուս ցհա-
րիւրապետն, Երթ և որպէս հաւատացե-
րդ՝ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա
14 *յաւուր յայնմիկ։ Եւ եկեալ Յիսուս 'ի տուն
Պետրոսի, ետես զի զոքանչ նորա անկեալ
15 դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա,
և եթող զնա ջերմնն. յոտն եկաց և պաշտէր
16 զնոսա։ Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ
նա դիւահարս բազումս, և եհան զայսսն
17 բանիւ և զամենայն հիւանդսն բժշկեաց. Զի

* Յայնմ 'ի ժամուն

24 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

9 գլուցէ, ու իմ ծառաս պիտի բժշկուի. ին-
չու որ ես ալ իշխանութեան տակ մարդ մըն
եմ, ու իմ հրամանիս տակը զինուորներ ունիմ. և
ասոր կ'ըսեմ, Գնա, ու կ'երթայ. և միւսին՝
Թէ Եկուր, ու կու գայ. և ծառայիս՝ Թէ Աս
10 բանը ըրէ, ու կ'ընէ։ Յիսուս երբոր լսեց՝
զարմացաւ, և իր ետեւէն գացողներուն ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ
11 ես այսչափ հաւատք չգտայ։ Եւ ձեզի կ'ը-
սեմ որ արեւելքէն ու արեւմուտքէն շատեր
պիտի գան, ու երկնից թագաւորութեանը
մէջ պիտի բազմին Աբրահամին ու Իսահակին
12 և Յակոբին հետ. իսկ թագաւորութեանը
որդիքը դուրսի խաւարը պիտի հանուին.
հոն պիտի ըլլայ լաց ու ակռաներ կրճտել։
13 Եւ Յիսուս հարիւրապետին ըսաւ, Գնա,
ու ինչպէս որ դուն հաւատացիր, անանկ թող
ըլլայ քեզի. և նոյն ժամուն անոր ծառան
բժշկուեցաւ։
14 Եւ Յիսուս Պետրոսին տունը գալով՝ տե-
սաւ որ անոր զոքանչը ջերմէն բռնուած
15 պառկած էր. Եւ անոր ձեռքէն բռնեց, ու
ջերմը թող տուաւ զանիկա. ան ալ ոտքի
վրայ ելաւ և *անոնց սպասաւորութիւն կ'ընէր։
16 Երբոր իրիկուն եղաւ՝ շատ դիւահարներ
բերին անոր, ու խօսքով հանեց չար ոգիները
17 և բոլոր հիւանդները բժշկեց. Որ Եսայի մար-
գարէին ձեռքով ըսուած խօսքը կատարուի,

է Ծն. ժբ. 3։ Եսա. բ. 2, 3։ Ժա. 10։ Մաղ. ա. 11։ Ղուկ. ժգ. 29։ Գոր. ժ. 45։ Ժա. 18։ Ժգ. 26։ Հռովմ. Ժե. 9, Եւ։ Եփես. գ. 6։
ը Գլ. իա. 43։
թ Գլ. Ժգ. 42, 50։ իբ. 13։ իդ. 51։ իե. 30։ Ղուկ. Ժգ. 28։ բ Պետ. բ. 17։ Յուդ. 13։
ժ Մար. ա. 29, 30, 31։ Ղուկ. դ. 38, Եւ։
ի Տես ա Կոր. թ. 5։
* Որհնէ անոր
լ Մար. ա. 32, Եւ։ Ղուկ. դ. 41, 42։

լցցի բանն որ ասացաւ ՚ի ձեռն Եսայեայ
մարգարէի, Նա զհիւանդութիւնս մեր վե-
րացոյց և զցաւս մեր եբարձ։
18 Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զխ-
19 րեւ, հրամայեաց երթալ յայնկոյս։ Եւ մա-
տուցեալ դպիր մի՝ ասէ ցնա, Վարդապետ,
եկից և ես զկնի քո ուր վայր և երթիցես։
20 Ասէ ցնա Յիսուս, Աղուեսուց որջք գոն, և
թռչնոց երկնից բոյնք, այլ Որդւոյ մարդոյ
21 ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։ Եւ մի ոմն
յաշակերտացն նորա ասէ ցնա, Տէր, տուր
ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զ-
22 հայր իմ։ Ասէ ցնա Յիսուս, Եկ զկնի իմ, և
թոյլ տուր մեռելոցն թաղել զմեռեալս իւ-
23 րեանց։ Եւ իբրեւ եմուտ ՚ի նաւն, գնացին
24 զկնի նորա աշակերտքն նորա։ Եւ ահա շար-
ժումն մեծ եղեւ ՚ի ծովուն՝ մինչ նաւին ծած-
25 կել յալեաց անտի, և ինքն ննջէր։ Եւ մա-
տուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն,
26 Տէր, փրկեա զմեզ՝ զի կորնչիմք։ Եւ ասէ
ցնոսա, Ընդէ՞ր վատասիրտք էք, թերահա-
ւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հող-
մոցն և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ։
27 Եւ մարդիկն զարմացան, և ասէին, Ո՞րպիսի
ոք իցէ սա, զի և հողմք և ծով հնազանդին
28 սմա։ Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գեր-
գեսացւոց, պատահեցին նմա դիւահարք եր-
կու՝ ելեալք ՚ի գերեզմանացն, չարաչարք



[խ]Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց և
մեր ցաւերը կրեց։
18 Յիսուս իր բոլորտիքը շատ ժողովուրդ տես-
նելով, հրաման ըրաւ որ միւս կողմը երթան։
19 [ծ]Եւ դպիր մը մօտենալով՝ ըսաւ անոր, Վար-
դապետ, ես քու ետեւէդ պիտի գամ՝ ուր
20 որ երթաս։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Աղուէս-
ները որջեր ունին, ու երկնից թռչունները
բոյներ, բայց Որդին մարդոյ տեղ մը չունի, որ
21 հոն իր գլուխը դնէ։ [կ]Եւ մէկ ուրիշը՝ իր
աշակերտներէն էր, ըսաւ անոր, [հ]Տէր, ինծի
հրաման տուր, որ երթամ առաջ իմ հայրս
22 թաղեմ։ Յիսուս ըսաւ անոր, Եկուր իմ ետե-
ւէս, ու թող տուր մեռելներուն որ թաղեն
իրենց մեռելները։
23 Ու երբոր նաւը մտաւ, իր աշակերտները
24 իր ետեւէն գացին։ [ձ]Եւ ահա մեծ ալէկոծու-
թիւն մը եղաւ ծովուն մէջ, այնանկ որ նաւը
ալիքներէն կը ծածկուէր. իսկ ինքը կը քնա-
25 նար։ Եւ աշակերտները մօտ գացին արթըն-
ցուցին զանիկա ու ըսին, Տէր, ազատէ մեզ.
26 ահա կը կորսուինք։ Եւ ըսաւ անոնց, Թերա-
հաւատներ, ինչո՞ւ այդպէս վախկոտ էք. ան-
ատենը [ղ]ելաւ հովերուն ու ծովուն սաստեց,
27 և մեծ խաղաղութիւն եղաւ։ Ու մարդիկը
զարմացան և կ'ըսէին, Ի՞նչպէս մարդ է աս՝
որ հովերը ու ծովը ասոր կը հնազանդին։
28 Ու [ճ]երբոր միւս կողմը *Գերգեսացւոց եր-
կիրը անցաւ, երկու դիւահար պատահեցան
իրեն գերեզմաններէն ելած՝ սաստիկ կատ-

խ Եսա. ծգ. 4։ ա Պետ. բ. 24։
ծ Ղուկ. թ. 57, 58։
կ Ղուկ. թ. 59, 60։
հ Տես գ Թագ. ժթ. 20։
ձ Մար. դ. 37, և։ Ղուկ. ը. 23, և։
ղ Սաղ. կէ. 7։ ճթ. 9։ ձէ. 29։
ճ Մար. ե. 1, և։ Ղուկ. ը. 26, և։
* Ոմանք Գադարացւոց

յոյժ, որպէս զի չէր հնար անցանել ումեք
29 ընդ այն ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին
և ասեն, Զի՞ կայ մեր և քո, Յիսուս, Որդի
Աստուծոյ, եկիր տարաժամ տանջե՞լ զմեզ։
30 Եւ էր հեռագոյն 'ի նոցանէ երամակ մի խո-
31 զից արօտական։ Եւ դեւքն աղաչէին զնա և
ասէին, Եթէ հանես զմեզ աստի, հրաման
32 տուր մեզ երթալ յերամակ խոզիցն։ Եւ ասէ
ցնոսա, Երթա՛յք. և նոքա ելեալ գնացին յե-
րամակն խոզից. և դիմեաց ամենայն երա-
մակն 'ի դարէ անտի 'ի ծով, և մեռան 'ի
33 ջուրսն։ Եւ խոզարածքն փախեան, և եր-
թեալ 'ի քաղաքն պատմեցին զամենայն և զի-
34 րս դիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղա-
քըն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին
զնա՝ աղաչեցին զի գնասցէ 'ի սահմանաց
նոցա։

## ԳԼ. Թ

1 Եւ մտեալ 'ի նաւ՝ անց յայնկոյս և եկն 'ի
2 քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա ան-
դամալոյծ մի որ դնէր 'ի մահիճս, և տե-
սեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդա-

26 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ղած, անանկ որ հնար չէր մէկու մը ան ճամ-
29 բայէն անցնիլ։ Եւ ահա աղաղակեցին ու ըսին,
Յիսուս՝ Որդի Աստուծոյ, դուն մեր հետը
ի՞նչ բան ունիս. ատենէն առաջ մեզ տան-
30 ջելո՞ւ համար հոս եկար։ Եւ անոնցմէ հեռու
շատ խոզերու երամակ մը կար, որ կ'արածուէ-
31 ին։ Ու դեւերը կ'աղաչէին իրեն ու կ'ըսէին,
թէ որ մեզ կը հանես, հրաման տուր մեզի որ
երթանք խոզերուն երամակին մէջը մտնենք։
32 Եւ ըսաւ անոնց, Գացէք. ու անոնք ելան
գացին խոզերուն երամակին մէջը մտան, և
ահա բոլոր երամակը գահավէժ տեղէն ծովը
33 վազեցին, ու ջուրերուն մէջը մեռան։ Խոզա-
րածներն ալ փախան, և քաղաքը երթալով
բոլորը պատմեցին՝ ու դիւահարներուն պատ-
34 հած բաները։ Եւ ահա բոլոր քաղաքը Յիսու-
սին դէմը ելաւ, ու երբոր տեսան զանիկա,
[§]աղաչեցին որ իրենց սահմաններէն երթայ։

## ԳԼ. Թ

2 Քրիստոս անդամալոյծ մը կը բժշկէ. 9 Մատթէոսը մաքսաւորութենէն իրեն կը կանչէ. 10 մաքսաւորներու և մեղաւորներու հետ կ'ուտէ. 14 իր աշակերտներուն ծոմ չպահելը կ'արդարացնէ. 20 տեւատեւ կինը կը բժշկէ. 23 Յայրոսի աղջիկը կը յարուցանէ. 27 երկու կոյրերու աչքերը կը բանայ. 32 համր դիւահարը կը բժշկէ. 36 և կը խղճայ բազմութեանը վրայ։

1 Եւ նաւը մտնելով՝ անդին կողմը անցաւ, [ա]ու
2 եկաւ իր քաղաքը։ [բ]Եւ ահա բերին իրեն
անդամալոյծ մը, որ մահիճի մէջ պառկած
էր. և [գ]Յիսուս անոնց հաւատքը տեսնելով՝
ըսաւ անդամալոյծին, Քաջալերուէ, որդեակ,

§ Տես բ Օր. ե. 25։ դ Թագ. ժէ. 18։ Ղուկ. ե. 8։ Գործ. ժզ. 39։ — ա Գլ. դ. 13։ | բ Մար. բ. 3։ Ղուկ. ե. 18։ գ Գլ. ը. 10։

3 մալոյծն. *Թողեալ լիցին քեզ մեղք քո, Եւ
ահա ոմանք 'ի դպրացն ասեն ընդ միտս,
4 Հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի ըզ-
խորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա, Ընդէր խոր-
5 հիք դուք չարիս 'ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւ-
րին է ասել, Թողեա՛լ լիցին քեզ մեղք քո,
6 թէ ասել, Արի և շրջեա՛ց։ Այլ զի գիտա-
ջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ
յերկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցան-
դամալոյծն, Արի, առ զմահիճս քո և երթ 'ի
7 տուն քո։ Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր։
8 Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան և
փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այն-
պիսի իշխանութեան մարդկան։
9 Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես զայր
մի զի նստէր 'ի մաքսաւորութեան Մատ-
թէոս անուն, և ասէ ցնա, Եկ զկնի իմ. և
10 յարուցեալ գնաց զկնի նորա։ Եւ եղև իբ-
րև բազմեալ էր նա 'ի տան, և ահա բա-
զում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազ-
մեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նո-
11 րա։ Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցա-
շակերտս նորա, Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և
12 ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր։ Իսկ
Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա, Ոչ է պի-
13 տոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց։ Եր-
թայք, ուսարուք, զի՞նչ է՝ Զողորմութիւն

*Ի Յոյնն՝ Քաջալերեաց, որդեակ, թողեալ



3 քու մեղքերդ քեզի ներուած են։ Եւ ահա
դպիրներէն ոմանք իրենց սրտին մէջ ըսին,
4 Ասիկա հայհոյութիւն կ'ընէ։ Յիսուս ալ ա-
նոնց խորհուրդները իմանալով ըսաւ, Ինչո՞ւ
5 սրտերնուդ մէջ չար բաներ կը խորհիք. Քան-
զի ո՞րը աւելի դիւրին է. Քու մեղքերդ նե-
րուած են՝ ըսե՞լը, թէ Ելիր ու քալէ՝ ըսելը։
6 Բայց որպէս զի գիտնաք թէ Որդին մարդոյ
իշխանութիւն ունի երկրի վրայ մեղքերու
թողութիւն տալու, (անատենը անդամալոյծին
ըսաւ,) Ելի՛ր՝ մահիճդ առ ու տունդ գնա։
7 Ու անիկա ելաւ՝ իր տունը գնաց։ (8) Ժողո-
վուրդները երբոր տեսան՝ զարմացան, ու
փառաւորեցին զԱստուած, որ մարդոց անանկ
իշխանութիւն տուեր էր։
9 [ե]Եւ Յիսուս անկէ առաջ անցնելով՝ մարդ
մը տեսաւ Մատթէոս անունով, որ մաքս ըն-
դունելու տեղը նստեր էր, ու ըսաւ անոր,
Ետևէս եկուր. ան ալ ելաւ անոր ետևէն գը-
10 նաց։ [զ]Ու եղաւ որ տունը սեղան նստած
ատենը՝ ահա ուրիշ շատ մաքսաւորներ և մե-
ղաւորներ եկած՝ ու սեղան նստած էին Յիսու-
11 սին ու անոր աշակերտներուն հետ։ Ու փա-
րիսեցիները երբոր տեսան, ըսին անոր աշա-
կերտներուն, Ինչո՞ւ ձեր վարդապետը [է]մաք-
սաւորներուն ու [ը]մեղաւորներուն հետ կ'ուտէ։
12 Բայց Յիսուս երբոր լսեց՝ ըսաւ անոնց, Առողջ-
ներուն բժիշկ պէտք չէ, հապա հիւանդնե-
13 րուն։ Գացէք՝ սորվեցէք թէ ի՞նչ է այս խօսքը՝
[թ]Ողորմութիւն կ'ուզեմ և չէ թէ զոհ. Ինչու

Սաղ. ՃԼԹ. 2: Գլ. ժբ. 25: Մար. ժբ. 15: Ղուկ. ե. 22: զ. 8: Թ. 47: ժա. 17:
ե Մար. բ. 14: Ղուկ. ե. 27:
զ Մար. բ. 15, ևն: Ղուկ. ե. 29, ևն:
է Գլ. ժա. 19: Ղուկ. ե. 30: ժե. 2:
ը Գաղ. բ. 15:
թ Ովս. զ. 6: Միք. զ. 6, 7, 8: Գլ. ժբ. 7:

կամիմ և ոչ զզոհ․ զի ոչ եկի կոչել զարդա֊
14 րս՝ այլ զմեղաւորս։ Յայնժամ մատեան առ
նա աշակերտքն Յովհաննու և ասեն, ընդէ՞ր
մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո
15 աշակերտքդ ոչ պահեն։ Ասէ ցնոսա Յիսուս,
Միթէ մարթ ի՞նչ իցէ մանկանց առագաստի
սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ․
այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի
16 նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն։ Ոչ ոք
արկանէ կապերտ անթափ ՚ի վերայ հնա֊
ցեալ ձորձոյ․ զի առնու ելանէ զլրութիւնն
նորա ՚ի հանդերձէն, և ևս չար պատա֊
17 ռումն լինի։ Եւ ոչ արկանեն գինի նոր ՚ի
տիկս հինս․ ապա թէ ոչ՝ տիկքն պատառին
և գինին հեղու, և տիկքն կորնչին․ այլ ար֊
կանեն զգինի նոր ՚ի տիկս նորս, և երկոքին
պահին։

18 Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ա֊
հա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր
նմա և ասէր, Դուստր իմ արդ ևս վախճա֊
նեցաւ, այլ եկեալ դիցես զձեռն քո ՚ի վե֊
19 րայ նորա, և կեցցէ։ Յարեաւ Յիսուս և գը֊
20 նաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Եւ
ահա կին մի տեռատես երկոտասանամեայ
մատուցեալ յետոյ՝ մերձեցաւ ՚ի դրօշակ հան֊
21 դերձի նորա․ Քանզի ասէր ՚ի միտ իւրում,
թէ միայն մերձենամ ՚ի հանդերձս նորա՝



որ/ես արդարները կանչելու չեկայ, [ժ]հապա
մեղաւորները *ապաշխարութեան։

14 Անատենը Յովհաննէսին աշակերտները ա֊
նոր եկան ու ըսին, [է]Ինչո՞ւ մենք ու փարիսե֊
ցիները շատ անգամ ծոմ կը պահենք, և քու
15 աշակերտներդ չեն պահեր։ Ու Յիսուս ըսաւ
անոնց, Միթէ կարելի՞ է որ [ը]հարսնիքին տը֊
ղաքը սուգ պահեն քանի որ փեսան իրենց
հետն է․ բայց օրեր պիտի գան որ երբ փեսան
իրենցմէ վերցուի՝ [խ]անատենը ծոմ պիտի պա֊
16 հեն։ Ու մէկը չձգեր նոր լաթի կտոր հին հան֊
դերձի վրայ, քանզի ան որ անոր լրութեանը
համար դրուած է, կ'առնէ հանդերձէն, ու պատ֊
17 ռուածքը ալ աւելի գէշ կ'ըլլայ․ Ոչ ալ նոր
գինին հին տիկերու մէջ կը դնեն․ եթէ ոչ՝
տիկերը կը պատռին ու գինին կը թափի, և
տիկերը կը կորնչին․ հապա նոր գինին նոր
տիկերու մէջ կը դնեն, ու երկուքն ալ կը պա֊
հուին։

18 [ծ]Երբոր անիկա անոնց հետ աս բաները կը
խօսէր, ահա իշխան մը եկաւ, երկրպագու֊
թիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Աղջիկս՝ ալ
մինչև հիմա մեռած է, բայց եկուր ձեռքդ
19 անոր վրայ դիր, ու պիտի ապրի։ Եւ Յիսուս
ելաւ ու իր աշակերտներուն հետ անոր ետևէն
գնաց։

20 [կ]Եւ ահա տասներկու տարուան տեռատես
կին մը մօտեցաւ ետևէն՝ անոր հանդերձին
21 քղանցքին դպաւ․ Քանզի իր մտքին մէջ կ'ը֊
սէր, թէ որ միայն անոր հանդերձին դպչիմ՝

| | | |
|---|---|---|
| ժ ա Տիմ․ ա․ 15։ | ը Յովհ․ գ․ 29։ | ծ Մար․ ե․ 22, ևն։ |
| * Ոճանք չունին։ | խ Գործ․ ժգ․ 2, 3։ | Ղուկ․ ը․ 41, ևն։ |
| է Մար․ բ․ 18, ևն։ | ժդ․ 22։ ա Կոր․ | կ Մար․ ե․ 25։ Ղուկ․ |
| Ղուկ․ ե․ 33։ ժը․ 12։ | է․ 5։ | ը․ 43։ |

22 փրկիմ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ եւ ետես
զնա՝ ասէ, Քաջալերեաց, դուստր, հաւատք
քո կեցուցին զքեզ. եւ փրկեցաւ կինն ՚ի ժա-
23 մէն յայնմանէ։ Իբրեւ եկն Յիսուս ՚ի տուն
իշխանին, եւ ետես զփողահարսն եւ ամբոխ
24 յոյժ, Ասէ ցնոսա, Ի բաց գնացէք, զի ոչ
25 եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ. Եւ ծաղր
առնէին զնա. եւ իբրեւ ել ամբոխն ՚ի բաց,
եմուտ, կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ
26 աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն
երկիրն ընդ այն։
27 Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս,
զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին
եւ ասէին, Ողորմեաց մեզ, Որդի Դաւթի։
28 Եւ իբրեւ եկն ՚ի տուն, մատեան առ նա
կոյրքն. եւ ասէ ցնոսա Յիսուս, Հաւատա՞յք
եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն
29 ցնա, Այո, Տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս
նոցա, եւ ասէ, Ըստ հաւատոց ձերոց եղիցի
30 ձեզ։ Եւ բացան աչք նոցա. եւ սաստեաց
նոցա Յիսուս եւ ասէ, Զգոյշ կացէք, մի ոք
31 գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա
32 ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանելն
նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր
33 մի համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօ-
սեցաւ համրն. եւ զարմացան ժողովուրդքն



22 պիտի բժշկուիմ։ Բայց Յիսուս երբոր ետին
դարձաւ ու տեսաւ զանիկա, ըսաւ, Քաջա-
լերուէ, աղջիկ, [ե] քու հաւատքդ քեզ բժըշ-
կեց. եւ կնիկը նոյն ժամէն բժշկուեցաւ։
23 [զ] Ու երբոր Յիսուս իշխանին տունը եկաւ,
ու տեսաւ [է] փողահարները եւ խռոված բազ-
24 մութիւնը, Ըսաւ անոնց, [ը] Մեկդի գացէք,
ինչու որ աղջիկը մեռած չէ, հապա կը քնա-
25 նայ. եւ ծաղր կ'ընէին անիկա։ Ու երբոր
բազմութիւնը դուրս ձգուեցաւ, ինքը ներս
մտաւ՝ անոր ձեռքէն բռնեց, ու աղջիկը ոտք
26 ելաւ։ Եւ աս լուրը ան բոլոր երկիրը տարա-
ծուեցաւ։
27 Ու երբոր Յիսուս անկէ՝ առաջ անցաւ, եր-
կու կոյր ինկան անոր ետեւէն, կ'աղաղակէին
ու կ'ըսէին, [թ] Ողորմէ մեզի, Որդի Դաւթի։
28 Ու երբոր տուն եկաւ, կոյրերը իրեն եկան.
եւ Յիսուս անոնց ըսաւ, Կը հաւատա՞ք թէ
կրնամ աս բանը ձեզի ընել. ըսին անոր, Այո,
29 Տէր։ Անտենը անոնց աչքերուն դպաւ ու
30 ըսաւ, Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի։ Ու
անոնց աչքերը բացուեցան. եւ Յիսուս սաս-
տիկ պատուէր տուաւ անոնց ու ըսաւ, [ժ] Զգուշ
31 կեցէք, մէկը չիմանայ։ [ի] Բայց անոնք ելան
ան բոլոր երկրին մէջ անոր համբաւը տարա-
ծեցին։
32 [լ] Ու երբոր անոնք դուրս ելան, ահա մէկ
33 համր դիւահար մարդ մը բերին իրեն։ Ու
երբոր դեւը ելաւ, համրը խօսեցաւ. եւ ժո-
ղովուրդները զարմացան ու կ'ըսէին թէ Իս-

ե Ղուկ. է. 50։ ը. 48։ ժէ. 19։ ժը. 42։
զ Մար. ե. 38։ Ղուկ. ը. 51։
է Տես բ Մն. լե. 25։
ը Գոր. ի. 10։
թ Գլ. ժե. 22։ ի. 30, 31։ Մար. ժ. 47, 48։ Ղուկ. ժը. 38, 39։
ժ Գլ. ը. 4։ ժբ. 16։ ժէ. 9։ Ղուկ. ե. 14։
ի Մար. է. 36։
լ Տես Գլ. ժբ. 22։ Ղուկ. ժա. 14։

և ասէին թէ Ոչ երբէք երևեցաւ այսպի-
34 սի ինչ յԻսրայէլի ։ Իսկ փարիսեցիքն ասէին
թէ Իշխանաւն դիւաց հանէ դա զդևս ։
35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և
ընդ գիւղս, ուսուցանէր 'ի ժողովուրդս նո-
ցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան.
և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հի-
36 ւանդութիւնս 'ի ժողովրդեանն ։ Եւ տե-
սեալ զժողովուրդսն՝ գթացաւ 'ի նոսա, զի
էին աշխատեալք և ցրուեալք իբրև ոչխա-
37 րս, որոց ոչ իցէ հովիւ ։ Յայնժամ ասէ ցա-
շակերտսն իւր, Հունձք բազում են, և մը-
38 շակք սակաւ. Արդ աղաչեցէք զՏէր հըն-
ձոց, զի հանցէ մշակս 'ի հունձս իւր ։

## ԳԼ. Ժ

1 Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին ա-
շակերտսն իւր, ետ նոցա իշխանութիւն այ-
սոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամե-
2 նայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս ։ Եւ
առաքելոցն երկոտասանից էին անուանք այ-
սոքիկ. առաջին Սիմոն՝ անուանեալն Պետ-



րայէլի մէջ ընաւ ասանկ բան մը տեսնուած
34 չէ ։ Բայց փարիսեցիները կ'ըսէին թէ Ատիկա
դևերուն իշխանովը դևերը կը հանէ ։
35 Եւ Յիսուս կը պտըտէր բոլոր քաղաքները
ու գեղերը, և անոնց ժողովարաններուն մէջ
կը սորվեցընէր ու կը քարոզէր արքայութեան
աւետարանը, և կը բժշկէր բոլոր ախտերը ու
բոլոր հիւանդութիւնները ժողովուրդին մէջ ։
36 Եւ ժողովուրդները տեսնելով՝ անոնց վրայ
խղճաց, ինչու որ յոգնած ու ցիրուցան եղած
37 էին հովիւ չունեցող ոչխարներու պէս ։ Ան-
ատենը ըսաւ իր աշակերտներուն, Հունձքը
38 շատ է, բայց մշակները քիչ. Ուստի հունձ-
քին Տէրոջը աղաչեցէք, որ մշակներ հանէ
իր հունձքին ։

## ԳԼ. Ժ

1 Քրիստոս իր տասուերկու առաքեալները կը ղրկէ՝ հրաշքներ ընելու իշխանութիւն տալով անոնց. 5 պատուէրներ կու տայ անոնց և կը սորվեցընէ թէ ինչ պարտին ընել. 16 կը մխիթարէ զանոնք հալածմունքներու վրայով. 40 և օրհնութիւն կը խոստանայ զանոնք ընդունողներուն ։

1 Եւ իր քովը կանչելով իր տասուերկու ա-
շակերտները, անոնց իշխանութիւն տուաւ
պիղծ ոգիներուն վրայ՝ որ զանոնք հանեն, և
ամէն ցաւերը ու ամէն հիւանդութիւնները
բժշկեն ։
2 Ու տասուերկու առաքելոց անունները ա-
սոնք են. առաջինը Սիմոն՝ Պետրոս ըսուածը

ա Գլ. ժբ. 24 ։ Մար. գ. 22 ։ Ղուկ. ժա. 15 ։
բ Մար. զ. 6 ։ Ղուկ. ժգ. 22 ։
գ Գլ. դ. 23 ։
դ Մար. զ. 34 ։
ե Թուե. իէ. 17 ։ Գ Թագ. իբ. 17 ։ Եզեկ. լդ. 5 ։ Զաք. ժ. 2 ։
զ Ղուկ. ժ. 2 ։ Յովհ. դ. 35 ։
է Բ Թես. գ. 1 ։
—
ա Մար. գ. 13, 14 ։ Ղուկ. զ. 7 ։ Ղուկ. զ. 13 ։ թ. 1 ։
բ Յովհ. ա. 42 ։

3 րոս և Անդրէաս եղբայր նորա, Յակոբոս Զե-
բեդեայ և Յովհաննէս եղբայր նորա, Փի-
լիպպոս և Բարթուղիմէոս, Թովմաս և Մատ-
թէոս մաքսաւոր, Յակոբոս Ալփեայ և Ղէ-
4 բէոս՝ որ անուանեցաւ Թադէոս, Սիմոն կա-
նանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և
5 մատնեաց զնա։ Զնոսա երկոտասանեսին ա-
ռաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա և ա-
սէ, 'ի ճանապարհ հեթանոսաց մի երթայ-
ջէք, և 'ի քաղաք Սամարացւոց մի մտանի-
6 ջէք, Այլ երթայք առաւել առ ոչխարսն կո-
7 րուսեալս տանն Իսրայէլի։ Եւ իբրեւ եր-
թայցէք՝ քարոզեցէք և ասացէք թէ Մեր-
8 ձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս
բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, *զդեւս հա-
9 նէք, ձրի առէք և ձրի տուք։ Մի ստանայք
ոսկի և մի արծաթ և մի պղինձ 'ի գօտիս
10 ձեր։ Մի պարկ 'ի ճանապարհ, և մի երկուս
հանդերձս, մի կօշիկս, մի ցուպ, զի արժա-
11 նի է մշակն կերակրոյ իւրոյ։ Յոր քաղաք
մտանիցէք կամ 'ի գեօղ, հարցանիցէք թէ
ո՞ է 'ի նմա արժանի, և անդ լինիջիք՝ մին-
12 չեւ ելանիցէք անտի։ Եւ իբրեւ մտանիցէք
'ի տունն, ողջոյն տաջիք նմա՝ †և ասասջիք,
13 Ողջոյն տանս այսմիկ"։ Եթէ իցէ տունն ար-

* Ոմանք յաւելուն զմեռեալս յարուցէք,

† Ի Յունարէն չերեւիր ինչ նէ,



3 և անոր եղբայրը Անդրէաս, Յակոբոս Զեբե-
դեան և անոր եղբայրը Յովհաննէս, Փիլիպ-
պոս և Բարթողիմէոս, Թովմաս և Մատթէոս
մաքսաւոր, Յակոբոս Ալփեան և Ղեբէոս որ
4 Թադէոս մականուանեցաւ, [գ]Սիմոն Կանանացի
և [դ]Յուդա Իսկարիովտացի, որ նաև մատնեց
զանիկա։
5 Աս տասուերկուքը Յիսուս խրկեց, և ա-
նոնց պատուիրեց ըսելով, [ե]Հեթանոսներու
ճամբայ մի երթաք ու [զ]Սամարացիներու քա-
6 ղաք մի մտնէք, [է]Հապա աւելի Իսրայէլի տանը
7 [ը]կորսուած ոչխարներուն գացէք։ [թ]Ու երբոր
կ'երթաք՝ քարոզեցէք ու ըսէք թէ [ժ]Երկնից
8 թագաւորութիւնը մօտեցած է։ Հիւանդները
բժշկեցէք, բորոտները *մաքրեցէք, դեւե-
րը հանեցէք. [ի]ձրի առեր էք, ձրի տուէք։
9 [լ]Մի ստանաք ոսկի՝ և ոչ արծաթ՝ և ոչ [խ]պղ-
10 ղինձ ձեր գօտիներուն մէջ, Ոչ ճամբու հա-
մար պարկ, և ոչ կրկին հանդերձ, ոչ կօ-
շիկ, ոչ գաւազան. [ծ]ինչու որ մշակը իր կե-
11 րակուրին արժանի է։ Եւ [կ]որ քաղաք կամ
գեղ մտնէք, հարցուցէք թէ ո՛վ է անոր մէ-
ջը արժանաւոր, ու հոն կեցէք մինչև որ անկէ
12 ելլէք։ Ու երբոր տունը կը մտնէք՝ բարև
13 տուէք †անոր։ Եւ [հ]թէ որ ան տունը ար-

գ Ղուկ. զ. 15: Գործ. ա. 13:
դ Յովհ. ժգ. 26:
ե Գղ. դ. 15:
զ Տես դ Թագ. ժէ. 24: Յովհ. դ. 9, 20:
է Գղ. ժե. 24: Գործ. ժգ. 46:
ը Եսա. ծգ. 6: Երեմ. ծ. 6, 17: Եզեկ. լդ. 5, 6, 16: ա Պետ. բ. 25:
թ Ղուկ. թ. 2:
ժ Գղ. գ. 2: դ. 17: Ղուկ. ժ. 9:
* Ոմանք մաքրեցէք, մեռելները յարուցէք,
ի Գործ. ը. 18, 20:
լ ա Թագ. թ. 7: Մար. զ. 8: Ղուկ. թ. 3: ժ. 4: իբ. 35:
խ Տես Մար. զ. 8:
ծ Ղուկ. ժ. 7: ա Կոր. թ. 7, 14: ա Տիմ. ե. 18:
կ Ղուկ. ժ. 8:
† Ոմանք անոր՝ ու ըսէք, Բարև աս տանս:
հ Ղուկ. ժ. 5, 6:

ժանի, եկեսցէ ողջոյնն ձեր ՚ի վերայ նորա.
ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ
14 ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ
լուիցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք ՚ի
տանէն կամ ՚ի քաղաքէն յայնմանէ, թօթա-
15 փեսջիք զփոշին յոտից ձերոց։ Ամէն ասեմ
ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց
և Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան
քաղաքին այնմիկ։
16 Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչ-
խարս ՚ի մէջ գայլոց. եղերուք այսուհետև
խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև
17 զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք ՚ի մարդկանէ, զի
մատնեսցեն զձեզ յատեանս, և ՚ի ժողովուր-
18 դս իւրեանց տանջեսցեն զձեզ։ Եւ առաջի
դատաւորաց և թագաւորաց տանիցեն զձեզ
վասն իմ ՚ի վկայութիւն նոցա և հեթանո-
19 սաց։ Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի հո-
գայցէք թէ որպէս կամ զինչ խօսիցիք. զի
տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։
20 Զի ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ
21 Հոգին Հօր ձերոյ որ խօսիցի ՚ի ձեզ։ Մատ-
նեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ, և հայր զոր-
դի. և յարիցեն որդիք ՚ի վերայ հարց և ըն-



ժանաւոր է, ձեր բարևը անոր վրայ դայ.
հապա թէ որ արժանաւոր չէ, ձեր բարևը
14 ձեզի դառնայ։ Եւ ով որ ձեզ չընդունի
ու ձեր խօսքերը մտիկ չընէ, երբոր ան տու-
նէն կամ քաղաքէն կ'ելլէք, ձեր ոտքերուն
15 փոշին թօթուեցէք։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Սոդոմացւոց ու Գոմորացւոց երկրին աւելի
դիւրին պիտի ըլլայ դատաստանին օրը՝ քան
թէ ան քաղաքին։
16 Ահա ես ձեզ կը ղրկեմ իբրև ոչխարներ
գայլերու մէջ. ուստի օձերու պէս խորագէտ
17 եղէք և աղաւնիներու պէս՝ միամիտ։ Իսկ
մարդոցմէ զգուշացէք, ինչու որ ձեզ ատեան-
ներու պիտի մատնեն, ու իրենց ժողովա-
18 րաններուն մէջը ձեզ պիտի ծեծեն. Եւ իմ
անունիս համար կուսակալներու ու թագաւոր-
ներու առջև պիտի տարուիք՝ անոնց և հե-
թանոսներուն վկայութիւն ըլլալու համար։
19 Բայց երբոր ձեզ մատնեն՝ հոգ մի ընէք թէ
ինտոր կամ ինչ պիտի խօսիք, ինչու որ ձե-
զի պիտի տրուի ան ժամուն՝ ինչ որ պիտի
20 խօսիք։ Վասն զի չէ թէ դուք էք որ կը խօ-
սիք, հապա ձեր Հօրը Հոգին՝ որ ձեր ներսի-
21 դին կը խօսի։ Ու եղբայր եղբայրը մահուան
պիտի մատնէ, և հայրը՝ որդին. և որդիք
իրենց ծնողացը վրայ պիտի ելլեն ու մեռցը-

ե Սաղ. լե. 13։
զ Մար. զ. 11։ Ղուկ. թ. 5։ ժ. 10, 11։
է Ծնն. ե. 13։ Գործ. ժգ. 51։ ժը. 6։
ը Գլ. ժա. 22, 24։
թ Ղուկ. ժ. 3։
ժ Հռովմ. ժզ. 19։ Եփես. ե. 15։
ժա ա Կոր. ժդ. 20։ Փիլ. բ. 15։
ժբ Գլ. իգ. 9։ Մար. ժգ. 9։ Ղուկ. ժբ. 11։ Իա. 12։
ժգ Գոր. ե. 40։
ժդ Գոր. ժբ. 1։ Իգ. 10։ Իե. 7, 23։ Բ Տիմ. դ. 16։
ժե Մար. ժգ. 11, 12, 13։ Ղուկ. ժբ. 11։ Իա. 14, 15։
ժզ Եղ. գ. 12։ Երեմ. ա. 7։
ժէ Բ Թագ. իգ. 2։ Գործ. դ. 8։ զ. 10։ Բ Տիմ. դ. 17։
ժը Միք. է. 6։ Հմր. 35, 36։ Ղուկ. իա. 16։

22 սպանանիցեն զնոսա ։ Եւ եղիջիք ատեցեալք
յամենեցունց վասն անուան իմոյ . իսկ որ
23 համբերեսցէ 'ի սպառ՝ նա կեցցէ ։ Եւ յոր-
ժամ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքիս յայսմիկ՝
փախիջիք յայլ . և եթէ յայնմանէ հալածիցեն
զձեզ՝ փախիջիք 'ի միւս . ամէն ասեմ ձեզ ,
ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչև
24 եկեսցէ Որդի մարդոյ ։ Ոչ է աշակերտ առա-
ւել քան զվարդապետ , և ոչ ծառայ՝ քան
25 զտէր իւր ։ Շատ լիցէ աշակերտին եթէ եղի-
ցի իբրև զվարդապետ իւր , և ծառային՝
իբրև զտէր իւր . եթէ զտանուտէրն Բէեղ-
զեբուղ կոչեցին , ո՜րչափ ևս առաւել զըն-
26 տանիս նորա ։ Մի այսուհետև երկնչիցիք 'ի
նոցանէ , զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ
27 յայտնեսցի , և գաղտնի որ ոչ ծանիցի ։ Զոր
ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս . և
զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք 'ի վերայ
28 տանեաց ։ Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ ըս-
պանանեն զմարմին , և զոգի ոչ կարեն սպա-
նանել . այլ երկերուք դուք առաւել յայնմա-
մանէ՝ որ կարողն է զոգի և զմարմին կորու-
29 սանել 'ի գեհենի ։ Ո՞չ ապաքէն երկու ճըն-
ճղուկք գանկի միոջ վաճառին , և մի 'ի նո-
ցանէ յերկիր ոչ անկցի առանց Հօր ձերոյ ։
30 Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ
31 է ։ Եւ արդ մի երկնչիցիք , զի լաւ էք քան
32 զբազում ճնճղուկս ։ Ամենայն որ խոստովա-





22 նեն զանոնք ։ Եւ իմ անուանս համար *ամե-
նուն ատելի պիտի ըլլաք . *բայց ով որ մին-
23 չև վերջը համբերէ՝ անիկա պիտի ապրի ։ Ու-
*երբոր աս քաղաքին մէջ ձեզ կը հալածեն ,
ուրիշ +տեղ+ փախէք . քանզի ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի , Իսրայէլի քաղաքները պիտի չհատցը-
24 նէք , *մինչև որ Որդին մարդոյ գայ ։ +Աշա-
կերտը իր վարդապետէն աւելի չէ , և ոչ ծա-
25 ռան՝ իր տիրոջմէն ։ Հերիք է աշակերտին՝ որ
իր վարդապետին պէս ըլլայ , ու ծառային՝
իր տիրոջը պէս . +թէ որ տանուտէրը Բէեղզե-
բուղ կոչեցին , ո՜րչափ աւելի անոր ընտանի-
26 քը ։ Ուստի մի վախնաք անոնցմէ , *ինչու որ
բան մը չկայ ծածուկ՝ որ պիտի չյայտնուի ,
27 և գաղտուկ՝ որ պիտի չգիտցուի ։ Ինչ որ ձե-
զի մութի մէջ կ'ըսեմ , [illegible] լոյսի մէջ խօսե-
ցէք , և ինչ որ ականջն 'ի վար կը լսէք , տա-
28 նիքներուն վրայ քարոզեցէք ։ *Եւ մի վախ-
նաք անոնցմէ՝ որ մարմինը կը սպաննեն , ու
չեն կրնար հոգին սպաննել . հապա աւելի
անկէ վախցէք դուք , որ կրնայ հոգին ու
29 մարմինը գեհենին մէջ կորսնցընել ։ Չէ՞ որ
երկու ճնճղուկ մէկ դանկի կը ծախուին , և
անոնցմէ մէկը գետինը չիյնար առանց ձեր
30 Հօրը ։ *Բայց ձեր գլխուն բոլոր մազերն ալ
31 համրուած են ։ Ուրեմն մի վախնաք , [illegible] որ
32 շատ ճնճղուկներէն լաւ էք դուք ։ Արդ *ով

ա Ղուկ . իա . 17 ։
բ Դան . ժբ . 12 , 13 ։ Գլ . իդ . 13 ։ Մար . ժգ . 13 ։
գ Գլ . բ . 13 ։ գ . 12 . ժբ . 15 ։ Գոր . ը . 1 ։ Թ . 25 ։ ժգ . 6 ։
դ Գլ . ժգ . 28 ։
ե Ղուկ . զ . 40 ։ Յովհ . ժգ . 16 ։ ժե . 20 ։
զ Գլ . ժբ . 24 ։ Մար . գ . 22 ։ Ղուկ . ժա . 15 ։ Յովհ . ը . 48 , 52 ։
է Մար . դ . 22 ։ Ղուկ . ը . 17 ։ ժբ . 2 , 3 ։
ը Ես . ը . 12 , 13 ։ Ղուկ . ժբ . 4 ։ Ա Պետ . գ . 14 ։
թ Ա Թագ . ժդ . 45 ։ Բ Թագ . ժդ . 11 ։ Ղուկ . իա . 18 ։ Գոր . իէ . 34 ։
ժ Ղուկ . ժբ . 8 ։ Հռովմ . ժ . 9 , 10 ։

նեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից
և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս
33 է ։ Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան,
ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ
34 յերկինս է ։ Մի համարիք եթէ եկի արկա-
նել խաղաղութիւն յերկիր․ ոչ եկի արկանել
35 խաղաղութիւն, այլ սուր ։ Քանզի եկի քա-
կել զայր ՚ի հօրէ իւրմէ, և զդուստր ՚ի մօ-
36 րէ իւրմէ, և զհարսն ՚ի սկեսրէ իւրմէ ։ Եւ
37 թշնամիք առն՝ ընտանիք իւր ։ Որ սիրէ ըզ-
հայր կամ զմայր առաւել քան զիս, ոչ է ինձ
արժանի․ և որ սիրէ զուստր կամ զդուստր
38 առաւել քան զիս, չէ ինձ արժանի ։ Եւ որ
ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ, չէ ինձ
39 արժանի ։ Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ
զնա․ և որ կորուսանէ զանձն իւր վասն իմ, գըտ-
40 ցէ զնա ։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի,
և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ ։
41 Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի,
զվարձս մարգարէի առցէ․ և որ ընդունի
զարդար յանուն արդարոյ, զվարձս արդարոյ
42 առցէ ։ Եւ որ արբուսցէ միում ՚ի փոքրկան-
ցըս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝



որ մարդոց առջև զիս կը դաւանի, դես ալ
անիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջևը՝ որ
33 երկինքն է․ եԵւ ով որ մարդոց առջև զիս
կ՚ուրանայ, ես ալ անիկա պիտի ուրանամ իմ
34 Հօրս առջևը՝ որ երկինքն է ։ զՄի կարծէք
թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու
եկայ․ խաղաղութիւն ձգելու չեկայ՝ հապա
35 սուր․ Ինչու որ եկայ էմարդը իր հօրմէն զա-
տելու, ու աղջիկը՝ իր մօրմէն, ու հարսը՝
36 իր կեսուրէն․ Եւ ըմարդուն թշնամիները իր
37 ընտանիքը պիտի ըլլան ։ թԱն որ հայրը կամ
մայրը ինծմէ աւելի կը սիրէ, ինծի արժանի
չէ․ և ան որ տղան կամ աղջիկը ինծմէ աւե-
38 լի կը սիրէ, ինծի արժանի չէ․ ժԵւ ան որ իր
խաչը չառներ ու իմ ետևէս գար, ինծի ար-
39 ժանի չէ ։ ժաԱն որ իր անձը կը գտնէ, պիտի
կորսնցընէ զանիկա․ և ան որ իր անձը ին-
ծի համար կը կորսնցընէ, պիտի գտնէ զա-
40 նիկա ։ ժբԱն որ ձեզ կ՚ընդունի, զիս կ՚ընդու-
նի․ և ան որ զիս կ՚ընդունի, զիս խրկողը
41 կ՚ընդունի ։ ժգԱն որ մարգարէ մը կ՚ընդունի
մարգարէի անունով, մարգարէի վարձք կ՚առ-
նէ․ և ան որ արդար մը կ՚ընդունի արդարի
42 անունով, արդարի վարձք կ՚առնէ ։ ժդՈւ ան
որ աս պզտիկներէն մէկուն միայն գաւաթ մը
պաղ ջուր կը խմցընէ աշակերտի անունով,

դ Յայտ. գ. 5 ։
ե Մար. ը. 38 ։ Ղուկ. թ. 26 ։ բ Տիմ. բ. 12 ։
զ Ղուկ. ժբ. 49, 51, 52, 53 ։
է Միք. է. 6 ։
ը Սաղ. խա. 9 ։ Ծն. 13 ։ Միք. է. 6 ։ Յովհ. ժգ. 18 ։
թ Ղուկ. ժդ. 26 ։
ժ Գլ. ժզ. 24 ։ Մար. ը. 34 ։ Ղուկ. թ. 23 ։ ժդ. 27 ։
ժա Գլ. ժզ. 25 ։ Ղուկ. ժէ. 33 ։ Յովհ. ժբ. 25 ։
ժբ Գլ. ժը. 5 ։ Ղուկ. թ. 48 ։ ժ. 16 ։ Յովհ. ժբ. 44 ։ ժգ. 20 ։ Գաղ. դ. 14 ։
ժգ Գ Թագ. ժէ. 10 ։ ժը. 4 ։ Դ Թագ. դ. 8 ։
ժդ Գլ. ժը. 5, 6 ։ ԻԵ. 40 ։ Մար. թ. 40 ։ Եբր. Զ. 10 ։

—

յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կո-
րուսցէ զվարձս իւր ։

## ԳԼ. ԺԱ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպա-
տուէր երկոտասանից աշակերտացն իւրոց,
գնաց անտի քարոզել և ուսուցանել 'ի քա-
2 ղաքս նոցա ։ Իսկ Յովհաննէս իբրեւ լուաւ
'ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց
3 'ի ձեռն աշակերտացն իւրոց, Եւ ասէ ցնա,
Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն
4 կալցուք ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա, Գնացէք, պատմեցէք Յովհաննու զոր
5 լուայք և տեսիք ։ Կոյրք տեսանեն, կաղք
գնան, բորոտք սրբին և խուլք լսեն և մե-
ռեալք յառնեն և աղքատք աւետարա-
6 նին ։ Եւ երանեալ է որ ոչ գայթակղեսցի յիս ։
7 Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ա-
սել ցժողովուրդսն զՅովհաննէ, Զի՞նչ ելէք
տեսանել յանապատին, եղէ՞գն շարժուն 'ի

ԳԼՈՒԽ ԺԱ. 35

ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, բնաւ իր վարձքը պի-
տի չկորսնցընէ ։

## ԳԼ. ԺԱ.

2 Յովհաննէս իր աշակերտները Քրիստոսի կը խրկէ ։ 7 Քրիս-
տոսի վկայութիւնը Յովհաննէսին համար ։ 18 Ժողովրդոց կար-
ծիքը Յովհաննէսին ու Քրիստոսի վրայով ։ 20 Քրիստոս կը
նախատէ Քորազինը, Բեթսայիդան և Կափառնայումը իրենց
ապերախտութեանը և անզեղջ մնալուն համար. 25 և կը փա-
ռաւորէ իր Հօրը իմաստութիւնը Աւետարանը պարզամիտնե-
րուն յայտնելուն համար. 28 իրեն կը կանչէ ամէն անոնք որ
իրենց մեղքին ծանրութիւնը կը զգան ։

1 Եւ եղաւ որ երբ Յիսուս լմնցուց իր տաս-
ուերկու աշակերտներուն պատուէր տալը,
գնաց անկէ անոնց քաղաքներուն մէջ քարո-
զելու և սորվեցընելու ։
2 Իսկ Յովհաննէս ᵃբանտին մէջը ᵇերբոր լսեց
Քրիստոսի գործքերը, իր աշակերտներէն եր-
3 կուքը խրկելով՝ ըսաւ անոր, ᶜԴուն ա՞ն ես
4 որ գալու էիր, թէ ուրիշի մը սպասենք ։ Եւ
Յիսուս պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Գա-
ցէք պատմեցէք Յովհաննէսին ինչ որ կը լսէք
5 ու կը տեսնէք. ᵈԿոյրերը կը տեսնեն, կաղերը
կը քալեն, բորոտները կը մաքրուին, խուլերը
կը լսեն, մեռելները յարութիւն կ'առնեն ᵉու
6 աղքատներուն աւետարան կը քարոզուի ։ Եւ
երանի անոր որ իմ վրայովս չգայթակղիր ։
7 ᶠՈւ երբոր անոնք գացին, Յիսուս սկսաւ
ժողովուրդներուն ըսել Յովհաննէսին համար,
Ի՞նչ տեսնելու ելաք անապատին մէջ. ᵍեղէ՞գ

ա Գէ. ժդ. 3 ։
բ Ղուկ. է. 18, 19, և ։
գ Ծն. խթ. 10 ։ Թու. իդ. 17 ։ Դան. թ. 24 ։ Յովհ. զ. 14 ։
դ Ես. իթ. 18 ։ լե. 4, 5, 6 ։ խբ. 7 ։ Յովհ. բ. 23 ։ գ. 2 ։ ե. 36 ։ ժ. 25, 38 ։ ժդ. 11 ։
ե Սաղ. իբ. 26 ։ Եսա. կա. 1 ։ Ղուկ. գ. 18 ։ Յակ. բ. 5 ։
զ Ես. ը. 14, 15 ։ Գէ. ժզ. 57 ։ իզ. 10 ։ իզ. 31 ։ Հռովմ. թ. 32, 33 ։ ա Կոր. ա. 23 ։ բ. 14 ։ Գաղ. ե. 11 ։ ա Պետ. բ. 8 ։
է Ղուկ. է. 24 ։
ը Եփես. դ. 14 ։

8 հողմոյ · Այլ զի՞նչ ելէք տեսանել · մա՞րդ 'ի
հանդերձս փափկութեան զգեցեալ · ա-
հաւանիկ որ զփափուկս զգեցեալ են , 'ի
9 տունս թագաւորաց են ։ Այլ զի՞նչ ելէք տե-
սանել · մարգարէ՞ · այո , ասեմ ձեզ , և առա-
10 ւել ևս քան զմարգարէ ։ Զի նա է վասն ո-
րոյ գրեալն է , Ահա ես առաքեցից զհրեշ-
տակ իմ առաջի երեսաց քոց , որ պատրաս-
11 տեսցէ զճանապարհս քո առաջի քո ։ Ամէն ա-
սեմ ձեզ , Չէ յարուցեալ 'ի ծնունդս կանանց
մեծ քան զՅովհաննէս մկրտիչ · բայց փոքրի-
կըն յարքայութեան երկնից մեծ է քան զնա ։
12 Բայց յաւուրցն Յովհաննու մկրտչի մինչեւ
ցայժմ արքայութիւնն երկնից բռնադատի ,
13 և բռունք յափշտակեն զնա ։ Քանզի ամենայն
օրէնք և մարգարէք մինչեւ ցՅովհաննէս մար-
14 գարէացան ։ Եւ թէ կամիք ընդունել , նա է
15 Եղիա՝ որ գալոցն է ։ Որ ունիցի ականջս լսե-
16 լոյ՝ լուիցէ ։ Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս ·
Նման է մանկտւոյ՝ որ նստիցին 'ի հրապա-
17 րակս , կարդայցեն զընկերս իւրեանց , Եւ ա-
սիցեն , փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցէք ,
18 ողբացաք ձեզ և ոչ կոծեցարուք ։ Եկն Յով-
հաննէս , ոչ ուտէր և ոչ ըմպէր , և ասեն ,
19 Դեւ գոյ 'ի նմա ։ Եկն Որդի մարդոյ՝ ուտէ
և ըմպէ · և ասեն , Ահա այր կերող և արբե-
ցող , բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց ,



8 մը հովէն շարժուած ։ Հապա ի՞նչ տեսնելու
ելաք · փափուկ հանդերձներ հագած մա՞րդ
մը · ահա փափուկ հանդերձներ հագնողները թա-
9 գաւորաց տուներն են ։ Հապա ի՞նչ տեսնելու
ելաք · մարգարէ՞ · այո , կ'ըսեմ ձեզի , [ը]մար-
10 գարէէ մըն ալ աւելի ։ Ինչու որ ասիկա է՝
որուն համար գրուած է , [ժ]Ահա ես իմ դես-
պանս կը ղրկեմ քու երեսիդ առջեւէն , որ
քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջեւէդ ։
11 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , կիներէն ծնածներուն
մէջը Յովհաննէս մկրտիչէն մեծը ելած չէ ,
սակայն երկնից թագաւորութեանը մէջ պզտի-
12 կը անկէ մեծ է ։ [ի]Ու Յովհաննէս մկրտիչին
օրերէն մինչև հիմա երկնից թագաւորութիւնը
ուժով կ'առնուի , և ուժեղները կը յափշտա-
13 կեն անիկա ։ [լ]Ինչու որ բոլոր մարգարէները
ու օրէնքը մինչև Յովհաննէս մարգարէութիւն
14 ըրին · Ու եթէ կ'ուզէք ընդունիլ , անիկա է
15 [խ]Եղիան՝ որ պիտի գար ։ [ծ]Ան որ լսելու ականջ
16 ունի , թող լսէ ։ Բայց [կ]որո՞ւ նմանցընեմ աս
ազգը · կը նմանի տղոց , որ շուկաները նստե-
17 լով՝ իրենց ընկերներուն կը կանչեն , Ու կ'ը-
սեն , փող հնչեցուցինք ձեզի՝ ու չխաղացիք ,
18 ողբ կարդացինք ձեզի՝ ու կոծ չըրիք ։ Վասն
զի Յովհաննէս եկաւ , ոչ կ'ուտէր և ոչ կը
խմէր , ու կ'ըսեն , Դև կայ անոր ներսի դին ։
19 Որդին մարդոյ եկաւ , կ'ուտէ ու կը խմէ , և
կ'ըսեն , Ահա ուտող և արբեցող մարդ մը՝
[հ]մաքսաւորներու ու մեղաւորներու բարեկամ ·

ը Գլ. ժդ. 5 ։ իա. 26 ։ Ղուկ. ա. 76 ։ է. 26 ։
ժ Մաղ. գ. 1 ։ Մար. ա. 2 ։ Ղուկ. ա. 76 ։ է. 27 ։
ի Ղուկ. ժզ. 16 ։
լ Մաղ. դ. 6 ։
խ Մաղ. դ. 5 ։ Գլ. ժէ. 12 ։ Ղուկ. ա. 17 ։
ծ Գլ. ժգ. 9 ։ Ղուկ. ը. 8 ։ Յայտ. բ. 7, 11, 17, 29 ։ գ. 6, 13, 22 ։
կ Ղուկ. է. 31 ։
հ Գլ. թ. 10 ։

և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւ-
20 րոց ։ Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝
յորս եղեն բազում զօրութիւնք նորա , և ոչ
21 ապաշխարեցին ։ Վայ քեզ , Քորազին , վայ
քեզ , Բեթսայիդա , զի եթէ ՚ի Տիւրոս և ՚ի
Սիդոն եղեալ էին զօրութիւնքն որ ՚ի ձեզ
եղեն , վաղու եւս արդեօք խորգով և մոխ-
22 րով ապաշխարեալ էր ։ Բայց ասեմ ձեզ ,
դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդոնի
23 յաւուրն դատաստանի՝ քան ձեզ ։ Եւ դու ,
Կափառնայում , *մի մինչեւ յերկինս բարձ-
րասցիս , այլ՝ մինչեւ ՚ի դժոխս իջցես ․ զի
եթէ ՚ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն որ
՚ի քեզ եղեն , ապաքէն կային եւս մինչեւ
24 ցայսօր ։ Բայց ասեմ ձեզ եթէ Երկրին Սոդո-
մացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաս-
տանի՝ քան քեզ ։
25 Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս
և ասէ , Գոհանամ զքէն , Հայր , Տէր երկնի
և երկրի , զի ծածկեցեր զայս յիմաստնոց և
26 ՚ի գիտնոց , և յայտնեցեր տղայոց ։ Այո ,
Հայր , զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո ։
27 Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի Հօրէ իմմէ ․ և
ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր , և ոչ
զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի , և ում
28 Որդին կամիցի յայտնել ։ Եկայք առ իս ,
ամենայն վաստակեալք և բեռնաւորք , և ես

* Ի Յոյնն՝ որ մինչեւ յերկինս բարձրացեալ ես ;



[ձ]և իմաստութիւնը արդարացաւ իր որդւոցմէն ։
20 [ղ]Անատենը սկսաւ նախատել այն քաղաք-
ները , որոնց մէջ գործուեր էին իր հրաշքնե-
21 րուն շատերը , քանզի չապաշխարեցին ․ Վա՜յ
քեզ , Քորազին , վա՜յ քեզ , Բեթսայիդա , ինչու
որ եթէ Տիւրոսի ու Սիդոնի մէջ եղած ըլլային
այն հրաշքները՝ որ ձեր մէջը եղան , շատոնցմէ
[ճ]քուրձով ու մոխիրով ապաշխարած պիտի
22 ըլլային ։ Բայց ձեզի կ'ըսեմ , [մ]Տիւրոսին և
Սիդոնին աւելի դիւրին պիտի ըլլայ դատաս-
23 տանին օրը՝ քան թէ ձեզի ։ Եւ դուն , Կա-
փառնայում , [յ]որ մինչև երկինքը բարձրացած
ես , մինչև դժոխքը պիտի իջնես , ինչու որ
եթէ Սոդոմի մէջ եղած ըլլային այն հրաշքնե-
րը՝ որ քու մէջդ եղան , էր— ու մինչև աս օրս
24 դեռ պիտի մնար ։ Բայց ձեզի կ'ըսեմ որ [ն]Սո-
դոմացւոց երկրին աւելի դիւրին պիտի ըլլայ
դատաստանին օրը՝ քան թէ քեզի ։
25 [շ]Նոյն ժամանակին պատասխան տուաւ Յի-
սուս ու ըսաւ , Շնորհակալ եմ քեզմէ , ով
Հայր՝ Տէր երկնի և երկրի , [ո]որ աս բաները ծա-
ծուկ պահեցիր իմաստուններէն ու գիտուն-
26 ներէն , ու տղոց յայտնեցիր ։ Այո , ով Հայր ,
ինչու որ քու առջևդ ասանկ հաճելի եղաւ ։
27 [պ]Ամէն բան ինծի տրուեցաւ իմ Հօրմէս , ու
մէկը չճանչնար Որդին՝ բայց Հայրը , [ջ]և մէկը
չճանչնար Հայրը՝ բայց Որդին , և ան՝ որուն
28 որ Որդին կ'ուզէ յայտնել ։ Եկէք ինծի , բո-
լոր յոգնած ու բեռնաւորածներ , և ես ձեզ

ձ Ղուկ․ Է․ 35 ։
ղ Ղուկ․ Ժ․ 13 , ևն ։
ճ Յովն․ Գ․ 7 , 8 ։
մ Գլ․ Ժ․ 15 ։ Հմր․ 24 ։
յ Տես Եսա․ ԺԴ․ 13 ։ Ողբ․ Բ․ 1 ։
ն Գլ․ Ժ․ 15 ։
շ Ղուկ․ Ժ․ 21 ։
ո Տես Սաղ․ Ը․ 2 ։ Ա Կոր․ Ա․ 19 , 27 ։ Բ․ 8 ։ Բ Կոր․ Գ․ 14 ։
չ Գլ․ ԺԶ․ 17 ։
պ Գլ․ ԻԸ․ 18 ։ Ղուկ․ Ժ․ 22 ։ Յովհ․ Գ․ 35 ։ ԺԳ․ 3 ։ ԺԷ․ 2 ։ Ա Կոր․ ԺԵ․ 27 ։
ջ Յովհ․ Ա․ 18 ։ Զ․ 46 ։ Ժ․ 15 ։

29 հանգուցից զձեզ։ Առէք զլուծ իմ 'ի ձեզ,
և ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ
սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց։
30 Զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ՝ փոքրոգի։

## ԳԼ. ԺԲ

1 Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայսն
նոյա 'ի շաբաթու, և աշակերտքն նորա
քաղցեան և սկսան հասկ կորզել և ուտել։
2 փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա,
Ահաւասիկ աշակերտք քո գործեն, զոր ոչ է
3 արժան գործել 'ի շաբաթու։ Եւ նա ասէ
ցնոսա, Ո՞չ իցէ ընթերցեալ ձեր զոր արար
Դաւիթ, յորժամ քաղցեաւն, և որ ընդ նմայն
4 էին։ Զիարդ եմուտ 'ի տունն Աստուծոյ և
եկեր զհացն զառաջաւորութեան, զոր ոչ էր
օրէն նմա ուտել, և ոչ որոց ընդ նմայն էին,
5 բայց միայն քահանայից։ Կամ թէ չիցէ՞ ըն-
թերցեալ յօրէնս՝ զի 'ի շաբաթս քահանայքն
'ի տաճարին պղծեն զշաբաթն և անմեղք են։

38 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

29 պիտի հանգչեցընեմ։ Իմ լուծս ձեր վրայ
առէք, [ա]և ինծմէ սորվեցէք՝ որ հեզ եմ ու
[բ]սրտով խոնարհ, և [գ]ձեր անձերուն հանգըս-
30 տութիւն պիտի գտնէք. [դ]Ինչու որ իմ լուծս
քաղցր է՝ և իմ բեռս թեթև։

## ԳԼ. ԺԲ

1 Քրիստոս կը յանդիմանէ փարիսեցւոց կուրութիւնը շաբաթ օրուան վրայով. 3 Սուրբ Գիրքերով, 9 փաստով 13 և հըրաշքով մը։ 22 Կոյր ու համր դիւահար մը կը բժշկէ։ 31 Կ'իմացընէ թէ Սուրբ Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը պիտի չներուի, 36 և թէ դատարկ խօսքերու համար հաշիւ պիտի տրուի։ 38 Կը յանդիմանէ անհաւատները որ նշան կը խնդրեն, 49 և կը ցուցընէ թէ ով է իր եղբայրը, իր քոյրը և իր մայրը։

1 Այն ատենը [ա]Յիսուս շաբաթ օրը գնաց ար-
տերուն մէջէն, և իր աշակերտները անօթե-
ցան, ու սկսան ցորենի հասկեր փրցընել և ու-
2 տել։ Փարիսեցիները երբոր տեսան՝ ըսին անոր,
Ահա քու աշակերտներդ կը գործեն ինչ որ
3 արժան չէ շաբաթ օրը գործել։ Ան ալ անոնց
ըսաւ, Չէ՞ք կարդացեր դուք [բ]Դաւիթին ը-
րածը, երբոր անօթեցաւ ինքը ու անոնք որ
4 իր հետն էին. Ինչպէս մտաւ Աստուծոյ տու-
նը, և [գ]առաջաւորութեան հացերը կերաւ,
որ ոչ իրեն օրինաւոր էր ուտել, և ոչ անոնց
որ իր հետն էին, [դ]բայց միայն քահանանե-
5 րուն։ Կամ թէ [ե]օրէնքին մէջը չէ՞ք կարդա-
ցեր, որ քահանաները շաբաթ օրերը տաճա-
րին մէջ շաբաթը կը պղծեն՝ ու անմեղ են։

ա Յովհ. ժգ. 15։ Փիլ. բ. 5։ ա Պետ. բ. 21։ ա Յովհ. բ. 6։
բ Զաք. թ. 9։ Փիլ. բ. 7, 8։
գ Երեմ. զ. 16։
դ ա Յովհ. ե. 3։

—

ա Բ Օր. իգ. 25։ Մար. բ. 23։ Ղուկ. զ. 1։
բ ա Թագ. իա. 6։
գ Ել. իե. 30։ Ղև. իդ. 5։
դ Ել. իթ. 32, 33։ Ղև. ը. 31։ իդ. 9։
ե Թուոց. իը. 9։ Յովհ. է. 22։

6 Բայց ասեմ ձեզ, զի մեծ քան զտաճարն է
7 աստ։ Եւ եթէ գիտէիք զինչ է՝ Ողորմու-
թիւն կամիմ և ոչ զոհ, ապա ոչ դատա-
8 պարտէիք դուք զանպարտս։ Զի տէր է շա-
9 բաթու Որդին մարդոյ։ Եւ գնացեալ անտի
10 *Յիսուս եկն ’ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ
էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր.
հարցին զնա և ասեն եթէ Պա՞րտ իցէ ’ի
շաբաթու բժշկել, զի չարախօսեսցեն զնմանէ։
11 Եւ նա ասէ ցնոսա, Ո՞վ է ’ի ձէնջ մարդ՝
որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ’ի
խորխորատ ’ի շաբաթու, միթէ ո՞չ ունիցի և
12 յարուցանիցէ զնա։ Իսկ արդ ո՞րչափ եւս
առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն
13 պարտ է ’ի շաբաթու բարիս գործել։ Յայն-
ժամ ասէ ցայրն, Ձգեա զձեռն քո. և նա
14 ձգեաց, և եղեւ ողջ իբրեւ զմիւսն։ Իսկ փա-
րիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ արարին
15 զնմանէ՝ թէ ո՞րպէս կորուսցեն զնա։ Եւ Յի-
սուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի. և
գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք,
16 և բժշկեաց զամենեսեան։ Եւ սաստեաց նո-
17 ցա զի մի յայտնեսցեն զնմանէ ումեք։ Զի
լցցի որ ասացաւն ’ի ձեռն Եսայեայ մարգա-
18 րէի, Ահա մանուկ իմ զոր ընտրեցի, և սի-
րելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից
զՈգի իմ ’ի վերայ նորա, և իրաւունս հե-

* Ի Յուն. ւէ։

ԳԼՈՒԽ ԺԲ 39

6 Բայց ձեզի կ’ըսեմ որ աս տեղը ⁿտաճարէն
7 մեծ մէկը կայ։ Եւ թէ որ գիտնայիք թէ ի՞նչ
ըսել է, ᵉՈղորմութիւն կ’ուզեմ՝ ու չէ թէ զոհ,
անմեղները անպարտները չէիք դատապարտեր.
8 Քանզի Որդին մարդոյ *շաբաթին տէրն է։
9 ᵉԵւ անկէ երթալով՝ եկաւ անոնց ժողովա-
10 րանը։ Եւ հոն մէկ մարդ մը կար՝ որուն ձեռ-
քը չորցած էր. և հարցուցին անոր՝ ու ըսին
թէ ᵗՇաբաթ օրը բժշկել արժա՞ն է, որ անոր
11 վրայով ամբաստանութիւն ընեն։ Ան ալ ըսաւ
անոնց, Ձեզմէ ո՞ր մարդը կայ՝ որ մէկ ոչխար
մը ունենայ, և անիկա շաբաթ օրը ᶠփոսի մէջ
իյնայ, պիտի չբռնէ՞ ու վեր հանէ զանիկա։
12 Արդ ո՞րչափ աւելի է մարդը ոչխարէն. ուրեմն
13 շաբաթ օրը բարի գործել արժան է։ Անատե-
նը ըսաւ ան մարդուն, Երկընցուր ձեռքդ.
ան ալ երկընցուց, ու ողջացաւ միւսին պէս։
14 Իսկ ᵏփարիսեցիները դուրս ելլելով՝ անոր
վրայ խորհուրդ կ’ընէին թէ ինտո՞ր անիկա
կորսնցընեն։
15 Եւ Յիսուս երբոր գիտցաւ՝ ˡզատուեցաւ
անկէ. ᵉև շատ ժողովուրդներ անոր ետևէն
16 գացին, ու ամէնը բժշկեց։ Եւ ᵗսաստիկ պա-
տուիրեց անոնց որ զինքը ձենը մը չյայտնեն.
17 Որ կատարուի Եսայի մարգարէին ձեռքով
18 ըսուած խօսքը, ˡԱհա իմ ծառաս՝ որ ընտրե-
ցի, և իմ սիրելիս՝ ʰորուն հաւնեցաւ իմ անձս.
իմ Հոգիս անոր վրայ պիտի դնեմ, ու հեթա-

ն Մն. զ. 18։ Մարգ. գ. 1։
է Ովս. զ. 6։ Մէք. զ. 6, 7, 8։ Գլ. թ. 13։
* Ոմանք շաբաթին ալ
ը Մար. գ. 1։ Ղուկ. զ. 6։
թ Ղուկ. ժդ. 14։ ժգ. 3։ Յովհ. թ. 16։
ժ Տես Ել. իգ. 4, 5։ բ Օր. իբ. 4։
ի Գլ. իէ. 1։ Մար. գ. 6։ Ղուկ. զ. 11։ Յովհ. ե. 18։ ժ. 39։ ժա. 53։
լ Տես Գլ. ժ. 23։ Մար. գ. 7։
խ Գլ. ժթ. 2։
ծ Գլ. թ. 30։
կ Ես. իբ. 1։
հ Գլ. գ. 17։ ժէ. 5։

19 թանոսաց պատմեսցէ։ Ոչ հակառակեսցի և
ոչ աղաղակեսցէ, և ոչ ոք լուիցէ 'ի հրապա֊
20 րակս զբարբառ նորա։ Զեղէգն ջախջախեալ
ոչ փշրեսցէ, և զպատրոյգն առկայծեալ ոչ
շիջուսցէ, մինչև հանցէ 'ի յաղթութիւն ըզ֊
21 դատաստանն. Եւ յանուն նորա հեթանոսք
յուսասցին։
22 Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի
կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի
23 համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զար֊
մացան ամենայն ժողովուրդքն և ասէին, Մի֊
24 թէ սա՞ իցէ *Քրիստոսն որդի Դաւթի։ Բայց
փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն, Ոչ իւիք
հանէ դա զդեւս, եթէ ոչ Բէեղզեբուղաւ
25 իշխանաւն դիւաց։ Իբրև գիտաց Յիսուս
զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա, Ամենայն
թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ ա֊
ւերի. և ամենայն քաղաք կամ տուն բաժա֊
26 նեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։ Եւ եթէ Սատա֊
նայ զՍատանայ հանէ, յանձն իւր բաժանե֊
ցաւ. արդ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն
27 նորա։ Եւ եթէ ես Բէեղզեբուղաւ հանեմ
զդեւս՝ որդիքն ձեր իւ՞ հանիցեն. վասն այ֊
28 նորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։ Ապա
եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս,
ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր արքայու֊
29 թիւն Աստուծոյ։ Կամ զիա՞րդ կարէ ոք մը֊
տանել 'ի տուն հզօրի՝ և զգործիս նորա
յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն,

* Ցսն՝ որդին Դաւթի։



19 նոսներուն իրաւունք պիտի պատմէ։ Ոչ պի֊
տի վիճի, և ոչ պիտի աղաղակէ, և ոչ մէկը
պիտի լսէ անոր ձայնը հրապարակներուն մէջ։
20 Ջախջախուած եղէգը պիտի չփշրէ, ու պլպլած
պատրոյգը պիտի չմարէ, մինչև որ դատաս֊
21 տանը յաղթութեան հանէ։ Եւ հեթանոսները
անոր անուանը պիտի յուսան։
22 [ջ]Անատենը կոյր ու համր դիւահար մը բե֊
րին իրեն, և զանիկա բժշկեց, անանկ որ համ֊
23 րը ու կոյրը խօսեցաւ ու տեսաւ։ Եւ բոլոր
ժողովուրդները զարմացան ու կ՚ըսէին, Ար֊
24 դեօք ասիկա՞ է Դաւիթի որդին։ [ղ]Բայց փա֊
րիսեցիները երբոր լսեցին՝ ըսին, Ասիկա ու֊
րիշ բանով չհաներ դեւերը՝ բայց դեւերուն Բէ֊
25 եղզեբուղ իշխանովը։ Եւ [ճ]Յիսուս անոնց խոր֊
հուրդները իմանալով՝ ըսաւ անոնց, Ամէն
թագաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝ կ՚ա֊
ւերի. և ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ
26 բաժնուած՝ չկրնար կենալ։ Եւ թէ որ Սատա֊
նան Սատանայ կը հանէ, իրեն դէմ բաժնուե֊
ցաւ. ուստի ինտո՞ր պիտի կենայ անոր թա֊
27 գաւորութիւնը։ Ու թէ որ ես Բէեղզեբուղով
դեւերը կը հանեմ, ձեր որդիները ինչո՞վ կը
հանեն. ուրեմն անոնք պիտի ըլլան ձեր դա֊
28 տաւորները։ Բայց թէ որ ես Աստուծոյ հո֊
գիովը կը հանեմ դեւերը, ուրեմն [տ]Աստուծոյ
29 թագաւորութիւնը ձեր վրայ հասած է։ [յ]Կամ
ինտո՞ր կրնայ մէկը զօրաւոր մարդու մը տունը
մտնել, և անոր կարասիները յափշտակել, թէ
որ առաջ ան զօրաւոր մարդը չկապէ, ու

ջ Տես Գլ. թ. 32։ Մար. գ. 11։ Ղուկ. ժա. 14։
ղ Գլ. թ. 34։ Մար. գ. 22։ Ղուկ. ժա. 15։
ճ Գլ. թ. 4։ Յովհ. բ. 25։ Յայտ. բ. 23։
տ Դան. բ. 44։ է. 14։ Ղուկ. ա. 33։ ժա. 20։ ժէ. 20, 21։
յ Եսա. իթ. 24։ Ղուկ. ժա. 21, 22, 23։

30 և ապա զտունն նորա յափշտակիցէ։ Որ ոչ
ընդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողո-
31 վէ ընդ իս՝ ցրուէ։ Վասն այդորիկ ասեմ
ձեզ, Ամենայն մեղք և հայհոյութիւնք թող-
ցին մարդկան. բայց զՀոգւոյն հայհոյութիւն
32 մի *թողցի։ Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ
մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն Սըր-
բոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխար-
33 հի և մի ՚ի հանդերձելումն։ Կամ արարէք
զծառն բարի՝ և զպտուղ նորա բարի, կամ
արարէք զծառն չար՝ և զպտուղ նորա չար.
34 քանզի ՚ի պտղոյ անտի ծառն ճանաչի։ Ծը-
նունդք իժից, զիա՞րդ կարիցէք բարիս խօ-
սել՝ որ չարքդ էք. քանզի ՚ի յաւելուածոյ
35 սրտի խօսի բերան։ Մարդ բարի ՚ի բարի
գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ
չար ՚ի չար գանձուց †սրտի իւրոյ" հանէ ըզ-
36 չարիս։ Բայց ասեմ ձեզ թէ ընդ ամենայն
դատարկ բանի զոր խօսիցին մարդիկ, տա-
37 ցեն համար յաւուրն դատաստանի, Զի
՚ի բանից քոց արդարասցիս, և ՚ի բանից
քոց պարտաւորեսցիս։
38 Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք
՚ի դպրացն և ՚ի փարիսեցւոց, և ասեն,
վարդապետ, կամիմք նշան ինչ տեսանել ՚ի
39 քէն։ Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա,
Ազգ չար և շնացող նշան խնդրէ. և նշան՝ մի

* Յայնն՝ թողցի մարդկան։

† Ի Յոյնն չէ։



30 եւ քը անոր տունը կողոպտէ։ Ան որ իմ հետս
չէ՝ ինծի հակառակ է, և ան որ ինծի հետ
31 չժողվեր՝ ցիրուցան կ'ընէ։ Անոր համար ձե-
զի կ'ըսեմ, [ն]Ամէն մեղք ու հայհոյութիւն պի-
տի ներուի մարդոց, [շ]բայց Սուրբ Հոգւոյն դէմ
եղած հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց.
32 Եւ ով որ [ո]Որդւոյ մարդոյ դէմ բան կ'ըսէ՝
[չ]պիտի ներուի անոր, բայց ով որ Հոգւոյն
Սրբոյ դէմ կ'ըսէ՝ պիտի չներուի անոր, ոչ աս
աշխարհիս մէջ և ոչ գալու աշխարհին մէջ։
33 Կամ ծառը բարի ըրէք՝ ու [պ]անոր պտուղը
բարի, կամ ծառը չար ըրէք՝ ու անոր պտուղը
չար. ինչու որ ծառը պտուղէն կը ճանչցուի։
34 [ջ]Իժերու ծնունդներ, ի՞նչպէս կրնաք բարի
խօսիլ, որ չար էք. ինչու որ [ռ]սրտին աւել-
35 ցուքէն բերանը կը խօսի։ Բարի մարդը իր
սրտին բարի գանձէն բարի բաներ կը հանէ,
և չար մարդը իր սրտին չար գանձէն չար բաներ
36 կը հանէ։ Բայց ձեզի կ'ըսեմ թէ Ամէն դա-
տարկ խօսքերու համար՝ որ մարդիկ կը խօ-
սին, դատաստանին օրը հաշիւ պիտի տան։
37 Ինչու որ քու խօսքերէդ պիտի արդարանաս,
և քու խօսքերէդ պիտի դատապարտուիս։
38 [ս]Անատենը դպիրներէն ու փարիսեցիներէն
ոմանք պատասխան տուին իրեն ու ըսին,
Վարդապետ, կ'ուզենք քեզմէ նշան մը տես-
39 նել։ Անիկա պատասխան տուաւ ու անոնց
ըսաւ, Չար և [վ]շնացող ազգը նշան կ'ուզէ, և

ն Մար. գ. 28: Ղուկ. ժբ. 10: Եբր. զ. 4: Ժ. 26, 29: Ա Յովհ. ե. 16:
շ Գոր. է. 51:
ո Գլ. ժա. 19: Ժգ. 55: Յովհ. է. 12, 52:
չ Ա Տիմ. ա. 13:
պ Գլ. է. 17: Ղուկ. զ. 43, 44:
ջ Գլ. գ. 7: Իգ. 33:
ռ Ղուկ. զ. 45:
ս Գլ. Ժզ. 1: Մար. ը. 11: Ղուկ. ժա. 16, 29: Յովհ. բ. 18: Ա Կոր. ա. 22:
վ Եա. ծէ. 3: Գլ. Ժզ. 4: Մար. ը. 38: Յովհ. դ. 48:

տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի։
40 Զի որպէս էր Յովնան ՚ի փոր կիտին զերիս
տիւս և զերիս գիշերս, նոյնպէս եղիցի և
Որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւս
41 և զերիս գիշերս։ Արք Նինուէացիք յարիցեն
՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և
դատապարտեսցեն զսա, զի զղջացան ՚ի քա-
րոզութեանն Յովնանու. և արդ աւասիկ
42 մեծ քան զՅովնան է աստ։ Դշխոյն հարաւոյ
յարիցէ ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ
այսմիկ և դատապարտեսցէ զսա. զի եկն ՚ի
ծագաց երկրի՝ լսել զիմաստութիւնն Սողո-
մոնի, և ահա մեծ քան զՍողոմոն է աստ։
43 Այլ յորժամ այսն պիղծ ելանէ ՚ի մարդոյ՝
շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ
44 և ոչ գտանէ։ Յայնժամ ասէ, Դարձայց ՚ի
տուն իմ՝ ուստի ելի. և եկեալ գտանէ զնա
45 պարապորդ, մաքրեալ և յարդարեալ։ Յայն-
ժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ
այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ
անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար
քան զառաջինն. այնպէս եղիցի և ազգիս
46 այսմիկ չարի։ Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն
խօսէր, ահա մայր նորա և եղբարք նորա
կային արտաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա։



ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն
40 Յովնան մարգարէին նշանը։ Քանզի [տ]ինչպէս
որ Յովնան երեք օր ու երեք գիշեր կէտ ձու-
կին փորին մէջն էր, անանկ ալ Որդին մարդոյ
պիտի ըլլայ երկրիս սրտին մէջը երեք օր ու
41 երեք գիշեր։ [ր]Նինուէի մարդիկը դատաստա-
նին օրը աս ազգին դէմ պիտի ելլեն ու [ց]պիտի
դատապարտեն ասիկա, [ւ]ինչու որ Յովնանին
քարոզութեամբը զղջի եկան. և ահա Յով-
42 նանէն մեծ մէկը կայ հոս։ [փ]Հարաւի թագու-
հին դատաստանին օրը աս ազգին դէմ պիտի
ելլէ ու պիտի դատապարտէ ասիկա, ինչու
որ ինքը երկրի ծայրերէն եկաւ Սողոմոնին ի-
մաստութիւնը լսելու. և ահա Սողոմոնէն մեծ
մէկը կայ հոս։
43 [ք]Ու երբոր պիղծ ոգին մարդէ մը կ՚ելլէ,
[օ]անջուր տեղուանք կը պտըտի, հանգստու-
44 թիւն կը փնտռէ ու չգտներ. Անատենը կ՚ըսէ,
Դառնամ նորէն իմ տունս՝ ուսկից որ ելայ.
և կու գայ զանիկա կը գտնէ պարապ, մաք-
45 րուած ու յարդարուած։ Անատենը կ՚եր-
թայ և իր հետը կ՚առնէ եօթը ուրիշ ոգիներ
իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին,
և [ֆ]ան մարդուն վերջը առջինէն գէշ կ՚ըլլայ։
ասանկ պիտի ըլլայ աս չար ազգին ալ։
46 Ու քանի որ ինքը ժողովուրդին կը խօսէր,
[ա]ահա իր մայրը ու [բ]եղբայրները դուրսը կայ-
47 նէր էին, և կ՚ուզէին իր հետը խօսիլ։ Ու

տ Յովն. ա. 17։
ր Ղուկ. ժա. 32։
ց Տես Երեմ. գ. 11։ Եզեկ. ժզ. 51, 52։ Հռովմ. բ. 27։
ւ Յովն. գ. 5։
փ գ Թագ. ժ. 1։ բ Մն. թ. 1։ Ղուկ. ժա. 31։
ք Ղուկ. ժա. 24։
օ Յոբ. ա. 7։ ա Պետ. ե. 8։
ֆ Եբր. զ. 4։ ժ. 26։ բ Պետ. բ. 20, 21, 22։
ա Մար. գ. 31։ Ղուկ. ը. 19, 20, 21։
բ Գլ. ժգ. 55։ Մար. զ. 3։ Յովհ. բ. 12։ է. 3, 5։ Գոր. ա. 14։ ա Կոր. թ. 5։ Գաղ. ա. 19։

47 Եւ ասէ ոմն ցնա , Ահա մայր քո և եղբարք
քո կան արտաքոյ և խնդրեն խօսել ընդ քեզ։
48 Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացն ցնա,
և ասէ , Ո՞վ է իմ մայր , կամ ո՞վ են իմ եղ-
49 բարք։ Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտան
50 ասէ , Ահա մայր իմ և եղբարք իմ։ Զի որ
առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է , նա
է իմ եղբայր և քոյր և մայր։

## ԳԼ. ԺԳ

1 Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս 'ի տանէն՝
2 Նստաւ առ ծովեզերն։ Եւ ժողովեցան առ
նա ժողովուրդք բազումք , մինչեւ մտանել
նմա 'ի նաւն և նստել. և ամենայն ժողո-
3 վուրդն կայր առ ծովեզերբն. Եւ խօսէր ընդ
նոսա բազումս առակօք և ասէր ,
4 Ահա ել սերմանահան սերմանել. և 'ի սերմա-
նելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ ,
5 և եկն Թռչուն*երկնից և եկեր զնա. Եւ այլն
անկաւ յապառաժի , ուր ոչ գոյր հող բա-
զում. և վաղվաղակի բուսաւ առ 'ի չգոյէ
6 հիւթոյ երկրին. Ի ծագել արեւու տապա-
7 ցաւ , և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։ Եւ
այլն անկաւ 'ի մէջ փշոց , և ելին փուշքն

* Ի Յունին չէ։



մէկը իրեն ըսաւ , Ահա քու մայրդ ու եղբայր-
ներդ դուրսը կայներ են , և կ'ուզեն հետդ
48 խօսիլ։ Ան ալ իրեն ըսողին պատասխան տը-
ւաւ ու ըսաւ , Ո՞վ է իմ մայրս , և ո՞վ են իմ
49 եղբայրներս։ Եւ իր ձեռքը դէպ իր աշա-
կերտներուն երկընցընելով՝ ըսաւ , Ահա իմ
50 մայրս և իմ եղբայրներս. Վասն զի ªով որ
իմ երկնաւոր Հօրս կամքը կատարէ , անիկա
է իմ եղբայրս և քոյրս ու մայրս։

## ԳԼ. ԺԳ

3 Սերմանողանին առակը. 18 անոր մեկնութիւնը։ 24 Որոմին, 31 մանանեխին, 33 խմորին, 44 ծածկուած գանձին, 45 մարգարիտին 47 ու ծովը ձգուած ուռկանին առակները։ 53 Քրիստոս կ'անարգուի իր հայրենակիցներէն։

1 Ան օրը Յիսուս տունէն ելլելով՝ ᵃծովուն
2 եզերքը նստաւ։ ᵇԵւ շատ ժողովուրդներ քո-
վը ժողվուեցան , անանկ որ ᶜինքը նաւը մը-
տաւ ու նստաւ , և բոլոր ժողովուրդը ծովե-
3 զերքը կայներ էր։ Ու շատ բաներ խօսեցաւ
անոնց առակներով , և ըսաւ ,
4 ᵈԱհա սերմ ցանողը ելաւ որ սերմ ցանէ.
ու երբոր կը ցանէր՝ մէկ քանիները ճամբուն
քովը ինկան , և Թռչունները եկան ու կերան
5 զանոնք։ Եւ ուրիշները ապառաժուտ տե-
ղերու վրայ ինկան՝ ուր որ շատ հող չկար ,
և շուտ մը բուսան՝ հողը խորունկութիւն
6 չունենալուն համար. Սակայն արեւուն ծա-
գածատենը այրեցան , ու արմատ չունենալ-
7 նուն համար չորցան։ Եւ ուրիշները ինկան
փուշերու մէջ , և փուշերը ելան ու խեղդե-

ª Տես Յովհ. ժե. 14։ Գաղ. ե. 6։ զ. 15։ Կող. գ. 11։ Եբր. բ. 11։ — ա Մար. գ. 1։ — բ Ղուկ. ը. 4։ գ Ղուկ. է. 3։ դ Ղուկ. ը. 5։

8 և հեղձուցին զնա ։ Եւ այլն անկաւ յերկիր
բարի, և տայր պտուղ՝ էր որ հարիւրաւոր,
և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր ։
9 Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ ։ (10) Եւ
մատուցեալ աշակերտքն ասեն ցնա, ընդէ՞ր
11 առակօք խօսիս ընդ նոսա ։ Նա պատասխա-
նի ետ և ասէ ցնոսա, քանզի ձեզ տուեալ
է գիտել զխորհուրդս արքայութեան եր-
12 կնից, և նոցա չէ տուեալ ։ Զի որ գուցէ՝
տացի նմա և յաւելցի, և որ ոչն գուցէ, և
13 զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմանէ ։ Վասն այ-
նորիկ առակօք խօսիմ ընդ նոսա, զի տեսա-
նեն՝ և ոչ տեսանեն, և լսեն՝ և ոչ լսեն և
14 ոչ առնուն ՚ի միտ ։ Եւ կատարի առ նոսա
մարգարէութիւնն Եսայեայ՝ որ ասէ, Լսելով
լուիջիք՝ և մի իմասջիք, և տեսանելով տես-
15 ջիք՝ և մի տեսջիք ։ Զի թանձրացաւ սիրտ
ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւ-
րեանց ծանուծս լուան, և զաչս իւրեանց կա-
փուցին, զի մի երբէք տեսցեն աչօք, և ա-
կանջօք լուիցեն և սրտիւք իմասցին և դարձ-
16 ցին, և բժշկեցից զնոսա ։ Բայց ձեր երանի
է աչաց՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց՝
17 զի լսեն ։ Ամէն ասեմ ձեզ, զի բազում մար-
գարէք և արդարք ցանկացան տեսանել զոր



8 ցին զանոնք ։ Եւ ուրիշները ինկան աղէկ հո-
ղի մէջ, ու պտուղ կու տային՝ որը մէկին տեղը
¹հարիւր, որը վաթսուն, և որը երեսուն ։
9 ²Ան որ լսելու ականջ ունի՝ թող լսէ ։
10 Ու աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն,
Ինչո՞ւ համար առակներով կը խօսիս անոնց ։
11 Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ անոնց,
Անոր համար՝ որ ³ձեզի տրուած է գիտնալ
երկնից թագաւորութեանը խորհուրդները,
12 և անոնց տրուած չէ ։ ⁴Վասն զի ալ որ ունի,
անոր պիտի տրուի ու պիտի աւելնայ. և ով
որ չունի, ունեցածն ալ անկէ պիտի առնուի ։
13 Անոր համար առակներով կը խօսիմ անոնց,
որ կը տեսնեն՝ ու չեն տեսներ, և կը լսեն՝ ու
14 չեն լսեր ու միտք չեն առներ ։ Եւ անոնց
վրայ կը կատարուի Եսայիին մարգարէութիւնը
որ կ՚ըսէ, ⁵Լսելով պիտի լսէք՝ ու պիտի չի-
մանաք, և տեսնելով պիտի տեսնէք՝ ու պի-
15 տի չտեսնէք ։ Ինչու որ աս ժողովուրդին սիր-
տը թանձրացաւ, և ⁶իրենց ականջներովը
ծանր լսեցին, ու աչքերնին գոցեցին, որ չըլլայ
թէ բնաւ աչքերով տեսնեն և ականջներով
լսեն և սրտով իմանան ու դարձի գան, և
16 ես անոնք բժշկեմ ։ Բայց ⁷երանի է ձեր աչ-
քերուն որ կը տեսնեն, ու ձեր ականջներուն
17 որ կը լսեն ։ ⁸Քանզի ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի
որ ⁹շատ մարգարէներ և արդարներ փափա-
քեցան ձեր տեսածները տեսնելու՝ ու չտե-

է Ծն. իզ. 12 ։
ը Գւլ. ժա. 15 ։ Մար.
դ. 9 ։
է Գւլ. ժա. 25 ։ Ժզ.
17 ։ Մար. գ. 11 ։
ա Կոր. բ. 10 ։ ա
Յովհ. բ. 27 ։
ե Գւլ. իե. 29 ։ Մար.
դ. 25 ։ Ղուկ. ը.
18 ։ ժթ. 26 ։
ի Եսա. զ. 9 ։ Եզեկ.
ժբ. 2 ։ Մար. դ.
12 ։ Ղուկ. ը. 10 ։
Յովհ. ժբ. 40 ։
Գործ. իը. 26, 27 ։
Հռոմ. ժա. 8 ։
բ Կոր. գ. 14, 15 ։
ժ Եբր. ե. 11 ։
է Գւլ. ժզ. 17 ։ Ղուկ.
ժ. 23, 24 ։ Յովհ.
ի. 29 ։
լ Եբր. ժա. 13 ։ ա
Պետ. ա. 10, 11 ։

տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝
18 և ոչ լուան։ Եւ արդ լուարուք դուք զա-
19 ռակ սերմանացանին։ Ցամենայնէ՝ որ լսէ
զբանն արքայութեան և ոչ առնու ՚ի միտ,
գայ չարն և յափշտակէ զսերմանեալն ՚ի սիրտ
նորա. այն է որ առ ճանապարհաւն սերմանե-
20 ցաւ։ Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն
է, որ իբրեւ լսէ զբանն, և վաղվաղակի խըն-
21 դութեամբ ընդունի զնա։ Բայց քանզի ոչ
ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ
մի է, ՚ի լինել նեղութեան և հալածանաց
22 վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի։ Իսկ
որ ՚ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այն է, որ իբ-
րեւ լսէ զբանն, և հոգք աշխարհիս և պատ-
րանք մեծութեան հեղձուցանեն զբանն, և
23 լինի անպտուղ։ Իսկ որ յերկիրն բարի սեր-
մանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն և ՚ի
միտ առնու, և տայ զպտուղ՝ է որ հարիւր,
և է որ վաթսուն, և է որ երեսուն։
24 Այլ առակ արկ առ նոսա և ասէ, Նմանե-
ցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմա-
25 նիցէ սերմն բարի յագարակի իւրում։ Եւ ՚ի
քուն լինել մարդկան, եկն թշնամին նորա
և ցանեաց ՚ի վերայ որոմն ՚ի մէջ ցորենոյն՝
26 և գնաց։ Եւ իբրեւ բուսաւ խոտն՝ և արար
27 պտուղ, ապա երեւեցաւ և որոմնն։ Մատու-
ցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա,
Տէր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարա-
28 կին քում, արդ ուստի՞ ունիցի զորոմնն։ Եւ

ԳԼՈՒԽ ԺԳ 45

սան, և ձեր լսածները լսելու՝ ու չլսեցին։
18 [խ]Հիմա դուք սերմ ցանողին առակը լսե-
19 ցէք։ Ան ամէնը որ [ծ]Թագաւորութեան խօս-
քը կը լսէ ու միտք չառներ, չարը կու գայ
ու անոր սրտին մէջ ցանուածը կը յափշտակէ.
ասիկա ան է որ ճամբուն քովը ցանուեցաւ։
20 Եւ ապառաժուտ տեղերու վրայ ցանուածը
ան է՝ որ երբ կը լսէ խօսքը, շուտ մը [կ]ու-
21 րախութեամբ կ՚ընդունի զանիկա. Բայց իր
մէջը արմատ չունենալով՝ քիչ ժամանակ կը
տևէ. ու երբոր նեղութիւն կամ հալածանք
ըլլայ խօսքին համար, շուտ մը [հ]կը գայթակ-
22 ղի։ Եւ [ձ]փուշերուն մէջ ցանուածը [ղ]ան է՝
որ երբ կը լսէ խօսքը, աշխարհիս զբաղմուն-
քը և հարստութեան խաբէութիւնը խօսքը
23 կը խեղդեն, ու կ՚ըլլայ անպտուղ։ Իսկ աղէկ
հողի մէջ ցանուածը ան է՝ որ երբ կը լսէ խօս-
քը, միտք կ՚առնէ, և պտուղ կու տայ՝ որը
հարիւր, որը վաթսուն, ու որը երեսուն։
24 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց
ու ըսաւ, Երկնից Թագաւորութիւնը նմանե-
ցաւ մէկ մարդու մը, որ իր արտին մէջ բա-
25 րի սերմ ցանեց. Ու երբոր մարդիկ կը քնա-
նային, իր թշնամին եկաւ ու ցորենին մէջ
26 որոմ ցանեց և գնաց. Ու երբոր խոտը բու-
սաւ ու պտուղ բերաւ, անկէ ետև որոմն ալ
27 երեւցաւ։ Ուստի տանուտիրոջը ծառաները
մօտեցան ու իրեն ըսին, Տէր, չէ՞ որ դուն
քու արտիդ մէջ բարի սերմ ցանեցիր. ուրեմն
28 որոմը ուսկի՞ց ունի։ Եւ անիկա ըսաւ անոնց,

խ Մար. դ. 14 : Ղուկ. ը. 11 :
ծ Գլ. դ. 23 :
կ Եսա. ծը. 2 : Եզեկ. լգ. 31, 32 : Յովհ. ե. 35 :
հ Գլ. ժա. 6 : բ Տիմ. ա. 15 :
ձ Եբրա. գ. 3 :
ղ Գլ. ժթ. 23 : Մար. ժ. 23. Ղուկ. ժը. 24 : ա Տիմ. զ. 9 : բ Տիմ. դ. 10 :

Նա ասէ ցնոսա, Այր թշնամի արար զայն․
ասեն ցնա ծառայքն, կամի՞ս զի երթիցուք,
29 քաղեսցուք զայն ՚ի բաց։ Եւ նա ասէ ցնո-
սա, Մի, գուցէ մինչ քաղիցէք զորոմն, և
30 զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք։ Թոյլ
տուք երկոցունց աճել ՚ի միասին մինչեւ ՚ի
հունձս, և ՚ի ժամանակի հնձոցն ասացից
ցհնձօղսն, Քաղեցէք նախ զորոմն և կա-
պեցէք զայդ խրձունս առ ՚ի յայրել, և զցո-
րեանն ժողովեցէք ՚ի շտեմարանս իմ։
31 Այլ առակ արկ առ նոսա և ասէ, Նման
է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ,
զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի
32 իւրում։ Որ փոքր է քան զամենայն սերմա-
նիս․ և յորժամ աճիցէ, մեծ է քան զամե-
նայն բանջարս․ և լինի ծառ՝ մինչեւ գալ
թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա։
33 Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ,
Նման է արքայութիւն երկնից խմորոյ, զոր
առեալ կնոջ թագոյց ՚ի գրիւս երիս ալեր՝
34 մինչեւ ամենայն խմորեցաւ։ Զայս ամենայն
խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժողովուրդ-
սըն, և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նո-
35 սա։ Զի լցցի ասացեալն ՚ի մարգարէէն, Բա-
ցից առակօք զբերան իմ, բղխեցից զծած-
կեալսն ՚ի սկզբանէ աշխարհի։
36 Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝



Մէկ թշնամի մարդ մը ըրած է ատիկա․ ծա-
ռաները իրեն ըսին, Հիմա կ'ուզե՞ս որ եր-
29 թանք անիկա մէկդի քաղենք։ Ան ալ ըսաւ,
Ոչ, չըլլայ թէ որոմը քաղած ատեննիդ ցո-
30 րենն ալ անոր հետը փրցընէք։ Թող տուէք
որ երկուքն ալ մէկտեղ աճին մինչեւ հունձ-
քի ատենը․ և հունձքին ատենը հնձողնե-
րուն պիտի ըսեմ, Առաջ որոմը քաղեցէք,
և անիկա խուրձ խուրձ կապեցէք այրելու
համար, իսկ ցորենը իմ ամբարս ժողվեցէք։
31 Ուրիշ առակ մըն ալ յառաջ բերաւ անոնց
ու ըսաւ, Երկնից թագաւորութիւնը մանա-
նեխի հատի նման է, որն որ մարդ մը առաւ՝
32 իր արտին մէջը ցանեց․ Որ ամէն սերմերէն
պզտիկ է, ու երբոր աճի՝ ամէն խոտեղէննե-
րէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ, անանկ որ երկ-
նից թռչունները կու գան և անոր ճիւղերուն
վրայ կը հանգչին։
33 Ուրիշ առակ մըն ալ զրուցեց անոնց ու-
ըսաւ, Երկնից թագաւորութիւնը խմորի նման
է, որն որ կնիկ մը առաւ՝ երեք գրիւ ալիւրի
մէջ պահեց, մինչեւ որ ամէնն ալ խմորեցաւ։
34 Յիսուս աս ամէն բաները առակներով խօ-
սեցաւ ժողովուրդին, ու առանց առակի բան
35 մը չէր խօսեր անոնց․ Որ կատարուի մարգա-
րէին ձեռքով ըսուած խօսքը․ Առակներով
պիտի բանամ իմ բերանս, աշխարհի սկիզբէն
՚ի վեր ծածկուած բաները յառաջ պիտի բե-
րեմ։
36 Անատենը Յիսուս ժողովուրդները թողուց,

ճ Գլ. գ. 12։
մ Եսա. բ. 2, 3։ Միք. դ. 1։ Մար. դ. 31։ Ղուկ. ժգ. 18, 19։
յ Ղուկ. ժգ. 20։
ն Մար. դ. 33, 34։
շ Սաղ. հը. 2։
ո Հռովմ. ժզ. 25, 26։ ա Կոր. բ. 7։ Եփես. գ. 9։ Կող. ա. 26։

եկն 'ի տուն. մատեան առ նա աշակերտքն
նորա և ասեն , Մեկնեա մեզ զառակ որո-
37 մանցն ագարակի ։ Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա , Որ սերմանէ զսերմն բարի՝ է
38 Որդի մարդոյ ։ Եւ ագարակն աշխարհս է.
սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայու-
39 թեան են , իսկ որոմն որդիք չարին են ։ Եւ
թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է , և
հունձքն կատարած աշխարհիս է , և հնձո-
40 ղքն հրեշտակք են ։ Որպէս ժողովի որոմն
և 'ի հուր այրի , այնպէս եղիցի 'ի կատա-
41 րածի աշխարհիս ։ Առաքեսցէ Որդի մարդոյ
զհրեշտակս իւր , և ժողովեսցեն յարքայու-
թենէ նորա զամենայն գայթակղութիւնս , և
42 զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն ։ Եւ
արկցեն զնոսա 'ի հնոց հրոյ. անդ եղիցի
43 լալ և կրճել ատամանց ։ Յայնժամ արդարքն
ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան
*երկնից ։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ։

44 Դարձեալ նման է արքայութիւն երկնից
գանձի ծածկելոյ յագարակի , զոր գտեալ
մարդոյ՝ թագոյց . և 'ի խնդութենէ անտի
երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի , և
գնէ զագարակն զայն ։

45 Դարձեալ նման է արքայութիւն երկնից
առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս
46 գեղեցիկս ։ Եւ գտեալ մի պատուական մար-

*Յոյնն՝ Հօր իւրեանց ,



տունը եկաւ , և իր աշակերտները մօտեցան
իրեն ու ըսին , Արտին որոմներուն առակը
37 մեկնէ մեզի ։ Ան ալ պատասխան տուաւ ու
ըսաւ անոնց , Բարի սերմը ցանողը Որդին
38 մարդոյ է . Եւ արտը աշխարհս է . իսկ բարի
սերմը անոնք են որ թագաւորութեանը որ-
դիքն են , բայց որոմը ւչարին որդիքն են .
39 Եւ թշնամին որ անիկա ցանեց՝ Սատանան է ,
և փհունձքը աշխարհիս վերջն է , ու հնձողնե-
40 րը հրեշտակներն են ։ Արդ ինչպէս որ որոմը
կը ժողվուի ու կրակի մէջ կ'այրի , աշխարհիս
41 վերջն ալ անանկ պիտի ըլլայ ։ Որդին մարդոյ
իր հրեշտակները պիտի ղրկէ , ու քպիտի ժող-
վեն անոր թագաւորութենէն բոլոր գայթակ-
ղութիւնները՝ և անոնք որ անօրէնութիւն կը
42 գործեն , օՈւ կրակի հնոցին մէջ պիտի ձգեն
զանոնք . ֆհոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ
43 կրճտել ։ աԱնատենը արևի պէս պիտի փայ-
լին արդարները իրենց Հօրը թագաւորութեա-
նը մէջ ։ բԱն որ լսելու ական ունի՝ թող լսէ ։

44 Դարձեալ երկնից թագաւորութիւնը արտի
մէջ պահուած գանձի նման է , որ անիկա մէկ
մարդ մը գտնելով՝ կը ծածկէ , և ուրախու-
թենէն կ'երթայ գբոլոր ունեցածը կը ծախէ ,
ու դան արտը կը գնէ ։

45 Դարձեալ երկնից թագաւորութիւնը վա-
ճառական մարդու մը նման է , որ գեղեցիկ
46 մարգարիտներ կը փնտռէ . Եւ եմէկ պատուա-

ւ Գէ. իդ. 14 ։ իը. 19 ։ Մար. ժզ. 15 , 20 ։ Ղուկ. իդ. 47 ։ Հռովմ. ժ. 18 ։ Կող. ա. 6 ։
փ Ծն. գ. 15 ։ Յովհ. ը. 44 ։ Գոր. ժգ. 10 ։ ա Յովհ. գ. 8 ։
ք Յովէլ. գ. 13 ։ Յայտ. ժդ. 15 ։
օ Գէ. ժը. 7 ։ բ Պետ. բ. 1 , 2 ։
ֆ Գէ. գ. 12 ։ Յայտ. ժթ. 20 ։ ի. 10 ։
ղ Գէ. ը. 12 ։ Հմր. 50 ։
ա Դան. ժբ. 3 ։ ա Կոր. ժե. 42 , 43 ։
բ Հմր. 9 ։
գ Փիլ. գ. 7 , 8 ։
դ Ես. ծե. 1 ։ Յայտ. գ. 18 ։
ե Առակ. բ. 4 ։ գ. 14 , 15 ։ ը. 10 , 19 ։

գարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր
ինչ ունէր՝ և գնեաց զայն *մարգարիտ ։
47 Դարձեալ նման է արքայութիւն երկնից
ուռկանի արկելոյ 'ի ծով՝ և յամենայն ազ-
48 գաց ժողովելոյ ։ Զոր իբրև լցաւ, հանեալ
'ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բա-
րին յամանս, և զխոտանն 'ի բաց ընկեցին ։
49 Այնպէս եղիցի 'ի կատարածի աշխարհիս ․
ելցեն հրեշտակք և մեկնեսցեն զչարս 'ի մի-
50 ջոյ արդարոց, Եւ արկցեն զնոսա 'ի հնոց
հրոյն ․ անդ եղիցի լալ և կրճել ատամանց ։
51 Ասէ ցնոսա Յիսուս, իմացարո՞ւք զայս ամե-
52 նայն ․ ասեն ցնա, Այո, Տէր ։ Եւ նա ասէ
ցնոսա, վասն այսորիկ ամենայն դպիր աշա-
կերտեալ արքայութեան երկնից՝ նման է
առն տանուտեառն, որ հանէ 'ի գանձէ իւր-
մէ զնոր և զհին ։
53 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զառա-
54 կս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի ։ Եւ եկեալ
'ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա 'ի ժողո-
վըրդեանն նոցա, մինչև զարմանալ նոցա և
ասել, Սմա ուստի՞ իցէ այս իմաստութիւն
55 և զօրութիւնք ։ Ո՞չ սա է հիւսանն որդի ․
ո՞չ մայր սորա կոչի Մարիամ, և եղբարք
սորա Յակոբոս և Յովսէս և Սիմոն և Յու-
56 դա ։ Եւ քորք սորա ամենեքեան առ մեզ
57 են ․ արդ ուստի՞ է սմա այս ամենայն ։ Եւ
գայթակղէին 'ի նա ․ և Յիսուս ասէ ցնոսա,

*Ի Յունին չէ ։

48 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

կան մարգարիտ մը գտնելով՝ գնաց իր բոլոր
ունեցածը ծախեց, ու զանիկա գնեց ։
47 Դարձեալ երկնից Թագաւորութիւնը ծովը
ձգուած ուռկանի մը նման է, որ +ամէն տե-
48 սակէն կը ժողվէ ․ Որ երբ լեցուեցաւ՝ ցամա-
քը հանեցին, ու նստան՝ աղէկները ամաննե-
րու մէջ ժողվեցին և անշահը դուրս ձգեցին ։
49 Ասանկ պիտի ըլլայ աշխարհիս վերջը ․ հրեշ-
տակները պիտի ելլեն՝ ու °արդարներուն մէ-
50 ջէն չարերը պիտի զատեն, Եւ ‡պիտի ձգեն
զանոնք կրակի հնոցին մէջ ․ հոն պիտի ըլլայ
լալ ու ակռաներ կրճտել ։
51 Ըսաւ անոնց Յիսուս, Հասկըցա՞ք աս ամէն
52 բաները ․ ըսին անոր, Այո, Տէր ։ Եւ անիկա
ըսաւ անոնց, Անոր համար ամէն դպիր որ երկ-
նից Թագաւորութեան աշակերտեալ է՝ նման
է տանուտէր մարդու մը որ իր գանձէն =նոր
ու հին բաներ կը հանէ ։
53 Ու երբոր կատարեց Յիսուս աս առակները,
54 անկէ մեկնեցաւ ․ ⊧Եւ եկաւ իր գաւառը, ու
անոնց կը սորվեցընէր իրենց ժողովարանին
մէջը ․ մինչև որ կը զարմանային անոնք ու կ'ը-
սէին, Ասիկա ուսկի՞ց ունի աս իմաստութիւնը
55 և հրաշքները ․ ‡Ասիկա հիւսին որդին չէ՞ ․
ասոր մայրը Մարիամ չը՞կոչուիր, ու ᵀասոր
եղբայրները՝ ⊦Յակոբոս և Յովսէս ու Սիմոն
56 և Յուդա ․ Ու ասոր քոյրերը ամէնը մեր
քովը չե՞ն ․ ալ ինքը ուսկի՞ց ունի աս ամէն
57 բաները ։ Եւ անոր վրայով ⁿկը գայթակղէին ․

+ Գլ․ իբ․ 10 ։
° Գլ․ իե․ 32 ։
ф Հմր․ 42 ։
ш Երգ․ է․ 13 ։
⊧ Գլ․ բ․ 23 ։ Մար․ զ․ 1 ։ Ղուկ․ դ․ 16, 23 ։
‡ Եա․ խթ․ 7 ։ Մար․ զ․ 3 ։ Ղուկ․ դ․ 23 ։ Յովհ․ զ․ 42 ։
ᵀ Գլ․ ժբ․ 46 ։
⊦ Մար․ ժե․ 40 ։
ⁿ Գլ․ ժա․ 6 ։ Մար․ զ․ 3, 4 ։

Չիք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գա-
58 ւառի և յիւրում տան։ Եւ ոչ արար անդ
զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան
նոցա։

## ԳԼ. ԺԴ

1 Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրոր-
2 դապետ զլուր Յիսուսի. Եւ ասէ ցծառայս
իւր, Նա է Յովհաննէս մկրտիչ, նա յարեաւ
'ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք
3 լինին նովաւ։ Քանզի Հերովդէս կալաւ զՅով-
հաննէս, կապեաց զնա և եդ 'ի բանտի վասն
4 Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։ Զի
ասէր ցնա Յովհաննէս, Չէ արժան քեզ ու-
5 նել զդա։ Եւ կամէր զնա սպանանել, բայց
երկնչէր 'ի ժողովրդենէ անտի, քանզի իբրեւ
6 զմարգարէ ունէին զնա։ Եւ իբրեւ եղեն
ծնունդք Հերովդի՝ կաքաւեաց դուստրն Հե-
րովդիայ 'ի մէջ բազմականին. և հաճոյ թուե-
7 ցաւ Հերովդի։ Ուստի և երդմամբ խոստա-
8 ցաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ։ Եւ նա յա-
ռաջագոյն խրատեալ 'ի մօրէ իւրմէ, Տուր





բայց Յիսուս ըսաւ անոնց, ֊Մարգարէ մը
անպատիւ չէ՝ բայց միայն իր գաւառին ու
58 իր տանը մէջ։ Եւ ֊հոն շատ հրաշքներ չը-
րաւ անոնց անհաւատութեանը համար։

## ԳԼ. ԺԴ

1 Հերովդեսին կարծիքը Քրիստոսի վրայով։ 3 Յովհաննէս մկրտչին գլխատուելուն պատճառը։ 13 Յիսուս անապատ տեղ մը կ'երթայ, 15 ուր տեղ հինգ հազար հոգի կը կերակրէ հինգ նկանակով ու երկու ձուկով. 22 ծովուն վրայ քալելով իր աշակերտներուն կ'երթայ, 34 և Գեննեսարեթի ցամաքը ելլելով՝ հիւանդները կը բժշկէ՝ անոնց իր հանդերձին ծայրին դպչելովը։

1 Այն ժամանակը ֊Հերովդէս չորրորդապետը
2 Յիսուսին համբաւը լսեց. Ու իր ծառանե-
րուն ըսաւ, Անիկա Յովհաննէս մկրտիչն է.
անիկա մեռելներէն յարութիւն առած է, և
անոր համար հրաշքներ կ'ըլլան անով։
3 ֊Քանզի ֊Հերովդէս Յովհաննէսը բռներ,
զանիկա կապեր ու բանտը դրեր էր՝ իր եղ-
բօրը Փիլիպպոսին կնկանը Հերովդիային հա-
4 մար։ Վասն զի Յովհաննէս անոր կ'ըսէր, ֊Քե-
5 զի օրինաւոր չէ անիկա քեզի ունենալ։ Ուստի
կ'ուզէր զանիկա սպաննել, բայց ժողովուրդէն
կը վախնար, ֊ինչու որ իբրև մարգարէ կ'ըն-
6 դունէին զանիկա։ Ու երբոր Հերովդեսին
ծննդեան օրը եղաւ, Հերովդիային աղջիկը
խաղաց հանդէսի օրահին մէջ, ու Հերովդեսին
7 հաճելի եղաւ։ Ուստի երդումով խոստացաւ
8 որ տայ անոր ինչ որ ուզելու ըլլայ։ Եւ ա-
նիկա առաջ իր մօրմէն խրատուելով՝ ըսաւ,

ե Ղուկ. գ. 24։ Յովհ. գ. 44։
զ Մար. զ. 5, 6։

ա Մար. զ. 14։ Ղուկ. թ. 7։
բ Մար. զ. 17։ Ղուկ. գ. 19, 20։

գ Ղև. ժը. 16։ ի. 21։
դ Գր. իա. 26։ Ղուկ. ի. 6։

ինձ, ասէ, այսր ՚ի վերայ սկտեղ զգլուխն
9 Յովհաննու մկրտչի։ Եւ տրտմեցաւ թագա֊
ւորն, բայց վասն երդմանցն և բարձակցացն
10 հրամայեաց տալ նմա։ Եւ առաքեաց գլխա֊
11 տեաց զՅովհաննէս ՚ի բանտի։ Եւ բերաւ
գլուխ նորա սկտեղբ և տուաւ աղջկանն, և
12 տարաւ առ մայր իւր։ Եւ մատուցեալ աշա֊
կերտքն նորա՝ բարձին զմարմինն և թաղե֊
ցին, և եկեալ պատմեցին Յիսուսի։

13 Եւ իբրև լուաւ Յիսուս, գնաց անտի նա֊
ւու յանապատ տեղի առանձինն. իբրև
լուան ժողովուրդքն, գնացին զհետ նորա
14 հետի ՚ի քաղաքաց անտի։ Եւ իբրև *ել՝
ետես ժողովուրդ բազում, գթացաւ ՚ի նո֊
15 սա և բժշկեաց զհիւանդս նոցա։ Իբրև ընդ
երեկս եղև, մատեան առ նա աշակերտքն
և ասեն, Տեղիս անապատ է և օրս տարա֊
ժամեալ, արձակեա զժողովուրդդ, զի եր֊
թիցեն շուրջ ՚ի շէնսն՝ գնեսցեն իւրեանց
16 կերակուրս։ Եւ ասէ Յիսուս, Ոչինչ պիտոյ
է դոցա երթալ, դուք տուք դոցա ուտել։
17 Եւ նոքա ասեն ցնա, Ոչինչ ունիմք աստ՝
18 բայց հինգ նկանակ և երկուս ձկունս։ Եւ
19 ասէ ցնոսա, Բերէք այսր զայն։ Եւ հրա֊
մայեաց բազմեցուցանել զժողովուրդսն ՚ի
վերայ խոտոյ. և առեալ զհինգ նկանակսն
և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհ֊
նեաց և եբեկ և ետ ցաշակերտսն զնկանակ֊

* Ոմանք ել Յիսուս



Տուր ինծի հոս Յովհաննէս մկրտչին գլուխը
9 սկուտեղի մը վրայ։ Եւ թագաւորը տրտմե֊
ցաւ. բայց երդումներուն համար ու իր հե֊
տը նստողներուն համար հրաման ըրաւ որ
10 տրուի։ Եւ մարդ ղրկելով Յովհաննէսը բան֊
11 տին մէջ գլխատեց։ Եւ անոր գլուխը սկու֊
տեղով բերուեցաւ ու տրուեցաւ աղջկանը,
12 ան ալ իր մօրը տարաւ։ Եւ անոր աշակերտ֊
ները եկան ու մարմինը վերցնելով թաղեցին,
և գացին Յիսուսին պատմեցին։

13 Ու [է]երբոր լսեց Յիսուս, անկէ նաւով ա֊
նապատ տեղ մը գնաց առանձին. երբոր լը֊
սեցին ժողովուրդները՝ ոտքով անոր ետևէն
գացին իրենց քաղաքներէն։

14 Ու *երբոր դուրս ելաւ, շատ ժողովուրդ֊
տեսնելով խղճաց անոնց վրայ, ու անոնց
հիւանդները բժշկեց։

15 [թ]Եւ իրիկուան ատեն իր աշակերտները ի֊
րեն եկան ու ըսին, Հոս անապատ տեղ մըն է,
և ժամանակը ուշացած է. արձակէ ժողո֊
վուրդները, որ գեղերը երթան ու իրենց կե֊
16 րակուր գնեն։ Եւ Յիսուս անոնց ըսաւ, Հարկ
չէ որ ատոնք երթան, դուք տուէք ատոնց
17 որ ուտեն։ Անոնք ալ ըսին անոր, Հոս ուրիշ
բան մը չունինք, բայց միայն հինգ նկանակ
18 ու երկու ձուկ։ Ու ըսաւ անոնց, Հոս ինծի
19 բերէք զանոնք։ Եւ հրաման ըրաւ որ ժողո֊
վուրդները խոտին վրայ նստին. և հինգ նկա֊
նակը ու երկու ձուկը առաւ, ու դէպ ՚ի եր֊
կինքը նայելով [ժ]օրհնեց, ու կտրելով նկա֊
նակները աշակերտներուն տուաւ, և աշա֊

է Գր. Ժ. 23։ ԺԲ. 15։ Մար. Զ. 32։ Ղուկ. Թ. 10։ Յովհ. Զ. 1, 2։

* Ոմանք երբոր Յիսուս

ը Գր. Թ. 36։ Մար. Զ. 34։

թ Մար. Զ. 35։ Ղուկ. Թ. 12։ Յովհ. Զ. 5։

ժ Գր. ԺԵ. 36։

20 սըն, և աշակերտքն՝ ժողովրդոցն։ Կերան
ամենեքեան և յագեցան, և բարձին զնշ֊
խարս կոտորոցն երկոտասան սակառի լի։
21 Եւ որք կերանն՝ էին արք իբրև հինգ հա֊
22 զար, թող զկանայս և զմանկտի։ Եւ ստի֊
պեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել 'ի
նաւ և յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողո֊
վուրդսն արձակեսցէ։
23 Եւ իբրև արձակեաց զժողովուրդսն, ել
'ի լեառն առանձինն կալ յաղօթս. և իբրև
24 ընդ երեկս եղև, անդ էր միայն։ Եւ նաւն
*մեկնեալ էր 'ի ցամաքէն բազում ասպարի֊
զօք" ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր
25 հողմն։ Եւ 'ի չորրորդում պահու գիշերոյն
եկն առ նոսա Յիսուս՝ գնալով 'ի վերայ ծո֊
26 վուն։ Իբրև տեսին զնա աշակերտքն զի գը֊
նայր 'ի վերայ ծովուն, խռովեցան, և ասեն
թէ Առաչօք ինչ իցէ. և առ ահին աղաղա֊
27 կեցին։ Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա
Յիսուս և ասէ, Քաջալերեցարուք, ես եմ,
28 մի երկնչիք։ Պատասխանի ետ նմա Պետրոս
և ասէ, Տէր, եթէ դու ես, հրամայեա ինձ
29 գալ առ քեզ 'ի վերայ ջրոցս։ Եւ նա ասէ,
Եկ. և իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց 'ի
30 վերայ ջրոցն, †և եկն" առ Յիսուս։ Եւ տե֊
սեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. և իբրև
սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց և ասէ, Տէր,
31 փրկեա զիս։ Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց
զձեռն իւր՝ կալաւ զնա և ասէ, Թերահա֊
32 ւատ, ընդէ՞ր երկմտեցեր։ Եւ իբրև ելին

* Յոյնն՝ էր 'ի մէջ ծովուն։
† Յոյնն՝ զի եկեսցէ,

20 կերտները՝ ժողովուրդին։ Եւ ամէնքը կերան
ու կշտացան, և տասուերկու կողով լեցուն
21 աւելցած կտորուանքները վերցուցին։ Եւ
անոնք որ կերան՝ հինգ հազարի չափ էրիկ
մարդիկ էին՝ կնիկներէն և տղաքներէն 'ի
զատ։
22 *Եւ շուտ մը աշակերտները արտորցուց որ
նաւը մտնեն, և իրմէ առաջ անդին կողմը
անցնին, մինչև որ ինքը ժողովուրդները ար֊
23 ձակէ։ [ա]Եւ ժողովուրդները արձակելէն ետ֊
քը՝ ինքը լեռը ելաւ առանձին աղօթք ընե֊
լու. ու [ծ]երբոր իրիկուն եղաւ՝ հոն մինակ էր.
24 Իսկ նաւը արդէն ծովուն մէջտեղը ալեկո֊
ծութեան մէջ էր, ինչու որ հովը դէմ էր։
25 Ու գիշերուան չորրորդ պահուն Յիսուս դէպ
26 'ի անոնց գնաց՝ ծովուն վրայ քալելով։ Եւ
աշակերտները երբոր անիկա տեսան՝ որ [է]ծո֊
վուն վրայ կը քալէր, խռովեցան, և ըսին
թէ աչքի երևոյթ բան մըն է. ու վախերնուն
27 կանչուըռտեցին։ Եւ շուտ մը Յիսուս խօսեցաւ
անոնց ու ըսաւ, Քաջ եղէ՛ք, ես եմ, մի վախ֊
28 նաք։ Պետրոս պատասխան տուաւ անոր ու
ըսաւ, Տէր, թէ որ դուն ես՝ հրաման ըրէ
29 ինծի որ քեզի գամ ջուրերուն վրայէն։ Ան
ալ ըսաւ, Եկուր. Պետրոս ալ նաւէն իջաւ,
ջուրերուն վրայէն քալեց որ Յիսուսի քովը
30 երթայ. Բայց հովը սաստիկ տեսնելով՝ վախ֊
ցաւ, ու երբոր սկսաւ ընկղմիլ, աղաղակեց
31 ու ըսաւ, Տէր, ազատէ զիս։ Եւ Յիսուս
շուտ մը իր ձեռքը երկընցուց, բռնեց զա֊
նիկա ու անոր ըսաւ, Թերահաւատ, ինչո՞ւ
32 երկմտեցար։ Ու երբոր նաւը ելան, հովը

[ա] Ոմանք՝ Եւ Յիսուս | [ծ] Յովհ. Զ. 16։ | [է] Յոբ. Թ. 8։
* Մար. Զ. 46։

33 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն։ Եւ որ 'ի
նաւին էին՝ մատեան, երկիրպագին նմա և
ասեն, Արդարեւ Որդի Աստուծոյ ես դու։
34 Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննեսարէթ։
35 Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնո֊
րիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ և
36 ածին առ նա զամենայն հիւանդս։ Եւ աղա֊
չէին զնա, զի գոնէ միայն 'ի քղանցս հան֊
դերձի նորա մերձեսցին. և որ միանգամ
մերձեցան՝ փրկեցան։

## ԳԼ. ԺԵ

1 Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որ յԵրուսա֊
2 ղէմէ փարիսեցիքն և դպիրք՝ և ասեն, Ըն֊
դէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդու֊
թեամբ ծերոցն. զի ոչ լուանան զձեռս յոր֊
3 ժամ հաց ուտեն։ Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա, Իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպա֊
տուիրանաւն Աստուծոյ վասն ձերոյ աւան֊
4 դութեանն։ Զի Աստուած *ասաց, Պատուեա
5 զհայր քո և զմայր. Եւ որ բամբասէ զհայր

* Յոմն՝ պատուիրեաց՝ ասելով.



33 դադարեցաւ։ Եւ անոնք որ նաւուն մէջն
էին՝ եկան երկրպագութիւն ըրին անոր ու
ըսին, Իրաւցընէ Որդի Աստուծոյ ես դուն։
34 [լ]Ու անդին կողմը անցնելով՝ Գեննեսարեթի
35 երկիրը հասան։ Ու երբոր ան տեղի մարդիկը
ճանչցան զանիկա, [խ] խրկեցին բոլոր շրջա֊
կայ տեղուանքը, ու բոլոր հիւանդները անոր
36 բերին. Եւ կ'աղաչէին անոր, որ միայն իր
հանդերձին քղանցքին դպչին. և [ծ]անոնք որ
դպան՝ բժշկուեցան։

## ԳԼ. ԺԵ

3 Քրիստոս կը յանդիմանէ դպիրները և փարիսեցիները՝ որոնք իրենց աւանդութեանց պատճառաւ զանց կ'ընէին Աստուծոյ պատուիրանքները. 11 ու կը սորվեցընէ թէ բերանը մտած բանը մարդս չպղծեր. 21 կը բժշկէ Քանանացի կնկանը աղջիկը. 30 և ուրիշ շատ ժողովուրդներ. 32 եօթը նկանակով ու քանի մը ձուկով չորս հազար էրիկ մարդիկ կը կշտացընէ՝ կնիկներէն ու տղաքներէն 'ի զատ։

1 Անատենը [ա]Յիսուսի եկան դպիրները ու
փարիսեցիները՝ որ Երուսաղեմէն էին, ու ըսին,
2 [բ]Ինչո՞ւ քու աշակերտներդ [գ]ծերերուն աւան֊
դութիւնը զանց կ'ընեն, ինչու որ ձեռքեր֊
3 նին չեն լուար, երբոր հաց կ'ուտեն։ Ան ալ
պատասխան տուաւ ու ըսաւ անոնց, Հապա
դուք ինչո՞ւ Աստուծոյ պատուիրանքը զանց
կ'ընէք ձեր աւանդութեանը պատճառաւ։
4 Քանզի Աստուած պատուիրեց ըսելով, [դ]Քու
5 հայրդ ու մայրդ պատուէ. Եւ՝ [ե]Ով որ իր հայ֊

լ Սաղ. բ. 7։ Գլ. ժզ. 16։ իզ. 63։ Մար. ա. 1։ Ղուկ. դ. 42։ Յովհ. ա. 49։ զ. 70։ ժա. 27։ Գործ. ը. 37։ Հռովմ. ա. 4։
խ Մար. զ. 53։
ծ Գլ. թ. 20։ Մար. գ. 10։ Ղուկ. զ. 19։ Գործ. ժթ. 12։
—
ա Մար. է. 1։
բ Մար. է. 5։
գ Կող. բ. 8։
դ Ել. ի. 12։ Ղև. ժթ. 3։ բ Օր. ե. 16։ Առակ. իգ. 22։ Եփես. զ. 2։
ե Ել. իա. 17։ Ղև. ի. 9։ բ Օր. իէ. 16։ Առակ. ի. 20։ լ. 17։

6 կամ զմայր, մահու վախճանեսցի։ Եւ դուք
ասէք, Որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր
թէ Պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս, և ոչ
պատուիցէ զհայր իւր և զմայր իւր. և խո-
տեցէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդու-
7 թեանն։ Կեղծաւորք, բարւոք մարգարէա-
8 ցաւ ՚ի վերայ ձեր Եսայի, և ասէ, Ժողո-
վուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտ
9 իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն։ Զուր
պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետու-
10 թիւնս՝ զմարդկան պատուիրեալս։ Եւ կոչե-
ցեալ առ ինքն զժողովուրդսն՝ ասէ ցնոսա,
11 Լուարուք և ՚ի միտ առէք. Ոչ որ ինչ մտա-
նէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ե-
12 լանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։ Յայն-
ժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն
ցնա, Գիտե՞ս զի փարիսեցիքն իբրեւ լուան
13 զբանն՝ գայթակղեցան։ Նա պատասխանի ետ
նոցա և ասէ, Ամենայն տունկ զոր ոչ տըն-
14 կեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի։ Թոյլ
տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք.
կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ *սխալէ, և
15 երկոքեին ՚ի խորխորատ անկանին։ Պատասխա-

* Ի Յունին՝ ըէ,

ԳԼՈՒԽ ԺԵ 53

րը կամ մայրը անիծէ, մահով թող մեռնի։
6 Բայց դուք կ՚ըսէք, Ով որ իր հօրը կամ մօ-
րը ըսէ թէ «Ան բանը որ ինծմէ պիտի շա-
հիս՝ Աստուծոյ տուր ընծայ է. ու իր հայրը
կամ իր մայրը չպատուէ, ազատ է. և այսպէս
ձեր աւանդութեանը պատճառաւ Աստուծոյ
7 պատուիրանքը խափանած էք։ [ե]Կեղծաւոր-
ներ, աղէկ մարգարէութիւն ըրաւ ձեր վրայ
8 Եսայի ու ըսաւ, [ը]«Աս ժողովուրդը միայն *շըր-
թունքներովը զիս կը պատուէ, բայց իրենց
9 սիրտը հեռացած զատուած է ինծմէ. Ու պա-
րապ տեղը զիս կը պաշտեն՝ [թ]մարդոց պա-
տուիրած բաները իբրեւ վարդապետութիւն
սորվեցընելով։
10 [ժ]Եւ ժողովուրդները իրեն կանչելով՝ ըսաւ
11 անոնց, Լսեցէք ու միտք առէք. [ի]Չէ թէ
ինչ որ բերանը կը մտնէ՝ կը պղծէ մարդը,
հապա ինչ որ բերնէն կ՚ելլէ՝ անիկա կը պղ-
ծէ մարդը։
12 Անատենը իր աշակերտները եկան՝ ըսին ի-
րեն, Գիտե՞ս որ փարիսեցիները գայթակղե-
13 ցան երբոր լսեցին աս խօսքը։ Ան ալ պա-
տասխան տալով ըսաւ, [լ]Ամէն տունկ որ իմ
երկնաւոր Հայրս չէ տնկեր՝ պիտի խլուի։
14 Թող տուէք անոնք. [խ]իրենք կոյր են՝ կոյրերու
առաջնորդ. իսկ թէ որ կոյրը կոյրին առաջ-
նորդէ, երկուքն ալ փոսը պիտի իյնան։
15 Եւ [ծ]Պետրոս պատասխան տալով՝ անոր ըսաւ,

դ Մար. է. 11, 12։
ե Մար. է. 6։
ը Ես. իթ. 13։ Եզեկ. լգ. 31։
* Ոմանք բերնովը ին- ծի կը մօտենայ, և շրթունքներովը
թ Ես. իթ. 13։ Կող. բ. 18—22։ Տիտ. ա. 14։
ժ Մար. է. 14։
ի Գոր. ժ. 15։ Հռո- ւոմ. ժդ. 14, 17, 20։ ա Տիմ. դ. 4։ Տիտ. ա. 15։
լ Յովհ. ժե. 2։ ա Կոր. գ. 12, 13։
խ Ես. թ. 16։ Մաղ. բ. 8։ Գղ. իգ. 16։ Ղուկ. զ. 39։
ծ Մար. է. 17։

նի եւ նմա Պետրոս և ասէ, Մեկնեա մեզ
16 զառակս զայս։ Ասէ Յիսուս, Տակաւին և
17 դո՞ւք անմիտք էք. Եւ ոչ իմանայք եթէ ա-
մենայն որ մտանէ 'ի բերան, յորովայն եր-
18 թայ և արտաքս ելանէ։ Իսկ որ ելանէ 'ի
բերանոյ՝ 'ի սրտէ անտի գայ, և այն պղծէ
19 զմարդն։ Զի 'ի սրտէ ելանեն խորհուրդք
չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկու-
թիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք,
20 հայհոյութիւնք։ Այս ամենայն է՝ որ պղծէ
զմարդն, այլ անլուայ ձեռօք ուտել ոչ պղ-
ծէ զմարդ։

21 Եւ ելեալ անտի Յիսուսի՝ գնաց 'ի կողմանս
22 Տիւրոսի և Սիդոնի։ Եւ ահա կին մի Քանա-
նացի 'ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղա-
ղակէր և ասէր, Ողորմեաց ինձ, Տէր՝ որդի
Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։
23 Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. և մատու-
ցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ա-
սէին, Արձակեա զնա զի աղաղակէ զհետ
24 մեր։ Նա պատասխանի ետ և ասէ, ոչ ու-
րեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կո-
25 րուսեալս տանն Իսրայէլի։ Եւ նա մատու-
ցեալ երկիրպագանէր նմա և ասէր, Տէր,
26 օգնեա ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ,
Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և ար-
27 կանել շանց։ Եւ նա ասէ, Այո, Տէր, քան-
զի և շունք կերակրին 'ի փշրանաց անկելոց
28 'ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ պա-

54 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

16 Մեկնէ [է]մեզի աս առակը։ Ըսաւ Յիսուս,
17 [ը]Դո՞ւք ալ տակաւին անմիտ էք. Ու չէ՞ք հաս-
կընար թէ [թ]ամէն ինչ որ բերանը կը մտնէ՝
18 փորը կ'երթայ ու արտաքնոցը կը ձգուի. Բայց
[ժ]բերնէն ելած բաները սրտէն յառաջ կու գան,
19 և անոնք կը պղծեն մարդը։ [ի]Ինչու որ սրտէն
կ'ելլեն չար խորհուրդներ, սպանութիւններ,
շնութիւններ, պոռնկութիւններ, գողու-
թիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյու-
20 թիւններ։ Ասոնք են որ կը պղծեն մարդը,
բայց անլուայ ձեռքով հաց ուտելը չպղծեր
մարդը։

21 [լ]Եւ Յիսուս անկէ ելլելով՝ Տիւրոսի ու Սի-
22 դոնի կողմերը գնաց։ Եւ ահա Քանանացի կնիկ
մը ան սահմաններէն ելած՝ կ'աղաղակէր անոր
ու կ'ըսէր, Ողորմէ ինծի, Տէր՝ որդի Դաւ-
23 թի, աղջիկս դևէն սաստիկ կը չարչարուի։ Եւ
ինքը բնաւ պատասխան մը չտուաւ անոր.
ու իր աշակերտները մօտենալով՝ կ'աղաչէին
իրեն ու կ'ըսէին, Արձակէ ատիկա, վասն զի
24 մեր ետևէն կ'աղաղակէ։ Եւ ինքը պատաս-
խան տուաւ ու ըսաւ, [խ]Ես ուրիշի մը չխրկուե-
ցայ՝ բայց միայն Իսրայէլի տանը կորսուած
25 ոչխարներուն։ Եւ անիկա եկաւ երկրպագու-
թիւն կ'ընէր անոր ու կ'ըսէր, Տէր, օգնէ
26 ինծի։ Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ,
Աղէկ չէ տղոց հացը առնել ու [ծ]շուներուն
27 ձգել։ Եւ անիկա ըսաւ, Այո, Տէր, ինչու
որ շուներն ալ իրենց տիրոջը սեղանէն ին-
28 կած փշրանքներէն կը կերակրուին։ Անատե-

է Գղ. ժզ. 9։ Մար. է. 18։
ը Ա Կոր. զ. 13։
թ Յակ. գ. 6։
ժ Ծն. զ. 5։ Ը. 21։
ի Առակ. զ. 14։ Երեմ. ժէ. 9։ Մար. է. 21։
լ Մար. է. 24։
խ Գղ. ժ. 5, 6։ Գործ. գ. 25, 26։ ժգ. 46։ Հռովմ. ժե. 8։
ծ Գղ. է. 6։ Փիլ. գ. 2։

տասխանի ետ նմա Յիսուս և ասէ , Ով կին
դու , մեծ են հաւատք քո , եղիցի քեզ որ֊
պէս և կամիս · և բժշկեցաւ դուստր նորա
’ի նմին ժամու ։
29 Եւ գնացեալ անտի Յիսուսի , եկն ’ի ծո֊
վեզրն Գալիլեացւոց , և ելեալ ’ի լեառն նս֊
30 տէր անդ ։ Մատեան առ նա ժողովուրդք
բազումք՝ որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս ,
կոյրս , համերս , միակողմանիս և այլս բա֊
զումս · և ընկեցին զնոսա առ ոտս *նորա՝
31 և բժշկեաց զնոսա ։ Մինչեւ զարմանալ ժո֊
ղովրդոցն որ տեսանէին , զի համերքն խօ֊
սէին , կաղք գնային , միակողմանիք բժշկէին ,
կոյրք տեսանէին · և փառաւոր առնէին զԱս֊
32 տուած Իսրայէլի ։ Եւ կոչեցեալ առ ինքն
Յիսուսի զաշակերտսն՝ ասէ , Գթամ ’ի ժողո֊
վուրդդ , զի արդ երեք աւուրք են զի կան
առ իս , և ոչ ունին զինչ ուտիցեն · և ար֊
ձակել զդոսա նօթիս՝ չկամիմ , գուցէ նքթի֊
33 ցին զճանապարհայն ։ Ասեն ցնա աշակերտ֊
քըն , իսկ արդ մեզ յանապատի աստ ուստի՞
իցէ այնչափ հաց՝ մինչեւ յագեցուցանել
34 զայսչափ ժողովուրդ ։ Եւ ասէ ցնոսա Յիսուս ,
Քանի՞ նկանակ ունիք · և նոքա ասեն , Եօթն
35 և սակաւ ձկունս ։ Եւ հրամայեաց ժողովր֊
36 դեանն բազմել ’ի վերայ գետնոյ ։ Եւ ա֊
ռեալ զեօթն նկանակսն և զձկունսն՝ գոհա֊
ցաւ և եբեկ և ետ ցաշակերտսն , և նոքա
37 ժողովրդեանն ։ Կերան ամենեքեան և յագե֊
ցան · և բարձին զնշխարս կոտորոցն եօթն

* Յոյն՝ Յիսուսի՝ .



Նը Յիսուս պատասխան տուաւ անոր ու ըսաւ ,
Ով կին , քու հաւատքդ մեծ է , քու ուզա֊
ծիդ պէս ըլլայ քեզի · և նոյն ժամէն անոր
աղջիկը բժշկուեցաւ ։
29 [ն]Ու Յիսուս անկէ գնաց՝ [շ]Գալիլեայի ծովե֊
զերքը եկաւ , և լեռը ելլելով հոն նստաւ ։
30 Եւ [ո]շատ ժողովուրդներ իրեն եկան , որ իրենց
հետ ունէին կաղեր , կոյրեր , համրեր , հաշմ֊
անդամներ և ուրիշ շատեր · ու ձգեցին անոնք
31 Յիսուսի ոտքը , և բժշկեց զանոնք · Անանկ
որ ժողովուրդները զարմացան , տեսնելով որ
համրերը կը խօսէին , հաշմանդամները կը
բժշկուէին , կաղերը կը քալէին և կոյրերը կը
տեսնէին , ու Իսրայէլի Աստուածը կը փառա֊
ւորէին ։
32 [չ]Եւ Յիսուս իր աշակերտները քովը կան֊
չելով ըսաւ , Կը խղճամ աս ժողովուրդին վր֊
րայ , ինչու որ հիմա երեք օր է որ իմ քովս են ,
և բան մը չունին ուտելու · ու անոնք անօթի
արձակել չեմ ուզեր , չըլլայ որ ճամբան մարին ։
33 Իսկ [պ]աշակերտները անոր ըսին , Մենք անա֊
պատի մէջ ուսկի՞ց պիտի ունենանք այնչափ
հաց , որ այսչափ բազմութիւնը կշտացընենք ։
34 Եւ Յիսուս ըսաւ անոնց , Քանի՞ նկանակ ու֊
նիք · անոնք ալ ըսին , Եօթը , ու քանի մը
35 մանր ձուկեր ։ Եւ հրաման ըրաւ ժողովուրդին
36 որ գետնին վրայ նստին ։ Ու [ջ]Եօթը նկանակը
և ձուկերը առաւ , [ռ]գոհացաւ և կտրեց ու
տուաւ աշակերտներուն , աշակերտներն ալ՝
37 ժողովուրդին ։ Կերան ամէնքը և կշտացան ,
ու եօթը զամբիւղ լեցուն՝ աւելցած կտո֊

ն Մար . է . 31 ։
շ Գլ . դ . 18 ։
ո Եսա . լե . 5 , 6 ։ Գլ . ժա . 5 ։ Ղուկ . է . 22 ։
չ Մար . ը . 1 ։
պ դ Թագ . դ . 43 ։
ջ Գլ . ժդ . 19 ։
ռ ա Թագ . թ . 13 ։ Ղուկ . իբ . 19 ։

38 զամբիւղ լի։ Եւ որք կերանն՝ էին արք իբ-
րեւ չորք հազարք, թող զկանայս և զմանկտի։
39 Իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել 'ի նաւ
և եկն 'ի սահմանս Մագդաղենայ։

## ԳԼ. ԺԶ

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և սադուկե-
ցիք, փորձելով խնդրէին 'ի նմանէ նշան
2 յերկնից ցուցանել նոցա։ Նա պատասխանի
ետ և ասէ ցնոսա, Յորժամ երեկոյ լինի՝ ա-
սէք, Պարզ լինիցի՝ զի կարմրացեալ է եր-
3 կին։ Եւ առաւօտու՝ Այսօր մրրիկ, զի շա-
ռագունի *տրտմութեամբ երկին։ Արդ զե-
րեսս երկնի կարէք քննել, իսկ զնշան ժա-
4 մանակիս ո՞չ կարէք գիտել։ Ազգ չար և շնա-
ցող նշան խնդրէ, և նշան մի տացի նմա,
բայց նշանն Յովնանու մարգարէի. և եթող
5 զնոսա և գնաց։ Գնացին և աշակերտքն յայն-
6 կոյս, և մոռացան առնուլ հաց։ Ասէ ցնոսա
Յիսուս, Տեսէք և զգոյշ լերուք 'ի խմորոյ
7 սադուկեցւոցն և փարիսեցւոցն։ Նոքա խոր-

* Յոյնն՝ միգապատ,



38 րուանքները վերցուցին։ Եւ անոնք որ կերան՝
չորս հազար էրիկ մարդիկ էին՝ կնիկներէն և
տղաքներէն 'ի զատ։
39 Ու ա երբոր ժողովուրդը արձակեց, նաւը
մտաւ ու Մագդաղայի սահմանները եկաւ։

## ԳԼ. ԺԶ

1 Փարիսեցիք նշան մը կ'ուզեն։ 6 Յիսուս կը պատուիրէ իր աշակերտներուն որ զգուշ ըլլան փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն։ 13 Ժողովուրդին կարծիքը Քրիստոսի վրայով. 16 և Պետրոսի դաւանութիւնը։ 21 Յիսուս կ'իմացընէ աշակերտներուն իր մահը. 23 կը յանդիմանէ Պետրոսը՝ որ կ'ուզէր դէմ կենալ. 24 և իրեն հետեւիլ ուզողները կը խրատէ որ իրենց խաչը կրեն։

1 Եւ ա փարիսեցիները ու սադուկեցիները քովը
եկան, փորձելով՝ իրմէն կ'ուզէին որ երկին-
2 քէն նշան մը ցուցընէ իրենց։ Անիկա պա-
տասխան տուաւ ու ըսաւ անոնց, Երբոր
իրիկուն կ'ըլլայ, կ'ըսէք թէ Պարզ պիտի ըլ-
3 լայ, ինչու որ երկինքը կարմիր է։ Եւ առ-
տուանց՝ Այսօր մրրիկ պիտի ըլլայ, ինչու որ
երկինքը մթապատ ու կարմիր է։ Կեղ-
ծաւորներ, երկնից երեսը քննելը գիտէք,
բայց ժամանակներուն նշանները չէ՞ք կրնար
4 գիտնալ։ բ Չար ու շնացող ազգը նշան կ'ուզէ,
և ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց Յով-
նան մարգարէին նշանը. և թողուց անոնք ու
գնաց։
5 Ու երբոր գ իր աշակերտները անդին կողմը
6 անցան՝ հաց առնելու մոռցեր էին։ Եւ Յի-
սուս անոնց ըսաւ, դ Նայեցէք ու զգուշացէք
7 փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն։ Անոնք

ա Մար. ը. 10։
—
ա Գլ. ժբ. 38։ Մար. ը. 11։ Ղուկ. ժա. 16։ ժբ. 54—56։ ա Կոր. ա. 22։
բ Գլ. ժբ. 39։
գ Մար. ը. 14։
դ Ղուկ. ժբ. 1։

հէին ընդ միմեանս և ասէին թէ Հաց ոչ
8 բարձաք ։ Գիտաց Յիսուս և ասէ, Զի՞ խոր-
հիք 'ի միտս ձեր, թերահաւատք, եթէ
9 հաց ոչ ունիք ։ Տակաւին չիմանա՞ք և ո՛չ
յիշէք զհինգ նկանակն 'ի հինգ հազարսն,
10 և քանի՞ սակառի բարձիք ։ Եւ ո՛չ զեօթն
նկանակն 'ի չորս հազարսն, և քանի՞ զամ-
11 բիւղս բարձէք ։ Արդ զիա՞րդ ոչ իմանայք
եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգուշ լի-
նել 'ի խմորոյ փարիսեցւոցն և սադուկեցւոց ։
12 Յայնժամ 'ի միտ առին, թէ ոչ ասաց
զգուշանալ *'ի խմորոյ, այլ յաղանդոյ փարի-
13 սեցւոցն և սադուկեցւոց ։ Եւ եկեալ Յիսուս
'ի կողմանս փիլիպպեայ կեսարեայն, հարցա-
նէր ցաշակերտսն և ասէր, Զո՞ ոք ասեն զի-
14 նեն մարդիկն թէ իցէ Որդի մարդոյ ։ Եւ նո-
քա ասեն, Ոմն զՅովհաննէս մկրտիչ, և այլք
զԵղիա, և կէսք զԵրեմիա կամ զմի ոք 'ի
15 մարգարէիցն ։ Ասէ ցնոսա, Իսկ դուք զո՞ ոք
16 ասէք զինէն թէ իցեմ ։ Պատասխանի ետ Սի-
մոն Պետրոս և ասէ, Դու ես Քրիստոսն Որ-
17 դի Աստուծոյ կենդանւոյ ։ Պատասխանի ետ
Յիսուս և ասէ ցնա, Երանի քեզ, Սիմոն որ-
դի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտ-
18 նեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է ։ Եւ
ես քեզ ասեմ, զի դու ես †վէմ, և 'ի վէ-

* Յոյնն՝ 'ի խմորոյ հացի,
† Յոյնն՝ Պետրոս,

ԳԼՈՒԽ ԺԶ 57

միջերնին կը խորհէին ու կ'ըսէին թէ Հաց չբե-
8 րինք հետերնիս ։ Իսկ Յիսուս անոնց խորհուրդը
գիտնալով ըսաւ անոնց, Մէջերնիդ ինչո՞ւ կը
խորհիք, թերահաւատներ, թէ հաց չունիք ։
9 [է]Տակաւին չէ՞ք հասկընար և չէ՞ք յիշեր հինգ
նկանակը՝ հինգ հազարին, ու քանի կողով
10 վերցուցիք ․ [ը]Ո՞չ ալ եօթը նկանակը՝ չորս հա-
11 զարին, ու քանի զամբիւղ վերցուցիք ։ Ի՞նչ-
պէս չէք հասկընար թէ ես հացի համար չըսի
ձեզի՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորէն
12 զգուշ կենալ ։ Անատենը հասկըցան որ հացի
խմորէն զգուշանալ չըսաւ, հապա փարիսե-
ցւոց ու սադուկեցւոց վարդապետութենէն ։
13 Եւ Յիսուս փիլիպպոսի կեսարիային կողմե-
րը երթալով՝ իր աշակերտներուն հարցուց ու
ըսաւ, [է]Մարդիկ ո՞վ կ'ըսեն թէ եմ ես Որդի
14 մարդոյ ։ Ու անոնք ըսին, [ը]Ոմանք կ'ըսեն թէ
Յովհաննէս մկրտիչն ես, ուրիշները՝ Եղիան,
ուրիշներն ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն
15 մէկը ։ Ըսաւ անոնց, Հապա դուք ինծի հա-
16 մար ո՞վ կ'ըսէք թէ եմ ։ Սիմոն Պետրոս պա-
տասխան տուաւ ու ըսաւ, [ր]Դուն ես Քրիս-
17 տոս՝ կենդանի Աստուծոյ Որդին ։ Եւ Յիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ անոր, Երանի
քեզ, Սիմոն՝ Յովնանի որդի ․ [ժ]ինչու որ մար-
մինը և արիւնը քեզի չյայտնեց ասիկա, հա-
18 պա [ե]իմ Հայրս որ երկինքն է ։ Եւ ես քեզի
կ'ըսեմ որ [ւ]դուն *Պետրոս ես, ու [խ]աս

է Գլ. ժդ. 17 ։ Յովհ. զ. 9 ։
ը Գլ. ժե. 34 ։
է Մար. ը. 27 ։ Ղուկ. թ. 18 ։
ը Գլ. ժդ. 2 ։ Ղուկ. թ. 7, 8, 9 ։
ր Գլ. ժդ. 33 ։ Մար. ը. 29 ։ Ղուկ. թ. 20 ։ Յովհ. զ. 70 ։ ժա. 27 ։ Գոր. ը. 37 ։ թ. 20 ։ ա Յովհ. դ. 15 ։ ե. 5 ։ Եբր. ա. 2, 5 ։
ժ Եփես. բ. 8 ։
ե ա Կոր. բ. 10 ։ Գաղ. ա. 16 ։
ւ Յովհ. ա. 42 ։
* Յն՝ Վէմ ։
խ Եփես. բ. 20 ։ Յայտ. իա. 14 ։

րայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և
դրունք դժոխոց զնա մի յաղթահարեսցեն։
19 Եւ տաց քեզ փականս արքայութեան եր-
կնից. և զոր միանգամ կապեսցես յերկրի,
եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես
20 յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։ Յայն-
ժամ սաստեաց աշակերտացն, զի մի ումեք
21 ասիցեն թէ նա է Քրիստոսն։ Յայնմ հետէ
սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն իւրոց
թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ, և
բազում չարչարանս չարչարիլ ՚ի քահանայա-
պետիցն և ՚ի դպրաց և ՚ի ծերոց ժողովր-
դեանն և սպանանիլ, և յերիր աւուր յառ-
22 նել։ Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի,
սկսաւ կագել ընդ նմա և ասել, Քաւ լիցի
23 քեզ, Տէր, մի եղիցի քեզ այդ։ Եւ նա դար-
ձեալ ՚ի Պետրոս՝ ասէ, Երթ յետս իմ, Սա-
տանայ, գայթակղութիւն իմ ես. զի ոչ խոր-
24 հիս դու զԱստուծոյն՝ այլ զմարդկան։ Յայն-
ժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր, Եթէ ոք
կամի զկնի իմ գալ՝ ուրասցի զանձն և առցէ
25 զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ։ Զի որ կամի-
ցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա.
և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ
26 զնա։ Զի՞նչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս



վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, և
ծդժոխքին դռները անիկա պիտի չյաղթեն։
19 հՈւ երկնից Թագաւորութեան բանալիները
քեզի պիտի տամ. և ինչ որ երկրի վրայ կա-
պես, երկնից մէջ կապուած պիտի ըլլայ. ու
ինչ որ երկրի վրայ արձակես, երկնից մէջ
20 արձակուած պիտի ըլլայ։ ձԱնատենը աշա-
կերտներուն պատուիրեց որ մէկու մը չըսեն
թէ ինքը †Քրիստոսն է։
21 Անկէ ետև սկսաւ Յիսուս իր ղաշակերտ-
ներուն ցուցընել թէ պէտք է որ ինքը Երու-
սաղէմ երթայ, ու շատ չարչարանքներ կրէ
ծերերէն և քահանայապետներէն ու դպիր-
ներէն, և սպաննուի, ու երրորդ օրը յարու-
22 թիւն առնէ։ Եւ Պետրոս մէկդի առաւ զա-
նիկա, և սկսաւ յանդիմանել զանիկա ու ը-
սել, Քաւ լիցի քեզ, Տէր, ատ բանը քեզի
23 չըլլայ։ Եւ ինքը դառնալով՝ Պետրոսին ըսաւ,
Ետիս գնա, ճՍատանայ, մինծի գայթակղու-
թիւն ես դուն. ինչու որ Աստուծոյ բաները
չես մտածեր, հապա մարդոց բաները։
24 յԱնատենը Յիսուս իր աշակերտներուն ը-
սաւ, Թէ որ մէկը իմ ետևէս գալ կ՚ուզէ,
թող իր անձը ուրանայ և իր խաչը վերցընէ
25 ու իմ ետևէս գայ։ Վասն զի նով որ կ՚ուզէ
իր անձը ապրեցընել, պիտի կորսնցընէ անի-
կա. և ով որ ինծի համար իր անձը կը կոր-
26 սնցընէ, պիտի գտնէ զանիկա։ Քանզի ի՞նչ

ծ Յոբ. լը. 17։ Սաղ. խթ. 15։ ձէ. 18։ Եսա. լը. 10։
հ Գլ. ժը. 18։ Յովհ. ի. 23։
ձ Գլ. ժէ. 9։ Մար. ը. 30։ Ղուկ. թ. 21։

† Ոծեալ Յիսուս Քրիստոսն
ղ Գլ. ի. 17։ Մար. ը. 31։ թ. 31։ ժ. 33։ Ղուկ. թ. 22։ ժը. 31։ իդ. 6, 7։
ճ Տես բ Թագ. ժթ. 22։

մ Հռովմ. ը. 7։
յ Գլ. ժ. 38։ Մար. ը. 34։ Ղուկ. թ. 23։ ժդ. 27։ Գործ. ժդ. 21։ ա Թես. գ. 3։ բ Տիմ. գ. 12։
ն Ղուկ. ժէ. 33 Յովհ. ժբ. 25։

ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ. կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ
27 անձին իւրոյ։ Զի գալոց է Որդի մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր
28 ըստ գործս իւր։ Ամէն ասեմ ձեզ, զի իցեն ոմանք ՚ի սոցանէ որք աստ կան, որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով։

## ԳԼ. ԺԷ

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ՚ի լեառն մի
2 բարձր առանձինն։ Եւ այլակերպեցաւ առաջի նոցա, և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն, և հանդերձք նորա եղեն
3 սպիտակ իբրև զլոյս։ Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա։
4 Պատասխանի ետ Պետրոս և ասէ ցՅիսուս, Տէր, բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ և
5 մի Մովսիսի և մի Եղիայի։ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ



կը շահի մարդ մը՝ թէ որ բոլոր աշխարհը վաստըկի և իր անձը կորսնցընէ, կամ [ն]իր անձին համար ի՞նչ ազատչէք պիտի տայ մարդ։
27 Վասն զի [ղ]Որդին մարդոյ իր Հօրը փառքովը պիտի գայ [ո]իր հրեշտակներուն հետ, [ե]և անատենը ամէն մէկուն իր գործքերուն համե-
28 մատ հատուցում պիտի ընէ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի որ [դ]հոս ներկայ եղողներէն մէկ քանիները կան՝ որոնք մահուան համը պիտի չառնեն, մինչև որ տեսնեն Որդին մարդոյ իր թագաւորութիւնովը եկած։

## ԳԼ. ԺԷ

1 Քրիստոսի այլակերպութիւնը։ 14 Քրիստոս կը բժշկէ լուսնոտը. 22 կը նախաձայնէ իր չարչարանքները, 24 ու երկդրամեան տուրքը կը հատուցանէ։

1 Եւ [ա]վեց օրէն ետև Յիսուս իր հետը առաւ Պետրոսը ու Յակոբոսը և անոր եղբայրը Յովհաննէսը, ու անոնք մէկ բարձր լեռ մը հա-
2 նեց առանձին. Եւ անոնց առջևը այլակերպեցաւ, ու իր երեսը փայլեցաւ արեգակի պէս, ու իր հանդերձները ճերմկցան լուսոյ պէս։
3 Եւ ահա երևցան անոնց Մովսէս ու Եղիա
4 ու իր հետը կը խօսէին։ Պատասխան տուաւ Պետրոս ու ըսաւ Յիսուսին, Տէր, աղէկ է որ հոս կենանք. թէ որ կ՚ուզես, երեք խըրճիթ շինենք հոս, մէկը քեզի՝ և մէկը Մով-
5 սէսին՝ ու մէկը Եղիային։ Եւ [բ]քանի որ անիկա կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը անոնց

ն Սաղ. խթ. 7. 8։
ղ Գլ. իզ. 64։ Մար. ը. 38։ Ղուկ. թ. 26։
ո Դան. է. 10։ Զաք. ժդ. 5։ Գլ. իե. 31։ Յուդ. 14։
ե Յոբ. լդ. 11։ Սաղ. կբ. 12։ Առակ. իդ. 12։ Երեմ. ժէ. 10։ լբ. 19։ Հռոմ. բ. 6։ ա Կոր. գ. 8։ բ Կոր. ե. 10։ ա Պետ. ա. 17։ Յայտ. բ. 23։ իբ. 12։
դ Մար. ը. 39։ Ղուկ. թ. 27։

ա Մար. թ. 1։ Ղուկ. թ. 28։
բ բ Պետ. ա. 17։

՚ի վերայ նոցա․ ձայն եղեւ յամպոյն և ասէ,
Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ հաճեցայ,
6 դմա լուարուք։ Իբրեւ լուան աշակերտքն՝
անկան ՚ի վերայ երեսաց իւրեանց և երկեան
7 յոյժ։ Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար
զնոցանէ և ասէ, Յոտն կացէք և մի երկնչիք։
8 Ամբարձին զաչս իւրեանց և ոչ զոք տեսին՝
9 բայց միայն զՅիսուս։ Եւ մինչդեռ իջանէին
՚ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա Յիսուս
և ասէ, Մի ումեք ասիցէք զտեսիլդ՝ մին-
10 չեւ Որդի մարդոյ ՚ի մեռելոց յարիցէ։ Հար-
ցին զնա աշակերտքն և ասեն, Զի՞րդ դը-
պիրքն ասեն եթէ Եղիայի նախ պարտ է
11 գալ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա, Եղիա գայ և հաստատեսցէ զամենայն։
12 Այլ ասեմ ձեզ, զի Եղիա եկեալ իսկ է. և
ոչ ծանեան զնա, այլ արարին ընդ նա զոր
ինչ կամեցան. Նոյնպէս և Որդի մարդոյ չար-
13 չարելոց է ՚ի նոցանէ։ Յայնժամ ՚ի միտ ա-
ռին աշակերտքն թէ վասն Յովհաննու մը-
կրտչի ասաց ցնոսա։
14 Եւ իբրեւ եկին ՚ի ժողովուրդն, մատեաւ
այր մի՝ ՚ի ծունր իջանէր և ասէր, Տէր, ո-
ղորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի և չա-
րաչար հիւանդանայ, բազում անգամ անկա-



վրայ հովանի եղաւ․ և ահա ամպէն ձայն մը
եկաւ ըսելով, [գ]Ատիկա է իմ սիրելի Որդիս՝
6 [դ]որուն հաւներ եմ․ [ե]անոր մտիկ ըրէք։ [զ]Ա-
շակերտները երբոր լսեցին՝ երեսնուն վրայ
7 ինկան ու խիստ վախցան։ Եւ Յիսուս մօտե-
նալով [է]դպաւ անոնց ու ըսաւ, Ելէք ու մի
8 վախնաք։ Աչքերնին վերցուցին ու մէկը չը-
տեսան, բայց միայն Յիսուսը։
9 Ու երբոր անոնք լեռնէն վար կ'իջնէին, [ը]Յի-
սուս պատուիրեց անոնց ու ըսաւ, Այս տե-
սիլքը մարդու մի զրուցէք, մինչև Որդին
10 մարդոյ մեռելներէն յարութիւն առնէ։ Եւ
իր աշակերտները իրեն հարցուցին ու ըսին,
Ուրեմն [թ]ինչո՞ւ համար դպիրները կ'ըսեն թէ
11 Պէտք է որ առաջ Եղիան գայ։ Պատասխան
տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Յիրաւի ա-
ռաջ Եղիան կու գայ և [ժ]ամէն բան կարգի կը
12 դնէ։ [ի]Բայց ձեզի կ'ըսեմ որ Եղիան արդէն
եկած է, և անիկա չճանչցան, հապա [լ]ինչ որ
ուզեցին՝ ըրին անոր․ անանկ ալ [խ]Որդին մար-
13 դոյ անոնցմէ պիտի չարչարուի։ [ծ]Անատենը
հասկցան աշակերտները որ Յովհաննէս մը-
կրտչին համար ըսաւ անոնց։
14 [կ]Ու երբոր ժողովուրդին քովը եկան, մարդ
մը մօտեցաւ անոր, և ծնկան վրայ գալով՝
կ'ըսէր, Տէր, իմ որդւոյս ողորմէ, որ կը լուս-
նոտի և չարաչար կը տանջուի, քանզի շատ
անգամ կրակի մէջ կ'իյնայ՝ ու շատ անգամ

գ Գւ․ գ․ 17։ Մար․ ա․ 11։ Ղուկ․ գ․ 22։
դ Ես․ խբ․ 1։
ե բ Օր․ ժը․ 15, 19։ Գործ․ գ․ 22, 23։
զ բ Պետ․ ա․ 18։
է Դան․ ը․ 18։ թ․ 21։ ժ․ 10, 18։
ը Գւ․ ժզ․ 20։ Մար․ ը․ 30։ թ․ 9։
թ Մաղ․ դ․ 5։ Գւ․ ժա․ 14։ Մար․ թ․ 10։
ժ Մաղ․ դ․ 6։ Ղուկ․ ա․ 16, 17։ Գործ․ գ․ 21։
ի Գւ․ ժա․ 14։ Մար․ թ․ 11, 12։
լ Գւ․ ժդ․ 3, 10։
խ Գւ․ ժզ․ 21։
ծ Գւ․ ժա․ 14։
կ Մար․ թ․ 14։ Ղուկ․ թ․ 37։

15 նի ՚ի հուր և երբեք ՚ի ջուր ։ Եւ մատուցի
զնա աշակերտացն քոց, և ոչ կարացին բժշ֊
16 կել ։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Ով
ազգ անհաւատ և թիւր, մինչև յե՞րբ իցեմ
ընդ ձեզ, մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ ․ ած֊
17 զնա առ իս ։ Եւ սաստեաց ՚ի նա Յիսուս,
և ել ՚ի նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն
18 ՚ի ժամէն յայնմանէ ։ Յայնժամ մատեան աշա֊
կերտքն առանձինն և ասեն ցՅիսուս, Մեք
19 ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա ։ Եւ *նա
ասէ ցնոսա, Վասն թերահաւատութեան ձե֊
րոյ ․ ամէն ասեմ ձեզ, Եթէ ունիցիք հաւատս
քան զհատ մանանխոյ, ասասջիք լերինս
այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և փոխեսցի ․
20 և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ ։ Բայց այս
ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք ։
21 Եւ մինչդեռ շրջէին նոքա ՚ի Գալիլեա՝ ա֊
սէ ցնոսա Յիսուս, Մատնելոց է Որդի մար֊
22 դոյ ՚ի ձեռս մարդկան, Եւ սպանցեն զնա,
և յերիր աւուր յարիցէ ․ և տրտմեցան յոյժ ։
23 Իբրև եկին նոքա ՚ի Կափառնայում, մա֊
տեան որք զերկդրամեանն պահանջէին՝ առ
Պետրոս, և ասեն, Վարդապետն ձեր ո՞չ
24 տայ զերկդրամեանն ․ և ասէ, Այո ։ Եւ իբ֊
րև եմուտ ՚ի տուն՝ յառաջեաց քան զնա
Յիսուս և ասէ, Զի՞րդ թուի քեզ, Սիմոն ․

* Յայնն՝ Յիսուս

ԳԼՈՒԽ ԺԷ 61

15 ջուրի մէջ ։ Եւ անիկա քու աշակերտներուդ
16 բերի, ու չկրցան զանիկա բժշկել ։ Յիսուս
պատասխան տուաւ ու ըսաւ, Ով անհաւատ
և խոտորեալ ազգ, մինչև ե՞րբ ձեզի հետ պի֊
տի ըլլամ, մինչև ե՞րբ ձեզի պիտի համբե֊
17 րեմ ․ զանիկա հոս ինծի բերէք ։ Եւ Յիսուս
սաստեց անոր, ու դեւը անկէ ելաւ, և բժշ֊
18 կուեցաւ տղան նոյն ժամէն ։ Անատենը աշա֊
կերտները առանձին Յիսուսի քովը երթալով՝
ըսին, Մենք ինչո՞ւ չկրցանք անիկա հանել ։
19 Եւ Յիսուս ըսաւ անոնց, Ձեր թերահաւա֊
տութեանը համար ․ քանզի ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, [ա]թէ որ մանանեխի հատի չափ հաւատք
ունենաք, աս լեռանս պիտի ըսէք, Ասկէ ան֊
դին փոխադրուէ, և պիտի փոխադրուի ․ ու
20 բան մը անհնարին պիտի չըլլայ ձեզի ։ Սակայն
աս տեսակը ուրիշ բանով չելլեր, բայց միայն ա֊
ղօթքով և ծոմապահութեամբ ։
21 [բ]Ու երբոր անոնք Գալիլեայի մէջ կը պտը֊
տէին՝ Յիսուս ըսաւ անոնց, Որդին մարդոյ
22 պիտի մատնուի մարդոց ձեռքը, Եւ զանիկա
պիտի մեռցնեն, ու երրորդ օրը յարութիւն
պիտի առնէ ․ ու խիստ տրտմեցան ։
23 [գ]Երբոր անոնք Կափառնայում եկան, [դ]երկ֊
դրամեան տուրքը առնողները Պետրոսին եկան
ու ըսին, Ձեր վարդապետը երկդրամեանը
չը՞հատուցաներ ․ Ան ալ ըսաւ, Այո, կը հա֊
24 տուցանէ ։ Ու երբոր տունը մտաւ, Յիսուս
անոր դէմը ելաւ ու ըսաւ, Քեզի ի՞նչպէս
կ'երևնայ, Սիմոն, երկրիս թագաւորները որ֊

ա Գղ․ իա․ 21 ։ Մար․ ժա․ 23 ։ Ղուկ․ ժէ․ 6 ։ ա Կոր․ ժբ․ 9 ։ ժգ․ 2 ։
բ Գղ․ ժզ․ 21 ։ ի․ 17 ։ Մար․ ը․ 31 ։ թ․ 29, 30 ։ ժ․ 33 ։ Ղուկ․ թ․ 22, 44 ։ ժը․ 31 ։ իդ․ 6, 7 ։
գ Մար․ թ․ 32 ։
դ Տես Ել․ Լ․ 13 ։ լը․ 26 ։

Թագաւորք *ազգաց յումմէ՞ առնուն զհարկս
կամ զհաս, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտա-
25 րաց: Եւ իբրեւ †ասաց թէ յօտարաց, ասէ
ցնա Յիսուս, Ապա ուրեմն ազատ են որդիքն:
26 Բայց զի մի գայթակղեցուսցուք զնոսա. երթ
՚ի ծով և ընկեա կարթ, և զառաջին ձուկն
որ ելանիցէ՝ առ և բաց զբերան նորա, և
գտանիցես սատեր, և զայն առեալ տացես
նոցա ընդ իմ և ընդ քո:

## ԳԼ. ԺԸ

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յի-
սուս և ասեն, Ո՞վ իցէ §՚ի մէնջ՝ մեծ յար-
2 քայութեան երկնից. Եւ կոչեաց առ ինքն
Յիսուս մանուկ մի, կացոյց զնա ՚ի մէջ նո-
3 ցա, Եւ ասէ, Ամէն ասեմ ձեզ, Եթէ ոչ
դարձջիք և եղիջիք իբրեւ զմանկտի, ոչ
4 մտանիցէք յարքայութիւն երկնից: Արդ որ
խոնարհեցուսցանէ զանձն իբրեւ զմանուկս
5 զայս, նա է մեծ յարքայութեան երկնից: Եւ
որ ոք ընկալցի մանուկ մի այսպիսի յանուն
6 իմ, զիս ընդունի: Եւ որ ոք գայթակղեցուս-
ցէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ յիս հաւա-
տացելոց, լաւ է նմա եթէ կախիցի երկան
իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ՚ի

* Յոյնն՝ երկրի,
† Յոյնն՝ ասաց Պետրոս
§ Ի Յունին չիք:



մէ՞ն կ՚առնեն հարկը կամ տուրքը, իրենց
25 որդիներէ՞ն թէ օտարներէն: Պետրոս անոր
ըսաւ թէ Օտարներէն. Յիսուս անոր ըսաւ,
26 Ուրեմն որդիքը ազատ են: Բայց չըլլայ որ
անոնք գայթակղեցընենք, գնա ծովը և կարթ
ձգէ, ու առջի ձուկը որ կ՚ելլէ՝ առ, և անոր
բերանը բանալով՝ սատեր մը պիտի գտնես.
զանիկա առ՝ անոնց տուր ինծի և քեզի համար:

## ԳԼ. ԺԸ

1 Քրիստոս կը պատուիրէ իր աշակերտներուն խոնարհ ու հեզ ըլլալ. 7 գայթակղութիւն չտալ, և պզտիկները չանարգել. 15 կը սորվեցընէ թէ ինչպէս վարուելու ենք մեր եղբայրներուն հետ, երբոր անոնք մեզի դէմ մեղանչեն, 21 և թէ քանի՛ անգամ ներելու ենք անոնց. 23 ասիկա կը բացատրէ թագաւորի մը առակովը որ հաշիւ ուզեց իր ծառաներէն, 32 ու իր ընկերին ողորմութիւն չցուցընողը պատժեց:

1 [ա]Նոյն ժամանակը աշակերտները Յիսուսի
քովը եկան ու ըսին, Ո՞վ է մեծ երկնից թա-
2 գաւորութեանը մէջ: Եւ Յիսուս տղայ մը կան-
չեց իրեն, զանիկա անոնց մէջտեղը կայնե-
3 ցուց, Ու ըսաւ, Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, [բ]Թէ
որ դարձի չգաք և տղոց պէս չըլլաք, երկնից
4 թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք: [գ]Ուս-
տի ով որ իր անձը աս տղուն պէս խոնարհե-
ցընէ, անիկա է մեծ երկնից թագաւորու-
5 թեանը մէջ: Եւ [դ]ով որ ասանկ տղայ մը ըն-
6 դունի իմ անունովս, զիս կ՚ընդունի: Եւ [ե]ով
որ գայթակղեցընէ աս պզտիկներուն մէկը որ
ինծի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր պա-
րանոցէն իշու աղացքի քար մը կախուի, ու
ծովուն անդունդին մէջ ընկղմի:

ա Մար. Թ. 32: Ղուկ. Թ. 46: Իբ. 24:
բ Սաղ. ճլա. 2: Գլ. ԺԹ. 14: Մար. Ժ. 14: Ղուկ. ԺԸ. 16: Ա Կոր. ԺԴ. 20: Ա Պետ. Բ. 2:
գ Գլ. Ի. 27: Իգ. 11:
դ Գլ. Ժ. 42: Ղուկ. Թ. 48:
ե Մար. Թ. 41: Ղուկ. ԺԷ. 1, 2:

7 խորս ծովու ։ Վայ աշխարհի գայթակղու-
թեանց ․ հարկ է գալ գայթակղութեանց ,
բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ
8 գայթակղութիւն ։ Եթէ ձեռն քո կամ ոտն
գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ըն-
կեա ՚ի քէն ․ լաւ իցէ քեզ միաձեռանի կամ
կաղ մտանել ՚ի կեանս, քան թէ երկուս ձե-
ռըս և երկուս ոտս ունել, և անկանել ՚ի
9 հուրն յաւիտենական ։ Եւ եթէ ակն քո գայ-
թակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա
՚ի քէն ․ լաւ իցէ քեզ միականի մտանել ՚ի
կեանս , քան երկուս աչս ունել՝ և անկանել
՚ի գեհեն հրոյն ։
10 Զգոյշ լերուք՝ մի արհամարհիցէք զմի ՚ի
փոքրկանցս յայսցանէ ․ ասեմ ձեզ , զի հրեշ-
տակք նոցա յերկինս հանապազ տեսանեն զե-
11 րեսս Հօր իմոյ որ յերկինս է ։ Զի եկն Որդի
12 մարդոյ կեցուցանել զկորուսեալն ։ Զի՞արդ
թուի ձեզ , եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչ-
խար՝ և մոլորիցի մի ՚ի նոցանէ , ո՞չ թողու-
ցու զիննսուն և զինն ոչխարն ՚ի լերինս , և
13 երթիցէ խնդրիցէ զմոլորեալն ։ Եւ եթէ լի-
նիցի գտանել զնա , ամէն ասեմ ձեզ, զի ու-
րախ լինի ՚ի վերայ նորա առաւել քան ՚ի
վերայ իննսուն և իննուցն , որ չիցեն մոլո-
14 րեալ ։ Այսպէս ոչ են կամք առաջի Հօր *ի-

* Յոյն՝ ձերոյ



7 Վա՜յ աշխարհին՝ գայթակղութիւններուն
պատճառաւ ․ [դ]վասն զի հարկ է որ գայթակ-
ղութիւնները գան , բայց [է]վա՜յ այն մարդուն՝
որուն ձեռքովը գայթակղութիւնը կու գայ ։
8 [ը]Արդ թէ որ քու ձեռքդ կամ ոտքդ քեզ
կը գայթակղեցընէ , կտրէ անիկա ու քեզմէ
ձգէ ․ աղէկ է քեզի կաղ կամ պակասաւոր
մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք կամ
երկու ոտք ունենալ ու յաւիտենական կրակին
9 մէջը ձգուիլ ։ Եւ թէ որ աչքդ քեզ կը գայ-
թակղեցընէ , հանէ անիկա և քեզմէ ձգէ ․
աղէկ է քեզի մէկ աչքով կեանքը մտնել , քան
թէ երկու աչք ունենալ ու կրակին գեհեանը
ձգուիլ ։
10 Զգոյշ կեցէք որ չանարգէք աս պզտիկնե-
րէն մէկը ․ քանզի կ'ըսեմ ձեզի որ երկնից մէջ
[թ]անոնց հրեշտակները միշտ [ժ]կը տեսնեն իմ
11 Հօրս երեսը՝ որ երկինքն է ։ [ի]Ինչու որ Որ-
12 դին մարդոյ եկաւ կորսուածը փրկելու ։ [լ]Ի՞նչ-
պէս կ'երևնայ ձեզի ․ թէ որ մարդ մը հարիւր
ոչխար ունենայ, և անոնց մէկը մոլորի , իննը-
սունըինը ոչխարը *լեռները չը՞ձգեր , ու՞ եր-
13 թար մոլորածը փնտռեր ։ Եւ թէ որ գտնե-
լու ըլլայ զանիկա , ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ
աւելի ուրախ կ'ըլլայ անոր վրայ , քան թէ
14 իննսունըինին որ մոլորած չեն ։ Ասանկ ալ
ձեր երկնաւոր Հայրը չհաճիր որ աս պզտիկ-
ներէն մէկը կորսուի ։
15 [խ]Թէ որ քու եղբայրդ քեզի դէմ մեղանչէ ,

դ Ղուկ. ժէ. 1։ ա Կոր. ժա. 19։
է Գլ. իզ. 24։
ը Գլ. ե. 29, 30։ Մար. թ. 42, 44։
թ Սաղ. լդ. 7։ Զաք. ժգ. 7։ Եբր. ա. 14։
ժ Եսթ. ա. 14։ Ղուկ. ա. 19։
ի Ղուկ. թ. 56։ ժթ. 10։ Յովհ. գ. 17։ ժբ. 47։
լ Ղուկ. ժե. 4։
* Ոչխարը չը՞ձգեր , ու լեռները
խ Ղե. ժթ. 17։ Ղուկ. ժէ. 3։

մոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի ՚ի փոքր-
15 կանցս յայսցանէ ։ Եթէ մեղիցէ քեզ եղբայր
քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և
նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար
16 զեղբայր քո ։ Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ
ընդ քեզ մեւս ևս կամ երկուս, զի ՚ի բե-
րանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի
17 ամենայն բան ։ Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ,
ասասջիր յեկեղեցւոջ. ապա թէ և եկեղե-
ցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթա-
18 նոսն և զմաքսաւոր ։ Ամէն ասեմ ձեզ, Զոր
կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս,
և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ
19 յերկինս ։ Դարձեալ ասեմ ձեզ, Եթէ երկու
՚ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն
իրաց, զինչ և խնդրեսցեն՝ եղիցի նոցա ՚ի
20 Հօրէ իմմէ որ յերկինս է ։ Զի ուր իցեն եր-
կու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ
21 եմ ես ՚ի մէջ նոցա ։ Յայնժամ մատեաւ առ
նա Պետրոս և ասէ, Տէր, քանի՞ցս անգամ
եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ և թողից նմա,
22 մինչև ցեօ՞թն անգամ ։ Ասէ ցնա Յիսուս,
Ոչ ասեմ քեզ թէ մինչև ցեօթն անգամ,
23 այլ մինչև ցեօթանասնեկին եօթն ։ Վասն
այսորիկ նմանեցաւ արքայութիւն երկնից ա-
ռըն թագաւորի, որ կամեցաւ համար առ-
24 նուլ ՚ի մէջ ծառայից իւրոց ։ Եւ իբրև



գնա յանդիմանէ անիկա՝ երբոր դուն և ան
մինակ էք. թէ որ քեզի մտիկ ընէ, [ծ]շահե-
16 ցար քու եղբայրդ ։ Հապա թէ որ մտիկ չը-
նէ [կ], քու հետդ մէկ ուրիշ մը կամ երկուք
ալ առ, որ երկու կամ երեք վկաներու բեր-
17 նէ ամէն բան հաստատուի ։ Եւ թէ որ անոնց
ալ մտիկ չընէ, Եկեղեցիին ըսէ. Իսկ թէ որ
եկեղեցիին ալ մտիկ չընէ, [հ]հեթանոսի ու մաք-
սաւորի պէս թող ըլլայ քեզի ։
18 Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, [ձ]Երկրի վրայ ինչ
որ կապէք, երկնից մէջ կապուած պիտի ըլ-
լայ. ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկ-
19 նից մէջ արձակուած պիտի ըլլայ ։ [ղ]Դարձեալ
կ'ըսեմ ձեզի, Թէ որ ձեզմէ երկու հոգի երկ-
րի վրայ միաբանին՝ ամէն ինչ բանի համար
որ խնդրեն, [ճ]պիտի ըլլայ անոնց իմ Հօրմէս՝
20 որ երկինքն է ։ Քանզի ուր որ երկու կամ
երեք հոգի ժողվուած ըլլան իմ անունովս,
հոն եմ ես անոնց մէջը ։
21 Անատենը Պետրոս մօտեցաւ անոր ու ը-
սաւ, Տէր, քանի՞ անգամ թէ որ եղբայրս ին-
ծի դէմ մեղանչէ՝ ներեմ անոր. [մ]մինչև եօ՞թը
22 անգամ ։ Յիսուս անոր ըսաւ, Քեզի չեմ ըսեր
թէ մինչև եօթը անգամ, [յ]հապա մինչև եօ-
23 թանասուն անգամ եօթը ։ Ասոր համար երկ-
նից թագաւորութիւնը կը նմանի թագաւորի
մը, որ իր ծառաներէն հաշիւ առնել ուզեց ։
24 Ու երբոր սկսաւ առնել, տասը հազար տա-

ծ Յակ. ե. 20 ։ ա Պետ. գ. 1 ։
կ բ Օր. ժթ. 15 ։ Յովհ. ը. 17 ։ բ Կոր. ժգ. 1 ։ Եբր. ժ. 28 ։
հ Հռոմ. ժզ. 17 ։ ա Կոր. ե. 9 ։ բ Թես. գ. 6, 14 ։ բ Յովհ. 10 ։
ձ Գլ. ժզ. 19 ։ Յովհ. ի. 23 ։ ա Կոր. ե. 4 ։
ղ Գլ. ե. 24 ։
ճ ա Յովհ. գ. 22 ։ ե. 14 ։
մ Ղուկ. ժէ. 4 ։
յ Գլ. զ. 14 ։ Մար. ժա. 25 ։ Կող. գ. 13 ։

սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտա-
25 պան մի բիւր քանքարոյ։ Իբրեւ ոչ ունէր
հատուցանել, հրամայեաց զնա վաճառել
տէրն նորա, եւ զկին նորա եւ զորդիս եւ զա-
մենայն որ զինչ եւ ունիցի՝ եւ հատուցանել։
26 Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա եւ
ասէր, *Երկայնամիտ լեր առ իս՝ եւ զամենայն
27 հատուցից քեզ։ Գթացեալ տէր ծառային
այնորիկ՝ արձակեաց զնա, եւ զփոխն եթող
28 նմա։ Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի 'ի
ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հա-
րիւր դահեկան. եւ կալեալ զնա խեղդէր եւ ա-
29 սէր, Հատո ինձ զոր պարտիսդ։ Արդ ան-
կեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր
զնա եւ ասէր, Երկայնամիտ լեր առ իս՝ եւ
30 զամենայն հատուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր,
այլ չոգաւ, արկ զնա 'ի բանտ մինչեւ հա-
31 տուսցէ զպարտսն։ Իբրեւ տեսին ծառայա-
կիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ,
եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն
32 որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն
իւր եւ ասէ, Ծառայ չար, զամենայն զպարտ-
33 սըն թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ
արդ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակ-
34 ցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ։ Եւ
բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահ-
ճաց, մինչեւ հատուսցէ զամենայն զպարտսն։
35 Նոյնպէս եւ Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ
ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղ-
բօր իւրում 'ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

* Յոյն՝ Տէր, երկայնամիտ





25 ղանդի պարտական մը բերուեցաւ իրեն։ Բայց
անիկա վճարելու կարողութիւն չունենալով,
իր տէրը հրաման ըրաւ ՙոր անիկա և անոր
կինը ու որդիքը և անոր բոլոր ունեցածը
26 ծախուի, ու պարտքը վճարուի։ Իսկ ծառան
անոր առջևը իյնալով երկրպագութիւն կ'ը-
նէր ու կ'ըսէր, Տէր, համբերէ ինծի և ամէնը
27 քեզի կը վճարեմ։ Եւ ան ծառային տէրը
վրան խղճալով արձակեց զանիկա, ու պարտ-
28 քը շնորհեց անոր։ Եւ նոյն ծառան ելաւ, իր
ծառայակիցներէն մէկը գտաւ որ իրեն հա-
րիւր դահեկան պարտք ունէր, ու զանիկա
բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր, վճարէ ինծի
29 ունեցած պարտքդ։ Ուստի անոր ծառայա-
կիցը անոր ոտքը ինկաւ, կ'աղաչէր անոր ու
կ'ըսէր, Համբերէ ինծի ու *քեզի կը վճարեմ։
30 Եւ ինքը չէր ուզեր, հապա գնաց՝ բանտը
դրաւ զանիկա, մինչև որ պարտքը վճարէ։
31 Երբոր իր ծառայակիցները տեսան եղած բա-
ները՝ խիստ տրտմեցան, ու եկան իրենց տի-
32 րոջը հասկցուցին բոլոր եղածը։ Անատենը
անոր տէրը կանչեց զանիկա ու ըսաւ անոր,
Չար ծառայ, ան բոլոր պարտքը ես քեզի
33 շնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար. Ուրեմն
պէտք չէ՞ր քեզի ալ քու ծառայակիցդ ողոր-
34 միլ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ։ Եւ անոր
տէրը բարկանալով՝ դահիճներուն մատնեց
զանիկա, մինչև որ բոլոր պարտքը վճարէ։
35 ՙԱստանկ ալ իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ
ձեզի, թէ որ ձեր սրտերէն չէք ներեր ամէն
մէկդ իր եղբօրը իրենց յանցանքները։

ՙ Դ Թագ. Դ. 1։ Նէեմ. Ե. 8։ | ՙ Առակ. ԻԱ. 13։ Գլ. Զ. 12։ Մար. ԺԱ. 26։ Յակ. Բ. 13։

* Ուրիշ՝ ամէնը քեզի

## ԳԼ. ԺԹ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս
զայսոսիկ, փոխեցաւ 'ի Գալիլեէ և եկն 'ի
սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու։
2 Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բա-
3 զումք, և բժշկեաց զնոսա անդ։ Եւ մատու-
ցեալ առ նա փարիսեցիքն փորձէին զնա, և
ասէին եթէ Արժա՞ն իցէ ումեք արձակել
4 զկին իւր ըստ ամենայն վնասու։ Պատասխա-
նի ետ նոցա և ասէ, Չիցէ՞ ընթերցեալ ձեր
թէ որ հաստատեաց 'ի սկզբանէ՝ արու և
5 էգ արար զնոսա, և ասէ, Վասն այսորիկ
թողցէ այր զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ
կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան 'ի մարմին
6 մի։ Ապա ուրեմն ոչ են երկու այլ մի մար-
մին. արդ զոր Աստուած զուգեաց, մարդ
7 մի մեկնեսցէ։ Ասեն ցնա, իսկ Մովսէս ըն-
դէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնե-
8 լոյ և արձակել։ Ասէ ցնոսա, Մովսէս վասն
խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ ար-
ձակել զկանայս ձեր, այլ 'ի սկզբանէ ոչ ե-
9 ղեւ այնպէս։ Բայց ասեմ ձեզ, զի Ամենայն



## ԳԼ. ԺԹ

*Զ Քրիստոս կը բժշկէ հիւանդները. 3 պատասխան կու տայ կը-
նիկ արձակելու վրայով փարիսեցւոց ըրած հարցմունքին. 13
մանր տղաքները կ'ընդունի. 16 կը սորվեցընէ պատանիին թէ
ինչպէս կրնայ ստանալ յաւիտենական կեանքը, 20 և թէ ինչ
ընելու է որ կատարեալ ըլլայ. 23 իր աշակերտներուն կ'ըսէ
թէ ինչպէս դժուար է հարուստին Աստուծոյ թագաւորու-
թիւնը մտնել, 27 և վարձք կը խոստանայ անոնց՝ որ իր ետե-
ւէն երթալու համար որ և իցէ բան կը թողուն։*

1 Ու եղաւ որ երբ Յիսուս [ա] աս խօսքերը լմըն-
ցուց, Գալիլեայէն ելաւ ու եկաւ Հրէաստանի
սահմանները Յորդանանու անդին կողմը։
2 [բ] Եւ անոր ետեւէն շատ ժողովուրդներ գացին,
ու հոն բժշկեց զանոնք։
3 Եւ փարիսեցիները անոր մօտենալով զա-
նիկա կը փորձէին՝ ու կ'ըսէին թէ Արժա՞ն է
որ մարդ մը իր կնիկը արձակէ ամէն պատճա-
4 ռի համար։ Անիկա ալ պատասխան տուաւ
ու անոնց ըսաւ, Չէ՞ք կարդացեր [գ] թէ ան որ
սկիզբէն ստեղծեց, արու և էգ ստեղծեց ա-
5 նոնք՝ ու ըսաւ, [դ] Ասոր համար մարդ իր հայրը
ու մայրը պիտի ձգէ և իր կնկանը պիտի յա-
րի, ու [ե] երկուքը մէկ մարմին պիտի ըլլան։
6 Ուստի ալ երկուք չեն, հապա մէկ մարմին.
ուրեմն ան որ Աստուած միաւորեց՝ մարդ թող
7 չզատէ։ Ըսին իրեն, [զ] Հապա Մովսէս ինչո՞ւ
պատուիրեց արձակման թուղթ տալ և արձա-
8 կել։ Ըսաւ անոնց, Մովսէս ձեր սրտերուն
կարծրութեանը համար ձեզի հրաման տուաւ
կնիկներնիդ արձակել, բայց սկիզբէն անանկ
9 չեղաւ։ [է] Սակայն ձեզի կ'ըսեմ, Ով որ առանց

ա Մար. Ժ. 1։ Յովհ. Ժ. 40։
բ Գլ. ԺԲ. 15։
գ Ծն. Ա. 27։ Ե. 2։ Մաղ. Բ. 15։
դ Ծն. Բ. 24։ Մար. Ժ. 5—9։ Եփես. Ե. 31։
ե Ա Կոր. Զ. 16։ Է. 2։
զ Օր. ԻԴ. 1։ Գլ. Ե. 31։
է Գլ. Ե. 32։ Մար. Ժ. 11։ Ղուկ. ԺԶ. 18։ Ա Կոր. Է. 10, 11։

որ արձակեսցէ զկին իւր, և ոչ վասն պոռ-
նկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զար-
10 ձակեալն առնիցէ՝ շնայ։ Ասեն ցնա աշա-
կերտքն իւր, Եթէ այդպէս ինչ վնաս իցէ
ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ։
11 Եւ Նա ասէ ցնոսա, Ոչ ամենեքեան բաւա-
կան են այդմ բանի, այլ որոց տուեալ է։
12 Զի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց
ծնան այնպէս. և են ներքինիք՝ որ 'ի մարդ-
կանէ եղեն ներքինիք. և են ներքինիք՝ որ
զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն
արքայութեան երկնից. որ կարողն է տանել՝
13 տարցի։ Յայնժամ մատուցան առ Նա ման-
կտի, զի ձեռն դիցէ 'ի վերայ նոցա և ա-
ղօթս արասցէ. և աշակերտքն Նորա սաս-
14 տէին նոցա։ Ասէ Յիսուս, Թոյլ տուք ման-
կտւոյդ և մի արգելուք զդոսա գալ առ
իս, զի այդպիսեացդ է արքայութիւն եր-
15 կնից։ Եւ եդեալ ձեռն 'ի վերայ նոցա՝ գնաց
անտի։
16 Եւ ահա մատուցեալ ոմն առ Նա՝ ասէ,
Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից
17 զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս։ Եւ
Նա ասէ ցնա, Զի՞ *հարցանես զիս զբարւոյ,
մի է բարի։" Եթէ կամիս 'ի կեանսն †յաւի-
տենականս մտանել, պահեա զպատուիրանսն։
18 Ասէ ցնա, Զո՞րս. ասէ ցնա Յիսուս, զՄի ըս-
պանաներս, և Մի շնար, և Մի գողանար,

* Յոյնն՝ ասես զիս բարի, չիք ոք բարի բայց մի, Աստուած.
† Ի Յոյնին չէ։



պոռնկութեան պատճառի իր կինը արձակէ
և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ. և ով որ
10 արձակուածը առնէ՝ շնութիւն կ'ընէ։ Իր
աշակերտները ըսին իրեն, [ը]Թէ որ ատանկ բան
կայ էրկան ու կնկան մէջտեղը՝ չամուսնանալը
11 աղէկ է։ Եւ ինքը անոնց ըսաւ, [թ]Ամէնը բա-
ւական չեն աս բանին, հապա անոնք՝ որոնց
12 տրուած է։ Ինչու որ կան ներքինիներ՝ որ իրե՞նց
մօրը որովայնէն անանկ ծնան, և կան [ժ]ներ-
քինիներ՝ որ մարդոցմէ ներքինի եղան, և կան
ներքինիներ՝ որ ինքզինքնին ներքինի ըրին
երկնից թագաւորութեանը համար. ով որ
կրնայ տանիլ՝ թող տանի։
13 [ի]Անատենը մանր տղաք բերուեցան իրեն,
որ անոնց վրայ ձեռք դնէ և աղօթք ընէ, ու
աշակերտները կը յանդիմանէին զանոնք։
14 Բայց Յիսուս ըսաւ, Թող տուէք աս մանր
տղոցը, և մի արգիլէք ատոնք ինծի գալէն,
ինչու որ [լ]երկնից թագաւորութիւնը ատանկ-
15 ներունն է։ Եւ անոնց վրայ ձեռք դնելէն
ետև գնաց անկէ։
16 [խ]Եւ ահա մէկը մօտենալով՝ ըսաւ անոր,
Բարի [ծ]վարդապետ, ինչ բարի գործ գործեմ,
17 որ յաւիտենական կեանքը ընդունիմ։ Եւ ա-
նիկա ըսաւ անոր, Ինչո՞ւ զիս բարի կ'անուա-
նես. մէկէն 'ի զատ բարի չկայ, որ է Աստուած.
հապա թէ որ կ'ուզես կեանքը մտնել, պա-
18 տուիրանքները պահէ։ Ըսաւ անոր, Որո՞նք.
և Յիսուս ըսաւ, Ասոնք. [կ]Սպանութիւն մի
ըներ, Շնութիւն մի ըներ, Գողութիւն մի

ը Առակ. իա. 19:
թ ա Կոր. է. 2, 7, 9, 17:
ժ ա Կոր. է. 32, 34: թ. 5, 15:
ի Մար. ժ. 13: Ղուկ. ժը. 15:
լ Գլ. ժը. 3:
խ Մար. ժ. 17: Ղուկ. ժը. 18:
ծ Ղուկ. ժ. 25:
կ Ել. ի. 13: բ Օր. ե. 17:

19 Եւ Մի՛ սուտ վկայեր, Պատուեա զհայր քո և
զմայր, և Սիրեսցես զընկեր քո իբրև զան-
20 ձըն քո։ Ասէ ցնա պատանին, Զայդ ամե-
նայն պահեցի ՚ի մանկութենէ իմմէ. արդ
21 ի՞ւ իւիք պակաս իցեմ։ Ասէ ցնա Յիսուս,
Եթէ կամիս կատարեալ լինել, երթ, վաճա-
ռեա զինչս քո և տուր աղքատաց. և ունի-
22 ցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։ Իբրև
լուաւ պատանին զբանն՝ գնաց տրտմեալ,
23 զի ունէր ստացուածս բազումս։ Ասէ Յիսուս
ցաշակերտսն, Ամէն ասեմ ձեզ զի դժուարաւ
24 մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից։ Դար-
ձեալ ասեմ ձեզ, Դիւրին է մալխոյ մտանել
ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայու-
25 թիւն Աստուծոյ մտանել։ Իբրև լուան աշա-
կերտքն՝ զարմացան յոյժ և ասեն, Իսկ ո՞
26 կարիցէ ապրել։ Հայեցաւ ՚ի նոսա Յիսուս և
ասէ, Առ ՚ի մարդկանէ այդ անկար է, այլ
27 առ յԱստուծոյ ամենայն ինչ՝ զօրաւոր։ Յայն-
ժամ պատասխանի ետ Պետրոս և ասէ ցնա,
Ահաւասիկ մեք թողաք զամենայն և եկաք զկնի
28 քո, արդ զի՞նչ լինիցի մեզ։ Ասէ ցնոսա Յի-
սուս, Ամէն ասեմ ձեզ զի դուք որ եկիք
զկնի իմ, ՚ի միւսանգամ գալստեանն՝ յորժամ



19 ըներ, Սուտ վկայութիւն մի՛ ըներ, [հ]Քու հայ-
րըդ ու մայրդ պատուէ, և [ձ]Քու ընկերդ քու
20 անձիդ պէս սիրես։ Պատանին ըսաւ անոր,
Ատոնք ամէնը մանկութենէս ՚ի վեր պահեր
21 եմ. ալ ի՞նչ բանով պակաս եմ։ Ըսաւ անոր
Յիսուս, Թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ,
[ղ]գնա ունեցածդ ծախէ և տուր աղքատնե-
րուն, ու երկինքը գանձ պիտի ունենաս, և
22 եկուր իմ ետևէս։ Երբոր պատանին աս խօս-
քը լսեց՝ տրտմած գնաց, ինչու որ շատ ըս-
տացուածք ունէր։
23 Եւ Յիսուս ըսաւ աշակերտներուն, Ճշմա-
րիտ կ'ըսեմ ձեզի որ [ճ]հարուստը դժուարաւ
24 պիտի մտնէ երկնից թագաւորութիւնը։ Դար-
ձեալ կ'ըսեմ ձեզի, Դիւրին է որ *ուղտը ա-
սեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աս-
25 տուծոյ թագաւորութիւնը մտնէ։ Աշակերտ-
ները երբոր լսեցին՝ շատ զարմացան ու ըսին,
26 Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ։ Յիսուս անոնց
նայելով ըսաւ, Ատիկա մարդոց կողմանէ ան-
կարելի է, բայց [մ]Աստուծոյ կողմանէ ամէն
բան կարելի է։
27 [յ]Անատենը Պետրոս պատասխան տուաւ ու
ըսաւ անոր, Ահա [ն]մենք ամէն բան թողու-
ցինք՝ և քու ետևէդ եկանք. ուստի մեզի
28 ի՞նչ պիտի ըլլայ։ Ըսաւ անոնց Յիսուս, Ճըշ-
մարիտ կ'ըսեմ ձեզի թէ դուք որ իմ ետևէս
եկաք, †միւսանգամ գալուստին" երբոր Որ-

հ Գլ. ԺԵ. 4։
ձ Ղև. ԺԹ. 18։ Գլ. ԻԲ. 39։ Հռոմ. ԺԳ. 9։ Գաղ. Ե. 14։ Յակ. Բ. 8։
ղ Գլ. Զ. 20։ Ղուկ. ԺԲ. 33։ ԺԶ. 9։ Գործ. Բ. 45։ Դ. 34, 35։ Ա Տիմ. Զ. 18, 19։
ճ Գլ. ԺԳ. 22։ Մար. Ժ. 24։ Ա Կոր. Ա. 26։ Ա Տիմ. Զ. 9, 10։
* Ուղտ պարանը
մ Ծն. ԺԸ. 14։ Յոբ. ԽԲ. 2։ Երեմ. ԼԲ. 17։ Զաք. Ը. 6։ Ղուկ. Ա. 37։ ԺԸ. 27։
յ Մար. Ժ. 28։ Ղուկ. ԺԸ. 28։
ն Բ Օր. ԼԳ. 9։ Գլ. Դ. 20։ Ղուկ. Ե. 11։
† Յուն. վերստին ծըննդեանը մէջ

նստցի Որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց,
նստջիք և դուք յերկոտասան աթոռ՝ դա-
29 տել զերկոտասան ազգն Իսրայէլի։ Եւ ամե-
նայն որ ոք եթող զտուն կամ զեղբարս կամ
զքորս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ
զորդիս կամ զագարակս վասն անուան իմոյ,
հարիւրապատիկ առցէ, և զկեանսն յաւիտե-
30 նականս ժառանգեսցէ։ Բազումք եղիցին ա-
ռաջինք յետինք, և յետինք՝ առաջինք։

## ԳԼ. Ի

1 Քանզի նման է արքայութիւն երկնից առն
տանուտեառն, որ ել ընդ առաւօտս 'ի վար-
2 ձու ունել մշակս յայգի իւր։ Եւ արկ վարձս
մշակացն աւուրն դահեկան, և առաքեաց
3 զնոսա յայգի իւր։ Եւ ելեալ զերրորդ ժա-
մու՝ ետես այլս զի կային դատարկ 'ի հրա-
4 պարակս։ Ասէ և ցնոսա, Երթայք և դուք
յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ։
5 Գնացին և նոքա. և դարձեալ ելեալ զվեց
6 ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս։ Եւ
զմետասաներորդ ժամու ելեալ եգիտ այլս՝



դին մարդոյ իր փառաց աթոռը նստի, [ղ]դուք
ալ տասներկու աթոռներու վրայ պիտի նըս-
տիք՝ Իսրայէլի տասներկու ցեղերը դատելու։
29 [ռ]Եւ ով որ թողուց տուներ, կամ եղբայրներ,
կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին,
կամ որդիներ, կամ արտեր՝ իմ անուանս հա-
մար, հարիւրապատիկ պիտի առնէ, և յաւի-
30 տենական կեանք պիտի ժառանգէ։ [ւ]Բայց
շատ առաջիններ պիտի ըլլան յետին, և յե-
տիններ՝ առաջին։

## ԳԼ. Ի

1 Քրիստոս այգիի բանուորներու առակով կը ցուցընէ թէ Աս-
տուած բնաւ մէկ մարդու մը պարտական չէ. 17 իր չարչա-
րանքը կը նախաձայնէ. 20 Զեբեդէոսի որդւոցը մօրը պա-
տասխան տալով՝ կը սորվեցընէ իր աշակերտներուն խոնարհ
ըլլալ. 30 ու երկու կոյրերու աչքերը կը բանայ։

1 Քանզի երկնից թագաւորութիւնը տանու-
տէր մարդու մը նման է, որ առտուանց կա-
նուխ ելաւ՝ իր այգիին համար բանուորներ
2 բռնելու։ Եւ բանուորներուն հետ օրը մէկ
դահեկանի մը խօսք կապեց, ու զանոնք ղըր-
3 կեց իր այգին։ Եւ ժամը երեքին ատենները
ելաւ՝ ուրիշները տեսաւ, որ շուկային մէջ պա-
4 րապ կայներ էին. Ու ըսաւ անոնց, Դուք ալ
գացէք իմ այգիս, և ինչ որ արժան է՝ կու-
5 տամ ձեզի։ Անոնք ալ գացին. ու նորէն ժա-
մը վեցին և ժամը իննին ատենները ելաւ՝ ա-
6 նանկ ըրաւ։ Եւ ժամը տասնումէկին ատեն-
ները ելաւ, ուրիշները գտաւ՝ որ պարապ

ղ Գլ. ի. 21։ Ղուկ. իբ. 28, 29, 30։ Ա Կոր. Զ. 2, 3։ Յայտ. բ. 26։
ռ Մար. ժ. 29, 30։ Ղուկ. ժը. 29, 30։
ւ Գլ. ի. 16։ իա. 31, 32։ Մար. ժ. 31։ Ղուկ. ժգ. 30։

զի կայիք դատարկ. ասէ և ցնոսա, Ընդէ՞ր
7 կայք աստ զօրս ցերեկ դատարկ ։ Ասեն ցնա,
Զի ոչ ոք կալաւ զմեզ 'ի վարձու. ասէ ցնո-
սա, Երթայք և դուք յայգին, և որ ինչ ար-
8 ժան է՝ առնուցուք ։ Եւ իբրև երեկոյ ե-
ղև՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր,
Կոչեա զմշակսն և տուր նոցա վարձս՝ սկսեալ
9 'ի յետնոցն մինչև ցառաջինսն ։ Իբրև եկին
որք զմետասաներորդ ժամուն, առին մէն
10 մի դահեկան ։ Եկեալ և առաջինքն՝ համա-
րէին թէ աւելի առնուցուն, և առին մէն
11 մի դահեկան և նոքա ։ Իբրև առին, տըր-
12 տընջէին զտանուտեառնէն և ասէին թէ Դո-
քա յետինքդ մի ժամ գործեցին, և հասա-
րակորդս մեզ արարեր զդոսա, որ զծանրու-
13 թիւն աւուրն բարձաք և զտօթ ։ Նա պա-
տասխանի ետ միում 'ի նոցանէ և ասէ, Ըն-
կեր, չզրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ
14 արկեր ընդ իս. Առ զքոյդ և երթ, եթէ
15 կամիմ յետնոցս տալ՝ որպէս և քեզ ։ Եթէ
չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ
և կամիմ. կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես
16 առատ եմ ։ Այսպէս եղիցին յետինք առա-
ջինք, և առաջինք յետինք. զի բազումք են
կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք ։
17 Իբրև ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, առ
*զերկոտասանսն առանձինն, և 'ի ճանապար-
18 հին ասէ ցնոսա, Ահաւասիկ ելանեմք յԵրու-
սաղէմ, և Որդի մարդոյ մատնեսցի քահա-

* Յոյնն՝ զերկոտասան աշակերտսն



կայներ էին, ու անոնց ըսաւ, Ինչո՞ւ հոս բո-
7 լոր օրը պարապ կայներ էք ։ Ըսին իրեն,
Անոր համար որ մէկը մեզ վարձքով չբռնեց.
ըսաւ անոնց, Դուք ալ այգին գացէք, ու
8 ինչ որ արժան է՝ պիտի առնէք ։ Եւ իրիկուն
որ եղաւ, այգիին տէրը իր տնտեսին ըսաւ,
Բանուորները կանչէ, և անոնց վարձքը տուր՝
9 ետքիններէն սկսելով մինչև առջինները ։ Ու
երբոր եկան անոնք որ ժամը տասնումէկին գոր-
10 ցեր էին, մէկ մէկ դահեկան առին. Եւ առջինները
գալով՝ կը կարծէին որ աւելի պիտի առնեն,
11 ու անոնք ալ առին մէկ մէկ դահեկան ։ Երբոր
առին՝ տանը տիրոջը դէմ տրտունջ կ'ընէին ու
12 կ'ըսէին թէ Աս ետքինները մէկ ժամմը գործե-
ցին, և անոնք հաւասար ըրիր մեզի, որ օրուան
ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք ։
13 Անիկա պատասխան տուաւ անոնցմէ մէկուն
ու ըսաւ, Ընկեր, ես քեզ չեմ զրկեր. չէ՞ որ
դուն իմ հետս մէկ դահեկանի մը խօսք կա-
14 պեցիր. Առ քուկդ ու դնա. կ'ուզեմ որ աս
15 ետքինին քեզի ուզածիս պէս տամ ։ [ա]Միթէ ես
իշխանութիւն չունի՞մ իմ բաներուս վրայ՝
ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ [բ]քու աչքդ
16 չա՞ր է՝ որ ես բարերար եմ ։ [գ]Այսպէս յետին-
ները առաջին պիտի ըլլան, և առաջինները՝
յետին. [դ]ինչու որ կանչուածները շատ են,
բայց ընտրուածները քիչ ։
17 Ու [ե]երբոր Յիսուս Երուսաղէմ կ'ելլէր,
ճամբան տասուերկու աշակերտները հետը
18 առաւ առանձին, ու ըսաւ անոնց, [զ]Ահա
Երուսաղէմ կ'ելլենք, և Որդին մարդոյ պիտի

ա Հռովմ. Թ. 21 ։
բ Բ Օր. ժե. 9 ։ Առակ. իգ. 6 ։ Գլ. զ. 23 ։
գ Գլ. ժԹ. 30 ։
դ Գլ. իբ. 14 ։
ե Մար. Ժ. 32 ։ Ղուկ. ժը. 31 ։ Յովհ. ժբ. 12 ։
զ Գլ. ժզ. 21 ։

նայապետից և դպրաց, և դատապարտես-
19 ցեն զնա ՚ի մահ. Եւ մատնեսցեն զնա հե-
թանոսաց՝ այպանել և հարկանել և ՚ի խաչ
20 հանել, և յերիր աւուր յարիցէ։ Յայնժամ
մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ
որդւովքն իւրովք հանդերձ, երկիրպագա-
21 նէր և խնդրէր ինչ ՚ի նմանէ։ Եւ նա ասէ
ցնա, Զի՞նչ կամիս. ասէ ցնա, Ասա զի նստա-
ցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ
քումմէ և մի ընդ ահեկէ, յարքայութեան
22 քում։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ, Ոչ
գիտէք զինչ խնդրէք. կարէ՞ք ըմպել զբա-
ժակն զոր ես ըմպելոցն եմ, կամ զմկրտու-
թիւն զոր ես մկրտելոցն եմ՝ մկրտիլ. ասեն
23 ցնա, կարող եմք։ Ասէ ցնոսա †Յիսուս, Զբա-
ժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւն զոր ես
մկրտելոց եմ մկրտիցիք, բայց ‡նստուցանել
ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ
24 այլ որոց §տուեալ է ՚ի Հօրէ իմմէ։ Եւ լուեալ
տասանցն՝ բարկացան ՚ի վերայ երկուցն եղ-
25 բարց։ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն և
ասէ, Գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նո-
26 ցա, և մեծամեծքն իշխեն նոցա։ Ոչ այն-
պէս լիցի և ՚ի ձերում միջի. այլ որ կամիցի

* Ի Յունին չէ։

† Յոյնն՝ նստիլն

‡ Յոյնն՝ պատրաստեալ



մատնուի քահանայապետներուն ու դպիրնե-
րուն, և զանիկա մահուան պիտի դատապար-
19 տեն, [է]Եւ զանիկա հեթանոսներուն պիտի
մատնեն՝ ծաղր ընելու ու ծեծելու և խաչը
հանելու. ու երրորդ օրը յարութիւն պիտի
առնէ։

20 [ը]Անատենը [թ]Զեբեդէոսին որդւոցը մայրը իր
որդւոցը հետ եկաւ անոր, երկրպագութիւն
21 կ՚ընէր ու բան մը կը խնդրէր անկէ։ Ան ալ
ըսաւ անոր, Ի՞նչ կ՚ուզես։ Ըսաւ անոր, Ըսէ
որ աս իմ երկու որդիքս [ժ]մէկը աջ կողմդ՝ և
միւսը ձախ կողմդ նստին քու թագաւորու-
22 թեանդ մէջ։ Պատասխան տուաւ Յիսուս ու
ըսաւ, Չէք գիտեր ինչ կը խնդրէք. կրնա՞ք
խմել [ի]ան գաւաթը՝ որ ես պիտի խմեմ, կամ
[լ]ան մկրտութիւնովը մկրտուիլ՝ որ ես պիտի
23 մկրտուիմ. ըսին իրեն, Կրնանք. Եւ ըսաւ
անոնց, [խ]Իմ գաւաթս պիտի խմէք, և ան
մկրտութիւնովը որ ես մկրտուելու եմ՝ պի-
տի մկրտուիք. բայց իմ աջ կողմս ու ձախ
կողմս նստիլը՝ իմս չէ [ծ]տալը, հապա որոնց
24 որ պատրաստուած է իմ Հօրմէս։ [կ]Ու երբոր
միւս տասը աշակերտները լսեցին՝ ան երկու եղ-
25 բայրներուն նեղացան։ Իսկ Յիսուս իրեն կան-
չեց զանոնք ու ըսաւ, Գիտէք որ ազգաց իշ-
խանները կը տիրեն անոնց, և մեծամեծները
26 կ՚իշխեն անոնց. Բայց ձեր մէջը [հ]անանկ պի-
տի չըլլայ, հապա [ձ]ձեզմէ ով որ մեծ ըլլալ

է Գւ. իէ. 2: Մար. ժե. 1, 16: Ղուկ. իգ. 1: Յովհ. ժը. 28, ևս: Գործ. գ. 13:
ը Մար. ժ. 35:
թ Գւ. դ. 21:
ժ Գւ. ժթ. 28:
ի Գւ. իզ. 39, 42: Մար. ժդ. 36: Ղուկ. իբ. 42: Յովհ. ժը. 11:
լ Ղուկ. ժբ. 50:
խ Գործ. ժբ. 2: Հռովմ. ը. 17: Բ Կոր. ա. 7: Յայտ. ա. 9:
ծ Գւ. իե. 34:
կ Մար. ժ. 41: Ղուկ. իբ. 24, 25:
հ Ա Պետ. ե. 3:
ձ Գւ. իգ. 11: Մար. թ. 34: ժ. 43:

'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ.
27 Եւ որ կամիցի 'ի ձէնջ առաջին լինել, եղի-
28 ցի ձեր ծառայ: Որպէս որդի մարդոյ ոչ եկն
պաշտօն առնուլ՝ այլ պաշտել, և տալ զանձն
իւր փրկանս փոխանակ բազմաց:
29 Եւ յելանելն նոցա յԵրիքովէ, գնացին զհետ
30 նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա կոյրք
երկու նստէին առ ճանապարհաւն. իբրև
լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և
ասեն, Ողորմեա մեզ *Յիսուս Որդի Դաւ-
31 թի: Եւ ամբոխն սաստեաց նոցա զի լռես-
ցեն. և նոքա ևս առաւել աղաղակէին և
ասէին, Տէր, ողորմեա մեզ, Որդի Դաւթի:
32 Զտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ,
33 Զի՞նչ կամիք զի արարից ձեզ: Ասեն ցնա,
34 Տէր, զի բացցին աչք մեր: Եւ գթացեալ
Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի
տեսին և գնացին զհետ նորա:

## ԳԼ. ԻԱ.

1 Իբրև մօտ եղեն յԵրուսաղէմ և եկին 'ի

* Յոյն՝ Տէր,



կ'ուզէ, թող անիկա ձեր սպասաւորը ըլլայ.
27 Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ կ'ուզէ՝ թող
28 անիկա ձեր ծառան ըլլայ. Ինչպէս Որդին
մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու,
հապա սպասաւորութիւն ընելու և իր կեան-
քը շատերուն համար փրկանք տալու:
29 Ու երբոր անոնք Երիքովէն ելան, մեծ
30 բազմութիւն անոր ետևէն գնաց: Եւ ահա
ճամբուն քովը երկու կոյր նստած էին. երբ-
որ լսեցին թէ Յիսուս կ'անցնի, աղաղակե-
ցին ու ըսին, Ողորմէ մեզի, Տէր՝ Որդի Դաւ-
31 թի: Եւ բազմութիւնը կը յանդիմանէր զա-
նոնք որ լռեն, բայց անոնք՝ ալ աւելի կ'ա-
ղաղակէին ու կ'ըսէին, Ողորմէ մեզի, Տէր՝
32 Որդի Դաւթի: Եւ Յիսուս կանգ առնելով
կանչեց զանոնք ու ըսաւ, Ի՞նչ կ'ուզէք որ
33 ձեզի ընեմ: Ըսին անոր, Տէր, որ աչքերնիս
34 բացուին: Եւ Յիսուս խղճալով՝ անոնց աչքե-
րուն դպաւ, և շուտ մը անոնց աչքերը բա-
ցուեցան, ու անոր ետևէն գացին:

## ԳԼ. ԻԱ.

1 Քրիստոս իշու վրայ հեծած՝ Երուսաղէմ կը մտնէ. 12 տաճարէն դուրս կը վռնտէ առուտուր ընողները. 17 թզենին կ'անիծէ. 23 կը պապանձեցընէ քահանաները ու ծերերը. 28 և կը յանդիմանէ զանոնք՝ օրինակ բերելով հօր մը երկու որդիները, 35 ու ան մշակները՝ որ իրենց ղրկուածները սպաննեցին:

1 Ու երբոր Երուսաղէմին մօտեցան ու եկան

ղ Գլ. ժը. 4:
ճ Յովհ. ժգ. 4:
մ Փիլ. բ. 7:
յ Ղուկ. իբ. 27: Յովհ. ժգ. 14:
ն Ես. ծգ. 10, 11: Դան. թ. 24, 26: Յովհ. ժա. 51, 52: ա Տիմ. բ. 6: Տիտ. բ. 14: ա Պետ. ա. 19:
շ Գլ. իզ. 28: Հռովմ. ե. 15, 19: Եբր. թ. 28:
ո Մար. ժ. 46: Ղուկ. ժը. 35:
չ Գլ. թ. 27:

—

ա Մար. ժա. 1: Ղուկ. ժթ. 29:

Բեթփագէ մերձ 'ի լեառն Ձիթենեաց, յայն՜
ժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակեր՜
2 տացն իւրոց ։ Եւ ասէ ցնոսա, երթայք 'ի
գեօղդ՝ որ առաջի ձեր է, և անդէն գտա՜
նէք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին, լու՜
3 ծէք, ածէք ինձ ։ Եւ եթէ ոք ասիցէ ինչ
ձեզ, ասասջիք եթէ Տեառն իւրեանց պիտոյ
4 են. և վաղվաղակի առաքեսցէ զնոսա ։ Բայց
այս ամենայն եղեւ՝ զի լցցի բան մարգարէին
5 որ ասէ, Ասացէք դստեր Սիովնի, Ահա Թա՜
գաւոր քո գայ քեզ հեզ, և հեծեալ յէշ և
6 յաւանակի իշոյ ։ Գնացին աշակերտքն, և ա՜
7 րարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս ։ Եւ
ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք
ձորձս իւրեանց. և նստաւ 'ի վերայ նոցա ։
8 Եւ բազում ժողովուրդք տարածեցին զհան՜
դերձս իւրեանց 'ի ճանապարհին, և այլք
հատանէին ոստս 'ի ծառոց և տարածանէին
9 'ի ճանապարհին ։ Եւ ժողովուրդքն որ առա՜
ջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին,
*Օրհնութիւն Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ
գայ յանուն Տեառն. Օրհնութիւն 'ի բար՜
10 ձունս ։ Եւ 'ի մտանելն նորա յԵրուսաղէմ,
դղրդեցաւ քաղաքն ամենայն, և ասէ, Ո՞վ
11 իցէ սա ։ Եւ ժողովուրդքն ասեն, Սա է մար՜
գարէն Յիսուս որ 'ի Նազարեթէ Գալիլեա՜
12 ցւոց ։ Եւ եմուտ Յիսուս †'ի տաճարն և ե՜

* Յոյնն՝ Ովսաննա

† Յոյնն՝ 'ի տաճարն Աստուծոյ



Բեթփագէ դէպ 'ի [բ] Ձիթենեաց լեռը, անատե՜
նը Յիսուս իր աշակերտներէն երկուքը խրկ՜
2 կեց. Եւ ըսաւ անոնց, Գացէք ատ ձեր դի՜
մացի գեղը, և շուտ մը պիտի գտնէք կա՜
պած էշ մը ու անոր հետ աւանակ մը. արձը՜
3 կեցէք անոնք ու ինծի բերէք. Եւ թէ որ մէկը
ձեզի բան մը ըսէ, ըսէք թէ Տէրոջը պէտք
4 են. և շուտ մը անոնք պիտի խրկէ ։ Աս ա՜
մէն բաները եղաւ, որ կատարուի մարգարէին
5 խօսքը որ կ'ըսէ, [գ] Ըսէք Սիօնի աղջկանը,
Ահա քու թագաւորդ քեզի կու գայ, հեզ՝
ու իշու վրայ հեծած՝ և իշու ձագի՝ աւանա՜
6 կի վրայ ։ [դ] Աշակերտները գացին, և ինչպէս որ
7 որ Յիսուս իրենց պատուիրեր էր՝ ըրին. Ու՜
բերին էշը և աւանակը, և [ե] անոնց վրայ ի՜
րենց հանդերձները դրին, ու *Նստաւ անոնց
8 վրայ ։ Եւ ժողովուրդէն շատերը իրենց հան՜
դերձները ճամբուն վրայ փռեցին, և [զ] ուրիշ՜
ները ծառերէն ճիւղեր կը կտրէին ու ճամբուն
9 վրայ կը տարածէին ։ Եւ ժողովուրդները որ
առջեւէն ու ետեւէն կ'երթային՝ կ'աղաղակէին
ու կ'ըսէին, [է] Ովսաննա Որդւոյ Դաւթի, [ը] օրհ՜
նեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ.
Ովսաննա 'ի բարձունս ։
10 [թ] Ու երբոր անիկա Երուսաղէմ մտաւ, բոլոր
11 քաղաքը շարժեցաւ ու ըսաւ, Ո՞վ է աս ։ Եւ
ժողովուրդները ըսին, Ասիկա Յիսուս [ժ] մար՜
գարէն է՝ գալիլեայի Նազարեթէն ։
12 [ի] Ու Յիսուս Աստուծոյ տաճարը մտաւ, ու

բ Զաք. ժդ. 4 :
գ Եսա. կբ. 11 : Զաք. թ. 9 : Յովհ. ժբ. 15 :
դ Մար. ժա. 4 :
ե Դ Թագ. Թ. 13 :
* Ոմանք նստեցուցին
զ Տես Ղև. իգ. 40 : Յովհ. ժբ. 13 :
է Սաղ. ճժը. 25 :
ը Սաղ. ճժը. 26 : Գղ. իգ. 39 :
թ Մար. ժա. 15 : Ղուկ. ժթ. 45 : Յովհ. բ. 13, 15 :
ժ Գւ. բ. 25 : Ղուկ. է. 16 : Յովհ. զ. 14 : է. 40 : Թ. 17 :
ի Մար. ժա. 11 : Ղուկ. ժԹ. 45 : Յովհ. բ. 15 :

հան արտաքս զամենեսին, որ վաճառէինն և
գնէին 'ի տաճարի անդ. և զսեղանս հատա֊
վաճառացն կործանեաց և զաթոռս աղաւնե֊
13 վաճառացն. Եւ ասէ ցնոսա, Գրեալ է, Տուն
իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արարիք
14 զդա այր աւազակաց: Եւ մատեան առ նա
կոյրք և կաղք 'ի տաճարին, և բժշկեաց զնո֊
15 սա: Իբրև տեսին քահանայապետքն և դը֊
պիրք զսքանչելիսն զոր արար, և զմանկտին
որ աղաղակէին 'ի տաճարին և ասէին, *Օրհ֊
16 նութիւն Որդւոյ Դաւթի, բարկացան. Եւ
ասեն ցնա, Լսե՞ս զինչ ասեն դոքա. ասէ
ցնոսա Յիսուս, Այո, չիցէ՞ ընթերցեալ ձեր
թէ 'ի բերանոյ տղայոց և ստնդեայց կատա֊
17 րեցեր զօրհնութիւն: Եւ թողեալ զնոսա ել
արտաքոյ քաղաքին 'ի Բեթանիա, և անդ
ագաւ:

18 Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն 'ի
19 քաղաքն, քաղցեաւ: Եւ տեսեալ թզենի մի
'ի վերայ ճանապարհին՝ եկն 'ի նա, և ոչինչ
եգիտ 'ի նմա, բայց միայն տերև. և ասէ
ցնա, Մի այսուհետև 'ի քէն պտուղ եղիցի
յաւիտեան. և առժամայն չորացաւ թզենին:
20 Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ա֊
սեն թէ Զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ
21 թզենին: Պատասխանի ետ Յիսուս և ասէ
ցնոսա, Ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հա֊
ւատս և ոչ երկմտիցէք, ոչ միայն թզենւոյդ

* Յոյն՝ Ովսաննա



դուրս հանեց ամէն անոնք որ տաճարին մէջ
կը ծախէին ու կը գնէին, և [ե]ստակ փոխողնե֊
րուն սեղանները ու աղաւնի ծախողներուն
13 աթոռները կործանեց. Եւ ըսաւ անոնց, Գը֊
րուած է թէ [զ]Իմ տունս աղօթքի տուն պիտի
կոչուի, [է]բայց դուք անիկա աւազակներու
այր ըրիք:
14 Եւ տաճարին մէջ կոյրեր ու կաղեր եկան
15 իրեն, և բժշկեց զանոնք: Երբոր քահանա֊
յապետները ու դպիրները տեսան անոր ըրած
հրաշքները, և տղաքը որ տաճարին մէջ կ'ա֊
ղաղակէին ու կ'ըսէին, Ովսաննա Որդւոյ Դաւ֊
16 թի, բարկացան. Ու ըսին անոր, Կը լսե՞ս
ինչ կ'ըսեն ասոնք. և Յիսուս ըսաւ անոնց,
Այո. ընաւ չէ՞ք կարդացեր, թէ [ը]Մանկանց
ու կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կա֊
տարեցիր:
17 Եւ թողուց անոնք՝ քաղաքէն դուրս [թ]Բե֊
թանիա ելաւ, ու գիշերը հոն կեցաւ:
18 [ժ]Եւ առտուանց երբոր քաղաքը կը դառնար՝
19 անօթեցաւ. [ի]Ու ճամբուն վրայ թզենի մը
տեսնելով՝ քովը գնաց, և անոր վրայ տերև֊
ներէն 'ի զատ բան մը չգտաւ. ու ըսաւ անոր,
Ասկէ ետև քեզմէ պտուղ չըլլայ յաւիտեան.
20 և իսկոյն թզենին չորցաւ: [լ]Եւ աշակերտները
երբոր տեսան՝ զարմացան ու ըսին թէ Ինտոր
21 թզենին շուտ մը չորցաւ: Յիսուս պատասխան
տուաւ ու ըսաւ անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ
ձեզի, [խ]Թէ որ հաւատք ունենաք ու [ծ]չերկ֊
մըտիք, չէ թէ միայն աս թզենիին եղածը պի֊

ե Օր. ժդ. 25:
զ Եսայ. ծզ. 7:
է Երեմ. է. 11: Մար. ժա. 17: Ղուկ. ժթ. 46:
ը Սաղ. ը. 2:
թ Մար. ժա. 11: Յովհ. ժա. 18:
ժ Մար. ժա. 12:
ի Մար. ժա. 13:
լ Մար. ժա. 20:
խ Գլ. ժէ. 19: Ղուկ. ժէ. 6:
ծ Յակ. ա. 6:

առնիցէք, այլ թէպէտ և լերինդ ասիցէք,
22 Բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի: Եւ զամե-
նայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւա-
23 տովք՝ առնուցուք: Եւ իբրև եկն 'ի տա-
ճարն, մատեան առ նա, մինչդեռ ուսու-
ցանէր, քահանայապետքն և ծերք ժողովր-
դեանն և ասեն, Որո՞վ իշխանութեամբ առ-
նես զայդ՝ և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ
24 զայդ: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնո-
սա, Հարցից և ես զձեզ բան մի, զոր թէ
ասիցէք ինձ, և ես ձեզ ասացից՝ որո՞վ իշ-
25 խանութեամբ առնեմ զայս: Մկրտութիւնն
Յովհաննու ուստի՞ էր, յերկնի՞ց թէ 'ի մարդ-
կանէ. և նոքա խորհէին ընդ միտս և ա-
26 սէին, Եթէ ասեմք, Յերկնից, ասէ ցմեզ,
Իսկ ընդէ՞ր ոչ հաւատացիք նմա. և եթէ ա-
սեմք, Ի մարդկանէ, երկնչիմք 'ի ժողովր-
դենէն, զի ամենեքին զՅովհաննէս իբրև
27 զմարգարէ ունէին: Պատասխանի ետուն Յի-
սուսի և ասեն, Ոչ գիտեմք. ասէ ցնոսա և
նա, Եւ ոչ ես ասեմ ձեզ որով իշխանութեամբ
առնեմ զայս:

28 Բայց զիա՞րդ թուի ձեզ. այր միոջ էին
երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն
ասէ, Որդեակ, երթ այսօր, գործեա յայ-
29 գւոջ: *Նա պատասխանի ետ և ասէ, Երթամ,
30 և ոչ չոգաւ: Մատեաւ և առ միւսն, և ա-

* Յոյնն՝ 30 համարը դասն կանխէ զ29 համարն:

ԳԼՈՒԽ ԻԱ. 75

տի ընէք, [ն]հապա նաև թէ որ աս լեռանը
22 ըսէք, Ելիր ու ծովը ինկիր, պիտի ըլլայ: Եւ
ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով կը
խնդրէք, պիտի առնէք:

23 [ո]Ու երբոր անիկա տաճարը եկաւ, քահա-
նայապետները և ժողովուրդին ծերերը անոր
մօտեցան՝ երբոր կը սորվեցընէր, ու ըսին,
Ի՞նչ իշխանութիւնով կ'ընես ատ բաները, և
24 ո՞վ տուաւ քեզի ատ իշխանութիւնը: Պա-
տասխան տուաւ Յիսուս ու ըսաւ անոնց, Ես
ալ ձեզի բան մը հարցընեմ, որ եթէ անիկա
ինծի ըսէք, ես ալ ձեզի պիտի ըսեմ թէ ինչ
25 իշխանութիւնով կ'ընեմ աս բաները: Յով-
հաննէսին մկրտութիւնը ուսկի՞ց էր, երկին-
քէ՞ն թէ մարդոցմէ. և անոնք մէջերնին կը
26 խորհէին ու կ'ըսէին, Թէ որ ըսենք՝ Երկին-
քէն, մեզի պիտի ըսէ թէ Հապա ինչո՞ւ չհա-
ւատացիք անոր. իսկ թէ որ ըսենք՝ Մարդոց-
մէ, ժողովուրդէն կը վախնանք, ինչու որ
բոլորն ալ Յովհաննէսը իբրև մարգարէ կ'ըն-
27 դունէին: Եւ պատասխան տալով Յիսուսին՝
ըսին, Չենք գիտեր. և ինքը ըսաւ անոնց,
Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ինչ իշխանութիւնով
կ'ընեմ աս բաները:

28 Բայց ի՞նչպէս կ'երևնայ ձեզի. մէկ մարդ
մը երկու որդի ունէր, ու գնաց առջինին ը-
սաւ, Որդեակ, գնա այսօր այգիիս մէջ գոր-
29 ծէ: Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ,
Չեմ ուզեր երթալ, բայց ետքը զղջացաւ ու
30 գնաց: Միւսին ալ գնաց և անանկ ըսաւ. անի-

ն ա Կոր. ժգ. 2: շ Գղ. է. 7: Մար. ժա. 24: Ղուկ. ժա. 9: Յովհ. ե. 16: ա Յովհ. գ. 22: ե. 14: ո Մար. ժա. 27: Ղուկ. ի. 1: ե Եբ. բ. 14: Գործ. դ. 7: է. 27: պ Գղ. ժդ. 5: Մար. զ. 20: Ղուկ. ի. 6:

ասէ նոյնպէս։ Նա պատասխանի ետ և ասէ,
Ոչ կամիմ, բայց յետոյ զղջացաւ և չոգաւ
31 *յայգին։ Ո՞ր ոք յերկոցունց արար զկամս
հօրն. ասեն. Յետինն. ասէ ցնոսա Յիսուս,
Ամէն ասեմ ձեզ. զի մաքսաւորք և պոռ-
նիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն
32 †երկնից։ Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ
արդարութեան՝ և ոչ հաւատացէք նմա. և
մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա,
և դուք տեսէք՝ և ոչ զղջացարուք յետոյ
հաւատալ նմա։

33 Այլ առակ լուարուք. Այր մի էր տանու-
տէր որ տնկեաց այգի և ցանգով պատեաց
զնա, և փորեաց 'ի նմա հնձան և շինեաց
աշտարակ. և ետ զնա ցմշակս, և գնաց 'ի
34 տար աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ
պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակ-
35 սն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշ-
շակացն զծառայս նորա, զոմն տանջեցին,
36 զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ
առաքեաց այլ ծառայս բազումս քան զառա-
37 ջինսն, և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ ա-
ռաքեաց առ նոսա զորդի իւր, և ասէ,
Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։
38 Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն
ընդ միտս, Սա է ժառանգն, եկայք սպան-
ցուք զսա և կալցուք զժառանգութիւն սո-

*Ի Յունին չէ։
†Յոյնն՝ Աստուծոյ



կը պատասխան տուաւ ու ըսաւ, Կ՚երթամ,
31 տէր. և չգնաց։ Հիմա աս երկուքէն որը իր
հօրը կամքը կատարեց. ըսին անոր, Առջինը.
Յիսուս ըսաւ անոնց, Ճշմարիտ կ՚ըսեմ ձե-
զի որ մաքսաւորները ու պոռնիկները ձեզմէ
առաջ կը մտնեն Աստուծոյ թագաւորութիւնը։
32 Ինչու որ Յովհաննէս արդարութեան ճամբա-
յով եկաւ ձեզի, և դուք անոր չհաւատացիք.
բայց մաքսաւորները ու պոռնիկները անոր
հաւատացին. և դուք տեսաք ու ետքը չզղջ-
ջացիք անոր հաւատալու։

33 Ուրիշ առակ մըն ալ լսեցէք. Մէկ տանու-
տէր մարդ մը կար՝ որ այգի մը տնկեց ու
ցանգով պատեց զանիկա, և անոր մէջը հնձան
փորեց ու աշտարակ շինեց, և զանիկա մշ-
շակներու յանձնեց, ու ինքը օտար երկիր
34 մը գնաց։ Երբոր պտուղի ժամանակը մօտե-
ցաւ, իր ծառաները մշակներուն ղրկեց, որ
35 անոր պտուղները առնեն։ Եւ մշակները ա-
նոր ծառաները բռնեցին, մէկը ծեծեցին,
միւսը սպաննեցին, մէկ ուրիշը քարկոծեցին։
36 Նորէն ուրիշ ծառաներ ղրկեց առջիններէն
37 շատ, և անոնց ալ անանկ ըրին։ Վերջը իր
որդին ղրկեց անոնց՝ ըսելով, Գուցէ ամչնան իմ
38 որդիէս։ Բայց մշակները երբոր տեսան որդին՝
իրարու ըսին, Ասիկա է ժառանգը. եկէք զա-
նիկա սպաննենք ու անոր ժառանգութեանը

ձ Ղուկ. է. 29, 30։
ռ Գղ. գ. 1. եւ.
ս Ղուկ. գ. 12, 13։
վ Սաղ. ձ. 9։ Երգ. ը. 11։ Եսա. ե. 1։ Երեմ. բ. 21։ Մարկ. ժբ. 1։ Ղուկ. ի. 9։
տ Գղ. իե. 14, 15։
ր Երգ. ը. 11, 12։
ց բ Մն. իգ. 21։ ԼԶ. 16։ Նեեմ. Թ. 26։ Գղ. ե. 12։ իգ. 34, 37։ Գոր. է. 52։ ա Թես. բ. 15։ Եբր. ժա. 36, 37։
ւ Սաղ. բ. 8։ Եբր. ա. 2։
փ Սաղ. բ. 2։ Գղ. իզ. 3։ իէ. 1։ Յովհ. ժա. 53։ Գոր. դ. 27։

39 րա ։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան
40 զայգին և սպանին ։ Արդ յորժամ եկեսցէ տէր
այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ ։
41 Ասեն ցնա, Զչարսն չարաւ կորուսցէ, և զայ-
գին տացէ այլոց մշակաց, որք տացեն նմա
42 զպտուղս ՚ի ժամու իւրեանց ։ Ասէ ցնոսա
Յիսուս, Չիցէ՞ երբէք ընթերցեալ ձեր ՚ի
գիրս, Զվէմ զոր անարգեցին շինողքն, նա
եղեւ գլուխ անկեան. ՚ի Տեառնէ եղեւ այս,
43 և է սքանչելի յաչս մեր ։ Վասն այսորիկ ա-
սեմ ձեզ, զի բարձցի ՚ի ձէնջ արքայութիւն
Աստուծոյ, և տացի ազգի որ առնիցէ զպը-
44 տուղս նորա ։ Եւ որ անկցի ՚ի վերայ վիմիս
այսորիկ՝ փշրեսցի, և յոր վերայ անկցի՝ հո-
45 սեսցէ զնա ։ Իբրեւ լուան քահանայապետքն
*և դպիրք" և փարիսեցիք զառակս նորա,
46 գիտացին թէ վասն նոցա ասաց ։ Եւ խըն-
դրէին զնա ունել, բայց երկեան ՚ի ժողովըր-
դոցն, քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա ։

---

*Ի Յոյնին չէ ։



39 տիրենք ։ *Եւ առին զանիկա՝ այգիէն դուրս
40 հանեցին ու սպաննեցին ։ Ուստի երբոր այգի-
ին տէրը գայ, ի՞նչ պիտի ընէ ան մշակնե-
41 րուն ։ Ըսին իրեն, ‡Ան չարերը չարաչար պի-
տի կորսնցնէ, –և այգին պիտի յանձնէ ու-
րիշ մշակներու, որոնք պտուղները իրենց
42 ժամանակին պիտի տան իրեն ։ Ըսաւ անոնց
Յիսուս, ‡Բնաւ չէ՞ք կարդացեր գրքին մէջ,
Ան քարը որ շինողները անարգեցին, անիկա
անկիւնին գլուխը եղաւ. ասիկա Տէրոջմէ
43 եղաւ և զարմանալի է մեր աչքերուն ։ Ասոր
համար կ՚ըսեմ ձեզի, որ ‡Աստուծոյ թագա-
ւորութիւնը ձեզմէ պիտի առնուի, ու անանկ
ազգի մը պիտի տրուի՝ որ անոր պտուղները
44 բերէ ։ Եւ ով որ *աս քարին վրայ իյնայ՝ պի-
տի կոտրի, և որուն վրայ որ իյնայ՝ *պիտի
փշրէ զանիկա ։
45 Ու երբոր քահանայապետները և փարիսե-
ցիները անոր առակները լսեցին, իմացան որ
46 իրենց համար կ՚ըսէր ։ Եւ կը փնտռէին թէ ինչ-
պէս բռնեն զանիկա, բայց ժողովուրդէն վախ-
ցան, ինչու որ *մարգարէի պէս կ՚ընդունէին
զանիկա ։

## ԳԼ. ԻԲ

1 Թագաւորի որդւոյն հարսնիքին առակը ։ 9 Հեթանոսներուն երկնից թագաւորութեան հրաւիրուիլը ։ 12 Հարսնիքի հան-

+ Գլ. իզ. 50. Ես ։ Մար. ժգ. 46. Ես ։ Ղուկ. իբ. 54, Ես ։ Յովհ. ժը. 12, Ես ։ Գոր. բ. 23 ։
○ Տես Ղուկ. ի. 16 ։
ֆ Ղուկ. իա. 24. Եբր. բ. 2. 3 ։
ա Գոր. ժգ. 46 ։ ժե. 7 ։ ժը. 6 ։ իը. 28 ։ Հռովմ. թ. ժ. և ժա ։
ե Սաղ. ճժը. 22 ։ Եւ. իը. 16 ։ Մար. ժբ. 10 ։ Ղուկ. ի. 17 ։ Գոր. դ. 11 ։ Եփես. բ. 20 ։ ա Պետ. բ. 6. 7 ։
գ Գլ. ը. 12 ։
+ Եւ. ը. 14, 15 ։ Զաք. ժբ. 3 ։ Ղուկ. ի. 18 ։ Հռովմ. թ. 33 ։ ա Պետ. բ. 8 ։
ե Եւ. կ. 12 ։ Դան. բ. 44 ։
ղ Հմր. 11 ։ Ղուկ. է. 16 ։ Յովհ. է. 40 ։

## ԳԼ. ԻԲ

1 Դարձեալ պատասխանի ետ Յիսուս և ասէ
2 ցնոսա առակօք, Նմանեցաւ արքայութիւն
երկնից առն թագաւորի որ արար հարսանիս
3 որդւոյ իւրում։ Եւ առաքեաց զծառայս իւր
կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսանիս. և ոչ կա֊
4 մեցան գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծա֊
ռայս՝ և ասէ, Ասացէք հրաւիրելոցն, Ահա֊
ւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք
իմ և պարարակք զենեալ են, և ամենայն
5 ինչ պատրաստ է. եկայք ՚ի հարսանիսս։ Եւ
նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր,
6 և ոմն ՚ի վաճառ իւր. Եւ այլք կալան զծա֊
7 ռայս նորա, թշնամանեցին և սպանին։ Իսկ
թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, և ա֊
ռաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն
8 զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց։ Յայն֊
ժամ ասէ ցծառայս իւր, Հարսանիքս պատ֊
րաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի։
9 Արդ երթայք յանցս ճանապարհաց, և զորս
միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի հարսանիսս։
10 Եւ ելեալ ծառայքն ՚ի ճանապարհս՝ ժողովե֊
ցին զամենեսեան զորս և գտին զչարս և զբա֊
11 րիս. և լցան հարսանիքն բազմականօք։ Եւ
մտեալ թագաւորն հայել զբազմականօքն, ե֊



զգեստ չունեցողին պատիժը։ 15 Կայսրին տուրք տալու վրա֊յ մը։ 25 Քրիստոս փաստով կը ջրէ սադուկեցւոց մեռելու֊թիւնը յարութեան վրայով. 34 պատասխան կու տայ օրինա֊կանին թէ որն է մեծ ու առաջին պատուիրանքը. 41 փարի֊սեցւոց հարցմունք կ՚ընէ Մեսիային վրայով, ու կը պապան֊ձեցընէ զանոնք։

1 Դարձեալ պատասխան տուաւ Յիսուս [ա] և ա֊
2 ռակներով ըսաւ անոնց, Երկնից Թագաւո֊
րութիւնը թագաւոր մարդու մը կը նմանի,
3 որ իր որդւոյն համար հարսնիք ըրաւ։ Եւ
իր ծառաները խրկեց՝ որ կանչեն հարսնիքի
հրաւիրուածները, և անոնք չուզեցին գալ։
4 Նորէն ուրիշ ծառաներ խրկեց ու ըսաւ, Ը֊
սէք հրաւիրուածներուն, Ահա իմ ճաշս պատ֊
րաստեցի, [բ] զուարակներս ու դէր կենդանի֊
ներս մորթուած են, և ամէն բան պատրաստ
5 է. հարսնիք եկէք։ Բայց անոնք անհոգու֊
թիւն ընելով գացին՝ մէկը իր արտը ու միւսը
6 իր առուտուրին. Եւ ուրիշները անոր ծա֊
ռաները բռնեցին, նախատեցին ու սպաննե֊
7 ցին։ Թագաւորն ալ երբոր լսեց՝ բարկացաւ,
և իր [գ] զօրքերը խրկեց ու այն սպանողները
8 սատկեցուց, ու անոնց քաղաքը այրեց. Ան֊
տենը իր ծառաներուն ըսաւ, Հարսնիքը
պատրաստ է, բայց հրաւիրուածները [դ] արժա֊
9 նի չէին։ Ուստի գացէք ճամբու գլուխները,
և ով որ գտնելու ըլլաք՝ հարսնիքի հրաւի֊
10 րեցէք։ Եւ այն ծառաները ելան ճամբանե֊
րուն վրայ, ու ով որ գտան թէ չար և թէ
բարի՝ [ե] ամէնն ալ ժողվեցին, ու հարսնիքը
11 հարսնեւորներով լեցուեցաւ։ Եւ թագաւորը
երբոր մտաւ հարսնեւորները տեսնելու, հոն

ա Ղուկ. ժդ. 16։ Յայտ. ժթ. 7, 9։ բ Առակ. թ. 2։ | գ Դան. թ. 26։ Ղուկ. ժթ. 27։ դ Գլ. ժ. 11, 13։ | Գոր. ժգ. 46։ ե Գլ. ժգ. 38, 47։

տես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հան-
12 դերձ հարսանեաց։ Եւ ասէ ցնա, Ընկեր,
զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ
13 հարսանեաց. և նա պապանձեցաւ, Յայնժամ
ասէ թագաւորն ցպաշտաւորսն, կապեցէք
զդորա զոտս և զձեռս, և հանէք զդա 'ի
խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել
14 ատամանց. Զի բազումք են կոչեցեալք՝ և
սակաւք են ընտրեալք։
15 Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին
խորհուրդ *զնմանէ՝ թէ որպէս դնիցեն նմա
16 որոգայթ բանիւք։ Եւ առաքեն առ նա զա-
շակերտս իւրեանց Հերովդիանոսօքն հան-
դերձ, և ասեն, Վարդապետ, գիտեմք զի
ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճըշ-
մարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ
փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ։
17 Արդ ասա մեզ, զի՞արդ թուի քեզ, պա՞րտ է
18 հարկս տալ կայսեր թէ ոչ։ Գիտաց Յիսուս
զխորամանկութիւն նոցա և ասէ, Զի՞ փորձէք
19 զիս, կեղծաւորք. Ցուցէք ինձ †զդահեկան
հարկին. և նոքա մատուցին նմա դահեկան
20 մի։ Եւ ասէ ցնոսա, Ո՞յր է պատկերս այս
21 կամ գիր։ Ասեն, կայսեր. յայնժամ ասէ ցնո-
սա, Երթայք, տուք զկայսերն կայսեր, և
22 զԱստուծոյն Աստուծոյ։ Իբրեւ լուան՝ զարմա-

*Ի Յունին չիք։

† Յոյնն՝ զդրամ.



մէկ մարդ մը տեսաւ նոր հարսնիքի հանդերձ
12 հագած չէր. Եւ ըսաւ անոր, Ընկեր, ինչո՞ւ
համար հոս մտար՝ առանց հարսնիքի հան-
դերձ ունենալու. և անիկա պապանձեցաւ։
13 Անատենը թագաւորը սպասաւորներուն ըսաւ,
կապեցէք ասոր ոտքերը ու ձեռքերը, և
առէք ու հանեցէք զանիկա [Է] դուրսի խաւա-
րը. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կրճը-
14 տել. [Ը] ինչու որ կանչուածները շատ են ու
ընտրուածները քիչ։
15 [Թ] Անատենը փարիսեցիները գացին խորհուրդ
ըրին, թէ ինչպէս անոր որոգայթ մը դնեն
16 խօսքով։ Եւ իրենց աշակերտները Հերովդէ-
սեաններուն հետ մէկտեղ խրկեցին անոր՝ ու
ըսին, Վարդապետ, գիտենք որ ճշմարիտ
ես, և ճշմարտութեամբ Աստուծոյ ճամբան
կը սորվեցընես, ու մէկու մը համար հոգ
չէ, քանզի մարդոց երեսպաշտութիւն չես
17 ըներ. Ուստի մեզի ըսէ, քեզի ի՞նչպէս կ'ե-
րևնայ, կայսրին տուրք տալ արժա՞ն է՝ թէ
18 չէ։ Յիսուս գիտնալով անոնց խորամանկու-
թիւնը՝ ըսաւ, ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղ-
19 ծաւորներ. Ցուցուցէք ինծի տուրքին դրամը.
20 և անոնք դահեկան մը բերին իրեն։ Ու ը-
սաւ անոնց, Որո՞ւնն է աս պատկերը ու գի-
21 րը։ Ըսին անոր, կայսրին. անատենը ըսաւ
անոնց, Ուրեմն [Ժ] ան որ կայսրինն է՝ կայսրին
տուէք, և ան որ Աստուծոյն է՝ Աստուծոյ
22 տուէք։ Երբոր լսեցին՝ զարմացան, և թողու-
ցին զանիկա ու գացին։

Զ Բ Կոր. Ե. 3։ Եփես. Դ. 24։ Կող. Գ. 10, 12։ Յայտ. Գ. 4։ ԺԶ. 15։ ԺԹ. 8։
Է Գլ. Ը. 12։
Ը Գլ. Ի. 16։
Թ Մար. ԺԲ. 13։ Ղուկ. Ի. 20։
Ժ Գլ. ԺԷ. 25։ Հռովմ. ԺԳ. 7։

23 ցան, և թողին զնա և գնացին: Յայնմ ա-
ւուր մատեան առ նա սադուկեցիքն, որ ա-
24 սէին թէ Չիք յարութիւն. հարցին զնա եւ
ասեն, Վարդապետ, Մովսէս ասաց, Եթէ ոք
մեռցի անորդի՝ արասցէ զկին նորա եղբայր
իւր, և յարուսցէ զաւակ եղբօր իւրում:
25 Էին առ մեզ եղբարք եօթն. առաջինն արար
կին և մեռաւ. և զի ոչ ունէր զաւակ, եթող
26 զկինն իւր եղբօր իւրում. Նոյնպէս և երկ-
27 րորդն՝ և երրորդն՝ մինչև ցեօթներորդն. Յետ
28 ամենեցուն մեռաւ և կինն: Արդ 'ի յարու-
թեան ո՞յր յեօթանցն եղիցի նա կին, զի ա-
29 մենեքին կալան զնա կին: Պատասխանի ետ
Նոցա Յիսուս և ասէ, Մոլորեալ էք, ոչ գիտէք
30 զգիրս և ոչ զզօրութիւն Աստուծոյ: Զի 'ի
յարութեան ոչ կանայս առնեն և ոչ արանց
լինին, այլ են իբրև *զհրեշտակս յերկինս:
31 Բայց վասն յարութեան մեռելոց չիցէ՞ ըն-
թերցեալ ձեր զասացեալն ձեզ յԱստուծոյ,
32 Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Ի-
սահակայ և Աստուած Յակոբայ. և չէ Աս-
տուած Աստուած մեռելոց, այլ կենդանեաց:
33 Իբրև լուան ժողովուրդքն՝ զարմանային ընդ
34 վարդապետութիւն նորա: Իսկ փարիսեցիքն
իբրև լուան եթէ պապանձեցոյց զսադուկե-
35 ցիսն, ժողովեցան 'ի միասին. Եւ եհարց մի

* Յոյն՝ զհրեշտակս Աստուծոյ



23 [ե]Նոյն օրը անոր քովը եկան սադուկեցինե-
րը, [զ]որոնք կ'ըսեն թէ յարութիւն չկայ, և
24 անոր հարցուցին՝ ըսելով, Վարդապետ,
[է]Մովսէս ըսաւ, Թէ որ մէկը առանց զաւակի
մեռնելու ըլլայ, անոր եղբայրը առնէ անոր
25 կնիկը, և իր եղբօրը զաւակ հանէ: Արդ
եօթը եղբայրներ կային մեր մէջը, և առ-
ջինը կնիկ առաւ ու մեռաւ, և զաւակ չու-
նենալուն համար իր կնիկը ձգեց իր եղբօրը:
26 Նոյնպէս ալ երկրորդը ու երրորդը՝ մինչև
27 եօթներորդը: Ամենէն ետքը կնիկն ալ մե-
28 ռաւ: Ուրեմն յարութեան ատենը ան եօթ-
նէն որո՞ւն կնիկը պիտի ըլլայ, ինչու որ ամէն-
29 քըն ալ զանիկա կին ունեցան: Եւ Յիսուս
պատասխան տալով՝ անոնց ըսաւ, Դուք մո-
լորած էք, որ [ը]ոչ գիրքերը գիտէք՝ և ոչ Աս-
30 տուծոյ զօրութիւնը. Քանզի յարութեան ա-
տենը ոչ կնիկ կ'առնեն՝ և ոչ էրկան կը տրուին,
հապա [թ]երկնից մէջ Աստուծոյ հրեշտակներուն
31 պէս են: Բայց մեռելներուն յարութիւն առ-
նելուն համար՝ չէ՞ք կարդացեր Աստուծմէ
32 ձեզի ըսուած խօսքը. [ժ]Ես եմ Աբրահամին
Աստուածը, և Իսահակին Աստուածը, ու Յա-
կոբին Աստուածը. Աստուած մեռելներուն
33 Աստուածը չէ՝ հապա կենդանիներուն: Ու
ժողովուրդները լսելով՝ [ի]կը զարմանային անոր
վարդապետութեանը վրայ:
34 [լ]Բայց փարիսեցիները երբոր լսեցին թէ ա-
նիկա պապանձեցուց սադուկեցիները, մէկ-
35 տեղ ժողվուեցան. [խ]Եւ անոնցմէ մէկը՝ օրի-

ե Մար. ժբ. 18: Ղուկ. ի. 27:
զ Գործ. իգ. 8:
է Օր. իե. 5:
ը Յովհ. ի. 9:
թ ա Յովհ. գ. 2:
ժ Ել. գ. 6, 16: Մար. ժբ. 26: Ղուկ. ի. 37: Գործ. է. 32:
Եբր. ժա. 16:
ի Գղ. է. 28:
լ Մար. ժբ. 28:
խ Ղուկ. ժ. 25:

36 ումն *'ի նոցանէ զնա փորձելով, և ասէ, Վար֊
դապետ, ո՞ր պատուիրան է մեծ յօրէնս։
37 Եւ Յիսուս ասէ ցնա, Սիրեսցես զՏէր Ա֊
ստուած քո յամենայն սրտէ քումմէ և յամե֊
նայն անձնէ քումմէ և յամենայն մտաց քոց։
38 Այս է մեծն և առաջին պատուիրան։ (39) Եր֊
կրորդն նման սմին, Սիրեսցես զընկեր քո իբ֊
40 րև զանձն քո։ Յայս երկուս պատուիրանս
ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան։
41 Եւ 'ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնոսա
42 Յիսուս և ասէ, Զիա՞րդ թուի ձեզ վասն
43 Քրիստոսի, ո՞յր որդի է։ Ասեն ցնա, Դաւթի։
Ասէ ցնոսա †Յիսուս, Իսկ զիա՞րդ Դաւիթ
44 Հոգւովն կոչէ զնա Տէր՝ և ասէ, Ասաց Տէր
ցՏէր իմ, Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև ե֊
դից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։
45 Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որ֊
46 դի նորա իցէ։ Եւ ոչ ոք կարէր տալ նմա
պատասխանի բան մի, և ոչ իշխէր ոք յայնմ
օրէ հարցանել զնա և ոչինչ։

* Յոյնն՝ 'ի նոցանէ օրինական մի

† Ի Յոյնն չէ։





նական մը հարցուց, զանիկա փորձելով, ու
36 ըսաւ, Վարդապետ, ո՞ր պատուիրանքը մեծ
37 է օրէնքին մէջ։ Եւ Յիսուս ըսաւ անոր, Քու
Տէր Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ և
քու բոլոր անձովդ ու քու բոլոր միտքովդ.
38 Աս է առաջին ու մեծ պատուիրանքը։ (39) Ու
երկրորդը ասոր նման՝ Քու ընկերդ սիրես քու
40 անձիդ պէս։ Աս երկու պատուիրանքէս
կախուած են բոլոր օրէնքը և մարգարէները։
41 Ու երբոր փարիսեցիները ժողվուեցան, Յի֊
42 սուս հարցուց անոնց ու ըսաւ, Քրիստոսի
վրայով ի՞նչ կարծիք ունիք. անիկա որո՞ւ
43 որդին է։ Ըսին իրեն, Դաւիթին։ Ըսաւ անոնց
Յիսուս, Հապա ի՞նչպէս Դաւիթ Հոգիով զա֊
44 նիկա Տէր կը կոչէ ու կ'ըսէ, Տէրը իմ Տէրոջս
ըսաւ, Նստէ իմ աջ կողմս, մինչև որ քու թըշ֊
նամիներդ ոտքերուդ պատուանդան ընեմ։
45 Ուրեմն թէ որ Դաւիթ զանիկա Տէր կը կոչէ,
46 ի՞նչպէս անիկա անոր որդին կ'ըլլայ։ Եւ մէ֊
կը չէր կրնար անոր խօսք մը պատասխանել.
Ու ան օրէն ետև մէկը չէր համարձակեր
անոր բան մը հարցընելու։

## ԳԼ. ԻԳ

1 Քրիստոս խօսք կու տայ ժողովուրդներուն որ դպրաց ու փարիսեցւոց բարի վարդապետութեանը հետևին, և չէ թէ անոնց չար օրինակներուն. 5 Նոյնպէս ալ իր աշակերտները կը խրատէ որ զգուշ կենան անոնց փառասիրութենէն. 13 ութը

Բ Օր. Զ. 5։ Ժ. 12։ Լ. 6։ Ղուկ. Ժ. 27։
Ղև. ԺԹ. 18։ Գլ. ԺԹ. 19։ Մար. ԺԲ. 31։ Ղուկ. Ժ. 27։ Հռովմ. ԺԳ. 9։ Գաղ. Ե. 14։ Յակ. Բ. 8։
Գլ. Է. 12։ Ա Տիմ. Ա. 5։
Մար. ԺԲ. 35։ Ղուկ. Ի. 41։
Սաղ. ՃԺ. 1։ Գործ. Բ. 34։ Ա Կոր. ԺԵ. 25։ Եբր. Ա. 13։ Ժ. 12, 13։
Ղուկ. ԺԴ. 6։
Մար. ԺԲ. 34։ Ղուկ. Ի. 40։

## ԳԼ. ԻԳ

1 Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդ֊
2 սըն և ընդ աշակերտսն իւր, և ասէ, Յա֊
թոռն Մովսիսի նստան դպիրքն և փարիսե֊
3 ցիք։ Զամենայն ինչ զոր ասիցեն ձեզ, արա֊
րէք և պահեցէք, բայց ըստ գործոցն նոցա
4 մի առնէք, զի ասեն և ոչ առնեն։ կապեն
բեռինս ծանունս և դժուարակիրս, և դնեն
'ի վերայ ուսոց մարդկան, և մատամբ իւ֊
5 րեանց ոչ կամին շարժել զնոսա։ Եւ զամե֊
նայն զգործս իւրեանց առնեն 'ի ցոյցս մարդ֊
կան․ լայնեն զգրապանակս իւրեանց, և եր֊
6 կայնեն զքղանցս հանդերձից իւրեանց։ Սի֊
րեն զյառաջագահս յընթրիս, և զնախա֊
թոռս 'ի ժողովուրդս, և զողջոյնս 'ի հրա֊
7 պարակս, Եւ կոչել 'ի մարդկանէ Ռաբբի,
8 Ռաբբի։ Բայց դուք մի *զոք կոչէք Վարդա֊
պետ," զի մի է ձեր ուսուցիչ․ և ամենեքին
9 դուք եղբարք էք։ Եւ Հայր մի կոչէք ձեզ
յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ յերկինս է։
10 Եւ մի կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր
11 †Քրիստոս է։" Եւ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր
12 սպասաւոր։ Որ բարձրացուցանէ զանձն՝ խո֊

* Յոյնն՝ կոչիցիք Ռաբբի,

† Յոյնն՝ մի է Քրիստոս։



*անգամ վայ կու տայ անոնց կեղծաւորութեանը և կուրութեանը․ 34 ու Երուսաղէմի կործանումը կը նախաձայնէ։*

1 Անատենը Յիսուս խօսեցաւ ժողովուրդնե֊
2 րուն և իր աշակերտներուն ու ըսաւ, "[ա]Մով֊
սէսին աթոռը դպիրները և փարիսեցիները
3 նստած են․ Ուրեմն ինչ որ ձեզի կ'ըսեն՝ որ
պահէք, պահեցէք ու ըրէք, բայց անոնց
գործքերուն պէս մի ընէք, ինչու որ [բ]կ'ըսեն
4 ու չեն ըներ։ Քանզի [գ]ծանր և տանելու դը֊
ժուար բեռներ կը կապեն ու կը դնեն մար֊
դոց ուսերուն վրայ, և իրենց մատովը չեն
5 ուզեր զանոնք շարժել։ Եւ [դ]իրենց ամէն գործ֊
քերը մարդոց երևնալու համար կ'ընեն․ [ե]կը
լայնցընեն իրենց գրապանակները ու կ'երկըն֊
ցընեն իրենց հանդերձներուն քղանցքները․
6 [զ]Ընթրիքներու մէջ առաջին բազմոցները կը
սիրեն, և ժողովարաններուն մէջ՝ առաջին ա֊
թոռները, ու շուկաներուն մէջ՝ բարևները,
7 Եւ մարդոցմէ Ռաբբի Ռաբբի կոչուիլ։ (8) [է]Բայց
դուք Ռաբբի մի կոչուիք, ինչու որ ձեր Ու֊
սուցիչը մէկ մըն է՝ այսինքն Քրիստոս, և
9 դուք ամէնքդ եղբայր էք։ Ու երկրի վրայ
[ը]մէկը ձեզի Հայր մի կոչէք, ինչու որ ձեր Հայ֊
10 րը մէկ մըն է՝ որ երկինքն է։ Եւ դուք ու֊
սուցիչներ մի կոչուիք, ինչու որ ձեր Ուսուցի֊
11 չը մէկ մըն է՝ այսինքն Քրիստոս։ Եւ [թ]ձեր
մէջէն մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ։
12 [ժ]Ով որ իր անձը կը բարձրացընէ՝ պիտի խո֊

ա Նեեմ. Ը. 4, 8։ Մաղ. բ. 7։ Մար. ժբ. 38։ Ղուկ. ի. 45։
բ Հռովմ. բ. 19, 20։
գ Ղուկ. ժա. 46։ Գործ. ժե. 10։ Գաղ. զ. 13։
դ Գլ. Զ. 1, 2, 5, 16։
ե Թուոց. ժե. 38։ բ Օր. զ. 8։ իբ. 12։ Առակ. գ. 3։
զ Մար. ժբ. 38, 39։ Ղուկ. ժա. 43։ ի. 46։ գ Յովհ. 9։
է Յակ. գ. 1։ Տես բ Կոր. ա. 24։ ա Պետ. ե. 3։
ը Մաղ. ա. 6։
թ Գլ. ի. 26, 27։
ժ Յոբ. իբ. 29։ Առակ. ժե. 33։ ԻԹ. 23։ Ղուկ. ժդ. 11։ ժը. 14։ Յակ. դ. 6։ ա Պետ. ե. 5։

նարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝
բարձրասցի։
13 Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ-
ծաւորաց, զի փակէք զարքայութիւն եր-
կնից առաջի մարդկան. դուք ոչ մտա-
նէք, և որոց մտանենն՝ չտայք թոյլ մտա-
14 նել։ Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղ-
ծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց, պատ-
ճառանօք երկարէք զաղօթս, վասն զի աւելի
15 դատաստան ընդունիցիք։ Վայ ձեզ դպրաց
և փարիսեցւոց կեղծաւորաց, զի յածիք ընդ
ծով և ընդ ցամաք առնել եկամուտ մի. և
յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենի
16 կրկին ևս քան զձեզ։ Վայ ձեզ, առաջ-
նորդք կոյրք, զի ասէք, Որ երդնու 'ի տա-
ճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ 'ի
17 տաճարին է՝ արժան է։ Մորոսք և կոյրք,
զի՞նչ մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն որ սըր-
18 բէ զոսկին։ Եւ որ երդնու 'ի սեղանն՝ չէ
ինչ, բայց որ երդնու 'ի պատարագն որ 'ի
19 վերայ նորա է՝ արժան է։ Ցիմարք և կոյրք,
զի՞նչ մեծ է, պատարա՞գն եթէ սեղանն որ
20 սրբէ զպատարագն։ Իսկ արդ որ երդուաւ
'ի սեղանն, երդնու 'ի նա և յամենայն որ
21 'ի վերայ նորա է. Եւ որ երդուաւ 'ի տա-
ճարն, երդնու 'ի նա և 'ի բնակիչն նորա.
22 Եւ որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն



նարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցընէ՝
պիտի բարձրանայ։
13 Բայց [է]վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու
փարիսեցիներ, որ երկնից թագաւորութիւնը
մարդոց առջևը կը գոցէք. քանզի դուք չէք
մտներ, և մտնողներն ալ չէք թողուր որ մըտ-
14 նեն։ Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փա-
րիսեցիներ, [ը]որ որբևարիներուն տուները կ'ու-
տէք, ու ձևուրոց երևնալու համար աղօթքը
կ'երկընցընէք. անոր համար աւելի դատա-
15 պարտութիւն պիտի ընդունիք։ Վայ ձեզի,
կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ, որ
ծով ու ցամաք կը պտըտիք մէկը նորահաւատ
ընելու, ու երբոր ըլլայ, զանիկա ձեզմէ եր-
16 կու անգամ աւելի գեհենի որդի կ'ընէք։ Վայ
ձեզի, [թ]կոյր առաջնորդներ, որ կ'ըսէք թէ
[ժ]Ով որ տաճարին վրայ երդում ընէ՝ բան մը
չէ, բայց ով որ տաճարին մէջի ոսկիին վրայ
17 երդում ընէ՝ պարտաւոր կ'ըլլայ։ Ով յիմար-
ներ ու կոյրեր, ո՞ր մեծ է՝ ոսկի՞ն [ժա]եթէ տա-
18 ճարը որ կը սրբացընէ ոսկին։ Եւ թէ՝ Ով
որ սեղանին վրայ երդում ընէ՝ բան մը չէ,
բայց ով որ սեղանին վրայի պատարագին վը-
19 րայ երդում ընէ՝ պարտաւոր կ'ըլլայ։ Յիմար-
ներ ու կոյրեր, ո՞ր մեծ է՝ պատարա՞գը [ժբ]եթէ
20 սեղանը որ կը սրբացընէ պատարագը։ Ուս-
տի ով որ սեղանին վրայ երդում ընէ, եր-
դում կ'ընէ անոր վրայ՝ և անոր վրայի ամէն
21 բաներուն վրայ. Եւ ով որ տաճարին վրայ
երդում ընէ, երդում կ'ընէ անոր վրայ՝ և
22 [ժգ]անոր մէջ բնակողին վրայ. Եւ ով որ երկ-

է Ղուկ. ժա. 52։
ը Մար. ժբ. 40։ Ղուկ. ի. 47։ բ Տիմ. գ. 6։ Տիտ. ա. 11։
թ Գլ. ժե. 14։ Հռմ. 24։
ժ Գլ. ե. 33, 34։
ժա Ել. լ. 29։
ժբ Ել. իթ. 37։
ժգ գ Թագ. ը. 13։ բ Մն. զ. 2։ Սաղ. կզ. 8։ Հըր. 14։

Աստուծոյ՝ և յայն որ նստին 'ի վերայ նորա։
23 Վայ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւո֊
րաց, զի տասանորդէք զանանուխ և զսա֊
միթ և զչաման, և թողէք զծանր ծանր օրի֊
նացն, զդատաստան և զողորմութիւն և զհա֊
ւատս. զայս արժան էր առնել և զայն չթո֊
24 ղուլ։ Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քա֊
25 մէք և զուղտս կլանէք։ Վայ ձեզ դպրաց
և փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զար֊
տաքին զբաժակին և զսկաւառակին, և 'ի ներ֊
քոյ լի են յափշտակութեամբ և *անխառնու֊
26 թեամբ։ Փարիսեցի կոյր, սրբեա նախ զներ֊
քին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի
27 և արտաքինն նոցա սուրբ։ Վայ ձեզ դպրաց
և փարիսեցւոց կեղծաւորաց, զի նման էք
գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երեւին
գեղեցիկ, և 'ի ներքոյ լի են ոսկերօք մե֊
28 ռելոց և ամենայն պղծութեամբ։ Նոյնպէս
և դուք արտաքոյ երեւիք մարդկան ար֊
դարք, և 'ի ներքոյ լի էք կեղծաւորու֊
29 թեամբ և անօրէնութեամբ։ Վայ ձեզ դպ֊
րաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի շինէք
զշիրիմս մարգարէից և զարդարէք զգերեզ֊
30 մանս արդարոց։ Եւ ասէք, եթէ էաք յա֊
ւուրս հարցն մերոց, ոչ հաղորդ էաք արեան
31 մարգարէիցն։ Ապա ուրեմն վկայէք զանձանց,

* Ոմանք՝ անիրաւութեամբ։



նից վրայ երդում ընէ, երդում կ'ընէ [ղ]Աս֊
տուծոյ աթոռին վրայ՝ և անոր վրան նստո֊
23 ղին վրայ։ Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ
ու փարիսեցիներ, [ճ]որ անանուխին ու սամի֊
թին և չամանին տասանորդը կը վճարէք,
ու [մ]կը ձգէք օրէնքին ծանր ծանր բաները՝
դատաստանը և ողորմութիւնը ու հաւատքը.
24 ասոնք պէտք էր ընել, և անոնք չձգել։ Կոյր
առաջնորդներ, որ մժղուկը կը քամէք և
25 ուղտը կը կլլէք։ Վայ ձեզի, կեղծաւոր դը֊
պիրներ ու փարիսեցիներ, որ [յ]դաւաթին ու
պնակին դուրսի կողմը կը մաքրէք, ու ներ֊
սէն յափշտակութեամբ և *անիրաւութեամբ
26 լեցուն են։ Կոյր փարիսեցի, առաջ դաւա֊
թին ու պնակին ներսի կողմը մաքրէ, որ ա֊
27 նոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ։ Վայ
ձեզի, կեղծաւոր դպիրներ ու փարիսեցիներ,
[ն]որ կը նմանիք ծեփած գերեզմաններու, ո֊
րոնք դուրսէն գեղեցիկ կ'երեւնան, և ներսէն
մեռելներու ոսկորներով և ամէն կերպ պղծու֊
28 թիւնով լեցուն են։ Նոյնպէս ալ դուք դուր֊
սէն մարդոց արդար կ'երեւնաք, ու ներսէն
կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ լեցուն
29 էք։ [շ]Վայ ձեզի, կեղծաւոր դպիրներ ու
փարիսեցիներ, որ մարգարէներուն տապան֊
ները կը շինէք, և արդարներուն գերեզման֊
30 ները կը զարդարէք, Ու կ'ըսէք, Թէ որ մեր
հայրերուն օրերը ըլլայինք, անոնց հետ մար֊
գարէներուն արեանը մասնակից չէինք ըլլար։
31 Ուրեմն դուք ձեր վրայ կը վկայէք թէ [ո]անոնց

ղ Գւլ. ե. 34։ Սաղ. ժա. 4։ Գոր. է. 49։
ճ Ղուկ. ժա. 42։
մ ա Թագ. ժե. 22։ Ովս. զ. 6։ Միք. զ. 8։ Գւլ. թ. 13։ ժբ. 7։
յ Մար. է. 4։ Ղուկ. ժա. 39։
* Ոմանք՝ անբարեխառնութեամբ
ն Ղուկ. ժա. 44։ Գոր. իգ. 3։
շ Ղուկ. ժա. 47։
ո Գոր. է. 51 և 52։ ա Թես. բ. 15։

եթէ որդիք էք այնոցիկ որ կոտորեցին զմար-
32 գարէսն։ Եւ դուք լցէք զչափ հարցն ձե-
33 րոց։ Օձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնու-
34 ցուք ՚ի դատաստանէ գեհենին։ Վասն այ-
դորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մար-
գարէս և իմաստունս և դպիրս, և ՚ի նոցա-
նէ սպանանիցէք և ՚ի խաչ հանիցէք, և ՚ի
նոցանէ տանջիցէք ՚ի ժողովուրդս ձեր, և հա-
35 լածիցէք ՚ի քաղաքէ ՚ի քաղաք։ Որպէս զի
եկեսցէ ՚ի վերայ ձեր ամենայն արիւն ար-
դար հեղեալ յերկրի, յարենէն Աբելի արդա-
րոյ մինչև ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բա-
րաքեայ՝ զոր սպանիք ընդ մէջ տաճարին և
36 սեղանոյ։ Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամե-
37 նայն ՚ի վերայ ազգիս այսորիկ։ Երուսաղէմ,
Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն և
քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ,
քանի՞ցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս
քո՝ զոր օրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ
38 թևովք, և ոչ կամեցարուք։ Ահա թողեալ
39 լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։ Բայց ասեմ
ձեզ թէ Ոչ ևս տեսանիցէք զիս յայսմ հե-
տէ, մինչև ասիցէք, Օրհնեալ եկեալ յա-
նուն Տեառն։



զաւակներն էք՝ որ մարգարէները կը սպան-
32 նէին ։ Ուրեմն դուք ալ ձեր հայրերուն չափը
33 լեցուցէք ։ Օձեր՝ իժերու ծնունդներ, ի՞նչ-
պէս պիտի փախչիք գեհենին դատապարտու-
34 թենէն ։ Ասոր համար ահա ես կը խրկեմ
ձեզի մարգարէներ և իմաստուններ ու դը-
պիրներ, և անոնցմէ մէկ քանիները պիտի սպան-
նէք ու խաչը հանէք, և մէկ քանիները ձեր
ժողովարաններուն մէջը պիտի ծեծէք, ու
35 քաղաքէ քաղաք հալածէք. Որպէս զի երկ-
րի վրայ թափուած բոլոր արդար արիւնը
ձեր վրայ գայ՝ արդար Աբելին արիւնէն մին-
չև Բարաքիայի որդւոյն Զաքարիային ա-
րիւնը, որ տաճարին ու սեղանին մէջտեղը
36 սպաննեցիք ։ Ճշմարիտ կ՚ըսեմ ձեզի, Աս ա-
մէն բաները պիտի գան աս ազգիս վրայ ։
37 Ո՛վ Երուսաղէմ՝ Երուսաղէմ, որ մարգա-
րէները կը սպաննէիր, ու քեզի խրկուածները
կը քարկոծէիր, քանի անգամ քու տղաք-
ները ժողվել ուզեցի՝ ինչպէս որ հաւը իր ձա-
գերը թևերուն տակը կը ժողվէ, և դուք չու-
38 զեցիք ։ Ահա ձեր տունը ձեզի աւերակ պի-
39 տի մնայ ։ Ինչու որ ձեզի կ՚ըսեմ որ ալ ասկէ
ետև պիտի չտեսնէք զիս, մինչև որ ըսէք,
Օրհնեալ է ան որ Տէրոջը անունովը կու գայ ։

## ԳԼ. ԻԴ

1 Քրիստոս կը նախաձայնէ տաճարին կործանումը, 3 անկէ ա-ռաջ հանելու մեծ թշուառութիւնները, 29 և իր գալուստ-

ն Ծն. ժե. 16 ։ ա Թես. բ. 16 ։
ղ Գլ. գ. 7 ։ ժբ. 34 ։
չ Գլ. իա. 34. 35 ։ Ղուկ. ժա. 49 ։
ռ Գոր. է. 40 ։ է. 57, 58 ։ իբ. 19 ։

ս Գլ. ժ. 17 ։ բ Կոր. ժա. 24, 25 ։
վ Յայտ. ժբ. 24 ։
փ Ծն. դ. 8 ։ ա Յովհ. գ. 12 ։
ր բ Մն. իդ. 20, 21 ։
ց Ղուկ. ժգ. 34 ։

ւ բ Մն. իդ. 21 ։
ք բ Օր. լբ. 11, 12 ։
+ Սաղ. ժէ. 8 ։ ղա. 4 ։
օ Սաղ. ճժը. 26 ։ Գլ. իա. 9 ։

—

## ԳԼ. ԻԴ

1 Եւ ելեալ արտաքս Յիսուս 'ի տաճարէն՝ գը-
նայր . և մատեան աշակերտքն ցուցանել նմա
2 զշինուածս տաճարին ։ Եւ *Նա պատասխա-
նի ետ և" ասէ ցնոսա , Տեսանէ՞ք զայդ ա-
մենայն , ամէն ասեմ ձեզ , ոչ մնասցէ այդր
3 քար 'ի քարի վերայ որ ոչ քակտեսցի ։ Եւ
մինչդեռ նստէր 'ի լերինն Ձիթենեաց , մա-
տեան առ նա աշակերտքն առանձինն և ա-
սեն , Ասա մեզ , ե՞րբ լինիցի այդ , և կամ
զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն և վախ-
4 ճանի աշխարհիս ։ Պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնոսա , Զգոյշ լերուք , գուցէ ոք
5 զձեզ խաբիցէ . Զի բազումք գայցեն յանուն
իմ և ասիցեն թէ Ես եմ Քրիստոսն , և զբա-
6 զումս մոլորեցուցանիցեն ։ Լսելոց էք պատե-
րազմունս և համբաւս պատերազմաց . զգոյշ
լերուք՝ մի խռովեսջիք , զի պարտ է լինել
7 այնմ ամենայնի , այլ չեւ է կատարած ։ Յա-
րիցէ ազգ յազգի վերայ , և թագաւորու-
թիւն 'ի թագաւորութեան վերայ , և եղի-
ցին սովք և սրածութիւնք և սասանութիւնք
8 'ի տեղիս տեղիս ։ Սակայն և այն ամենայն
9 սկիզբն է երկանց ։ Յայնժամ մատնեսցեն ըզ-

* Յոյնն՝ Յիսուս

86 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

տանի գալուն նշանները ։ 36 Եւ այն օրը ու ժամը մէկի ան-
ծանօթ ըլլալուն համար . 42 կը պատուիրէ որ արթուն մնանք
ան բարի ծառային պէս՝ որ ամէն վայրկեան իր տիրոջը գա-
լուն կը սպասէ ։

1 Եւ [ա]Յիսուս տաճարէն դուրս ելլելով՝ կ'եր-
թար , ու աշակերտները անոր քովը գացին՝
2 տաճարին շէնքերը իրեն ցուցընելու ։ Եւ Յի-
սուս անոնց ըսաւ , Զէ՞ք տեսներ ատ ամէն
բաները . ճշմարիտ կ'ըսեմ ձեզի , [բ]պիտի չմնայ
հոս քար քարի վրայ՝ որ չքակուի ։
3 Ու երբոր անիկա Ձիթենեաց լեռը նստեր
էր , [գ]աշակերտները իրեն եկան առանձին ու
ըսին , [դ]Ըսէ մեզի՝ ե՞րբ պիտի ըլլան ատ բա-
ները . և քու գալստեանդ ու աշխարհիս վեր-
4 ջին նշանը ի՞նչ պիտի ըլլայ ։ Եւ Յիսուս պա-
տասխան տուաւ ու ըսաւ անոնց , [ե]Զգոյշ կե-
5 ցէք՝ չըլլայ որ մէկը ձեզ խաբէ . ինչու որ
[զ]շատերը պիտի գան իմ անունովս ու ըսեն թէ
Ես եմ Քրիստոսը , ու [է]շատերը պիտի մոլորցը-
6 նեն ։ Եւ պիտի լսէք պատերազմներ ու պատե-
րազմներու լուրեր . զգոյշ կեցէք որ չխռովիք ,
ինչու որ այն ամէն բաները պէտք է որ ըլլան ,
7 բայց դեռ վերջը չէ ։ Վասն զի [ը]ազգ ազգի
վրայ պիտի ելլէ , ու թագաւորութիւն՝ թա-
գաւորութեան վրայ , և տեղ տեղ սովեր ու
մահտարաժամներ և երկրաշարժութիւններ
8 պիտի ըլլան ։ Բայց ասոնք ամէնը ցաւերուն
9 սկիզբն են ։ [թ]Անատենը ձեզ նեղութեան պիտի

ա Մար. ժգ. 1 ։ Ղուկ. իա. 5 ։
բ Գ Թագ. Թ. 7 ։ Երեմ. իզ. 18 ։ Միք. Գ. 12 ։ Ղուկ. ժթ. 44 ։
գ Մար. ժգ. 3 ։
դ Ա Թես. ե. 1 ։
ե Եփես. ե. 6 ։ Կող. բ. 8 , 18 ։ Բ Թես. բ. 3 ։ Ա Յովհ. դ. 1 ։
զ Երեմ. ժդ. 14 ։ իգ. 21 , 25 ։ Հմր. 24 ։ Յովհ. ե. 43 ։
է Հմր. 11 ։
ը Բ Մն. ժե. 6 ։ Եսա. ժթ. 2 ։ Անգ. բ. 22 ։ Զաք. ժդ. 13 ։
թ Գլ. ժ. 17 ։ Մար. ժգ. 9 ։ Ղուկ. իա. 12 ։ Յովհ. ժե. 20 ։ ժզ. 2 ։ Գոր. դ. 2 , 3 ։ է. 58 ։ ժբ. 1 ։ Ա Պետ. դ. 16 ։ Յայտ. բ. 10 , 13 ։

ձեզ 'ի նեղութիւնս, և սպանանիցեն զձեզ.
և եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն
10 անուան իմոյ։ Եւ յայնժամ գայթակղեսցին
բազումք, և զմիմեանս մատնեսցեն և ատե-
11 ցեն զմիմեանս։ Եւ բազում սուտ մարգարէք
12 յարիցեն և զբազումս մոլորեցուսցեն։ Եւ
վասն բազմանալոյ անօրէնութեան ցամաքես-
13 ցի սէր բազմաց։ Բայց որ համբերեսցէ 'ի
14 սպառ, նա կեցցէ։ Եւ քարոզեսցի աւետա-
րանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝
'ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ա-
15 պա եկեսցէ կատարած։ Արդ յորժամ տե-
սանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասա-
ցեալն է 'ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի
կայցէ 'ի տեղւոջն սրբութեան. որ ընթեռ-
16 նուն 'ի միտ առցէ։ Յայնժամ որ 'ի Հրէաս-
17 տանի իցեն՝ փախիցեն 'ի լերինս։ Եւ որ 'ի
տանիս կայցէ՝ մի իջցէ առնուլ ինչ 'ի տա-
18 նէ իւրմէ. Եւ որ յանդի իցէ՝ մի դարձցի
19 յետս՝ առնուլ զձորձս իւր։ Բայց վայ իցէ
20 յղեաց և ստնտուաց յաւուրսն յայնոսիկ։ Յա-
ղօթս կացէք, զի մի լինիցի փախուստն ձեր
21 ձմերայնի և մի 'ի շաբաթու։ Զի եղիցի յայն-
ժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ 'ի
սկզբանէ արարածոց աշխարհի մինչեւ ցայ-
22 ժմ, և ոչ այլ լիցի։ Եւ եթէ ոչ կարճէին
աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մար-



մատնեն և ձեզ պիտի սպաննեն, ու իմ անուա-
նըս համար ամէն ազգերուն ատելի պիտի
10 ըլլաք։ Եւ անատենը շատերը [ժ]պիտի գայ-
թակղին, ու մէկզմէկ պիտի մատնեն և մէկ-
11 զմէկ պիտի ատեն։ Եւ [ի]շատ սուտ մարգարէ-
ներ պիտի ելլեն ու [լ]շատերը պիտի մոլորցը-
12 նեն։ Եւ անօրէնութիւնը շատնալուն համար
13 շատերուն սէրը պիտի պաղի։ [խ]Բայց ով որ
մինչև վերջը համբերէ, անիկա պիտի ապրի։
14 Եւ [ծ]արքայութեան աս աւետարանը [կ]բոլան-
դակ աշխարհի մէջ պիտի քարոզուի՝ բոլոր
ազգերուն վկայութիւն ըլլալու, և անկէ ետև
վերջը պիտի գայ։
15 [հ]Ուստի երբոր տեսնէք աւերմունքին պըղ-
ծութիւնը՝ որ [ձ]Դանիէլ մարգարէին ձեռքովը
ըսուած է, թէ սուրբ տեղը կը կենայ. (ով որ
16 կարդայ՝ թող հասկընայ.) Անատենը [ղ]Հրէաս-
17 տանի մէջ եղողները լեռները թող փախչին. Եւ
ան որ տանիքին վրայ է՝ թող չիջնէ իր տու-
18 նէն բան մը առնելու. Եւ ան որ արտին մէջն
է՝ թող ետ չդառնայ իր հանդերձները առնե-
19 լու։ Բայց [ճ]վայ ան օրերը յղի եղողներուն ու
20 ծիծ տուողներուն։ Եւ աղօթք ըրէք որ ձեր
փախչիլը ձմեռը չըլլայ, ոչ ալ շաբաթ օրը.
21 Քանզի [մ]անատենը անանկ մեծ նեղութիւն
պիտի ըլլայ, որուն նմանը աշխարհի սկիզբէն
22 մինչև հիմա եղած չէ, ոչ ալ պիտի ըլլայ։ Եւ
թէ որ ան օրերը չքիչնային, բնաւ մէկ մար-

ժ Գղ. ժա. 6: ժդ. 57: բ Տիմ. ա. 15: դ. 10, 16:
ի Գղ. է. 15: Գոր. ի. 29: բ Պետ. բ. 1:
լ ա Տիմ. դ. 1: Հռմ. 5, 24:
խ Գղ. ժ. 22: Մար. ժգ. 13: Եբր. գ. 6, 14: Յայտ. բ. 10:
ծ Գղ. դ. 23: թ. 35:
կ Հռովմ. ժ. 18: Կող. ա. 6, 23:
հ Մար. ժգ. 14: Ղուկ. իա. 20:
ձ Դան. թ. 27: ժբ. 11:
ղ Դան. թ. 23, 25:
ճ Ղուկ. իզ. 29:
մ Դան. թ. 26: ժբ. 1: Յովէլ. բ. 2:

մին․ բայց վասն ընտրելոցն կարճեսցին ա֊
23 ւուրքն այնոքիկ։ Յայնժամ թէ ոք ասիցէ
ձեզ, Ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ,
24 մի հաւատայցէք։ Զի յարիցեն սուտ քրիս֊
տոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս
մեծամեծս և արուեստս, մինչեւ մոլորեցու֊
ցանել, թէ հնար ինչ իցէ, և զընտրեալսն։
25 Ահա յառաջագոյն ասացի ձեզ։ (26) Ապա ե֊
թէ ասիցեն ձեզ, Ահաւանիկ յանապատի է,
մի ելանիցէք, և թէ՝ Ահա՛ ՚ի շտեմարանս է,
27 մի հաւատայցէք։ Զի որպէս փայլակն որ ե֊
լանէ յարեւելից և երեւի մինչեւ յարեւ֊
մուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մար֊
28 դոյ։ Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին
29 արծուիք։ Վաղվաղակի յետ նեղութեան ա֊
ւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, և
լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկ֊
ցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժես֊
30 ցին։ Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մար֊
դոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն
*ազգք․ և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ
՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փա֊
31 ռօք բազմօք։ Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր

* Յոյնն՝ ազգք երկրի



մին մը պիտի չազատէր․ բայց ընտրեալներուն
23 համար այն օրերը պիտի քիչնան։ Անատենը
թէ որ մէկը ձեզի ըսէ թէ Ահա հոս է Քրիս֊
24 տոսը կամ հոն, մի հաւատաք․ ինչու որ սուտ
քրիստոսներ և սուտ մարգարէներ պիտի ել֊
լեն, ու մեծ նշաններ և հրաշքներ պիտի
ցուցնեն, որ եթէ կարելի էր՝ ընտրեալներն
25 ալ մոլորցնեն։ Ահա ձեզի առաջուց ըսի։
26 Ուստի թէ որ ձեզի ըսեն թէ Ահա անապատին
մէջն է, մի ելլէք․ Եւ թէ՝ Ահա ներքին սենեակ֊
27 ներուն մէջն է, մի հաւատաք։ Վասն զի
ինչպէս որ փայլակը արեւելքէն կ'ելլէ ու մին֊
չեւ արեւմուտք կ'երեւնայ, անանկ պիտի ըլլայ
28 Որդւոյ մարդոյ գալուստը։ Քանզի ուր որ
մեռած մարմին կայ, հոն պիտի ժողվուին
արծիւները։
29 Եւ շուտ մը այն նեղութեան օրերէն ետե֊
ւ արեգակը պիտի խաւարի, ու լուսինը իր
լոյսը պիտի չտայ, և աստղերը երկինքէն պի֊
տի իյնան, ու երկնից զօրութիւնները պիտի
30 շարժին։ Եւ անատենը Որդւոյ մարդոյ նշա֊
նը պիտի երեւնայ երկնից մէջ, ու անատենը
երկրիս բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, ու
պիտի տեսնեն Որդին մարդոյ երկնից ամպե֊
րուն վրայ եկած զօրութիւնով ու մեծ փառ֊
31 քով։ Եւ անիկա իր հրեշտակները պիտի խըր֊

ա Եզ․ կե․ 8, 9։ Զաք․ ժգ․ 2, 3։
բ Մար․ ժգ․ 21։ Ղուկ․ ժէ․ 23։ իա․ 8։
գ բ Օր․ ժգ․ 1։ Հմր․ 5, 11։ բ Թես․ բ․ 9, 10, 11։ Յայտ․ ժգ․ 13։
դ Յովհ․ զ․ 37։ ժ․ 28, 29։ Հռովմ․ ը․ 28, 29, 30։ բ Տիմ․ բ․ 19։
ե Ղուկ․ ժէ․ 24։
զ Յոբ, լթ․ 30։ Ղուկ․ ժէ․ 37։
է Դան․ է․ 11, 12։
ը Եզ․ ժգ․ 10։ Եզեկ․ լբ․ 7։ Յովէլ․ բ․ 10, 31։ գ․ 15։ Ամովս․ ե․ 20։ ը․ 9։ Մար․ ժգ․ 24։ Ղուկ․ իա․ 25։ Գործ․ բ․ 20։ Յայտ․ զ․ 12։
թ Դան․ է․ 13։
ժ Զաք․ ժբ․ 12։
ի Գլ․ ժզ․ 27։ Մար․ ժգ․ 26։ Յայտ․ ա․ 7։
լ Գլ․ ժզ․ 41։ ա Կոր․ ժե․ 52։ ա Թես․ դ․ 15։

փողոյ մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալս նո-
րա ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մին-
32 չեւ ՚ի ծագս նոցա։ Ի թզենւոյ անտի ուսա-
րուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակ-
ղասցին և տերեւն ցցուսցի, գիտէք թէ մերձ
33 է ամառն։ Նոյնպէս և դուք յորժամ տեսա-
նիցէք զայս ամենայն, գիտասջի՛ք թէ մերձ
34 է ՚ի դուրս։ Ամէն ասեմ ձեզ եթէ՝ Ոչ անցցէ
35 ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի։ Եր-
կինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անց-
36 ցեն։ Բայց վասն աւուրն այնորիկ և ժամու
ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից՝ *և ոչ
37 Որդի՝ բայց միայն Հայր։" Այլ որպէս աւուր-
քն Նոյի, այնպէս եղիցի գալուստ Որդւոյ
38 մարդոյ։ Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ
քան զջրհեղեղն, ուտէին և ըմպէին, կանայս
առնէին և արանց լինէին, մինչեւ յօրն՝ յո-
39 րում եմուտ Նոյ ՚ի տապանն, Եւ ոչ գիտա-
ցին մինչեւ եկն ջրհեղեղն և եբարձ զամենե-
սին. այնպէս եղիցի և գալուստ Որդւոյ
40 մարդոյ։ Յայնժամ թէ լիցին երկու յագարա-
41 կի, մին առցի և միւսն թողցի։ Եւ եթէ
†երկու աղացեն ՚ի մի երկանս, մին առցի

* Յոմանսքն [illegible] բայց միայն Հայր իմ։
† Յոմն՝ երկու կանայք



կէ մեծաձայն փողով, ու պիտի ժողվեն իր
ընտրեալները չորս հովերէն՝ երկնից մէկ ծայ-
րէն մինչև միւս ծայրը։
32 ⁹Թզենիէն առակ մը սորվեցէք. որ երբ
անոր ոստերը կը կակուղնան ու տերևները կը
33 ցցուին, գիտէք թէ ամառը մօտ է։ Նոյնպէս
ալ դուք երբոր աս ամէն բաները տեսնէք,
34 գիտցէք –որ մօտ է դռներուն քովը։ Ճշմա-
րիտ կ՚ըսեմ ձեզի որ ‡աս ազգը պիտի չանց-
35 նի մինչև որ աս ամէն բաները ըլլան։ +Եր-
կինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօս-
քերս բնաւ պիտի չանցնին։
36 °Իսկ ան օրուան և ան ժամուն համար մէկը
չգիտեր, ոչ ալ երկնից *հրեշտակները, ֆհա-
37 պա միայն իմ Հայրս։ Բայց ինչպէս որ Նոյի
օրերը եղաւ, Որդւոյ մարդոյ գալուստն ալ
38 այնպէս պիտի ըլլայ։ աՔանզի ինչպէս էին
ան օրերը ջրհեղեղէն առաջ, կ՚ուտէին, կը
խմէին, կնիկ կ՚առնէին ու էրկան կու տային,
39 մինչև ան օրը որ Նոյ տապանը մտաւ; Եւ
չգիտցան՝ մինչև որ ջրհեղեղը եկաւ ու ամէնը
վերցուց. Որդւոյ մարդոյ գալուստն ալ այն-
40 պէս պիտի ըլլայ։ բԱնատենը թէ որ երկու հո-
գի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնը-
41 ուի ու միւսը ձգուի։ Եւ թէ որ երկու կնիկ մէկ
աղօրիքի մէջ աղալու վրայ գտնուին, մէկը
պիտի առնուի ու միւսը ձգուի։

⁹ Ղուկ. իա. 29։
– Յակ. ե. 9։
‡ Գլ. ժզ. 28։ իգ. 36։ Մար. ժգ. 30։ Ղուկ. իա. 32։
+ Սաղ. ճբ. 26։ Եսա. ծա. 6։ Երեմ. լա. 35, 36։ Գլ. ե. 18։
Մար. ժգ. 31։ Ղուկ. իա. 33։ Եբր. ա. 11։
° Մար. ժգ. 32։ Գործ. ա. 7։ ա Թես. ե. 2։ բ Պետ. գ. 10։
* Ոմանք՝ հրեշտակները, և ոչ Որդին,
ֆ Զաք. ժդ. 7։
ա Ծն. զ. 3, 4, 5։ է. 5։ Ղուկ. ժէ. 26։ ա Պետ. գ. 20։
բ Ղուկ. ժէ. 34, ևն։

42 և միւսն թողցի։ Արթուն կացէք, զի ոչ
43 գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։ Զայն
գիտասջիք եթէ գիտէր տանուտէրն՝ յորում
պահու գող գայ, հսկէր և ոչ տայր ական
44 հատանել զտան իւրոյ։ Վասն այսորիկ և
դուք եղերուք պատրաստք, զի յորում ժա-
մու ոչ ակն ունիցիք՝ գայ Որդի մարդոյ։
45 Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ և իմաս-
տուն, զոր կացոյց տէր իւր 'ի վերայ ծառա-
յից իւրոց՝ տալ նոցա կերակուր 'ի ժամու։
46 Երանի է ծառային այնմիկ, զոր եկեալ տէրն՝
47 գտանիցէ արարեալ այնպէս։ Ամէն ասեմ
ձեզ, զի 'ի վերայ ամենայն ընչից իւրոց կա-
48 ցուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն չար
49 'ի սրտի իւրում, Տէր իմ յամէ գալ. Եւ սկը-
սանիցի հարկանել զծառայակիցս իւր, ու-
50 տիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս։ Գայցէ տէր
ծառային այնորիկ յաւուր յորում ոչ ակն ու-
51 նիցի, և 'ի ժամու յորում ոչ գիտիցէ. Եւ
կտրեսցէ զնա ընդ մէջ, և զբաժին նորա ընդ
կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել
ատամանց։

## ԳԼ. ԻԵ

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից



42 Ուրեմն [ա]արթուն կեցէք, ինչու որ չէք գի-
43 տեր թէ ո՛ր ժամուն ձեր Տէրը կու գայ։ [բ]Բայց
աս գիտցէք, որ եթէ տանուտէրը գիտնար
թէ գիշերուան ո՛ր պահուն գողը կու գայ, ար-
թուն կը կենար և թող չէր տար որ իր տու-
44 նը ծակեն։ [գ]Անոր համար դուք ալ պատ-
րաստ կեցէք, քանզի Որդին մարդոյ կու գայ
անանկ ժամու մէջ՝ որ դուք չէք կարծեր։
45 [դ]Ուստի ո՞վ է ան հաւատարիմ ու իմաստուն
ծառան՝ որն որ իր տէրը իր ծառաներուն վը-
րայ դրաւ, որ ատենին անոնց կերակուր տայ։
46 [ե]Երանի է ան ծառային, որն որ իր տէրը ե-
47 կած ատենը անանկ ըրած պիտի գտնէ։ Ճըշ-
մարիտ կ'ըսեմ ձեզի [զ]որ իր բոլոր ունեցա-
48 ծին վրայ պիտի կեցընէ զանիկա։ Հապա թէ
որ ան չար ծառան իր սրտին մէջ ըսէ, Իմ
49 տէրս իր գալը կ'ուշացընէ. Եւ սկսի իր ծա-
ռայակիցները ծեծել, ու գինովներուն հետ
50 ուտել ու խմել, Ան ծառային տէրը պիտի
գայ անանկ մէկ օր մը՝ որ չսպասեր, և անանկ
51 մէկ ժամ մը՝ որ չգիտեր, Եւ զանիկա մէջ-
տեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը կեղ-
ծաւորներուն հետ պիտի դնէ. [է]Հոն պիտի
ըլլայ լալ ու ակռաներ կրճտել։

## ԳԼ. ԻԵ

1 Տասը կուսանաց առակը. 14 ու տաղանդներուն առակը. 31 Վերջին դատաստանին ստորագրութիւնը։

1 Անատենը երկնից թագաւորութիւնը պիտի

ա Գլ. իե. 13։ Մար. ժգ. 33, ևն։ Ղուկ. իա. 36։
բ Ղուկ. ժբ. 39։ Ա Թես. ե. 2։ Բ Պետ. գ. 10։ Յայտ. գ. 3։ ժզ. 15։
գ Գլ. իե. 13։ Ա Թես. ե. 6։
դ Ղուկ. ժբ. 42։ Գործ. ի. 28։ Ա Կոր. դ. 2։ Եբր. գ. 5։
ե Յայտ. ժզ. 15։
զ Գլ. իե. 21, 23։ Ղուկ. ժբ. 29։
է Գլ. ը. 12։ իե. 30։

տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս
իւրեանց ելին ընդ առաջ փեսայի *և հար-
2 սին: Հինգն 'ի նոցանէ յիմարք էին, և հինգն
3 իմաստունք: Յիմարքն առին զլապտերսն, և
4 ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին: Իսկ իմաս-
տունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս
5 իւրեանց: Եւ 'ի յամել փեսային՝ նիրհեցին
6 ամենեքեան և 'ի քուն մտին: Եւ 'ի մէջ
գիշերի եղեւ բարբառ, Ահա փեսայ գայ՝
7 ելէք ընդ առաջ նորա: Յայնժամ յարեան
ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս
8 իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն, Տուք
մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապ-
9 տերք մեր: Պատասխանի ետուն իմաստուն-
քն և ասեն, Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բա-
ւական, այլ երթայք 'ի վաճառականս և գը-
10 նեսջիք ձեզ: Իբրեւ նոքա գնացին գնել՝
եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա
11 'ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն: Յե-
տոյ գան և այլ կուսանքն և ասեն, Տէր,
12 Տէր, բաց մեզ: Նա պատասխանի ետ և ա-
սէ, Ամէն ասեմ ձեզ թէ Ոչ գիտեմ զձեզ:
13 Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն և ոչ
14 զժամն: Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշ-
խարհ, կոչեաց զծառայս իւր և ետ նոցա
15 զինչս իւր. Ումեմն ետ հինգ քանքար, և

* Ի Յոյնն չէ:



նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապ-
տերները առնելով՝ [ա]փեսան դիմաւորելու ե-
2 լան: [բ]Անոնցմէ հինգը իմաստուն էին, և հինգը
3 յիմար. Որ յիմարները առին իրենց լապտեր-
4 ները, ու հետերնին եղ չառին. Բայց իմաս-
տունները իրենց լապտերներուն հետ աման-
5 ներով եղ ալ առին: Եւ փեսան որ ուշացաւ,
6 [գ]ամէնն ալ թմրեցան ու քնացան: Եւ կէս գի-
շերին [դ]ձայն մը եղաւ, Ահա փեսան կու գայ.
7 զանիկա դիմաւորելու ելէք: Անատենը բոլոր
կոյսերը ելան ու [ե]իրենց լապտերները շտկե-
8 ցին: Եւ յիմարները ըսին իմաստուններուն,
Տուէք մեզի ձեր եղէն, ինչու որ մեր լապ-
9 տերները մարելու վրայ են: Պատասխան
տուին իմաստունները ու ըսին, Չըլլայ որ մեզի
ու ձեզի չբաւականանայ. այլ յաւէտ ծախող-
10 ներուն գացէք և գնեցէք ձեզի համար: Երբ-
որ անոնք գացին գնելու՝ փեսան եկաւ, ու
պատրաստ եղողները անոր հետ հարսնիքը
11 մտան, և [զ]դուռը գոցուեցաւ: Ետքը միւս
կոյսերը եկան ու ըսին, [է]Տէր, Տէր, բաց մեզի:
12 Բայց անիկա պատասխան տուաւ ու ըսաւ,
Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ [ը]Ես ձեզ չեմ ճանչ-
13 նար: [թ]Ուրեմն արթուն կեցէք, ինչու որ ոչ
օրը գիտէք և ոչ *ժամը:
14 Քանզի [ժ]ինչպէս օտար երկիր գացող մարդ-
մը կանչեց իր ծառաները, և իր ունեցածը
15 անոնց յանձնեց: Մէկուն տուաւ հինգ տա-

[ա] Եփես. ե. 29, 30: Յայտ. ժթ. 7: իա. 2, 9:
[բ] Գլ. ժգ. 47: իբ. 10:
[գ] ա Թես. ե. 6:
[դ] Գլ. իդ. 31: ա Թես. դ. 16:
[ե] Ղուկ. ժբ. 35:
[զ] Ղուկ. ժգ. 25:
[է] Գլ. է. 21, 22, 23:
[ը] Սաղ. ե. 5: Ամբ. ա. 13: Յովհ. թ. 31:
[թ] Գլ. իդ. 42, 44: Մար. ժգ. 33, 35: Ղուկ. իա. 36: ա Կոր. ժզ. 13: ա Թես. ե. 6: ա Պետ. ե. 8: Յայտ. ժզ. 15:
* Որ ժամը, որուն մէջ Որդին մարդոյ կու գայ:
[ժ] Ղուկ. ժթ. 12: Գլ. իա. 33:

ումեմն երկուս, ումեմն մի, իւրաքանչիւր
16 ըստ իւրում կարի, և գնաց։ Զօգաւ վաղ-
վաղակի որ առ զհինգն՝ գործեաց նոքօք և
17 շահեցաւ այլ ևս հինգ։ Նոյնպէս և որ զեր-
18 կուսն, շահեցաւ այլ ևս երկուս։ Եւ որ
զմին առ՝ գնաց, փորեաց զերկիր, և թա-
19 ղոյց զարծաթ տեառն իւրոյ։ Յետ բազում
ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ՝ և
20 առնէ համարս ՚ի մէջ նոցա։ Եւ մատուցեալ
որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ ևս
հինգ քանքար, և ասէ, Տէր, հինգ քանքար
ետուր ցիս, արդ աւասիկ հինգ այլ ևս
21 քանքար ՚ի վերայ շահեցայ։ Ասէ ցնա տէրն
իւր, Ագնիւ, ծառայ բարի և հաւատարիմ,
որովհետև ՚ի սակաւուդ հաւատարիմ ես,
՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ
22 յուրախութիւն տեառն քո։ Մատուցեալ և
որոյ զերկուս քանքարսն առեալ էր, և ասէ,
Տէր, երկուս քանքարս ետուր ցիս, աւա-
սիկ երկուս ևս այլ քանքարս զոր ՚ի վերայ
23 շահեցայ։ Ասէ ցնա տէրն իւր, Ագնիւ, ծա-
ռայ բարի և հաւատարիմ, որովհետև ՚ի
սակաւուդ հաւատարիմ ես, ՚ի վերայ բազ-
մաց կացուցից զքեզ, մուտ յուրախութիւն
24 տեառն քո։ Մատուցեալ և որոյ զմի քան-
քարն առեալ էր, և ասէ, Տէր, գիտէի զի
այր մի խիստ ես, հնձես զոր ոչ սերմանե-
25 ցեր, և ժողովես ուստի ոչ սփռեցեր. Եր-
կեայ, գնացի և թագուցի զքանքարն քո



տաղանդ, ու մէկուն՝ երկուք, և մէկուն՝ մէկ,
[ի] ամէն մէկուն իր կարողութեանը չափ, ու
16 անմիջապէս ճամբայ ելաւ։ Եւ ան որ հինգ
տաղանդը առած էր, գնաց անոնցմով գործ
տեսաւ, և ուրիշ հինգ տաղանդ շահեցաւ։
17 Նմանապէս ան որ երկուքը առած էր, ուրիշ
18 երկուք ալ շահեցաւ։ Իսկ ան որ մէկը առած
էր, գնաց գետինը փորեց, ու իր տիրոջը
19 ստակը պահեց։ Շատ ժամանակէ ետև ան
ծառաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հա-
20 շիւ ուզեց։ Եւ հինգ տաղանդը առնողը ե-
կաւ՝ ուրիշ հինգ տաղանդ ալ բերաւ, ու
ըսաւ, Տէր, հինգ տաղանդ յանձնեցիր ինծի,
ահա ուրիշ հինգ տաղանդ ալ անոնց վրայ
21 շահեցայ։ Ըսաւ անոր իր Տէրը, Ապրիս, բարի
ու հաւատարիմ ծառայ. դուն որ քիչ բանին
մէջ հաւատարիմ եղար, [լ] քեզ շատ բաներու
վրայ պիտի կեցընեմ. մտիր [խ] քու տիրոջդ ու-
22 րախութեանը մէջ։ Երկու տաղանդը առնողն
ալ եկաւ ու ըսաւ, Տէր, երկու տաղանդ
յանձնեցիր ինծի, ահա ուրիշ երկու տաղանդ
23 ալ անոնց վրայ շահեցայ։ Ըսաւ անոր իր Տէրը,
[ծ] Ապրիս, բարի ու հաւատարիմ ծառայ.
դուն որ քիչ բանին մէջ հաւատարիմ եղար,
քեզ շատ բաներու վրայ պիտի կեցընեմ. մը-
24 տիր քու տիրոջդ ուրախութեանը մէջ։ Մէկ
տաղանդը առնողն ալ եկաւ ու ըսաւ, Տէր,
գիտէի որ դուն խիստ մարդ մըն ես, չսեր-
մանած տեղէդ կը հնձես ու չցանած տեղէդ
25 կը ժողվես. Ուստի վախնալով՝ գացի քու տա-
ղանդդ գետնին տակը պահեցի. [illegible] ահա

ի Հռովմ. ժբ. 6։ ա Կոր. ժբ. 7, 11, 29։ Եփես. դ. 11։
լ Գլ. իդ. 47։ Հմր. 34, 46։ Ղուկ. ժբ. 44։ իբ. 29, 30։
խ Եբր. ժբ. 2։ բ Տիմ. բ. 12։ ա Պետ. ա. 8։
ծ Հմր. 21։

26 յերկրի․ արդ ահաւասիկ քոյդ ցքեզ։ Պատաս-
խանի ետ տէրն և ասէ ցնա, Ծառայ չար և
վատ, գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմա-
27 նեցի, և ժողովեմ ուստի ոչ սփռեցի․ Պարտ
էր քեզ արկանել զարծաթ իմ 'ի սեղանա-
ւորս, և եկեալ ես տոկոսօք պահանջէի
28 զիմն։ Արդ առէք 'ի դմանէ զքանքարդ,
և տուք այնմ որ ունիցի զտասն քանքարն։
29 Զի ամենայնի որ ունիցի՝ տացի և յաւելցի,
և որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի
30 'ի նմանէ։ Եւ զծառայդ անպիտան հանէք
'ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և
31 կրճել ատամանց։ Եւ յորժամ եկեսցէ Որդի
մարդոյ փառօք իւրովք և ամենայն հրեշ-
տակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փա-
32 ռաց իւրոց։ Եւ ժողովեսցին առաջի նորա
ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա 'ի մի-
մեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զօդիս
33 յայծեաց։ Եւ կացուսցէ զօդիսն ընդ
34 աջմէ իւրմէ՝ և զայծիսն 'ի ձախմէ։ Յայն-
ժամ ասասցէ Թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ
աջմէն իցեն, Եկայք, օրհնեալք Հօր իմոյ,
ժառանգեցէք զպատրաստեալ ձեր զարքա-
35 յութիւնն 'ի սկզբանէ աշխարհի։ Զի քաղ-
ցեայ՝ և ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ և



26 քուկդ քեզի։ Պատասխան տուաւ անոր տէրը
ու ըսաւ անոր, Չար և ծոյլ ծառայ, գիտէիր
որ չսերմանած տեղէս կը հնձեմ ու չցանած
27 տեղէս կը ժողվեմ․ Ուրեմն պէտք էր քեզի
որ իմ ստակս սեղանաւորներուն տայիր, որ
28 ես եկած ատենս շահովը առնէի իմս։ Արդ
առէք ատկէ տաղանդը, ու տասը տաղանդ
29 ունեցողին տուէք։ [կ]Ինչու որ ամէն ունեցո-
ղին պիտի տրուի, ու պիտի աւելնայ, և չու-
նեցողին ունեցածն ալ անկէ պիտի առնուի։
30 Եւ այս անպիտան ծառան [հ]դուրսի խաւարը
հանեցէք․ հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ
կրճտել։
31 Ու [ձ]երբոր Որդին մարդոյ իր փառքովը
գայ, և բոլոր †սուրբ հրեշտակները իր հե-
տը, անատենը իր փառաց աթոռը պիտի նըս-
32 տի․ Եւ [ղ]անոր առջևը պիտի ժողվուին բոլոր
ազգերը, ու [ճ]զանոնք իրարմէ պիտի զատէ,
ինչպէս որ հովիւ մը ոչխարները այծերէն կը
33 զատէ․ Եւ ոչխարները իր աջ կողմը պիտի
կայնեցընէ, ու այծերը՝ ձախ կողմը։
34 Անատենը Թագաւորը իր աջ կողմը եղող-
ներուն պիտի ըսէ, Եկէք, իմ Հօրս օրհնած-
ները, [մ]աշխարհի սկիզբէն ձեզի համար պատ-
րաստուած թագաւորութիւնը [յ]ժառանգե-
35 ցէք․ [ն]Ինչու որ անօթեցայ, և ինծի ուտելիք
տուիք․ ծարաւեցայ, ու ինծի խմցուցիք․

[կ] Գղ. ժգ. 12: Մար. դ. 25: Ղուկ. ը. 18: ժթ. 26: Յովհ. ժե. 2:
[հ] Գղ. ը. 12: իդ. 51:
[ձ] Զաք. ժդ. 5: Գղ. ժզ. 27: ժթ. 28: Մար. ը. 38: Գործ. ա. 11: ա Թես. դ. 15: բ Թես. ա. 7: Յուդ. 14: Յայտ. ա. 7:
† Ոմանք չունին
[ղ] Հռովմ. ժդ. 10: բ Կոր. ե. 10: Յայտ. ի. 12:
[ճ] Եզեկ. ի. 38: լդ. 17, 20: Գղ. ժգ. 49:
[մ] Գղ. ի. 23: Մար. ժ. 40: ա Կոր. բ. 9: Եբր. ժա. 16:
[յ] Հռովմ. ը. 17: ա Պետ. ա. 4, 9: գ. 9: Յայտ. իա. 7:
[ն] Եսա. ծը. 7: Եզեկ. ժը. 7: Յակ. ա. 27:

արբուցիք ինձ. օտար էի՝ և ժողովեցիք զիս.
36 Մերկ՝ և զգեցուցիք զիս. հիւանդ էի՝ և
տեսէք զիս. 'ի բանտի էի՝ և եկիք առ իս։
37 Յայնժամ պատասխանի տացեն նմա արդար-
քըն և ասասցեն, Տէր, ե՞րբ տեսաք զքեզ
քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ ծարաւի՝ և
38 արբուցաք. Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժո-
39 ղովեցաք, կամ մերկ՝ և զգեցուցաք։ Ե՞րբ
տեսաք զքեզ հիւանդ կամ 'ի բանտի՝ և ե-
40 կաք առ քեզ։ Պատասխանի տացէ թագա-
ւորն և ասասցէ ցնոսա, Ամէն ասեմ ձեզ,
Որովհետև արարէք միում յեղբարցս այսո-
41 ցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։ Յայնժամ ա-
սասցէ և ցայնոսիկ որ ընդ ահեկէն իցեն,
Երթայք յինէն, անիծեալք, 'ի հուրն յաւի-
տենական, որ պատրաստեալ է Սատանայի և
42 հրեշտակաց նորա։ Զի քաղցեայ՝ և ոչ ետուք
ինձ ուտել, ծարաւեցի՝ և ոչ արբուցիք զիս.
43 Օտար էի՝ և ոչ ժողովեցիք զիս, մերկ էի՝
և ոչ զգեցուցիք զիս, հիւանդ և 'ի բանտի՝
44 և ոչ տեսէք զիս։ Յայնժամ պատասխանի
տացեն և նոքա և ասասցեն, Տէր, ե՞րբ տե-
սաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ օտար
կամ մերկ կամ հիւանդ կամ 'ի բանտի, և
45 ոչ պաշտեցաք զքեզ։ Յայնժամ պատասխանի
տացէ նոցա և ասասցէ, Ամէն ասեմ ձեզ,



36 [ւ]օտարական էի, և զիս ներս առիք. [ռ]Մերկ
էի, և զիս հագուեցուցիք. հիւանդ էի, ու
ինծի տես եկաք. [ւ]բանտի մէջ էի, և ինծի
37 եկաք։ Անատենը արդարները անոր պատաս-
խան պիտի տան ու ըսեն, Տէր, ե՞րբ քեզ
անօթեցած տեսանք՝ ու կերակրեցինք, կամ
38 ծարուած՝ ու խմցուցինք. Ե՞րբ քեզ օտարա-
կան տեսանք՝ և ներս առինք, կամ մերկ՝
39 ու հագուեցուցինք. Ե՞րբ քեզ հիւանդ կամ
40 բանտի մէջ տեսանք, ու քեզի եկանք։ Եւ
թագաւորը պատասխան տալով պիտի ըսէ
անոնց, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, [դ]Որովհետև
աս իմ եղբայրներուս պզտիկներէն մէ-
կուն ըրիք, ինծի ըրիք։

41 Անատենը ձախ կողմի եղողներուն ալ պի-
տի ըսէ, [չ]Մէկդի գացէք ինծմէ, անիծեալ-
ներ, [ռ]յաւիտենական կրակին մէջը՝ որ պատ-
րաստուած է [ս]Սատանային ու իր հրեշտակ-
42 ներուն։ Ինչու որ անօթեցայ, և ինծի ուտե-
լիք չտուիք. ծարաւեցայ, ու ինծի չխմցու-
43 ցիք. Օտարական էի, և զիս ներս չառիք.
մերկ էի, և զիս չհագուեցուցիք. հիւանդ
44 ու բանտի մէջ էի, և ինծի տես չեկաք։ Ան-
ատենը անոնք ալ պատասխան պիտի *տան
ու ըսեն, Տէր, ե՞րբ տեսանք քեզ անօթե-
ցած՝ կամ ծարուած՝ կամ օտարական՝ կամ
մերկ՝ կամ հիւանդ՝ կամ բանտի մէջ, ու քե-
45 զի պաշտօնութիւն չըրինք։ Անատենը պա-
տասխան պիտի տայ անոնց ու ըսէ, Ճշմա-

ւ Եբր. ժգ. 2։ գ Յովհ. 5։
ռ Յակ. բ. 15, 16։
ւ բ Տիմ. ա. 16։
դ Առակ. ժդ. 31։ ժթ. 17։ Գլ. ժ. 42։ Մար. թ. 40։ Եբր. զ. 10։
չ Սաղ. զ. 8։ Գլ. է. 23։ Ղուկ. ժգ. 27։
ռ Գլ. ժգ. 40, 42։
ս բ Պետ. բ. 4։ Յուդ. 6։
* Ոմանք տան անոր

Որովհետեւ ոչ արարէք միում 'ի փոքրկան-
46 ցըս յայսցանէ՝ և ոչ ինձ արարէք։ Եւ երթի-
ցեն նոքա 'ի տանջանս յաւիտենականս, և
արդարքն 'ի կեանս յաւիտենականս։

## ԳԼ. ԻԶ

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զամե-
նայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր,
2 Գիտէք զի յետ երկուց աւուրց զատիկ լինի,
և Որդի մարդոյ մատնի 'ի խաչ ելանել։
3 Յայնժամ ժողովեցան քահանայապետքն և
դպիրքն և ծերք ժողովրդեանն 'ի սրահ քա-
հանայապետին՝ որում անուն էր Կայիափա.
4 Եւ արարին խորհուրդ զի նենգութեամբ
5 կալցին զՅիսուս և սպանցեն։ Բայց ասէին
թէ Մի 'ի տօնի աստ, զի մի խռովութիւն
6 լինիցի 'ի ժողովրդեանն։ Իբրեւ եղև Յիսուս
7 'ի Բեթանիա 'ի տուն Սիմոնի բորոտի, Մա-
տեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ
ծանրագնի, և թափեաց 'ի գլուխ նորա 'ի
8 բազմականին։ Իբրեւ տեսին աշակերտքն,
բարկացան և ասեն, Ընդէ՞ր է կորուստ այդ



րիս կ'ըսեմ ձեզի, [հ]Որովհետեւ ասոնց այն
պզտիկներէն մէկուն չըրիք, ինծի ալ չըրիք։
46 [փ]Եւ ասոնք պիտի երթան յաւիտենական
տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական
կեանքը։

## ԳԼ. ԻԶ

1 Իշխանները խորհուրդ կ'ընեն Քրիստոսի դէմ։ 6 Կնիկ մը եւղով կ'օծէ անոր գլուխը։ 14 Յուդա կը մատնէ զՔրիստոս։ 17 Քրիստոս կ'ուտէ զատիկը. 26 կը սահմանէ իր սուրբ ընթրիքը. 36 աղօթք կ'ընէ պարտէզին մէջ. 47 և մէկ համբուրով մը մատնուած՝ 57 Կայիափայի առջին կը տարուի։ 69 Պետրոս կ'ուրանայ զՔրիստոս։

1 Ու երբոր Յիսուս լմնցուց աս բոլոր խօսքե-
2 րը, ըսաւ իր աշակերտներուն, [ա]Գիտէք որ
երկու օրէն ետև զատիկ կ'ըլլայ, և Որդին
մարդոյ կը մատնուի խաչը ելլելու։
3 [բ]Անատենը քահանայապետները ու դպիր-
ները և ժողովուրդին ծերերը ժողվուեցան
քահանայապետին սրահը, որուն անունը Կա-
4 յիափա էր. Ու խորհուրդ ըրին որ նենգու-
5 թեամբ բռնեն Յիսուսը ու մեռցընեն։ Բայց
կ'ըսէին թէ Ոչ տօնին ատենը, որ ժողովուր-
դին մէջ խռովութիւն չըլլայ։
6 [գ]Ու երբոր Յիսուս [դ]Բեթանիա էր բորոտ
7 Սիմոնին տունը, կնիկ մը եկաւ անոր՝ որ ու-
նէր ծանրագին եղի շիշ մը, և թափեց անոր
գլխուն վրայ՝ երբոր անիկա սեղան նստած էր։
8 [ե]Եւ անոր աշակերտները տեսնելով դժուարե-
ցան՝ ու ըսին, Ինչո՞ւ աս կորուստը ըլլայ.

հ Առակ. ժդ. 31: ժէ. 5: Զաք. բ. 8: Գոր. Թ. 5:
փ Դան. ժբ. 2: Յովհ. ե. 29: Հռովմ. բ. 7, Ա:
ա Մար. ժդ. 1: Ղուկ. իբ. 1: Յովհ. ժգ. 1:
բ Սաղ. բ. 2: Յովհ. ժա. 47: Գոր. դ. 25, Ա:
գ Մար. ժդ. 3: Յովհ. ժա. 1, 2: ժբ. 3:
դ Գ.Լ. իա. 17:
ե Յովհ. ժբ. 4:

9 իւղոյդ ։ Զի մարթ էր վաճառել զդա մեծա-
10 գնի և տալ աղքատաց ։ Գիտաց Յիսուս և
ասէ ցնոսա , Զի՞ աշխատ առնէք զկինդ ,
11 գործ մի բարի գործեաց դա յիս ։ Յամենայն
ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք , բայց զիս
12 ոչ հանապազ ընդ ձեզ ունիք ։ Արկանել դո-
րա զիւղդ 'ի մարմին իմ՝ առ 'ի թաղելոյ
13 զիս նշանակեաց ։ Բայց ամէն ասեմ ձեզ, զի
ուր և քարոզեսցի աւետարանս այս ընդ ա-
մենայն աշխարհ՝ խօսեսցի և զոր արար դա
14 'ի յիշատակ դորա ։ Յայնժամ գնաց մի յեր-
կոտասանիցն անուանեալ Յուդա Սկարիով-
15 տացի առ քահանայապետսն , և ասէ , Զի՞նչ
կամիք տալ ինձ , և ես մատնեցից զնա ձեզ .
և նոքա *կշռեցին նմա երեսուն արծաթի ։
16 Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ զի մատնես-
17 ցէ զնա նոցա ։ Եւ յառաջնում աւուր բաղար-
ջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս
և ասեն , Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք
18 քեզ ուտել զզատիկն ։ Եւ նա ասէ ցնո-
սա , Երթայք 'ի քաղաքն առ այս ա-
նուն և ասացէք ցնա , Վարդապետ ասէ ,
ժամանակ իմ մերձեալ է , առ քեզ առնեմ
19 զզատիկն աշակերտօքս հանդերձ ։ Եւ արա-
րին աշակերտքն որպէս հրամայեաց նո-
ցա Յիսուս , և պատրաստեցին զզատիկն ։

* կամ՝ խոստացան

96 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

9 Քանզի ատ եղը կրնար սուղ գնով ծախուիլ ,
10 ու աղքատներուն տրուիլ ։ Եւ Յիսուս իմա-
նալով ըսաւ անոնց , ինչո՞ւ անհանգիստ կ'ը-
նէք կինը . քանզի անիկա բարի գործ մը
11 գործեց ինծի ։ [դ]Ինչու որ աղքատները ամէն
ատեն ձեր հետը ունիք , բայց [ե]զիս ամէն ա-
12 տեն չունիք ։ Վասն զի անիկա որ ատ եղը իմ
մարմինիս վրայ թափեց , իմ թաղմանս համար
13 ըրաւ ։ Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ բոլոր աշ-
խարհի մէջ՝ ուր որ աս աւետարանս քարոզուի,
ատոր ըրածն ալ պիտի խօսուի՝ իրեն յիշա-
տակ ըլլալու համար ։
14 [զ]Անատենը տասուերկուքէն մէկը՝ որ [է]Յու-
դա Իսկարիովտացի կ'ըսուէր , գնաց քահա-
15 նայապետներուն ու ըսաւ , [ը]Ի՞նչ կ'ուզէք ին-
ծի տալ , ու ես ձեզի մատնեմ զանիկա . և ա-
նոնք երեսուն [թ]կէս արծաթ *խոստացան անոր ։
16 Եւ անկէ ետև պատեհութիւն մը կը փնտռէր ,
որ զանիկա մատնէ անոնց ։
17 [ժ]Եւ բաղարջակերաց առջի օրը աշակերտնե-
րը Յիսուսի եկան ու անոր ըսին , Ո՞ւր կ'ու-
զես որ քեզի պատրաստենք՝ զատիկը ուտե-
18 լու համար ։ Եւ անիկա ըսաւ , Գացէք քա-
ղաքը այս ինչ մարդուն ու ըսէք անոր , Վար-
դապետը կ'ըսէ , ժամանակս մօտ է . աշա-
կերտներուս հետ մէկտեղ քու քովդ պիտի
19 ընեմ զատիկը ։ Աշակերտներն ալ ըրին ինչ-
պէս որ Յիսուս իրենց հրաման ըրաւ , ու պատ-
րաստեցին զատիկը ։

դ Օր. ժե. 11 ։ Յովհ. ժբ. 8 ։
ե Տես գլ. ժբ. 20 ։ իը. 20 ։ Յովհ. ժգ. 33 ։ ժդ. 19 ։ ժզ. 5, 28 ։ ժէ. 11 ։
զ Մար. ժդ. 10 ։ Ղուկ. իբ. 3 ։ Յովհ. ժգ. 2, 30 ։
է Գլ. ժ. 4 ։
ը Զաք. ժա. 12 ։
թ Գլ. իէ. 3 ։
* կամ կշռեցին
ժ Ել. ժբ. 6, 18 ։ Մար. ժդ. 12 ։ Ղուկ. իբ. 7 ։

20 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ կայր բազմեալ ընդ
21 երկոտասան աշակերտսն։ Եւ մինչդեռ ուտէ֊
ին նոքա՝ ասէ, Ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն
22 ՚ի ձէնջ մատնելոց է զիս։ Եւ տրտմեցան յոյժ,
սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք ՚ի նոցա֊
23 նէ, Միթէ ե՞ս իցեմ, Տէր։ Նա պատասխա֊
նի ետ և ասէ, Որ մխեաց ընդ իս զձեռն
իւր ՚ի սկաւառակս՝ նա մատնելոց է զիս։
24 Որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է
վասն նորա, բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր
ձեռն Որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա
25 թէ չէր ծնեալ մարդն այն։ Պատասխանի ետ
Յուդա որ մատնելոցն էր զնա՝ և ասէ, Մի֊
թէ ե՞ս իցեմ, վարդապետ. ասէ ցնա, Դու
26 ասացեր։ Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ առ
Յիսուս հաց, օրհնեաց և եբեկ, և ետ ա֊
շակերտացն և ասէ, Առէք, կերայք, այս է
27 մարմին իմ։ Եւ առեալ բաժակ գոհացաւ,
ետ նոցա և ասէ, Արբէք ՚ի դմանէ ամենե֊
28 քին. Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ
՚ի վերայ բազմաց հեղանի ՚ի թողութիւն մե֊
29 ղաց։ Բայց ասեմ ձեզ, Ոչ եւս արբից յայսմ
հետէ ՚ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն,
յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայու֊





20 [լ]Ու երբոր իրիկուն եղաւ՝ տասուերկուքին
21 հետ սեղան նստաւ։ Եւ քանի որ կ'ուտէին՝
ըսաւ, Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ ձեզմէ մէ֊
22 կը զիս պիտի մատնէ։ Ու շատ տրտմեցան,
և անոնցմէ ամէն մէկը սկսաւ ըսել անոր,
23 Տէր, միթէ ե՞ս եմ։ Անիկա պատասխան
տուաւ ու ըսաւ, [խ]Ան որ իմ հետս իր ձեռքը
24 պնակը խօթեց, նոյնը պիտի մատնէ զիս։ Յի֊
րաւի Որդին մարդոյ կ'երթայ՝ [ծ]ինչպէս որ
գրուած է իրեն համար, բայց [կ]վա՜յ այն մար֊
դուն՝ որուն ձեռքովը Որդին մարդոյ կը
մատնուի. աղէկ էր այն մարդուն որ ծնած
25 չըլլար։ Պատասխան տուաւ Յուդա որ զանի֊
կա պիտի մատնէր՝ ու ըսաւ, Վարդապետ,
միթէ ե՞ս եմ. ըսաւ անոր, Դուն ըսիր։
26 [հ]Եւ քանի որ անոնք կ'ուտէին, [ձ]Յիսուս
հաց առաւ, օրհնեց ու կտրեց, և տուաւ ա֊
շակերտներուն ու ըսաւ, Առէք, կերէք.
27 [ղ]աս է իմ մարմինս։ Եւ գաւաթը առաւ, գո֊
հացաւ, ու տուաւ անոնց և ըսաւ, [ճ]Ամէնքդ
28 ալ խմեցէք ասկէ. [մ]Ինչու որ ասիկա է իմ
արիւնս [յ]նոր ուխտի, որ [ն]շատերու համար կը
29 թափուի մեղաց թողութեան համար։ Բայց
[շ]կ'ըսեմ ձեզի, [ո]Ասկէ ետև որթին բերքէն բնաւ
պիտի չխմեմ մինչև այն օրը՝ երբոր ձեր հետը
անիկա նոր խմեմ իմ Հօրս թագաւորութեանը
մէջ։

լ Մար. ժդ. 17—21: Ղուկ. իբ. 14: Յովհ. ժգ. 21:
խ Սաղ. խա. 9: Ղուկ. իբ. 21: Յովհ. ժգ. 18:
ծ Սաղ. իբ: Եսա. ծգ: Դան. թ. 26: Մար. թ. 11: Ղուկ. իդ. 25, 26, 46: Գործ. ժէ. 2, 3: իզ. 22, 23: Ա Կոր. ժե. 3:
կ Յովհ. ժէ. 12:
հ Մար. ժդ. 22: Ղուկ. իբ. 19:
ձ Ա Կոր. ժա. 23, 24, 25:
ղ Ա Կոր. ժ. 16:
ճ Մար. ժդ. 23:
մ Տես Ել. իդ. 8: Ղև. ժէ. 11:
յ Երեմ. լա. 31:
ն Գղ. ի. 28: Հռովմ. ե. 15: Եբր. թ. 22:
շ Մար. ժդ. 25: Ղուկ. իբ. 18:
ո Գործ. ժ. 41:

30 թեան Հօր իմոյ։ Եւ օրհնեցին, և ելին 'ի
31 լեառն Ձիթենեաց։ Յայնժամ ասէ ցնոսա Յի-
սուս, Ամենեքին դուք գայթակղելոց էք յի-
նէն յայսմ գիշերի. զի գրեալ է թէ Հարից
32 զհովիւն և ցրուեսցին ոչխարքն հօտին։ Եւ
յետ յառնելոյն իմոյ՝ յառաջեսցից քան զձեզ
33 'ի Գալիլեա։ Պատասխանի ետ Պետրոս և ա-
սէ ցնա, Թէպէտ և ամենեքեան գայթակ-
ղեսցին 'ի քէն, սակայն ես ոչ գայթակղե-
34 ցայց։ Ասէ ցնա Յիսուս, Ամէն ասեմ քեզ զի
Յայսմ գիշերի մինչչև հաւու խօսեալ իցէ,
35 երիցս ուրասցիս զիս։ Ասէ ցնա Պետրոս, Թէ
և մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ
ուրացայց. Նոյնպէս և ամենայն աշակերտքն
36 ասէին։ Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա 'ի
գեւղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի, և
ասէ ցնոսա, Նստարուք այդր, մինչև եր-
37 թայց կացից *յաղօթս։ Եւ առեալ ընդ իւր
զՊետրոս և զերկուս որդիսն Զեբեդեայ,
38 սկսաւ տրտմել և հոգալ։ Յայնժամ ասէ ցնո-
սա, Տրտում է ոգի իմ մինչև 'ի մահ, կա-
39 ցէք աստ և սկեցէք ընդ իս։ Եւ մատու-
ցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ 'ի վերայ
երեսաց իւրոց, եկաց յաղօթս և ասէ, Հայր
իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն.

* Յոյնն՝ յաղօթս անդր։



30 ւԵւ օրհնութիւն մը երգելէն ետև Ձիթե-
31 նեաց լեռը ելան։ Անտանկ Յիսուս ըսաւ ա-
նոնց, ղԴուք ամէնքդ աս գիշեր ճիմ վրա-
յովս պիտի գայթակղիք. ինչու որ գրուած
է թէ մՀովիւը պիտի զարնեմ, ու հօտին ոչ-
32 խարները պիտի ցրուին։ Բայց յարութիւն
առնելէս ետև ձեզմէ առաջ յԳալիլեա պի-
33 տի երթամ։ Պատասխան տուաւ Պետրոս ու
ըսաւ անոր, Թէպէտ ամէնքն ալ քու վրա-
յովդ գայթակղին, բայց ես բնաւ պիտի չը-
34 գայթակղիմ։ Ըսաւ անոր Յիսուս, նՃշմարիտ
կ'ըսեմ քեզի, Աս գիշեր դեռ հաւը չխօսած՝
35 երեք անգամ զիս պիտի ուրանաս։ Ըսաւ
անոր Պետրոս, Թէև քեզի հետ մեռնելու
ալ ըլլամ՝ բնաւ քեզ պիտի չուրանամ. ա-
սանկ կ'ըսէին նաև ամէն աշակերտները։
36 շԱնտանկ Յիսուս անոնց հետ տեղ մը ե-
կաւ որուն անունը Գեթսեմանի էր, ու ը-
սաւ աշակերտներուն, Հոս նստեցէք մինչև
37 որ ես երթամ հոն աղօթք ընեմ։ Եւ իր հե-
տը առնելով Պետրոսը ու ոԶեբեդեոսին եր-
կու որդիքը, սկսաւ տրտմիլ և վշտանալ։
38 Անտանկ ըսաւ անոնց, չԻմ անձս մեռնելու
չափ տրտում է. հոս կեցէք և ինծի հետ ար-
39 թուն մնացէք։ Ու քիչ մը առաջ երթալով՝
իր երեսին վրայ ինկաւ և պաղօթք ըրաւ՝ ը-
սելով, ջՈվ Հայր իմ, թէ որ կարելի է, ռթող
աս գաւաթը ինծմէ անցնի. բայց սչէ թէ ինչ-

ւ Մար. ժդ. 26։
ղ Մար. ժդ. 27։ Յովհ. ժզ. 32։
ճ Գլ. ժա. 6։
մ Զաք. ժգ. 7։
յ Գլ. իը. 7, 10, 16։ Մարկ. ժդ. 28։ ժզ. 7։
ն Մար. ժդ. 30։ Ղուկ. իբ. 34։ Յովհ. ժգ. 38։
շ Մար. ժդ. 32—35։ Ղուկ. իբ. 39։ Յովհ. ժը. 1։
ո Գլ. դ. 21։
չ Յովհ. ժբ. 27։
պ Մար. ժդ. 36։ Ղուկ. իբ. 42։ Եբր. ե. 7։
ջ Յովհ. ժբ. 27։
ռ Գլ. ի. 22։
ս Յովհ. ե. 30։ զ. 38։ Փիլ. բ. 8։

բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու ։
40 Գայ առ աշակերտսն, և գտանէ զնոսա ՚ի
քուն, և ասէ ցՊետրոս, Ա՞յդպէս ոչ կարա-
41 ցիք մի ժամ արթուն կալ ընդ իս ։ Արթուն
կացէք և աղօթս արարէք՝ զի մի անկանիցիք
՚ի փորձութիւն ․ *հոգիս յօժար է՝ բայց մար-
42 մինս տկար ։ Դարձեալ երկրորդ անգամ չո-
գաւ, եկաց յաղօթս Յիսուս և ասէ, Հայր
իմ, եթէ հնար իցէ անցանել յինէն բաժա-
կիս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից զսա, եղի-
43 ցին կամք քո ։ Եւ եկեալ միւսանգամ եգիտ
զնոսա ՚ի քուն, զի էին աչք իւրեանց ծան-
44 րացեալք ․ Եթող զնոսա և գնաց, եկաց յա-
ղօթս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն
45 բան ասաց ։ Յայնժամ գայ առ աշակերտսն
և ասէ ցնոսա, Ննջեցէք այսուհետև և հան-
գերուք, զի ահա հասեալ է ժամ, և Որդի
46 մարդոյ մատնի ՚ի ձեռս մեղաւորաց ։ Արիք,
երթիցուք աստի, զի ահաւասիկ եհաս որ
47 մատնելոցն է զիս ։ Եւ մինչդեռ նա զայն
խօսէր, ահա Յուդա մի յերկոտասանիցն եկն,
և ընդ նմա ամբոխ բազում սրովք և բրօք
՚ի քահանայապետից և ՚ի ծերոց ժողովըր-
48 դեանն ։ Եւ որ մատնելոցն էր զնա՝ ետ նո-
ցա նշան և ասէ, ընդ որում ես համբուրե-
49 ցից՝ նա է, զնա ունիցիք ։ Եւ վաղվաղակի
մատուցեալ առ Յիսուս՝ ասէ, Ողջ եր, վար-
50 դապետ ․ և համբուրեաց ընդ նմա ։ Եւ Յի-
սուս ասէ ցնա, ընկեր, վասն որո՞յ եկիր ․
յայնժամ մատուցեալ՝ արկին ձեռս ՚ի Յիսուս

* Յոյնն՝ հոգին յօժար է՝ բայց մարմինն տկար ։

ԳԼՈՒԽ ԻԶ 99

պէս որ ես կ՚ուզեմ, հապա ինչպէս որ դուն
40 կ՚ուզես ։ Եւ եկաւ աշակերտներուն ու զանոնք
քնացած գտաւ, և ըսաւ Պետրոսին, Այդ-
պէս մէկ ժամ մըն ալ չկրցա՞ք ինծի հետ ար-
41 թուն կենալ ։ ‡Արթուն կեցէք և աղօթք ը-
րէք, որ փորձութեան մէջ չմտնէք ․ հոգին
42 յօժար է, բայց մարմինը տկար ։ Դարձեալ
երկրորդ անգամ գնաց աղօթք ըրաւ՝ ըսե-
լով, Ով Հայր իմ, եթէ անկարելի է որ աս
գաւաթը ինծմէ անցնի առանց անկէ խմե-
43 լուս, թող քու կամքդ ըլլայ ։ Եւ եկաւ զա-
նոնք նորէն քնացած գտաւ, ինչու որ աչքեր-
44 նին ծանրացած էր ։ Եւ թողուց անոնք, ու
նորէն գնաց երրորդ անգամ աղօթք ըրաւ՝
45 նոյն խօսքը ըսելով ։ Անատենը եկաւ իր ա-
շակերտներուն ու ըսաւ անոնց, Ասկէ ետև
քնացէք ու հանգչեցէք ․ ահա ժամը հասաւ,
և Որդին մարդոյ մեղաւորներուն ձեռքը կը
46 մատնուի ։ Ելէք ասկէ երթանք ․ ահա մօ-
տեցաւ անիկա որ զիս պիտի մատնէ ։
47 Եւ ‶դեռ անիկա աս որ կը խօսէր, ահա
Յուդա՝ տասուերկուքէն մէկը եկաւ, և իր
հետը շատ բազմութիւն սուրերով ու բիրե-
րով՝ քահանայապետներէն և ժողովուրդին
48 ծերերէն ։ Եւ զանիկա մատնողը անոնց նշան
մը տուեր էր՝ ըսելով, Ով որ ես համբուրեմ՝
49 ան է, բռնեցէք անիկա ։ Եւ շուտ մը Յիսու-
սին մօտենալով՝ ըսաւ, Ողջոյն քեզ, վարդա-
50 պետ, ու †համբուրեց զանիկա ։ Եւ Յիսուս
ըսաւ անոր, ‡Ընկեր, ինչո՞ւ համար եկար
դուն ․ անատենը մօտեցան՝ ձեռք զարկին

ֆ Մար․ ժդ․ 33 ։ ժդ․ 38 ։ Ղուկ․ իբ․ 40 ․ 46 ։ Եփես․ զ․ 18 ։
ա Մար․ ժդ․ 43 ։ Ղուկ․ իբ․ 47 ։ Յովհ․ ժը․ 3 ։ Գոր․ ա․ 16 ։
բ բ Թագ․ ի․ 9 ։
գ Սաղ․ խա․ 9 ։ ծե․ 13 ։

51 և կալան զնա։ Եւ ահա մի ոմն յայնցանէ որ
էին ընդ Յիսուսի, ձգեաց զձեռն և եհան
զսուր իւր և եհար զծառայ քահանայապե-
52 տին, և 'ի բաց եհան զունկն նորա։ Յայն-
ժամ ասէ ցնա Յիսուս, Դարձո զսուր քո 'ի
տեղի իւր, զի ամենեքեան որ սուր առնու-
53 ցուն՝ սրով անկանիցին։ Թէ համարիցի՞ս թէ
ոչ կարեմ *աղաչել զՀայր իմ. և հասուցա-
նիցէ ինձ †այժմ այսր՝՝ աւելի քան զերկոտա-
54 սան ‡ գունդս հրեշտակաց։ Այլ զիա՞րդ
լնուցուն գիրք թէ այսպէս պարտ է լինել։
55 Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխն, Իբրեւ 'ի
վերայ աւազակի՞ ելէք սուսերօք և բրօք
ունել զիս. հանապազ առ ձեզ 'ի տաճարին
նստէի և ուսուցանէի, և ոչ կալաք զիս։
56 Այլ այս ամենայն եղեւ զի լցցին գիրք մար-
գարէիցն։ Յայնժամ աշակերտքն ամենեքին
57 թողին զնա և փախեան։ Իսկ նոցա կալեալ
զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահանայա-
պետ, ուր դպիրքն և ծերք ժողովեալ էին։
58 Եւ Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն
մինչեւ 'ի սրահ քահանայապետին, և մտեալ
'ի ներքս նստէր ընդ սպասաւորսն տեսանել
59 զկատարածն։ Իսկ քահանայապետքն և ա-
մենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն

* Յոյնն՝ այժմ աղաչել
† Ի Յոյնն չէ։
‡ Յոյնն՝ լէգէոնս



51 Յիսուսին ու բռնեցին զանիկա։ Եւ ահա [ղ]Յի-
սուսի հետ եղողներուն մէկը ձեռքը երկըն-
ցուց և իր սուրը հանելով՝ զարկաւ քահա-
նայապետին ծառային, և անոր ականջը մէկ-
52 դի հանեց։ Անտենը Յիսուս ըսաւ անոր,
Սուրդ իր տեղը դարձուր, ինչու որ [ճ]ամէն
53 սուր առնողները սրով պիտի կորսուին։ Կը
կարծե՞ս թէ չեմ կրնար հիմա իմ Հօրս աղա-
չել, և ինծի հասցընէ [մ]տասներկու *գուն-
54 դէն աւելի հրեշտակներ։ Բայց ի՞նչպէս պի-
տի կատարուին գիրքերը, [ն]թէ պէտք է ա-
սանկ ըլլալ։
55 Անտենը Յիսուս ըսաւ ան բազմութեանը,
Իբր թէ աւազակի՞ վրայ ելաք սուրերով ու
բիրերով զիս բռնելու. ամէն օր տաճարին մէջ
ձեզի հետ կը նստէի ու կը սորվեցընէի, և
56 զիս չբռնեցիք։ Բայց աս ամէն բաները եղաւ՝
որ [շ]կատարուին մարգարէից գիրքերը։ Անա-
տենը [ո]բոլոր աշակերտները թողուցին անիկա
ու փախան։
57 [չ]Եւ անոնք որ Յիսուսը բռնեցին՝ Կայիա-
փա քահանայապետին տարին, ուր որ դը-
58 պիրները ու ծերերը ժողվուեր էին։ Եւ Պետ-
րոս հեռուանց անոր ետեւէն գնաց մինչեւ քա-
հանայապետին գաւիթը, ու ներս մտաւ
սպասաւորներուն հետ նստաւ որ վերջը տես-
59 նէ։ Իսկ քահանայապետները ու ծերերը և
բոլոր ժողովքը Յիսուսի դէմ սուտ վկայու-
թիւն մը կը փնտռէին, որ անիկա մեռցընեն,

ղ Յովհ. ժը. 10։
ճ Ծն. թ. 6։ Յայտ. ժգ. 10։
մ Դ Թագ. զ. 17։ Դան. է. 10։
* Յուն. լէգէոնէն
ն Եսայ. ծգ. 7, և։ Հմր. 24։ Ղուկ. իդ. 25, 44, 46։
շ Ողբ. դ. 20։ Հմր. 54։
ո Տես Յովհ. ժը. 15։
չ Մար. ժդ. 53։ Ղուկ. իբ. 54։ Յովհ. ժը. 12, 13, 24։

60 զՅիսուս, զի սպանցեն զնա. Եւ ոչ գտա-
նէին 'ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց.
61 յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք, Ասէին
Թէ Սա ասէր, կարող եմ քակել զտաճարն
62 Աստուծոյ, և զերիս աւուրս շինել: Եւ յա-
րուցեալ քահանայապետն ասէ ցնա, Զա՞ս
ինչ պատասխանի, զի՞նչ դոքա ամբաստա-
63 նեն զքէն: Եւ Յիսուս լուռ կայր. Պատաս-
խանի ետ քահանայապետն և ասէ ցնա, Երդ-
մնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի
ասասցես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն որդի
64 Աստուծոյ: Ասէ ցնա Յիսուս, Դու ասացեր.
բայց ասեմ ձեզ, Յայսմ հետէ տեսանիցէք
զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեան
65 և եկեալ ընդ ամպս երկնից: Յայնժամ քա-
հանայապետն պատառեաց զհանդերձս իւր,
և ասէ, Հայհոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ
վկայք, ահա արդ լուայք զհայհոյութիւն
66 նորա. Զի՞նչ հաճոյ է ձեզ. Նոքա պատաս-
67 խանի ետուն և ասեն, Մահապարտ է: Յայն-
ժամ թքին ընդ երեսս նորա և կռփեցին
68 զնա, և ոմանք ապտակեցին, և ասեն, Մար-
գարէաց մեզ, Քրիստոսդ, ո՞վ է որ եհարն
69 զքեզ: Իսկ Պետրոս նստէր արտաքոյ 'ի գաւ-



60 Ու չգտան. թէև [ի]շատ սուտ վկաներ ալ ե-
կան, բայց չգտան. ետքը [լ]երկու սուտ վը-
61 կայ եկան, Ու ըսին թէ Ասիկա ըսաւ, [խ]Ես
կրնամ Աստուծոյ տաճարը քակել, և զանիկա
62 երեք օրուան մէջ շինել: [ծ]Եւ քահանայա-
պետը ոտք ելլելով ըսաւ անոր, Պատաս-
խան մը չե՞ս տար. ի՞նչ կը վկայեն ասոնք քե-
63 զի դէմ: Եւ [կ]Յիսուս լուռ կը կենար: Պա-
տասխան տուաւ քահանայապետը ու ըսաւ
անոր, [հ]Կենդանի Աստուծով քեզ կ'երդմնցը-
նեմ որ մեզի ըսես, թէ դո՞ւն ես Քրիստոս
64 Որդին Աստուծոյ: Ըսաւ անոր Յիսուս, Դուն
ըսիր. բայց կ'ըսեմ ձեզի, [ձ]Ասկէ ետև պիտի
տեսնէք Որդին մարդոյ [ղ]Զօրութեան աջ կող-
մը նստած, ու երկնից ամպերուն վրայ եկած:
65 [ճ]Անատենը քահանայապետը իր հանդերձնե-
րը պատռեց՝ ու ըսաւ, Հայհոյութիւն ըրաւ.
ալ ի՞նչ պէտք է մեզի վկաներ. ահա հիմա
66 լսեցիք անոր հայհոյութիւնը. Ձեզի ի՞նչ-
պէս կ'երևնայ. անոնք պատասխան տուին
67 ու ըսին, [մ]Մահապարտ է: [յ]Անատենը անոր
երեսը թուքին, ու բռունցով ծեծեցին անի-
կա. [ն]ոմանք ալ ապտակ զարնելով՝ ըսին,
68 [շ]Մարգարէացիր մեզի, դուն Քրիստոս, ո՞վ
է ան որ քեզի զարկաւ:
69 [ո]Իսկ Պետրոս դուրսը դաւիթը նստեր էր,

ի Սաղ. իե. 12: լե. 11: Մար. ժգ. 55: Գոր. զ. 13:
լ բ Օր. ժթ. 15:
խ Գղ. իե. 40: Յովհ. բ. 19:
ծ Մար. ժդ. 60:
կ Եսա. ծգ. 7: Գղ. իե. 12, 14:
հ Ղև. ե. 1: ա Թագ. ժդ. 24, 26:
ձ Դան. է. 13: Գղ. ժզ. 27: իդ. 30: իե. 31: Ղուկ. իա. 27: Յովհ. ա. 51: Հռովմ. ժդ. 10: ա Թես. գ. 16: Յայտ. ա. 7:
ղ Սաղ. ճժ. 1: Գործ. է. 55:
ճ գ Թագ. ժը. 37: ժթ. 1:
մ Ղև. իդ. 16: Յովհ. ժթ. 7:
յ Եսա. ծ. 6: ծգ. 5: Գղ. իե. 30:
ն Ղուկ. իբ. 63: Յովհ. ժթ. 3:
շ Մար. ժդ. 65: Ղուկ. իբ. 64:
ո Մար. ժդ. 66: Ղուկ. իբ. 55: Յովհ. ժը. 16, 17, 25:

թին . մատեաւ առ նա աղախին մի և ասէ ,
70 Եւ դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր ։ Նա
ուրացաւ առաջի ամենեցուն և ասէ թէ Ոչ
71 գիտեմ զինչ խօսիսդ ։ Եւ իբրեւ ել նա ար-
տաքս քան զդուռնն , ետես զնա այլ կին մի,
և ասէ ցայնոսիկ որ անդն կային , Եւ սա ընդ
72 Յիսուսի Նազովրեցւոյ էր ։ Եւ դարձեալ ու-
73 րացաւ երդմամբ թէ Ոչ գիտեմ զայրն ։ Եւ
յետ սակաւ միոյ մատուցեալ որք կայինն
անդ , ասեն ցՊետրոս , Արդարեւ և դու
'ի նոցանէ ես , քանզի և խօսք քո յայտ առ-
74 նեն զքեզ ։ Յայնժամ սկսաւ նզովել և երդ-
նուլ թէ Ոչ գիտեմ զայրն . և իսկոյն հաւ
75 խօսեցաւ ։ Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսու-
սի զոր ասաց թէ Մինչչեւ հաւու խօսեալ
իցէ , երիցս ուրասցիս զիս . և ելեալ ար-
տաքս՝ ելաց դառնապէս ։

## ԳԼ . ԻԷ

1 Իբրեւ այգ եղեւ , խորհուրդ արարին ամե-
նայն քահանայապետքն և ծերք ժողովր-
2 դեանն վասն Յիսուսի սպանանել զնա ։ Կա-
պեցին զնա և առին գնացին , և ետուն 'ի
ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորին ։

102 ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

և մէկ աղախին մը եկաւ անոր ու ըսաւ , Դուն
70 ալ Գալիլեացի Յիսուսին հետ էիր ։ Բայց
անիկա ամենուն առջեւ ուրացաւ ու ըսաւ ,
71 Չեմ գիտեր դուն ինչ կը խօսիս ։ Ու երբոր
դուռը ելաւ , ուրիշ աղջիկ մը զանիկա տե-
սաւ , և հոն եղողներուն ըսաւ , Ասիկա ալ
72 Յիսուս Նազովրեցիին հետ էր ։ Եւ Պետրոս
նորէն երդում ընելով ուրացաւ , Թէ Ես ան
73 մարդը չեմ ճանչնար ։ Ու քիչ մը ատենէն ե-
տև հոն եղողները եկան և ըսին Պետրոսին ,
Յիրաւի դուն ալ անոնցմէ ես , ինչու որ քու
74 կրուցուածքդ ալ քեզ յայտնի կ՚ընէ ։ Ան-
ատենը սկսաւ անիծել ու երդում ընել՝ ըսելով
Թէ Ես ան մարդը չեմ ճանչնար . և իսկոյն
75 հաւը խօսեցաւ ։ Եւ Պետրոս միտքը բերաւ
Յիսուսի խօսքը՝ որ իրեն ըսեր էր թէ Դեռ
հաւը չխօսած՝ երեք անգամ պիտի ուրանաս
զիս . ու դուրս ելլելով դառնապէս լացաւ ։

## ԳԼ . ԻԷ

1 Քրիստոս Պիղատոսի ձեռքը կը տրուի կապուած ։ 3 Յուդա խեղդամահ կ՚ըլլայ ։ 19 Պիղատոս իր կնիկէն խրատուած՝ 24 իր ձեռքերը կը լուայ , 26 ու Բարաբբան կ՚արձակէ , 29 Քրիստոս փուշերով կը պսակուի , 34 կը խաչուի , 39 կը նախատուի , 50 կը մեռնի ու կը թաղուի ։ 66 Քրիստոսի գերեզմանը հրեայք կը կնքեն , ու պահապան զինուորներ կը դնեն ։

1 Երբոր առտու եղաւ՝ բոլոր քահանայապետ-
ները ու ժողովուրդին ծերերը Յիսուսի դէմ
2 խորհուրդ ըրին որ զանիկա մեռցնեն ։ Եւ
կապելով զանիկա տարին , ու Պոնտացի Պի-
ղատոս կուսակալին ձեռքը տուին ։

ն Ղուկ . իբ . 59 ։
ղ Մար . ժդ . 71 ։
չ Հմր . 34 ։ Մար . ժգ . 30 ։ Ղուկ . իբ . 61 , 62 ։ Յովհ . ժգ . 38 ։

—

ա Սաղ . բ . 2 ։ Մար . ժե . 1 ։ Ղուկ . իգ . 66 ։ իգ . 1 ։ Յովհ . ժը . 28 ։
բ Գծ . ի . 19 ։ Գոր . գ . 13 ։

3 Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատնեացն զնա
թէ պարտաւորեցաւ, զղջացաւ և դարձոյց
*զարծաթն առ քահանայապետսն և ծերս
4 ժողովրդեանն," Եւ ասէ, Մեղայ զի մատ-
նեցի զարիւն արդար. և նոքա ասեն, Մեզ
5 չէ փոյթ, դու գիտես: Եւ ընկէց զարծաթն
'ի տաճարին և գնաց, և չոգաւ խեղդեցաւ:
6 Իսկ քահանայապետիցն առեալ զարծաթն՝
ասեն, Ոչ է արժան ընդունել զայդ 'ի կոր-
7 բանն, քանզի գինք արեան են: Խորհուրդ
առեալ, գնեցին այնու զագարակն բրտի 'ի
8 գերեզման օտարաց: Վասն այնորիկ կոչեցաւ
ագարակն այն Ագարակ արեան մինչեւ ցայ-
9 սօր: Յայնժամ լցաւ որ ասացաւն 'ի ձեռն
Երեմիա մարգարէի, Եւ առին զերեսուն ար-
ծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յոր-
10 դւոցն Իսրայէլի: Եւ ետուն զնա յագարակն
11 բրտի, որպէս հրամայեաց ինձ Տէր: Եւ Յի-
սուս եկաց առաջի դատաւորին. Եհարց ցնա
դատաւորն և ասէ, Դո՞ւ ես Թագաւորն Հր-
12 էից. Եւ Յիսուս ասէ, Դու ասես: Եւ 'ի
չարախօսելն նորա 'ի քահանայապետիցն և
13 'ի ծերոց, ոչ ինչ ետ պատասխանի: Յայն-
ժամ ասէ ցնա Պիղատոս, Ո՞չ լսես՝ որչափ
14 զոքա հակառակ քո վկայեն: Եւ ոչ ետ նմա

* Յոյն՝ զերեսուն արծաթին առ քահանայապետսն և ծերս,



3 [դ]Անատենը Յուդա՝ որ զանիկա մատնեց,
տեսնելով թէ դատապարտուեցաւ, զղջի-
եկաւ, ու երեսուն արծաթը ետ դարձուց
4 քահանայապետներուն և ծերերուն, Ու ը-
սաւ, Մեղայ, որ անմեղ արիւն մատնեցի.
5 և անոնք ըսին, Մեզի ի՞նչ, դուն նայէ: Եւ
արծաթը տաճարին մէջ ձգեց [ե]ու դուրս ե-
6 լաւ, և գնաց ինքզինքը խեղդեց: Քահա-
նայապետներն ալ արծաթը առնելով՝ ըսին,
Արժան չէ ատիկա *կորբանին մէջ" դնել, ին-
7 չու որ արեան գին է: Ուստի խորհուրդ ը-
րին, և անով բրուտին արտը ծախու առին՝
օտարներու գերեզմանատուն ըլլալու հա-
8 մար: Աս պատճառով ան արտը [է]Արեան
9 արտ ըսուեցաւ մինչև այսօր: Անատենը
կատարուեցաւ †Երեմիա մարգարէին ձեռ-
քով ըսուած խօսքը, [ը]Եւ առին երեսուն
արծաթը՝ գին կարուածին գինը, որ Իսրա-
10 յէլի որդւոցմէ ոմանք գին կտրեցին, Ու տը-
ւին անիկա բրուտին արտին, ինչպէս որ ին-
ծի հրաման ըրաւ Տէրը:
11 Եւ Յիսուս կուսակալին առջևը կայնեցաւ.
և կուսակալը [թ]հարցուց անոր ու ըսաւ, Հրէից
Թագաւորը դո՞ւն ես: Եւ Յիսուս ըսաւ անոր,
12 [ժ]Դուն կ'ըսես: Ու քահանայապետներէն և
ծերերէն ամբաստանուած ատենը [ի]ընաւ պա-
13 տասխան մը չտուաւ: Անատենը Պիղատոս ը-
սաւ անոր, [լ]Չե՞ս լսեր թէ որչափ քեզի դէմ
14 կը վկայեն ասոնք: Եւ անոր բան մը պատաս-

դ Գւ. իզ. 14. 15:
ե Թագ. Ժէ. 23: Գոր. ա. 18:
* Յն՝ տաճարին գանձանակը:
է Գոր. ա. 19:
† Ոմանք յօրինակս Երեմիա
ը Զաք. ժա. 12. 13:
թ Մար. ժե. 2: Ղուկ. իգ. 3: Յովհ. ժը. 33:
ժ Յովհ. ժը. 37. Ա Տիմ. զ. 13:
ի Գւ. իզ. 63: Յովհ. ժթ. 9:
լ Գւ. իզ. 62: Յովհ. ժթ. 10:

պատասխանի և ոչ բան մի, մինչև զարմա֊
15 նալ դատաւորին յոյժ։ Բայց ըստ տօնի սովոր
էր դատաւորն արձակել ժողովրդեանն կա֊
16 պեալ մի զոր կամէին։ Ունէին յայնժամ կա֊
պեալ մի նշանաւոր, որում անուն էր * Յե֊
17 սու Բարաբբա։ Իբրև ժողովեցան, ասէ
ցնոսա Պիղատոս. Զո՞ կամիք † յերկուց աս֊
տի զի արձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞
18 եթէ զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ Քան֊
զի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա։
19 Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա
կին իւր և ասէ, Զկայ ինչ քո և արդարոյն
այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս
20 այսօր յանուրջս վասն նորա։ Իսկ քահանայա֊
պետքն և ծերք հաւանեցուցին զժողովուրդսն,
զի խնդրեսցեն զԲարաբբայն՝ և զՅիսուս կո֊
21 րուսցեն։ Պատասխանի ետ դատաւորն և ա֊
սէ ցնոսա, Զո՞ կամիք զի արձակեցից ձեզ
յերկուց աստի. և նոքա ասեն, զԲարաբբա։
22 Ասէ ցնոսա Պիղատոս, Իսկ զի՞ արարից զՅի֊
23 սուս զանուանեալն Քրիստոս։ Ասեն ամենե֊
քեան, Խաչեսցի. և նա ասէ, Զի՞նչ չար ա֊
րար. և նոքա առաւել ևս աղաղակէին և
24 ասէին, Խաչեսցի։ Եւ տեսեալ Պիղատոսի թէ
ոչ ինչ օգնէ, այլ առաւել խռովութիւն լինի,
առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողո֊
վրդեանն և ասէ, Քաւեալ եմ ես յարենէ
25 արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք։ Պա֊
տասխանի ետ ամենայն ժողովուրդն և ասէ,

* Ի Յունն. չէ։
† Յոյնն՝ զի արձակեցից ձեզ, զԲարաբբա՞



խան չտուաւ, մինչև շատ զարմացաւ կուսա֊
կալը։
15 [է] Բայց կուսակալը սովորութիւն ունէր որ
տօնին ատենը կապուած մը արձակէր ժողո֊
16 վուրդին՝ ով որ ուզէին։ Անատենը Բարաբ֊
բա անունով մէկ երևելի բանտարկեալ մը ու֊
17 նէին։ Երբոր ժողվուեցան՝ ըսաւ անոնց Պի֊
ղատոս, Ո՞ր կ'ուզէք որ ձեզի արձակեմ. Բա֊
րաբբա՞ն, թէ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի.
18 Քանզի գիտէր թէ նախանձի համար մատ֊
նեցին զանիկա։
19 Ու երբոր անիկա ատեանը նստեր էր, անոր
կնիկը մարդ ղրկեց անոր ու ըսաւ, Դուն ան
արդարին հետ բան մը չունենաս, ինչու որ
այսօր երազիս մէջ շատ դիպուածներ անցան
գլխէս անոր համար։
20 [ը] Բայց քահանայապետները և ծերերը ժողո֊
վուրդը համոզեցին որ Բարաբբան խնդրեն ու
21 Յիսուսը կորսնցընեն։ Պատասխան տուաւ
կուսակալը ու ըսաւ անոնց, Աս երկուքէս ո՞֊
րը կ'ուզէք որ ձեզի արձակեմ. և անոնք ըսին,
22 Բարաբբան։ Ըսաւ անոնց Պիղատոս, Հապա
ի՞նչ ընեմ Յիսուսը՝ որ Քրիստոս կ'ըսուի։
23 Ամէնքն ալ ըսին անոր, Թող խաչուի. և կու֊
սակալը ըսաւ, Բայց ի՞նչ չար գործ ըրաւ.
և անոնք ևս առաւել կ'աղաղակէին ու կ'ը֊
24 սէին, Թող խաչուի։ Եւ Պիղատոս տեսնելով
որ օգուտ մը չըլլար, հապա ալ աւելի խռո֊
վութիւն կ'ըլլայ, [ժ] ջուր առաւ՝ ձեռքերը
լուաց ժողովուրդին առջևը ու ըսաւ, Ես ան
արդարին արիւնէն անպարտ եմ. դուք մտա֊
25 ծեցէք։ Եւ բոլոր ժողովուրդը պատասխան

է Մար. ժե. 6: Ղուկ. իգ. 17: Յովհ. ժը. 39:
ը Մար. ժե. 11: Ղուկ. իգ. 18: Յովհ. ժը. 40:
Գոր. գ. 14:
ժ Բ Օր. իա. 6:

Արիւն դորա 'ի վերայ մեր եւ 'ի վերայ որ-
26 դւոց մերոց։ Յայնժամ արձակեաց նոցա զԲա-
րաբբայն, եւ զՅիսուս գան հարեալ ետ 'ի
27 ձեռս զի խաչեսցի։ Յայնժամ զինուորք դա-
տաւորին առին զՅիսուս յապարանս, եւ ժո-
ղովեցին 'ի վերայ նորա զամենայն զգունդն.
28 Մերկացին զնա, եւ արկին զնովաւ քղամիդ
29 կարմիր։ Եւ բոլորեալ պսակ 'ի փշոց՝ եդին
'ի գլուխ նորա, եւ եղէգն յաջոյ ձեռին նո-
րա. 'ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատա-
կէին եւ ասէին, Ողջ եր Թագաւոր Հրէից։
30 Եւ թքեալ 'ի նա՝ առնուին զեղէգնն եւ ծե-
31 ծէին զգլուխ նորա։ Եւ յորժամ ձաղե-
ցին զնա, մերկացուցին 'ի նմանէ զքղ-
ամիդն եւ ագուցին նմա զիւր հանդերձն,
32 եւ տարան զնա 'ի խաչ հանել։ Եւ ելեալ ար-
տաքս՝ գտին այր մի Կիւրենացի անուն Սի-
մոն, զնա կալան պահակ զի բարձցէ զխաչն
33 նորա։ Եւ եկեալ 'ի տեղին անուանեալ Գող-
34 գոթա, որ է տեղի կառափելոյ, Ետուն նմա
ըմպել գինի ընդ լեղի խառնեալ. եւ իբրեւ
35 ճաշակեաց, ոչ կամէր ըմպել։ Եւ հանեալ
զնա 'ի խաչ՝ բաժանեցին զհանդերձս նորա

---



տալով ըսաւ, Անոր արիւնը մեր վրայ ու մեր
26 որդւոցը վրայ ըլլայ։ Անատենը Բարաբբան
արձակեց անոնց, ու Յիսուսը ծեծելով՝ անոնց
ձեռքը տուաւ որ խաչուի։
27 Անատենը կուսակալին զինուորները պա-
լատին ներսը առին Յիսուսը, ու բոլոր զինուոր-
28 ներուն գունդը անոր վրայ ժողվեցին. Եւ զա-
նիկա մերկացընելով՝ կարմիր վերարկու մը
29 հագցուցին անոր։ Ու փուշերէ պսակ մը
հիւսելով՝ անոր գլուխը դրին, ու եղէգ մը
անոր աջ ձեռքը. եւ անոր առջեւը ծնկան վրայ
գալով ծաղր կ'ընէին զանիկա, ու կ'ըսէին, Ող-
30 ջոյն քեզ, Հրէից Թագաւոր։ Եւ թքնելով
անոր վրայ՝ եղէգը կ'առնէին ու անոր գլուխը
31 կը ծեծէին։ Ու երբոր ծաղր ըրին անիկա՝
վերարկուն վրայէն հանեցին ու իր հանդերձ-
ները հագցուցին անոր, եւ տարին զանիկա
խաչը հանելու։
32 Եւ դուրս ելլելով՝ Կիւրենացի մարդ մը
գտան Սիմոն անունով, զանիկա պահակ բռ-
33 նեցին՝ որ անոր խաչը վերցընէ։ Ու նկան
Գողգոթա ըսուած տեղը, որ է գանկի տեղ.
34 Եւ լեղիով խառնած քացախ տուին անոր որ
խմէ. ու երբոր համը առաւ՝ խմել չէր ուզեր։
35 Եւ զանիկա խաչը հանելով, անոր հանդերձ-
ները վիճակով բաժնեցին. [որ մարգարէէն

ե բ Օր. ժթ. 10։ Յեսու. բ. 19։ բ Թագ. ա. 16։ գ Թագ. բ. 32։ Գործ. ե. 28։
զ Ես. ծգ. 5։ Մար. ժե. 15։ Ղուկ. իգ. 16, 24, 25։ Յովհ. ժթ. 1, 16։
է Մար. ժե. 16։ Յովհ. ժթ. 2։
ը Ղուկ. իգ. 11։
թ Սաղ. կթ. 19։ Ես. ծգ. 3։
ժ Ես. ծ. 6։ Գլ. իզ. 67։
ի Ես. ծգ. 7։
լ Թուոց. ժե. 35։ գ Թագ. իա. 13։ Գործ. է. 57։ Եբր. ժգ. 12։
խ Մար. ժե. 21։ Ղուկ. իգ. 26։
ծ Մար. ժե. 22։ Ղուկ. իգ. 33։ Յովհ. ժթ. 17։
կ Սաղ. կթ. 21։ Տես հմր. 48։
հ Մար. ժե. 24։ Ղուկ. իգ. 34։ Յովհ. ժթ. 24։

վիճակաւ. զի լցցի բանն որ ասացաւ 'ի մար-
գարէէն, Բաժանեցին զհանդերձս իմ յիւ-
րեանս, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վի-
36 ճակս արկանէին ։ Եւ նստեալ պահէին զնա ։
37 Եւ եդին 'ի վերայ գլխոյ նորա գրեալ զվնաս
նորա, թէ Այս է Յիսուս Թագաւորն Հր-
38 էից ։ Յայնժամ հանին ընդ նմա 'ի խաչ
երկուս աւազակս, մի յաջմէ նորա և մի
39 յահեկէ ։ Եւ որ անցանէինն՝ հայհոյէին
40 զնա, շարժէին զգլուխս իւրեանց, Եւ ա-
սէին, վահ, որ քակէիր զտաճարն և զե-
րիս աւուրս շինէիր զնա. ապրեցո զքեզ,
41 թէ Որդի ես Աստուծոյ՝ էջ 'ի խաչէդ ։ Նոյն-
պէս և քահանայապետքն ձաղէին հանդերձ
42 դպրօքն և ծերովք և ասէին, Զայլս ապրե-
ցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ
Թագաւոր է Իսրայելի՝ իջցէ այժմ 'ի խաչէդ,
43 և հաւատասցուք դմա. Եթէ յուսացաւ յԱս-
տուած, փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի
զդա. քանզի ասաց եթէ Աստուծոյ Որդի
44 եմ ։ Զնոյն և աւազակքն որ խաչեալ էին ընդ
45 նմա՝ նախատէին զնա ։ Եւ 'ի վեց ժամէ ա-
ւուրն խաւար եղեւ 'ի վերայ ամենայն երկրի
46 մինչեւ ցինն ժամ ։ Եւ զինն ժամուն գոչեաց
Յիսուս 'ի ձայն մեծ և ասէ, Էլի, Էլի, լամա
սաբաքթանի. այսինքն է, Աստուած իմ,



ըսուածը կատարուի, [ղ]Իմ հանդերձներս իրենց
մէջը բաժնեցին, և իմ պատմուճանիս վրայ
36 վիճակ ձգեցին ։] [ճ]Ու նստեր անիկա կը պա-
37 հէին ։ Եւ [մ]անոր գլխուն վրայ իր յանցանքը
գրուած դրին, թէ Ասիկա է Յիսուս՝ Հրէից
38 Թագաւորը ։ [յ]Անատենը անոր հետ երկու
աւազակ խաչուեցան, մէկը [illegible] աջ կողմէն,
ու մէկը ձախ կողմէն ։
39 Եւ [ն]անոնք որ կ'անցնէին՝ կը հայհոյէին ա-
40 նոր, գլուխնին կը շարժէին, Ու կ'ըսէին,
[շ]Դուն որ տաճարը կը քակէիր և երեք օ-
րուան մէջ կը շինէիր, ինքզինքդ ազատէ.
[ո]թէ որ Աստուծոյ Որդին ես, իջիր ատ խա-
41 չէդ ։ Նոյնպէս ալ քահանայապետները դը-
պիրներուն ու ծերերուն հետ ծաղր ընելով՝
42 կ'ըսէին, Ուրիշները ազատեց, ինքզինքը չը-
կրնար ազատել. թէ որ Իսրայէլի Թագաւոր է՝
թող հիմա իջնէ խաչէն, և իրեն հաւատանք ։
43 [չ]Աստուծոյ յուսացեր է, հիմա թող փրկէ
անիկա՝ եթէ կ'ուզէ անիկա. ինչու որ ըսաւ,
44 թէ Ես Որդի Աստուծոյ եմ ։ [պ]Իր հետը խա-
չուած աւազակներն ալ նոյնպէս կը նախա-
տէին զանիկա ։
45 [ջ]Եւ վեցերորդ ժամէն մինչև իններորդ ժա-
46 մը բոլոր երկրին վրայ խաւար եղաւ ։ Եւ ժա-
մը իննին ատենները [ռ]Յիսուս մեծ ձայնով ա-
ղաղակեց ու ըսաւ, Էլի, Էլի, լամա սաբաք-
թանի. որ ըսել է՝ [ս]Աստուած իմ, Աստուած

ղ Սաղ. իբ. 18 :
ճ Հմր. 54 :
մ Մար. ժե. 26 : Ղուկ. իգ. 38 : Յովհ. ժթ. 19 :
յ Ես. ծգ. 12 : Մար. ժե. 27 : Ղուկ. իգ. 32, 33 : Յովհ. ժթ. 18 :
ն Սաղ. իբ. 7 : ԺԹ. 25 : Մար. ժե. 29 : Ղուկ. իգ. 35 :
շ Գլ. իզ. 61 : Յովհ. բ. 19 :
ո Գլ. իզ. 63 :
չ Սաղ. իբ. 8 :
պ Մար. ժե. 32 : Ղուկ. իգ. 39 :
ջ Ամովս. ը. 9 : Մար. ժե. 33 : Ղուկ. իգ. 44 :
ռ Եբր. ե. 7 :
ս Սաղ. իբ. 1 :

47 Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Ոմանք
յայնցանէ որ անդն կային, իբրեւ լուան՝ ա-
48 սէին, զԵղիա կարդայ դա։ Եւ վաղվաղակի
ընթացաւ մի ոմն 'ի նոցանէ՝ առ սպունգ լի
քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։
49 Եւ կէսքն ասէին, թող, տեսցուք եթէ գա՞յ
50 Եղիա փրկել զդա։ Եւ Յիսուս դարձեալ ա-
ղաղակեաց 'ի ձայն մեծ և արձակեաց զոգին։
51 Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս
'ի վերուստ մինչեւ 'ի վայր, և երկիր շարժե-
52 ցաւ, և վէմք պատառեցան։ Եւ գերեզմանք
բացան և բազում մարմինք ննջեցելոց սրբոց
53 յարեան։ Եւ ելեալ 'ի գերեզմանաց յետ
յարութեանն նորա, մտին 'ի քաղաքն սուրբ
54 և երեւեցան բազմաց։ Իսկ հարիւրապետն և
որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրեւ տեսին
զշարժումն և զեղեալսն, երկեան յոյժ և ա-
55 սեն, Արդարեւ Աստուծոյ Որդի էր սա։ Էին
անդ կանայք բազումք, կային 'ի հեռաստանէ
և հայէին, որք եկին զհետ Յիսուսի 'ի Գա-
56 լիլեէ պաշտել զնա. Յորս էր Մարիամ Մագ-
դաղենացի, և Մարիամ՝ Յակովբայ և Յովսեայ
57 մայր, և մայր որդւոցն Զեբեդեայ։ Եւ իբ-



47 իմ, ինչո՞ւ զիս թողուցիր։ Անոնցմէ ոմանք՝
որ հոն կայներ էին, երբոր լսեցին՝ կ'ըսէին,
48 Ասիկա Եղիան կը կանչէ։ Եւ շուտ մը անոնցմէ
մէկը վազեց սպունգ մը առաւ՝ ֆքացախով
լեցուց, ու եղէգի մը անցընելով՝ տուաւ ա-
49 նոր որ խմէ։ Ու միւսները կ'ըսէին, Թող
տուր՝ տեսնենք թէ Եղիան կու գա՞յ ատիկա
ազատելու։
50 աԵւ Յիսուս դարձեալ մեծ ձայնով աղա-
ղակեց՝ ու հոգին աւանդեց։
51 Եւ ահա էտաճարին վարագոյրը վերէն 'ի
վար երկուքի ճեղքուեցաւ, ու երկիրը շար-
52 ժեցաւ, և քարերը պատռեցան, Եւ գերեզ-
մանները բացուեցան, ու շատ սուրբ ննջե-
53 ցեալներու մարմիններ յարութիւն առին, Եւ
գերեզմաններէն ելան անոր յարութենէն ե-
տեւ, մտան սուրբ քաղաքը ու շատերուն ե-
րեւցան։
54 գԲայց հարիւրապետը և անոր հետ Յիսուսը
պահողները՝ երբոր տեսան երկրաշարժը ու
եղած բաները, շատ վախցան՝ ու ըսին, Ցի-
րաւի ասիկա Որդի Աստուծոյ էր։
55 Եւ հոն շատ կիներ կային որ հեռուէն
կը նայէին, ւորոնք Գալիլեայէն Յիսուսի ե-
56 տեւէն եկան իրեն ծառայութիւն ընելու. էՈ-
րոնց մէջ էր Մարիամ Մագդաղենացին և
Յակոբոսին ու Յովսէսին մայրը Մարիամ և
Զեբեդեոսի որդւոցը մայրը։
57 ղՈւ երբոր իրիկուն եղաւ, Արիմաթիայէն

ֆ Սաղ. կթ. 21։ Մար. ժե. 36։ Ղուկ. իգ. 36։ Յովհ. ժթ. 29։
ա Մար. ժե. 37։ Ղուկ. իգ. 46։
է Ել. իզ. 31։ բ Մն. գ. 14։ Մար. ժե. 38։ Ղուկ. իգ. 45։
գ Հմր. 36։ Մար. ժե. 39։ Ղուկ. իգ. 47։
ւ Ղուկ. ը. 2, 3։
է Մար. ժե. 40։
ղ Մար. ժե. 42։ Ղուկ. իգ. 50։ Յովհ. ժթ. 38։

րեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն
յԱրիմաթեայ՝ որում անուն էր Յովսէփ, որ
58 և աշակերտեցաւ իսկ Յիսուսի։ Սա մատու-
ցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն
Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ
59 զմարմինն։ Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝
60 պատեաց սուրբ կտաւովք, Եւ եդ 'ի նոր
գերեզմանի զոր փորեաց 'ի վիմի. և թաւա-
լեցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ
61 մի մեծ՝ գնաց։ Անդ էր Մարիամ Մագդա-
ղենացի և միւս Մարիամն, նստէին հանդէպ
62 գերեզմանին։ Եւ 'ի վաղիւ անդր որ է յետ
ուրբաթուն, ժողովեցան քահանայապետքն
63 և փարիսեցիքն առ Պիղատոս, Եւ ասեն,
Տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր
մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց
64 յառնեմ։ Արդ հրամայեա զգուշանալ գե-
րեզմանին մինչեւ յերիս աւուրս, գուցէ
եկեալ աշակերտքն գիշերի՝ գողանայցեն զնա,
և ասիցեն ժողովրդեանն թէ յարեաւ 'ի մե-
ռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չար
65 քան զառաջինն։ Ասէ ցնոսա Պիղատոս, Ու-
նիք զզօրականն, երթայք, զգուշացարուք
66 որպէս և գիտէք։ Եւ նոքա երթեալ զգու-
շացան գերեզմանին, և կնքեցին զվէմն հան-
դերձ զօրականօքն։



հարուստ մարդ մը եկաւ՝ որուն անունը Յով-
սէփ էր, որ ինքն ալ Յիսուսի աշակերտ էր։
58 Ասիկա Պիղատոսին քովը երթալով՝ Յիսուսի
մարմինը խնդրեց. անատենը Պիղատոս հը-
59 րաման ըրաւ որ մարմինը տրուի։ Եւ Յով-
սէփ մարմինը առաւ, մաքուր կտաւով պա-
60 տեց, Ու [է]դրաւ իր նոր գերեզմանին մէջ՝
որն որ քարէ փորած էր. և գերեզմանին դու-
61 ռը մեծ քար մը գլտորցընելով գնաց։ Եւ
հոն էր Մարիամ Մագդաղենացին և միւս
Մարիամը՝ գերեզմանին դիմացը նստած։
62 Եւ հետևեալ օրը՝ որ ուրբաթէն ետև էր,
քահանայապետները ու փարիսեցիները ժող-
63 վուեցան Պիղատոսին քովը, Ու ըսին, Տէր,
կը յիշենք որ ան մոլորեցուցիչը իր կենդանու-
թեան ատենը կ'ըսէր թէ [ը]Երեք օրէն ետև
64 յարութիւն կ'առնեմ։ Ուստի հրաման ըրէ որ
մինչև երրորդ օրը գերեզմանին զգուշութիւն
ընեն. չըլլայ թէ իր աշակերտները գիշերով
գան՝ զանիկա գողնան, և ժողովուրդին ըսեն
թէ Մեռելներէն յարութիւն առաւ. ու ետ-
65 քի մոլորութիւնը առջինէն գէշ ըլլայ։ Պի-
ղատոս անոնց ըսաւ, Դուք ունիք պահապան
զինուորներ. գացէք՝ զգուշութիւն ըրէք ինչ-
66 պէս որ գիտէք։ Անոնք ալ գացին գերեզմա-
նին զգուշութիւն ըրին, [ե]քարը կնքելով ու
պահապան զինուորներ դնելով։

## ԳԼ. ԻԸ

1 Հրեշտակը կ'աւետէ կանանց Քրիստոսի յարութիւնը։ 9 Քը-րիստոս ինքը կ'երևնայ անոնց։ 11 Քահանայապետները ստակ կու տան զինուորներուն որ ըսեն թէ անիկայ իր գերեզմանէն

է Եսա. ծգ. 9։
ը Գլ. ժզ. 21։ ժէ. 22։ ի. 19։ իզ. 61։ Մար. ը. 31։ ժ. 34։ Ղուկ. թ. 22։ ժը. 33։ իդ. 6, 7։ Յովհ. բ. 19։
ե Դան. զ. 17։

# ԳԼ. ԻԸ

1 Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր
միաշաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի
և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն :
2 Եւ ահա շարժումն մեծ եղեւ, զի հրեշտակ
Տեառն իջեալ յերկնից, մատուցեալ 'ի բաց
թաւալեցոյց զվէմն 'ի դրանց անտի, և նստէր
3 'ի վերայ նորա : Եւ էր տեսիլ նորա իբրեւ
զփայլակն, և հանդերձ նորա սպիտակ իբրեւ
4 զձիւն : Եւ յահէ անտի նորա խռովեցան պա-
5 հապանքն, և եղեն իբրեւ զմեռեալս : Պա-
տասխանի ետ հրեշտակն և ասէ ցկանայսն,
Մի երկնչիք դուք, գիտեմ զի զՅիսուս
6 զխաչեալն խնդրէք. Չէ աստ, քանզի յա-
րեաւ, որպէս ասացն. եկայք, տեսէք զտե-
7 ղին ուր *կայր : Եւ վաղվաղակի երթայք,
ասացէք աշակերտացն նորա թէ յարեաւ. և
ահա յառաջանայ քան զձեզ 'ի Գալիլեա,
8 անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ : Եւ
ելեալ վաղվաղակի 'ի գերեզմանէ անտի ահիւ
և խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատ-
9 մել աշակերտացն : Եւ ահա պատահեաց նոցա
Յիսուս և ասէ, Ո՛ղջ էք, և նոքա մատուցեալ
կալան զոտս նորա և երկիրպագին նմա :

* Յոյնն՝ կայր Տէրն :



գողցուեցաւ : 16 Քրիստոս իր աշակերտներուն կ'երեւնայ, 19 և կը խրկէ զանոնք բոլոր հեթանոսները աշակերտելու և մըկրտելու :

1 Եւ շաբաթ [ա]գիշերը որ մէկշաբթին կը լուսա-
նար, եկաւ Մարիամ Մագդաղենացին [բ]ու
2 միւս Մարիամը գերեզմանը տեսնելու : Եւ
ահա մեծ երկրաշարժ մը եղաւ, ինչու որ Տէ-
րոջը [գ]հրեշտակը երկինքէն իջնելով՝ գնաց
դուռէն մէկդի գլորցուց քարը, ու անոր
3 վրայ նստաւ : [դ]Եւ անոր տեսքը փայլակի պէս
էր, ու անոր հանդերձները՝ ձիւնի պէս ճեր-
4 մակ : Եւ անոր վախէն պահապանները խռ-
5 ովեցան, ու մեռածի պէս եղան : Պատաս-
խան տուաւ հրեշտակը ու ըսաւ կիներուն,
Դուք մի վախնաք, քանզի գիտեմ որ կը փըն-
6 տռէք Յիսուսը՝ որ խաչուեցաւ. Անիկա հոս
չէ, ինչու որ յարութիւն առաւ, [ե]ինչպէս որ
ըսաւ. եկէք տեսէք այն տեղը՝ ուր որ Տէրը
7 պառկած էր : Եւ շուտ մը գացէք անոր ա-
շակերտներուն ըսէք թէ անիկա մեռելներէն
յարութիւն առաւ, և [զ]ահա ձեզմէ առաջ
Գալիլեա կ'երթայ, հոն պիտի տեսնէք անի-
8 կա. ահա ձեզի զրուցեցի : Եւ անոնք շուտ
մը գերեզմանէն ելան վախով ու մեծ ուրա-
խութիւնով՝ և կը վազէին աշակերտներուն
պատմելու :
9 Ու երբոր կ'երթային անոր աշակերտներուն
պատմելու, ահա [է]Յիսուս անոնց դէմը ելաւ՝
ու ըսաւ, Ողջոյն ձեզ : Եւ անոնք մօտենա-
լով՝ անոր ոտքերը բռնեցին, ու երկրպա-

[ա] Մար. ժզ. 1: Ղուկ. իդ. 1: Յովհ. ի. 1:
[բ] Գլ. իե. 56:
[գ] Տես Մար. ժզ. 5: Ղուկ. իդ. 4: Յովհ. ի. 12:
[դ] Դան. ժ. 6:
[ե] Գլ. ժբ. 40: ժզ. 21: ժէ. 22: ի. 19:
[զ] Գլ. իզ. 32: Մար. ժզ. 7:
[է] Տես Մար. ժզ. 9. Յովհ. ի. 14:

10 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս, Մի՛ երկնչիք, եր֊
թա՛յք, ասացէ՛ք եղբարցն իմոց՝ զի երթիցեն
11 ՚ի Գալիլեա, և անդ տեսցեն զիս։ Իբրև
նոքա գնացին, ահա ոմանք ՚ի զօրականացն
եկին ՚ի քաղաքն, և պատմեցին քահանայապե֊
12 տիցն զամենայն որ ինչ եղև։ Եւ նոքա ժողո֊
վեալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝
13 արծաթ յոյժ ետուն զօրականացն, Եւ ասեն,
Ասասջի՛ք եթէ Աշակերտքն նորա եկեալ գի֊
շերի գողացան զնա՝ մինչ մեք ՚ի քուն էաք։
14 Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք
հաճեսցուք զնա և զձեզ անհոգս արասցուք։
15 Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս
ուսանն. և ել համբաւս այս ՚ի Հրէից մին֊
16 չև ցայսօր։ Իսկ մետասան աշակերտքն գը֊
նացին ՚ի Գալիլեա ՚ի լեառնն՝ ուր ժամա֊
17 դիր եղև նոցա Յիսուս։ Իբրև տեսին զնա՝
երկիրպագին նմա, և ոմանք յերկուացան։
18 Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա
և ասէ, Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն
յերկինս և յերկրի. *որպէս առաքեաց զիս
19 Հայր, և ես առաքեմ զձեզ։" Գնացէ՛ք այ֊
սուհետև, աշակերտեցէ՛ք զամենայն հեթա֊
նոսս, մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հօր և Որ֊
20 դւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ուսուցէ՛ք նոցա պա֊

* Ի Յունին չէ։



10 դութիւն ըրին անոր։ Անատենը Յիսուս ըսաւ
անոնց, Մի՛ վախնաք, գացէ՛ք [ը]իմ եղբայր֊
ներուս ըսէք որ Գալիլեա երթան, ու հոն
զիս պիտի տեսնեն։
11 Երբոր անոնք կ'երթային՝ ահա պահապան
զինուորներէն մէկ քանին քաղաքը եկան,
ու քահանայապետներուն պատմեցին բոլոր
12 եղած բաները։ Եւ անոնք ծերերուն հետ
մէկտեղ ժողվուելով ու խորհուրդ ընելով՝
13 շատ ստակ տուին զինուորներուն, Ու ըսին,
Ըսէք թէ Անոր աշակերտները գիշերով եկան
անիկա գողցան՝ երբոր մենք կը քնանայինք։
14 Եւ թէ որ աս բանը կուսակալին ականջը հաս֊
նի, մենք անիկա կը հաճեցընենք, և ձեզ
15 *ապահով կ'ընենք։ Անոնք ալ ստակը առին՝
ու սորվածնուն պէս ըրին. ՚և աս ձայնը Հրէ֊
ից մէջ տարածուեցաւ մինչև աս օրս։
16 Իսկ տասնումէկ աշակերտները գացին Գա֊
լիլեա՝ ան լեռը [թ]ուր որ Յիսուս իրենց որոշեր
17 էր։ Ու երբոր զանիկա տեսան, երկրպագու֊
թիւն ըրին անոր, բայց ոմանք տարակուսեցան։
18 Եւ Յիսուս մօտենալով՝ խօսեցաւ անոնց ու
ըսաւ, [ժ]Ամէն իշխանութիւն ինծի տրուեցաւ
19 երկնից ու երկրի մէջ։ [ի]Ուրեմն գացէ՛ք [լ]բոլոր
ազգերը աշակերտեցէ՛ք, մկրտեցէ՛ք զանոնք
յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ.
20 [խ]Սորվեցուցէ՛ք անոնց որ ան ամէն բաները

ը Տես Յովհ. ի. 17։ Հռովմ. ը. 29։ Եբր. բ. 11։
∘ Յուն. անհոգ
թ Գղ. իղ. 32։ Հմր. 7։
ժ Դան. է. 13, 14։ Գլ. ժա. 27։ ժզ. 28։ Ղուկ. ա. 32։ ժ. 22։ Յովհ. գ. 35։ ե. 22։ ժզ. 3։ ժէ. 2։ Գոր. բ. 36։ Հռովմ. ժդ. 9։ ա Կոր. ժե. 27։ Եփես. ա. 10, 21։ Փիլ. բ. 9, 10։ Եբր. ա. 2։ բ. 8։ ա Պետ. գ. 22։ Յայտ. ժէ. 14։
ի Մար. ժզ. 15։
լ Եսա. ծբ. 10։ Ղուկ. իդ. 47։ Գոր. բ. 38, 39։ Հռովմ. ժ. 18։ Կող. ա. 23։
խ Գոր. բ. 42։

հել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ 'ի կատարած աշխարհի ։

024



պահեն՝ ինչ որ ես ձեզի պատուիրեցի. և ահա ամէն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը ։ Ամէն ։

0028305

ՀՀ Ազգային գրադարան

NL0028305

1649